



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ ԱՇԽԱՏՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՊԱՏԱՍԵՇՎՈՒԹՅԱՆ ԱՐԳԵՆՑ-ՑԱՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ  
ԵՎ ՊԱՏԱՍԿԱՆ ՄԻՋԱԿԱՅԻՐ «ՊԱԴՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՇՈՒՆՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈՒԿ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE  
REPUBLIC OF ARMENIA

YEREVAN STATE UNIVERSITY

"SERVICE FOR THE PROTECTION OF HISTORICAL  
ENVIRONMENT AND CULTURAL  
MUSEUM-RESERVATIONS" NSCO  
OF THE MINISTRY OF CULTURE OF RA

ARTSAKH STATE UNIVERSITY



# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԵԱՐՏԻ ՊԱՏԱՍԵՇՎՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԳԻՏԱԴՐՈՒՄԻ

# THE HISTORICAL-CULTURAL HERITAGE OF THE ARMENIAN HIGHLAND


INTERNATIONAL  
CONFERENCE

**ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ  
THE  
CONFERENCE  
PROCEEDINGS**



2012 թ.  
**24.06**  
**01.07**

Gribov, Oshajantsyants  
Yerevan, Stepanakert



Ուրբաձաւ Կաճաբէք շա  
բերտանախաջիւանդնիդու  
նէկէրդոյս Էւստնաջարցի  
հաւրտանախաջիդրէք Էւ  
ապայտան Կապտու Էրն Կարթ  
դրնէ այլ Կապտաւաւ Էւս

Արտաճաւր քեզայ  
Կապտու Կի թիւտ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

YEREVAN STATE UNIVERSITY

"SERVICE FOR THE PROTECTION OF HISTORICAL ENVIRONMENT AND  
CULTURAL MUSEUM-RESERVATIONS" NSCO OF THE MINISTRY OF CULTURE OF RA

ARTSAKH STATE UNIVERSITY

# THE HISTORICAL-CULTURAL HERITAGE OF THE ARMENIAN HIGHLAND

Materials of the International Conference

*June 24 – July 01, 2012  
Yerevan – Stepanakert*

YEREVAN  
YEREVAN STATE UNIVERSITY PRESS  
2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՑԹՆԱԿԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ՊԱՏՄԱՄԵՄԵՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՏ-ՔԱՂԱՎԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՂԱՀՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՄԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՍԿ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄԱՄԵՄԵՆՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային գիտաժողովի նյութեր

*2012 թ. հունիսի 24 – հուլիսի 01  
Երևան – Ստեփանակերտ*

ԵՐԵՎԱՆ  
ԵՂԶ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2012

«Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութերը հրատարակության են ներառվելով 22 ԳԱԱ արվեստի, արևելագիտության, հնագիտության և ազգագրության պատմության ինստիտուտների և Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդների կողմից:

**Խմբագրական խորհուրդ**

**Յու. Սուվարյան** (նախագահ)

**Ա. Աղասյան**

**Ա. Ավագյան**

**Պ. Ավետիսյան**

**Ս. Դադայան**

**Մ. Հասրաթյան**

**Ա. Մելքոնյան**

**Է. Մինասյան**

**Հ. Պետրոսյան**

**Ռ. Սամբրատյան**

**Ա. Փիլիպոսյան**

*The materials of the International Conference "Historical-Cultural Heritage of the Armenian Highland" have been recommended for publication by the National Academy of Sciences of RA, the Institutes of Art, Oriental Studies, Archaeology and Ethnography, History and by the Academic Council of the Faculty of Philology of Yerevan State University.*

**Editorial Board**

**Yu. Suvaryan** (Chairman)

**A. Aghasyan**

**A. Avagyan**

**P. Avetisyan**

**S. Dadayan**

**M. Hasratyan**

**A. Melqonyan**

**E. Minasyan**

**H. Petrosyan**

**A. Piliposyan**

**R. Safrastyan**

2ՏՂ 941(479.25):06

ԳՄԴ՝ 63.3(2 Հ)

2 253

2 253 *Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը:* Միջազգային գիտաժողովի նյութեր: 2012 թ. հունիսի 24 – հուլիսի 01: Երևան-Ստեփանակերտ/ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա: ԵՊՀ: ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արժեքից-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ: ԱրՊՀ-եր.: ԵՊՀ հրատ., 2012-230 էջ:

Գիտաժողովն քննարկում է Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության անելվող պատմական, հնագիտական, ազգագրական, արվեստի, ճարտարապետության, քանդակաօձիտական բազմաթիվ հարցեր, արդի հիմնական լինելու և դրանց նորոգի լուծումների ուղղություններ:

*The Historical-Cultural Heritage of the Armenian Highland. Materials of the International Conference. 24 June – 01 July, 2012. Yerevan-Stepanakert/ National Academy of Sciences of RA; Yerevan State University; "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations" NCSO of the Ministry of Culture of RA; Artsakh State University. –Yer.: YSU pub., 2012-230 pages.*

The Conference includes a number of historical, archaeological, ethnographical, art, architectural, museological questions, actual problems and the directions of solving them in new way related to the historical-cultural Heritage of the Armenian Highland.

2ՏՂ 941(479.25):06

ԳՄԴ՝ 63.3(2 Հ)

ISBN 978-5-8084-1605-5

© ԵՊՀ հրատարակչություն, 2012

© «Պատմամշակութային արժեքից-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

*Միջազգային գիտաժողովի կազմակերպմանն աջակցել է մարտիային ռեսուրսների զարգացման «Գլոնիկ» բարեգործական հիմնադրամը*

### Կազմակերպական կոմիտե

Կազմկոմիտեի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

Ռ. Մարտիրոսյան

Կազմկոմիտեի քարտուղար՝ Վ. Բարսեղյան  
Անդամներ՝

Վ. Բարխուդարյան (Հայաստան)

Մ. Դադայան (ԼՂՀ)

Ժ. Դեղևյան (Ֆրանսիա)

Մ. Դեշամ (Ֆրանսիա)

Ռ. Ջաբլի (Ավստրիա)

Վ. Խաչատրյան (ԼՂՀ)

Մ. Հասարթյան (Հայաստան)

Բ. Հարությունյան (Հայաստան)

Ռ. Հովհաննիսյան (ԱՄՆ)

Ժ. Պ. Մանե (Ֆրանսիա)

Ա. Մելքոնյան (Հայաստան)

Է. Մինասյան (Հայաստան)

Մ. Մինասյան (Հայաստան)

Վ. Մուքաչյան (Ֆրանսիա)

Ալ. Չալարյան (ՌԴ)

Մ. Պիտրովսկի (ՌԴ)

Վլ. Պողոսյան (Հայաստան)

Մ. Սալվինի (Իտալիա)

Ա. Սիմոնյան (Հայաստան)

Ա. Սմիթ (ԱՄՆ)

Յու. Սուվարյան (Հայաստան)

Վ. Տատրյան (ԱՄՆ)

Ա. Տերյան (ԱՄՆ)

Գ. Ուլոհոջյան (Իտալիա)

*The organization of the International Conference is promoted by  
"Pyunik" Human Resources Development Foundation*

### Organizing Committee

Chairman of the organizing committee: The President of the National Academy of Sciences of RA, Academician **R. Martirosyan**

Secretary of the committee: **V. Barsheghyan**

Members of the committee:

**Y. Barkhudaryan** (Armenia)

**Al. Chubaryan** (Russia)

**S. Dadayan** (RNK)

**J. Dedeyan** (France)

**S. Deshamps** (France)

**B. Harutyunyan** (Armenia)

**M. Hasratyan** (Armenia)

**R. Hovhannisian** (USA)

**V. Khachatryan** (RNK)

**J. P. Mahe** (France)

**A. Melqonyan** (Armenia)

**E. Minasyan** (Armenia)

**M. Minasyan** (Armenia)

**K. Moutafian** (France)

**M. Piotrovski** (Russia)

**Vl. Poghosyan** (Armenia)

**M. Salvini** (Italy)

**U. Seidl** (Austria)

**A. Simonyan** (Armenia)

**Yu. Suvaryan** (Armenia)

**A. Smith** (USA)

**V. Tatrian** (USA)

**A. Terian** (USA)

**G. Uluhogian** (Italy)

### Օրագրային կոմիտե

Օրագրային կոմիտեի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս **Յու. Սուվարյան**

Օրագրային կոմիտեի գիտական քարտուղար՝ **Ա. Մելքոնյան**

Քարտուղարներ՝ **Է. Մինասյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Բալայան**

Անդամներ՝

**Լ. Աբրահամյան** (Հայաստան)

**Ա. Աղայան** (Հայաստան)

**Ա. Ավագյան** (Հայաստան)

**Վ. Ավանեսյան** (ԼՂՀ)

**Պ. Ավետիսյան** (Հայաստան)

**Մ. Ջոլյան** (Հայաստան)

**Մ. Կարապետյան** (Հայաստան)

**Հ. Պետրոսյան** (Հայաստան)

**Գ. Պողոսյան** (Հայաստան)

**Լ. Մարտիրոսյան** (Հայաստան)

**Վ. Սաֆարյան** (ԼՂՀ)

**Ռ. Մաֆրատյան** (Հայաստան)

### Programming Committee

Chairman of the programming committee: Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences of the National Academy of Sciences of RA, Academician **Yu. Suvaryan**

Scientific secretary of the programming committee: **A. Melqonyan**

Secretaries: **E. Minasyan, A. Filiposyan, V. Balayan**

Members of the programming committee:

**L. Abrahamyan** (Armenia)

**A. Aghasyan** (Armenia)

**A. Avagyan** (Armenia)

**V. Avanesyan** (RNK)

**P. Avetisyan** (Armenia)

**M. Karapetyan** (Armenia)

**H. Petrosyan** (Armenia)

**G. Poghosyan** (Armenia)

**V. Safaryan** (RNK)

**R. Safrastryan** (Armenia)

**L. Sargssyan** (Armenia)

**S. Zolyan** (Armenia)

# ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## HISTORIOLOGY

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԲԱԿԵՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂ-ՈՒՄ (2000-2010 թթ.)

Առուստամյան Ա. (ԱրՊՀ, ԼՂՀ)  
armine.arustamyan@mail.ru

*Բանալի բառեր՝ վերաբնակեցում, ժողովրդագրական իրավիճակ, միգրացիա, գաղթ, բնակեցում, փախստական:*

1994 թ. հրադադարից հետո ԼՂՀ իշխանություններն ակտիվորեն ձեռնամուխ եղան վերաբնակեցման խնդրի իրագործմանը: 1994 թ. ի վեր Արցախի կառավարությունն իրականացնում է «Արադարձ Արցախ» ծրագիրը: Լալաստակն է վերաբնակեցնել և վերականգնել պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած Արցախի տարածքները: Աշխատանքը տարվում է երկու ուղղությամբ՝ ետբաստեղծ գյուղերի բնակեցում և գյուղերի հզորացում: ԼՂՀ կառավարության որոշմամբ՝ 2001 թ. նոյեմբերի 30-ին կառավարության առջև էր ստեղծվում է Միգրացիայի, փախստականների և վերաբնակեցման վարչություն: 2001 թ. կառավարությունը հաստատեց ԼՂՀ վերաբնակեցման տասնամյա ծրագիրը, որով նախատեսվում էր այդ տարիների ընդհանուր ընդունել մինչև 67000 գաղթական: Վերաբնակեցման քաղաքականությանը նպաստում էր նաև ԼՂՀ-ում 1997 թ. մշակված ձևաչափի և բազմազանակության խթանման ծրագիրը:

1993-2004 թթ. Լեռնային Ղարաբաղ է տեղափոխվել 7243 ընտանիք՝ թվով 18593 մարդ, որոնց մի մասը բնակություն է հաստատել մայրաքաղաքում, մյուսները՝ շրջակայքում:

ԼՂՀ կառավարության 2003 թ. ապրիլի 15-ի թիվ 121 որոշմամբ՝ վերաբնակներին տրվում են նոր արտոնություններ. անհատական տնով կամ բնակարանով ապահովում, միանվագ դրամական օգնություն, ՀՀ-ից ԼՂՀ ճանապարհածախի վճարում, ընտանիքի գույքի տեղափոխում կամ գույքի տեղափոխման դրամական փոխհատուցում, ՀՀ-ից ԼՂՀ երկարաժամկետ արտոնյալ բյուջետային վարկի տրամադրում՝ 260 հազար դրամի չափով, մշտական օգուագործման իրավունքով հողի հատկացում, 5 տարի ժամկետով բնակարանային կոմունալ ծառայությունների վարձից ազատում, նոր ընտանիք կազմած զորակոչային տարիքի անձանց ժամկետային զինվորական



ծառայության՝ երկու տարով հետաձգում, վերաբնակիչների ընդգրկում վերաբնակեցման ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքներում:

2003 թ. ապրիլի 15-ի «ԼՂ տարածքում վերաբնակվող ընտանիքների արամադրվող արտոնությունների մասին» թիվ 121 որոշմամբ վերաբնակեցման քաղաքականությունը դրվեց նոր հիմքերի վրա: 2004 թ. Հանրապետությունում վերաբնակեցվել է 195 ընտանիք՝ 801 շնչով: 2005 թ. ԼՂ-ում վերաբնակեցվել է 127 ընտանիք, 100-ից ավելին՝ հանրապետության շրջաններում, մասնավորապես՝ Շահումյանի, Մարտակերտի և Սակերտի: 2006 թ. ՀՀ-ից և այլ երկրներից վերաբնակեցվել է 155 ընտանիք՝ 487 անձի ընդգրկմամբ: 2007 թ. ՀՀ-ից և ԱՊՀ այլ երկրներից ԼՂ վերադարձավ 87 ընտանիք՝ 284 շնչով: 2008 թ. հանրապետության շրջաններում վերաբնակեցվեց 172 ընտանիք՝ 567 շնչով, որոնցից 88 ընտանիք կամ 329-ը՝ Քաշաթաղում: 2010 թ. ԼՂ է վերադարձել 130 ընտանիք:

ԼՂ բնակավայրեր ներգաղթող բնակչությունը պայմանակառնուրեն կարելի է բաժանել երեք խմբի՝ գաղթողներ ԱՊՀ-ից և այլ երկրներից, Հայաստանի Հանրապետությունից և ներքին գաղթողներ: Ստեփանակերտում վերաբնակների հիմնական մասը կազմում են ներքին գաղթողները՝ 62,64 տոկոս, իսկ Հայաստանից գաղթողները՝ 25,85 տոկոս: Արևել հիմնականում փախստականներ են կամ սոցիալական որոշ պատճառներով բնակչության մշտական վայրը լրած անձինք: Երկու դեպքում էլ ներգաղթողների մեծ մասը՝ մոտ 88,50 տոկոսը, գերադասում է բնակություն հաստատել մայրաքաղաքում: Արևելի ներգաղթողները կազմում են երանց ընդհանուր թվի 91,74 տոկոսը, իսկ ԱՊՀ երկրներից ներգաղթողները՝ 11,49 տոկոս: Այս հենքի վրա մայրաքաղաքի բնակչության աճը տալիս է առաջացում. չէ որ ներգաղթող պայմանավորված չէ աշխատուժի պահանջարկի աճով՝ կապված նոր աշխատատեղերի բացման հետ, այլ հակառակը՝ իջեցնում է բնակչության գաղթվածության առաջ ասել էլ ցածր մակարդակը:

Արցախի գաղթացման ու հզորացման հիմնամիջոցների լուծումը ենթադրում է երևում ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխություն, վերաբնակեցման հիմնավորված քաղաքականության իրականացում: Վերաբնակեցում այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի ճիշտ և արդյունավետ իրականացման դեպքում ենարավոր է խթանել ԼՂ սոցիալ-տնտեսական գաղթացումը, լուծել ԼՂ թերբնակեցված շրջանների բնակեցման խնդիրը:

THE DEMOGRAPHIC SITUATION AND GUESTION POLITICS  
IN NKR (2000-2010)

Arustamyan A. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)

ԱՐՑԱՒԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԱՐԴԲԵՑԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՐՑԱՒՅԱՆ ԴՂՈՑԻ  
ՀԱԿԱՎԱՐՁՈՒՄԵՐԸ ՈՒ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԿՏԵՐԸ

Բալայան Վ. (ԱրՂՀ, ԼՂՀ)  
vahrambalayan@mail.ru

*Բանալի բառեր՝ Արցախ, հայազիտություն, ազգային, կեղծարարներ, Աղբրեան:*

ԼՂ կարգավիճակի շուրջ ծավալված միջազգային քննարկումները, պատմական հայրենիքի գերյալ տարածքների մի մասի ազատագրումը հրատապ պահանջ են առաջադրել խորապես ուսումնասիրել և հստակ պատկերացում կազմել Հայոց Արևելից նահանգների վաղուցյա իրողությունների մասին: Աղբրեանի և Թուրքիայի հակահայ քաղաքական և իրական պատմության խնդրաթյուրման պայմաններում խնդրո առարկա թեմայի ուսումնասիրությունը հրատապ է դառում: Մույն քեման հնարավորություն է ստեղծում պայքարելու պատմության կեղծարարների դեմ և Արցախի պատմության սովորու խողմերի լուսաբանման համար նախաևում համապատասխան քայլեր:

Հետիոտիդային շրջանի Աղբրեանի դեկավարությունը իրենց գիտականների հորդորում է հիմնավորել, որ ոչ միայն ԼՂ-ն, այլ նաև ՀՀ-ն կազմավորվել են աղբրեանական հողերի վրա: Պատմության կեղծարարները, ոգևորվելով իշխանությունների բացահայտ աջակցությունից, մի անախաղեղ աշակ մկեցին՝ ծոտ հայկու մեջ ներկայացնելով Հայոց Արևելից նահանգների հետադոր սեցյալի, ինչպես նաև ներկա իրողությունները: Եթե խորհրդային ժամանակահատվածում Աղբրեանի պաշտոնական շրջանակները և պատմաբանները հիմնականում ձգտում էին «գիտական տեսանկյունից յուրացնել Հայոց Արևելից նահանգների Էրմուշակուրային տարածքը, ապա ներկա ժամանակներում դրան գումարվել է նա երկու գերխնդիր:

ա) սեփական ժողովրդին, մասնավորապես երիտասարդությանը մոտ-բուության մեջ պահելով՝ երանջ մեջ սերմանել հակահայկական տրամադրու-թյուններ և, անհրաժեշտության դեպքում, վերջիններին մղել արկածա-խնդրության,

բ) գոհի կերպարանքով ներկայանալով համաշխարհային հանրությանը՝ փորձել մեծ տերություններին տրամադրել ՀՀ-ի և ԼՂ-ի դեմ:

Արցախում քաջ գիտակցում են, որ անհրաժեշտ է ոչ միայն անխցելի դարձնել հայրենի օսանմանները, այլ նաև ադրբեջանական ոսնձգություն-ներից անաղարտ պահել բազում դարերի ընթացքում Հայոց Արևելից նա-հանգներում ստեղծված պատմամշակութային արժեքները: Իսկ դրան կա-րելի է հասնել ԼՂ-ում հայագիտական դպրոց ունենալու պարագայում: Արցախահայության պետականության վերակերտումը նոր հեռանկարներ է բացել այդ խնդրի լուծման համար: Դեռևս 1989 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության, հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտների և Մատենա-դարանի նախաձեռնությամբ Ստեփանակերտում հիմնադրվել էր հայագի-տական կենտրոն: Պատերազմի տարիներին կենտրոնը դադարել էր գործել: Չնայած դրան, սփյուռքահայ բարերարների, հատկապես ՀՅԴ Արցախի կառույցի և համալսարանի մի խումբ դասախոսների ջանքերով, 1997 թ. ԱրՊՀ-ում ստեղծվել է հայագիտական կենտրոն: Կատարված ուսումնասի-րությունները հրապարակելու նպատակով 2003 թվականից լույս է ընծայ-վում «Պատմագիտական ուսումնասիրություններ» ժողովածուն, իսկ 2010 թվականից՝ «Հայագիտական հանդեսը»:

ԼՂ-ում մեծ ուշադրություն է դարձվում պատմաբան կադրերի պատ-րաստման գործին: Այսօր ԱրՊՀ պատմության բաժնում սովորում են 199 ուսանողներ ու ասպիրանտներ: Վերջին 5 տարիներին պատմագիտության բնագավառում 5 մարդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են Արցախի պատմության հիմնահարցերին: ԼՂ կազմավո-րումից առ այսօր հանրապետության հայագետների կողմից հրատարակվել են հարյուրավոր գրքեր, հոդվածներ: Լճանակալից հաջողություններ են ար-ձանագրվել ազատագրված տարածքներում պատմական հուշարձանների հայտնաբերման և ուսումնասիրման գործում:

Այսօր հրատապ անհրաժեշտություն է. ա) կատարված ուսումնասիրու-թյունները հրատարակել օտար լեզուներով, բ) այդ աշխատանքներում առա-վել մեծ չափերով ներգրավել արտասահմանյան հայագետ հետազոտող-ների, գ) վերոնիշյալ բնագավառը առավել մրցունակ դարձնելու նպատակով

դրան ավելի շատ պետական միջոցներ հատկացնել, դ) հաճախ կազմա-կերպել միջազգային գիտաժողովներ, ե) ապահովել ԱրՊՀ շրջանավարտ պատմաբանների հետագա ուսումը արտասահմանյան բուհերում:

THE REPRESENTATION OF NEW AND NEWEST PERIODS OF ARTSAXH HISTORY IN THE AZERI HISTORIOGRAPHY. THE FURTHER DEEDS AND REACTIONS OF ARTSAXH'S SCHOOL OF THE ARMENIAN HISTORIOGRAPHICAL CONCEPTIONS

Balayan V. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)

## ՂԱՐԱՔԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՈՒՄԸ

Քաղաքապետ Ն. («Մեսրոպ Մաշտոց» համալսարան, ԼՂՀ)  
nelli.ohanjanyan@mail.ru

*Բանալի բարե՝ խանական վարչակարգ, պայմանագիր, խան, ցարիզմ:*

Ձեկուցման թեման արդիական է հրատապ է հակառակորդ պետության՝ Ադրբեջանի կողմից իրական պատմության խեղաթյուրման պայմաններում: Թեմայի լուսարևումը կատարվել է պատմագիտական ուսումնասիրությունների, փաստաթղթերի ժողովածուների, ինչպես նաև նորահայտ վավերագրերի օգնությամբ և միտում ունի ներկայացնելու Արցախի պատմության համապատասխան ժամանակաշրջանի քաղաքական անցուղարձը:

1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1813 թ. հոկտեմբերի 12-ին, Ղարաբաղի Գյուլիստան բերդավանդում կնքված պայմանագրով Ղարաբաղի պարսկական հպատակությունը փոխարինվեց ռուսականով: Իր դրական նեոնաերներով հանդերձ՝ Գյուլիստանի պայմանագիրը չարդարացրեց արցախահայության՝ խանական վարչակարգին վերջ դնելու ակնկալիքը: Այնինչ՝ ցարիզմն այս վարչակարգի մեջ ամուր հենարան տեսավ իր գաղութային քաղաքականությունը ծավալելու նախնական փուլում: Տարիքը պահպանեց խանական խամաճիկային վարչակարգը, ինչը վերացվեց միայն այն պահին, երբ կայսրությունն իրեն բավականաչափ ապահով էր գգում հպատակ տիրություններում:

1816 թ. Կովկասի կառավարչապետ նշանակված գեներալ Ալեքսեյ Երմովը Կովկաս ժամանելու պես տեսնում է խանական վարչակարգի վերացման անհրաժեշտությունը, որում նա համոզվում է, երբ 1816 թ. մեկնում է Ղարաբաղի պարսկական սահման: Ա. Երմովի հաշվարկներով՝ Ղարաբաղի խանությունից սպասվում էր տարեկան մինչև 1 մլն ռուբլի արծաթով եկամուտ, որը ստանալը հնարավոր էր խանական վարչաձևի տապալումից հետո:

Նառնակաշական է, որ խանական վարչակարգի վերացման հարցն առավել սուր տեսք ստացավ Մեհտի Ղուլի խանի պահվածքի պատճառով: Ղարաբաղը դիտելով որպես իր անձեռնմխելի սեփականություն՝ խանը

հիվանդացին էր վերաբերվում ռուսական կառավարության կողմից կատարվող յուրաքանչյուր. միջամտության: 1822 թ. վիճակագրությանը խոչընդոտելը ճակատագրական նշանակություն ունեցավ Մեհտի Ղուլի խանի համար: Վիճակագրության հետ կապված դեպքերին վերաբերող փաստաթղթերը ցույց են տվել, որ Մեհտի Ղուլին այնքան ինքնահաստատ էր գգում Ղարաբաղում, որ փորձում էր հակառակվել անգամ ցարական պաշտոնական կարգադրություններին: Բնականաբար, ցարական կառավարությանը անհաճ էր, ի դեմս Մեհտի Ղուլիի, Ղարաբաղի խան ունենալու իրողությունը: Դրան գումարվել էր նաև ներքին գործոնը՝ նոր հողեր ստացած տեղական իշխողների երկյուղը: զինեմով խանը վատ հիշողություն ուներ և երեկվա տված թույլը կարող էր վաղն ուրանալ, ուստի երա հեռացումը պարզապես անհրաժեշտություն էր: Վերնշջալ և մի շարք այլ հանգամանքների պատճառով խանը 1822 թ. նոյեմբերին խուճապահար փախչում է Ղարակառան:

Մեհտի Ղուլի խանի փախուստից հետո Ա. Երմովը դիմում է Ղարաբաղի ժողովուրդին՝ հայտարարելով խանական կառավարման մեկընդմիջ վերացման մասին: 1822 թ. աշնանը Ա. Երմովը լինում է Ղարաբաղում: Նրա ներկայությամբ Շուշիում բացվում է դիվան (գավառային դատարան), ազդարարվում է ռուսական վարչակարգի մուտքը, և ժողովուրդը հավատարմության երդում է տալիս ռուսական կայսրը: Արդեն 1822 թ. դեկտեմբերի 14-ին Ա. Երմովը Ալեքսանդր I-ին ուղղված զեկույցում գրում է կառավարման նախնին «անասակ» ձևի փոխարեն Ղարաբաղում ռուսական կառավարում մտցնելու և խանի փախուստի պատճառների մասին:

Այսպիսով, 1822 թ. Ղարաբաղում վերջ է դրվում դեռ նախորդ դարի կեսերին սկիզբ դրված՝ հայ իրակառուցության խորք խանական կառավարմանը: Խանական վարչակարգի փոխարինելու եկած ռուսական վարչակարգի գլխավոր խնդիրը Ղարաբաղի գաղութացումն էր:

## ABOLITION OF KARABAKHY KHANATE

Baghdasaryan N. (Mesrop Mashtots University, Nagorno Karabakh Republic)

**ԱՐՑԱՆԻ ՊԱՏՄԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆԸ**

**Դադայան Ս. (ԱրՊԸ, ԼՂԸ)**  
rector@asu.am

*Բանալի բառեր՝ Արցախ, պատմություն, մշակույթ, հայկական, հուշարձան, կերպարաբան:*

Հայկական մշակույթի զարգացման բազմադարյան պատմության մեջ իր յուրահատկությամբ աչքի է ընկնում պատմական Հայաստանի արևելյան հատվածի՝ Արցախի մշակույթը, որն իր մեջ բյուրեղացրել է հայ էթնոսի բնորոշ գծերը:

Արցախահայությունը դարերի հորձանուտում մասնակցել է հայ ժողովրդի ամբողջական մշակույթի ստեղծմանն ու զարգացմանը:

Արցախն իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ ոչ միայն հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասն է կազմել, այլև մշտապես եղել է նրա արթուն տանձանապահը: Դրա փայլուն վկայությունը Տիգրանակերտ քերականության է, որի բացված փլատակները կարծես թե մի ավելորդ անգամ մեր ընդդիմախոսներին ապացուցում են, որ երկրամասն ի սկզբանե հայ ժողովրդի բնօրրանն է եղել:

Արցախի պատմամշակութային ժառանգությունը նյութավորված է հազարավոր հնագիտական և պատմաճարտարապետական հուշարձանների մեջ, որոնք սփռված են ԼՂԸ և պատմական Արցախի մյուս տարածքներում: Հաս Ս. Կարապետյանի՝ ազատագրված շրջանների մշակութային կոթողների թիվը կազմում է շուրջ 1700: Սակայն վերջին տարիներին ԼՂԸ պետական մարմինների և գիտական հաստատությունների կողմից կմտադրված հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ասել, որ դրանց թիվը մի քանի անգամ ավելի է: Ազգային պետականության գոյության նորոգյա պայմաններում, այսօր ԼՂԸ տարածքում գտնվող հուշարձանների ուսումնասիրության գործը մասշտաբի է հայացվելու համար:

Հնագիտական պեղումներն Արցախում կատարվել են դեռևս մինչև խորհրդային տարիներին: Իսկ անցյալ դարի 20-30-ական թվականներին այդ

գործընթացն ակտիվացել է: Որոշակի աշխատանքներ են կատարվել Նոցալուի (Հոգեվանք) դամբարանադաշտում, կազմվել է համապատասխան քարտեզ:

Հարևան հանրապետության գիտնականների վերաբերմունքն Արցախի մշակութային ժառանգության նկատմամբ միաբժեք չի եղել: Մինչև 1950 թ. այդ ուղղությամբ Ադրբեջանի ինտելեկտուալների կողմից լուրջ ձեռնարկներ են եղել: 50-ական թվականների վերջերից սկսած՝ փորձ է կատարվում Արցախի տարածքում գտնվող հուշարձանները կտրելու հայկական արձաններից՝ նպատակ ունենալով դրանք հետագայում յուրացնելու:

Բոլոր քրիստոնեական հուշարձանները հայտարարվում էին ազգանական, որպեսզի հետագայում վերագրվեն այսպես կոչված ազերիական ցեղի մշակութային ժառանգությանը: Այդ հանցավոր գործելակերպը նախօրոք ծրագրված էր և հովանավորվում էր ադրբեջանական կառավարության կողմից: Խորհրդային տարիներին այս ամենի մասին հայ գիտնականները տեղյակ էին, բայց քաղաքական իրականությունը թույլ չէր տալիս համարժեք կրճատ քայլեր ձեռնարկել: Հիշու է, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի գիտնականները՝ Ա. Նովոսելցևը, Ա. Ցակոբսոնը, Գ. Մուրադյանը, Բ. Ուլուբայանը, Բ. Հառաթյանը, Ա. Մնացականյանը և ուրիշներ, առիթը բաց չէին թողնում համապատասխան գեադատական տալու հարևան երկրի գիտնականների հակազիտական և հակապատմական որոնումներին:

Սկսած 2002 թ.՝ միջազգային գիտական արշավախմբի կողմից ԼՂԸ տարածքում պարբերաբար իրականացվում են հնագիտական պեղումներ Ազրխի քարանձավում, 2004-2005 թթ.՝ Կերեևում (Քաշաթաղ), Քարվաճառում, Շուշում, 2006 թ.՝ Տիգրանակերտում:

Հնագիտական այդ պեղումներն հնարավորություն են տալիս պատասխանելու մի շարք հրատապ հարցերի, օրինակ՝ Շուշին որպես բնակավայր հայտնի է ոչ թե XVIII դարի երկրորդ կեսից, ինչպես պնդում են հարևան հանրապետության պատմաբանները, այլ՝ ավելի վաղ ժամանակներից, ինչի ապացույցն են վերջերս բացահայտված վարդիստոնեական թաղումները քաղաքի տարածքում:

Բարեբախտաբար, Արցախ աշխարհի հարուստ է նաև պատմագրական ժառանգությամբ: Մեծիական այգուրեն չունեցող հարևան հանրապետության այսպես կոչված գիտնականները փորձում են սեփականացնել Մովսես Կաղանկատվացու, Դավթակ Քերթոլի, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակցու, Դավիթ Ալավկադորու, Կարդոյի Արևելցու, Վանական Կարդապետի, Նասիվ Հասան Ջալալյանի աշխատությունները:

Այսօր այդ պայքարը շարունակվում է և ունի ռազմավարական նշանակություն: Դատմական տարբեր ժամանակներում Արցախի մշակույթը ծառայել է հայրենական ինքնության պայտասման և շրջակա ազգերի երկրենից նրա պաշտպանության գերիխորհին: Հարևան հանրապետության կեղծա-

րարները, լավ հասկանալով այդ ամենը, պետական ամենաբարձր հովանավորչությամբ այսօր ոչկաջնում են բնագավալված հայկական տարածքների հազարամյա պատմական հուշարձանները:

Բազում դարերի դաժան փորձություններով անցած արցախահայությունը «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսով ազգային պետականության՝ ԼՂՀ հովանու ներքո, տեղ կանգնելով իսլամացյալ ժամանակներում ստեղծված պատմամշակութային արժեքների, այսօր իր նպատակ է բերում համազգային մշակույթի զանազաններ:

THE HISTORICAL-CULTURAL HERITAGE OF ARTSAKH  
Dadayan S. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)

ՀԱՅԳԱԿԱՆ ԼԵՈՒԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՒԹԱՑՒՆ  
ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԿՈՂ ՎԻՆ ԵՎ  
ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՀԱՅԳԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ՝  
ԸՆԴԴԵՍ ԹՈՒՐԲ-ԱՐԴԲԵՋԱՆԱԿԱՆ  
ԿԵՂՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գանիելյան Է. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

*Բանալի բարձր՝ Հայկական լեռնաշխարհ, ազգ. հայ պատմագիտություն,  
քարտեզագրություն, ժառանգություն, տեղանուն, Անատոլիա:*

1. Հայոց ավելի քան հինգհազարամյա ազգապետական՝ քաղաքական, հոգևոր-մշակութային, գիտական և գաղափարական ոլորտների աշխարհայացքային սնուցող ակունքներից է Հայկական լեռնաշխարհի՝ Հայ ազգի բնօրրանի բնապատմական ճշգրիտ պատկերը: Հայոց բնաշխարհի բնիկ տեղանունները հայտնի են հին և միջնադարյան սկզբնաղբյուրներից, քարտեզագրական, ազգագրական և ժողովրդագրական կյուրերից:

2. Ազգային անվտանգության հրամայականով հայ պատմագիտության կարևոր ոլորտներից է հայկական պատմական ժառանգության պաշտպանությունը Հայոց ցեղասպանություն գործած Թուրքիայի և նրա խամաճիկային դաշնակից արևեստածին Ադրբեջանի ոտնձգություններից:

3. Պատկերաբանաբանական պատմագրության և քարտեզագրության մեջ քաղաքական նպատակներով կատարվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի՝ Արևմտյան Հայաստանի տեղանունների համակարգի ոչկաջնումը՝ «արևելյան Անատոլիա» տերմինի և կեղծ ու շինծու «տեղանունների» միջոցով: Այնինչ, «Անատոլիա» հասկացությունը (իր բոլոր մասերով), որպես աշխարհագրական տերմին, վերաբերում է միայն Փոքր Ասիային, որը Հայկական լեռնաշխարհից արևմուտք է գտնվում:

4. Խորհրդային ժամանակներում սկիզբ առած ադրբեջանական կեղծարարների նենգափոխումներն Ադրբեջանի ներկայիս ռազմամուղ դեկավա-

բության թելադրանքով և թուրք հրահանգիչների աջակցությամբ ընդարձակում են իրենց սահմանները, սակայն դրանցում պարունակված սուտն ու կեղծիքը խիստ քննադատվում են քե՛ հայ և քե՛ օտար մասնագետների կողմից:

5. Հայոց պատմությունը և հայկական տեղանուններն ազգային անվտանգության գաղափարական զինանոցի հիմքերն են «քարտեզագրական պատերազմում» ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարությունների Անկախության հռչակումից և սրբախյան հաղթանակից հետո հայ պատմագիտությունը մեծ նվաճումներ է գրանցել հայագիտական մեթոդաբանությամբ խորքային հետազոտությունների ասպարեզում, ինչը տեղեկատվական պատերազմում հակառակորդին հուժկու հարված հասցնելու ամուր երաշխիք է:

THE SYSTEM OF ANCIENT AND MEDIEVAL ARMENIAN TOPONYMS  
CHARACTERIZING THE CULTURAL COMPLETENESS OF THE ARMENIAN  
HIGHLAND AGAINST THE TURKISH AND AZERBAIJANIAN  
FALSIFICATIONS

Danielyan E. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of History, Armenia)

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՎԱՍՔԻ ՇՏԵՆ ԳՅՈՒՂԸ՝  
ՈՐՂԵՍ ՀՆԱԳՈՒԹՆ ԲԱՎԿԱՎԱՅՑ

Երևանյան Ա. (ԵՊՀ, Մարդաբանական հերոսամարտի հուշահամալիր,  
Հայոց ազգագրության և ագատագրական պայքարի պատմության ազգային  
թանգարանի գիտաշխատող, Հայաստան)  
agyeranos@gmail.com

*Բանայի բառեր՝ պատմական Զավախք, հուշարձան, Շտես, կիկլոսյան  
բերդ, մշակութային ժառանգություն:*

Շտեսն հանդիսանում էր պատմական Զավախքի հնաբնակ և նշանավոր գյուղերից մեկը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ գյուղը հիշատակվում է տակավին II դարի նշանավոր հույն փիլիսոփա, աստղագետ և աշխարհագրագետ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության» 5-րդ գրքում, ուր տրված են Մեծ Հայքի, Կողքիսի, Իբերիայի և Աղվանքի քարտեզների մանրամասն նկարագրությունները: Ասիայի 3-րդ քարտեզում հիշատակվում են Զավախքի 3 նշանավոր և խոշոր բնակավայրերի անունները՝ Վաքազա (Վարձիա), Մուկոյա (Մունդա-Մուլդա) և Sioda: Հայ նշանավոր պատմաբան և քարտեզագիր, ակադեմիկոս Ս. Երեմյանը, նոր տվյալների հիմամբ վերականգնելով Պտղոմեոսի վերոհիշյալ քարտեզը, Sioda-ն նույնացնում է Շտեսայի հետ: Գյուղից ոչ հեռու՝ Բաղան կոչվող սարի գագաթին, մինչ օրս պահպանվել են կիկլոսյան բերդի ավերակներ: Վերջինիս կարևորության մասին է խոսում այն հանգամանքը, որ բերդի կենտրոնից մինչև Փարվանա գետի ափը փորված էր քարապատ ստորգետնյա անցուղի: Անհերքելի է, որ ամրոցն ունեցել է կարևոր ռազմավարական նշանակություն, քանի որ գտնվել է առևտրական բանուկ խաչմերուկում և ապահովել է դեպի Ախալքալաք և Մակա գնացող ուղին:

Զավախքի բնակավայրերի մասին կարևոր հիշատակումների հանդիպում ենք Պևտինգերյան քարտեզում, որն արտացոլում է IV դարի II կեսի վիճակը: Հ. Մանանդյանը, ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհի ճանապարհները, հանգել է այն եզրակացության, որ դրանցից մեկը կապում էր Արտաշատը Սեբաստասպոլի (այժմ՝ Մուխոմի) հետ և անցնում էր Զա-

վախքի Փոկա (Pagas), Աբուլ (Apulum) և Խոսպիա (Caspiae) գյուղերով: Նա գտնում է որ ճանապարհն այստեղից AdMetcurium բնակավայրի մոտ, անցնելով Կուր գետի (վրացերեն-Մոսկվարի)՝ այժմյան Ախալցխա-Աղիզեն-Ձեզարի լեռնանցք երթուղով, դուրս է եկել Ան ծովի ափերը: Հավանաբար, Փոկայից ձգվող և Գանձայի վրայով դեպի Հեշտիա (իսկ այնտեղից՝ Աբուլ) գնացող կարևոր տարանցիկ առևտրական ճանապարհի պահպանության նպատակով է կառուցվել նաև գյուղից 14 կմ հյուսիս-արևելք գտնվող և առայսօր պահպանված «Բյոոսոլլի» կոչվող բերդը:

Շտեայի նշանավոր և խոշոր բնակավայր լինելու մասին են վկայում նաև գյուղի կենտրոնական հատվածում երկկայունա էլ պահպանված «ժամի տակ» և «Պալի տակ» կոչվող աղբյուրների վերին հատվածում բերրի պարիսպները, նրա տարածքում գտնվող հունադավան եկեղեցու մնացորդները, մի քանի տասնյակի հասնող տապանաքարերը, հայերեն և վրացերեն արձանագրությունները, գետնափոր բնակարանները, ստորգետնյա անցուղիները և հնագիտական տարբեր գտածոները:

#### THE VILLAGE OF SHTEA(H) OF HISTORICAL JAVAKHK AS AN ANCIENT SETTLEMENT

Yeranosyan A. (Yerevan State University, Memorial Complex of Sardarapat, National Museum of Armenian Ethnography and History of Liberal Struggle, Armenia)

#### ՀԱՅԳԱԿԱՆ ԼԵՆՈՒՍԵՆԱՐԱՀԻ ԺԱՅՌԱՊՍԱԿՆԵՐՆԵՐԻ ՔԱՐՏԵՁԱԳՐՈՒՄԸ

Քոխաթյան Կ. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)  
karen.tokhatryan@gmail.com

*Քանայի քառեր ժայռապատկերը, քարտեզ, լեռնաշխարհի, մշակութային ժառանգություն, պատմություն:*

1. Ժայռապատկերը պատմական սկզբնաղբյուր է, որը պատկերագրորեն արտացոլում է անցյալը: Այն շատ արժեքավոր է հայ ժողովրդի և Հայկական լեռնաշխարհի Ք. ա. VI-II հազ. պատմական իրականության վերհանման, ծագմանաբանության ու ժողովրդագրական խնդիրներում: Դրանց քանակությունը, ոճի և տեսակառու հարստությունը վկայում են պատմամշակութային ժառանգության այս կարևոր ոլորտում մեր նախնիների նշանակալի ավանդը:

2. Ուղղակի ուսումնասիրմանը մատչելի տարածքում (ՀՀ և Արցախ) 1998 թվականից կիրառել են արբանյակային տեղորոշման համակարգերով հուշարձանների դիրքանշումը: Կառուցվել է ՀՀ և Արցախի քարտեզ-շտեմաբան, որը պարունակում է 60 հեավայր՝ Գեղամա, Սյունյաց, Արցախի լեռներում և Ոսկեհատում, մոտ 4000 ժայռապատկերով: 2-3 մ ճշգրտությամբ համալիր քարտեզը թույլ է տալիս ժայռապատկերները դիտել իրենց միջավայրում՝ մտակա բնական ու հնագույն օբյեկտների հետ մեկտեղ (լեռ, լիճ, քարանձավ, աղբյուր, բնակատեղի, ճանապարհ, խաչմերուկ, ամրոց, միջնադարյան կառույց և այլն): Հնարավորություն կա նաև տեսնելու ժայռապատկերներն ըստ տեսակառու և ստեղծման ժամանակի:

3. Հնագիտոն քարտեզն ընդգրկեց նաև Հայկական լեռնաշխարհի ու հարակից շրջանները՝ Փոքր Ասիա, Արևելյան Միջերկրածովք, Միջագետք, Իրան և Կովկաս: Այսօր այն պարունակում է 4000 կետ, այդ թվում՝ տարածաշրջանի հնագիտական հանրահայտ 300 և ժայռապատկերային 110 հեավայր, 10-50 մ ճշգրտությամբ: Հին քարտեզների տվյալների ներառումը տեսանելի է դարձնում Մեծ Հայքի տեղանունների փոփոխման ու աղավաղման ընթացքը:

4. Աշխարհի ժայռապատկերներն ընդգրկող ամբողջական քարտեզ առաջին գոյություն չունի: Ժայռաքվեստն ուսումնասիրող մի շարք կազմակերպություններ կազմել են տեղական առավել հայտնի պատկերախմբերի քարտեզները, որոնք իրարից տարբերվում են տեսակով, ճշգրտությամբ և ձևավորմամբ (օրինակ Իտալիայի, Կալիֆորնիայի, Շվեդիայի, Քաղախյանի հնավայրերը, Ֆրանսիայի հարավի անձավապատկերները): Դրանց տվյալներն ի մի բերելով՝ կառուցել են մեկ միասնական էլեկտրոնային քարտեզ Արդիական մեթոդներով արված ժայռապատկերների բաշխման քարտեզը ներկայացվում է առաջին անգամ: Այն պարունակում է մոտ 7000 կետ, այդ թվում՝ 2000 բնակավայր, 1000 լեռ ու ջրանուն, 300 իսաչմերուկ, 300 հնավայր: Լեքառում է աշխարհի 800 ժայռապատկերային հնավայր: Տեղեկություններն ըստ առկա հրապարակումների ու համացանցի են, ճշգրտված են «Մեգալիթ պրոսալ», «Գուգլ քարտեզ» և այլ շտեմարաններով:

5. Քարտեզն առավել ակնառու է դարձնում այն, որ Հայկական լեռնաշխարհում առկա է ժայռապատկերների գերկենտրոնացում՝ մեծ քանակությամբ, քննատիկայի ու տեսակառու հարստության առումով, միևնույն նրա մերձակայքում հնագույն ժայռապատկերները քիչ են: Լեռնաշխարհը ժայռափորագրման հնագույն օջախ է, որտեղ հարատևած ու պահպանված ժայռապատկերման իմաստաբանությունը, ավանդույթներն ու հմտությունները Լեռնաշխարհից դուրս դրսևորում են ճառագայթաձև ու կենտրոնախույս բաշխում, այսինքն՝ էրևանյան լեռնաշխարհային ալիքների ու ազդակների ձևով աշխարհակարգումային պատկերացումների պիտույով: Չին աշխարհում կայացել է նաև ժայռագործության միջոցով և տեսքով:

Ժայռապատկերումը հայոց դեպքում բնածին է և առաջնային, եղել է հային բնորոշ, հարազատ ու ավանդակալ: Ակնհայտ է, որ Հայոց աշխարհի ժայռապատկերները երկնեղ է բազմառազարմյա, բնիկ, նստակյաց, մեկ միասնական էրևա՝ հայերը:

#### THE MAPPING OF PETROGLYPHS OF THE ARMENIAN HIGHLAND

Tokhatyan K. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of History, Armenia)

#### ՎԱՉԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱԳԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ (484-513 թթ.) ՇԵՏ ԿԱՊՎԱՄ ՈՐՈՇ ԲԱՅԱՆԱՅՏՈՒՄՆԵՐ

Կարապետյան Բ. («Շուշի» բարեգործական հիմնադրամ, [ՂՀ]  
info@shoushi.am

*Բանդի բա՛ պատմություն, Վաչական Բարեպաշտ թագավոր:*

Արցախ-Ուտիքում, ինչպես և Կուր գետի ձախակողմյան Բուն Ազվանքում III դարից մինչև 513 թ. տիրապետած Վաչականյան հարստության 11 թագավորների անունները, չնայած գուտ հայկական են, սակայն չգիտես ինչու, այսօրվա ուսումնասիրողները տանում են Կուրի ձախ ափ, դրանք համարում աղվանական: Իսկ որ գուտ «աղվան» էրնիկ միավոր գոյություն չի ունեցել, դա կարևոր չեն համարում: Մոլվես Կաղանկատվացու «Պատմությունում» դրանք գուտ հայկական անուններ են: Հայտնի է, որ Արցախում տիրապետող դիրք ուներ նաև Մաձաթանից իշխանական տունը: Այս երկու իշխանական տոհմերն իրար հետս դարեր շարունակ մրցակցել են Կուր-Արաքսի հովտում իշխելու ամս ու փոխնիփոխ հաջողություն են ունեցել: III դարի կեսից Պարսից արքայական տան հովանավորությամբ այստեղ իշխող դիրք է գրավել Մեծ Կուրանի Վաչականյան տոհմը՝ սկսած Քաջ Վաչականից մինչև Վաչական III Բարեպաշտը:

Իրանի տերերին ձեռնառել էր Մեծ Հայքից անջատել նրա հյուսիսարևելյան նեոտավայրը, դրանք միացնել Կուրի ձախակողմյան Բուն Ազվանքին՝ ստեղծելով առանձին մարզպետություն՝ նրա ըմբոստ հայությանը շնորհելով վստալ թագավորության կարգավիճակ՝ Վաչականյան տոհմի հաջորդական ժառանգին հռչակելով թագավոր: Պարսից արքայից արքան նախ իր նստավայրը էր կրավիրում Վաչականյան տոհմի ներքաղաքական ժառանգին, նրան կրոնափոխ անելով մոզ դարձնում, թագ շնորհում, ապա պսակում իր զարմուհու հետ և մոզերի ու գորագոյի հետ ուղարկում Արցախ: Այս թագավորությանը զուգահեռ՝ երկրամասում գործում էր մարզպանի ինստիտուտը իր բոլոր ատրիբուտներով՝ գործով, մոզպետներով, իշխանական ճյուղերով: Երե մարզպանը նստում էր Պարտավում, ապա Վաչականների անվտոխի նստավայրը Գյուտական ավան էր, որը գտնվում էր Ջրաբերդի



դիմաց Թարթառի աջ ափին: Մյևնև այժմ տեղի ժողովրդի մեջ պահպանվել է այդ վայրի «Մայրաքարաթ» անվանումը: Այն ուշ միջնադարում վերածվել էր Ջերաբերդի մելիքների նստավայրի՝ Բերդավուր սպարանք-ամրոցով: Իսկ Ջերաբերդ կոչվել է Գարապետոսաց թաղ կամ Սևկիլանսեռը: Եվ այսպես, Վաչականյան տոհմի անդամները հայրական կողմից հայ էին մնում, մայրական կողմից՝ պարսիկ:

Հայոց Արևելից կողմանց պատմության մեջ Վաչականյան հարստության յուզարանյուր ժառանգորդ ուներ իր նշանակալի դերը, ինչպես օրինակ Ռոնայրը, որը 319 թ. իր զորաբանակով քրիստոնեություն է ընդունել և Գրիգոր Լուսավորչին հրավիրել երկրամաս քրիստոնեություն տարածելու, ինչը Հայոց առաջին Հայրապետն ընդունել է: Նշանակալի էր նաև Վաչե արքայի դերը, որն ապստամբում է Պարսից դաժան արքա Պերոզի դեմ, ապա, հրաժարվելով գահից ու պարսկուհի կնոջից, մենաստան է մտնում: Այս մասին հետաքրքրական տեղեկություններ է պարունակում Հայոց Գյուտ կաթողիկոսի նամակը Վաչե արքային: Սակայն Վաչականյան տոհմի արքայացանկում առանձնահատուկ տեղ ունի վերջին թագավորը՝ Վաչական Բարեպաշտը: Վաչեից հետո, 30-ամյա անիշխանության և ապստամբություններով հարուստ տարիներից հետո Պարսից Վաղարշ թագավորը 484 թ. Տիգրան է հրավիրում Վաչականյան տան ժառանգորդին՝ Վաչեի եղբոր Նազկերտի որդի Վաչականին, թագադրում, առանց մոզերի ուղեկցության ուղարկում նրա երկիրը: Վաղարշը Պարսից կայսրության սահմաններում ապրող ժողովուրդներին ազատություն է շնորհում դավանանքի խնդրում: Նա Վաչականին չի պարտադրում պսակվել իր գաբումուտու հետ: Հայրենի եզերք վերադառնալով՝ Վաչականը ձեռնարկում է մի շարք փոխկազմակցված բարենորոգումներ: Դրանց մեջ զգալի նշանակություն ունեցան հայրուրավոր եկեղեցիների ու հայկական դպրոցների հիմնումը: Երկրամասի հետագա ճակատագրի համար մեծ նշանակություն ունեցավ, դրանից 100 տարի առաջ Շահապիվանի ժողովում Մեծ Հայքի համար ընդունված կանոնների համապատասխան, այս երկրամասում երբ սահմանադրական կանոնների ընդունումը: Դրանով բռնի կերպով առանձնացված հյուսիսարևելյան նահանգները ողջ Մեծ Հայքի հետ սահմանադրական օրենքներով նույնական դարձան: Արդեն ինչ օտար նպատակության տակ էլ գտնվեին, Կուր-Արաքսի հովիտը հայկական միջավայր էր մնում՝ մինչև թուրքական ցեղերի գանգվածային ներխուժը:

Վաչական 3-րդի այս գործունեությունը, անշուշտ, նրա կրթական ու դաստիարակչական զգալի ազդեցության կնիքն ունի: Բուն Արցախում անկնար էր նման կրթություն ստանալը: Հայտնի է, որ նրա նախորդը

Վաչե, ապստամբել էր Պերոզի դեմ: Հավանական է, որ իր ժառանգորդին նախապատրաստելու և պատանակության տարիներին վտանգներից հեռու պահելու նպատակով իր եղբոր որդուն ուղարկած լիներ մի ապահով վայր: Իսկ այդ վայրը Գուգարաց Ճուրտավն էր, որտեղ գտնվում էր Մամիկոնյանների գարնից Չվիկի հիմնած դպրոցը: Այդ տարիներին այստեղ էր ուսանել նաև Վահան Մամիկոնյանը՝ Վարդան սպարապետի երրորդորդին: Հենց Չվիկի դպրոցում Վահանի հետ մտերմություն էլ հիմք է դարձել, Վահանի ձեռնարկած պարտիզանական շարժմանը զուգահեռ, պարսից բռնապետության դեմ Արցախում բռնկված ապստամբության:

SEVERAL DISCOVERIES MADE IN REGARD WITH ACTIVITIES OF  
VACHAKAN THE PIOUS (484-513)

Karapetyan B. ("Shushi" Charity Foundation, Nagorno Karabakh Republic)

## ԱՐՏԱՅՈՒՄ ՈԱՏՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարությունյան Մ. («Կաճառ» գիտական կենտրոն, ԼՂՀ)  
kachar.gk.shushi@mail.ru

*Բանայի բառեր՝ բանակ, անվտանգություն, ագրեսիա, նորագույն պատմություն, ինքնապաշտպանություն, անցյալի վերախմայնացում:*

Ռազմական շինարարությունը յուրաքանչյուր պետության անվտանգության կարևոր բաղադրիչն է Այն պետական համակարգում առավել ծանրակշիռ է դասնում արտաքին ագրեսիային դիմագրավելու պայմաններում Արցախում ռազմական շինարարության առանձնահատկությունն այն էր, որ պետականակերտման գործընթացը զուգորդվում էր հակառակորդի ռազմական ագրեսիային դիմագրավելու հրատապ գործողություններով ու միջոցառումներով, որոնցից ամենապահանջվածը, բնականաբար, բանակաշինությունն էր:

Մեր նպատակն է անդրադառնալ Արցախում 1991-2006 թթ. Բանակաշինության պատմագրության մի քանի էինամասրերին, ինչը պայմանավորված է մեր ոչ հեռավոր անցյալի կարևոր իրադարձությունները հավաստի ներկայացնելու և վերախմայնացնելու անհրաժեշտությամբ: Թեմայի արդիականությունը բխում է Արցախում հայկական պետականության կերտման կարևորագույն ոլորտներից մեկի՝ ռազմական շինարարության սաղմնավորվող պատմագրության առաջնահերթությունների ու նպատակների հստակեցման անհրաժեշտությունից, ինչը կարող է խթանել նոր ուսումնասիրություններն ու թեմայիկ հետազոտությունները, ինչպես նաև ցրանց արդյունքների հրատարակումը (այդ թվում՝ օտար լեզուներով) և գիտական շրջանառությունը՝ դրանով իսկ նպաստելով ԼՂՀ միջազգային ճանաչման Ադրբեջանի հետ հակամարտության վերաբերյալ օբյեկտիվ հասարակական կարծիք ձևավորելու գործընթացներին:

Թեմայի նորույթը գիտական հարցադրման, ինչպես նաև մի շարք մտեցումների վերանայման ու փաստերի ճշգրտման մեջ է: Դրանք կատարվել են բազմամյա հետազոտությունների արդյունքների հիման վրա:

Հարկ է նշել, որ ԼՂՀ-ում բանակաշինության գործընթացի առանձին հարցերի անդրադարձել են Արցախյան շարժմանը և պատերազմին նվիրված գրքերի ու տարաբնույթ աշխատանքների հեղինակները: Ի տարբերություն 1991-1994 թթ., հրապարակի հաջորդված տարիների բանակաշինության գործընթացն արտացոլված է առանձին հրատարակումներում և կարգու և գիտական քննադատական ուսումնասիրությամբ:

Արցախում ռազմական շինարարության պատմագրության էինամասրերից կարելի է առանձնացնել պետականության խորհրդանիշերից մեկի՝ Պաշտպանության բանակի ստեղծման և իրավական ու փաստացի կազմավորման պարբերացումը, ԼՂՀ անվտանգության ու տարածքային ամբողջականության ապահովման գործում Պաշտպանության բանակի դերի արժեքումը, հայ ռազմարվեստը նկատելիորեն հարստացրած ռազմագործողությունների փորձը, ՊԲ մարտական ուղու քննադատական և վերախմայնացումը, ինչպես նաև այդ ու հարակից հարցերի լուսաբանման գիտական մեթոդների ու սկզբունքների ճիշտ քննարկումը:

Այդ էինամասրերի՝ գիտական հանրության համար ընդունելի լուծումների առաջադրման անհրաժեշտ էինքեր կարող է ստեղծել հետագա անաչառ ուսումնասիրությունների և ներկայումս շրջանառվող մի շարք տեսակետների՝ ժամանակին վերանայման համար:

### ABOUT SOME PROBLEMS OF THE HISTORIOGRAPHY OF MILITARY CONSTRUCTION IN ARTSAXH

Harutyunyan M. ("Kachar" Scientific Centre, Nagorno Karabakh Republic)

**ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ ՆԵՔԱՆՍՅԱԿԱՆ  
ՓՈՒՍԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հմայակյան Հ. (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
hhmayakyan@yahoo.com

*Բանալի բառեր Հայասա, խեթահայկական, Բ. Հրոզնի, Ն. Մարտիրոսյան, լեզվաուշակույթ, սեպագիր*

Խեթահայկական լեզվաուշակույթային փոխառնչությունների, ինչպես նաև խեթական տեքստերում հիշատակվող Հայասա բաղաբանական միավորի (Ք.ա. XIV-XIII դդ.) էթնիկ պատկանելության, տեղադրության հարցը դեռևս անցյալ դարի 1920-ականներից զրավել է թե՛ հայ, թե՛ օտարազգի ուսումնասիրողների ուշադրությունը: Այս հարցերին անդրադարձած հեղինակների շարքում գիտության մեջ հիմնականում, որպես առաջիններ, հիշատակվում են Է. Ֆռեդերի (1931), Է. Կավիկյակի (1932-1934), Ջ. Բոնֆանտի (1939), Հ. Պեդերսենի (1945), Ե. Ադոնցի (1946), Գ. Ղափանցյանի (1948) և այլոց աշխատությունները: Այս հեղինակների շարքում, սակայն, շատ քիչ է նշվում Նշան Մարտիրոսյանի անունը, ով առաջին էր, որ նկատել էր Հայասա տեղանունը խեթական սեպագիր տեքստերում և փաստել «հայ» ցեղանվան հետ նրա կապը: Խոսքը վերաբերում է դեռևս 1921-1922 թթ., երբ ինչպես Ն. Մարտիրոսյանն է նշում, ինքն իր ուսուցչի՝ Բ. Հրոզնիի (խեթական սեպագիր տեքստերը վերձանած չէին հանրահայտ գիտնական) հետ կարդում էին խեթական սեպագիր տեքստեր և քարտարան էին պատրաստում, որը պետք է հիմք հանդիսանար խեթերեն-չեխերեն բառարանի համար: Այդ ժամանակ էլ, ինչպես նշում է Ն. Մարտիրոսյանը, խեթական տեքստերում հանդիպում է Հայասա տեղանվանը և Հրոզնու խորհրդով հիմնադրուպես ուսումնասիրում այդ տեղանունը պարունակող խեթական արձանագրությունները: Այդ տարիներին Ն. Մարտիրոսյանն անդրադառնում է նաև խեթահայկական լեզվական զուգահեռներին, և արդեն 1924 և 1929 թթ. «Հանդես ամսօրեայ»-ում լույս են տեսնում նրա առաջին դիտարկումները, որոնք ժամանակագրորեն վաղ են մյուս հեղինակների հրատարակումներից: Հետագայում նրա այս բնագավառին վերաբերող ուսում-

նասիրությունները տեղ են գտել «Խաբբերդ և անոր ոսկեղեն դաշտը», (1957), «Պրպտումներ փոքրասիական անուններու մասին» (ՊԲՀ, 1961, 3-4), «Լպատս մը հեթ և հայ բառարնություն» (ՊԲՀ, 1972, 2՝ տպված հետմահու) և այլ աշխատություններում:

Ցավոք, նրա դիտարկումների հեղինակային իրավունքը երբեմն չի պահպանվել, կամ դրանք լայն շրջանառություն չեն ստացել, հաճախ էլ, ինչպես ինքն է նշում, յուրացվել կամ կիրառվել են առանց հեղինակին հոգևու: Այս է պատճառը, որ Ն. Մարտիրոսյանի դիտարկումները չեն ներառվել նաև խեթագիտական ժամանակակից արևմտյան ուսումնասիրություններում կամ տեղ չեն գտել խեթերենի ստուգաբանական բառարաններում: Այնիչև Ն. Մարտիրոսյանի, մասնավորապես, խեթահայկական զուգահեռներին վերաբերող ստուգաբանությունների մի զգալի մասը մեծ արժեք ունի և բնագավալից սերտորում է ոչ միայն հայագիտության, այլև խեթագիտության մեջ:

Ձեկնցման նպատակն է ընդհանրական ձևով ներկայացնել Ն. Մարտիրոսյանի վաստակն այս առումով:

**NSHAN MARTIROSYAN'S (NESHAN MARTIROSSIAN) MERITS IN THE STUDY OF ARMENIAN-HITTITE INTERRELATIONS**

Hmayakyan H. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒՇ. ԵՐԵՎ ԵՎ ԱՅՍՈՐ

Հովհաննիսյան Ա. (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
anush.hov@gmail.com

*Բանալի բառեր՝ հայկական Մուշ, պատմական հուշարձանների  
ոչնչացում, մշակութային ցեղասպանություն:*

Բազմաթիվ մասնագետներ համարում են, որ ցեղասպանություն եզր  
վետք է ընդգրկի նաև «մշակութային ցեղասպանություն» հասկացությունը:

Ժամանակակից «մշակութաբանությունը» դիտարկում է մշակութային ցե-  
ղասպանությունը (Եթևոցին) որպես որոշակի քաղաքականություն և գոր-  
ծողությունների այնպիսի ամբողջականություն, որոնք նպատակ ունեն  
ոչնչացնելու առանձին խմբի ինքնությունը՝ ոչ պարտադիր ֆիզիկապես վե-  
րացնելով այն: Ինքնության ոչնչացմանը կարելի է հասնել խմբի քաղա-  
քական և սոցիալական ինստիտուտները վերացնելով (մշակույթ, լեզու, ազ-  
գային արժեքներ, կրոն, տնտեսական կառույցներ): Հենց այս համատեքստում է  
ցեղասպանագետ Փամբլա դե Կոնդապան նշում, որ մշակութային ժառան-  
գության ոչնչացումը նշանակում է ժողովրդի, որպես ամբողջականություն,  
ինքնության վերացում: Լույսինակ բիրտխային խմբի անդամների ֆիզի-  
կական բնաջնջումից հետո նրա թոգած կյանքական ժառանգությունը (պատ-  
մական հուշարձանները, հոգևոր կառույցները, գերեզմանոցները և այլն)  
շրջակայքի և ներսնանկ լեզվատիրության աղբյուր է՝ պատմական պահանջա-  
տիրության պարագայում:

Մշակութային ցեղասպանությունը կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում  
ցեղասպանության, որը չի ավարտվում ազգի սուկ ֆիզիկական բնա-  
ջնջմամբ: Այդպես է հայերիս պարագայում, քանզի հայկական մշակույթի  
«սպիտակ ջարդը» շարունակվում է առ այսօր: Դրա վառ ապացույցներից է  
Մուշը, որտեղ առիթ ունեցանք հետազոտական աշխատանքներ կատարել  
2011 թ. հոկտեմբեր ամսին և որի արդյունքները կնրկայացնենք մեր գեկուց-  
ման ընթացքում:

Մուշը հարյուրամյակներ եղել է արևմտահայության կարևոր քաղաքա-  
կան, տնտեսական, մշակութային կենտրոններից, հեթևուռ Հայաստանի  
կարևորագույն կրոնական վայրերից: «Պատմական Հայաստանի քաղաքնե-

րը» գրքում ասվում է, որ IX դարի վերջերից մինչև 1914 թվականը քաղաքն  
ունեցել է մոտ 20000 բնակիչ, որից 11000-ը՝ թուրքեր ու քրդեր, իսկ 9000-ը՝  
հայեր: Այլ աղբյուրների համաձայն՝ մինչև ցեղասպանությունը Մուշի գա-  
վառն ուներ մոտ 120 հայկական բնակավայր՝ շուրջ 70 հազար հայ բնակ-  
չությամբ: Հայերը գրավում էին արհեստագործությամբ, առևտրով, երկրա-  
գործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Նրանք լավ կոչկա-  
կարներ էին, դերձակներ ու սուկերիչներ, դարբիններ և կավագործներ:  
Մուշը բաժանված էր երկու մասի՝ հայկական ու մահմեդական, և ուներ 12  
մեծ ու փոքր թաղեր: Քաղաքի կենտրոնում շուկան էր՝ տասնյակ աղետաու-  
գործական ու առևտրային կրպակներով, իջևանատներով ու եկեղեցիներով:

Ցեղասպանության տարիներին Մուշի շրջանը, որն այն ժամանակ մաս էր  
կազմում Բիթլիսի վիլայեթի, ամենաշատ տուժած շրջաններից էր: Ըստ  
1927 թ. թուրքական վիճակագրության, մշեցի հայերի 99 տոկոսը համարվել է  
անհետ կորած:

Մաղաքիա Օրմանյան պատրիարքի տվյալներով՝ Արևմտյան Հայաս-  
տանում ամենից շատ հայկական եկեղեցիներ՝ 230, եղել են Մուշի գավա-  
ռում: Մոտ հարյուր տարի առաջ հիշատակվող, գործող ու կանգուն եկեղե-  
ցիներից այսօր ոչ մեկը չի գործում, ավելին՝ բոլորը պղծվել, քանդվել և  
կորսվել են: Մշո Առաքելոց և Սբ Կարապետ վանքերը միակ հնու-  
թյուններն են, որոնք հիշատակվում են գրոսաշրջիկների ուղեգրակներում,  
այն էլ թրքացված ձևով (Arak venki և Çanli kilise, այսինքն՝ զանգյակատեղ  
կեղեցի), առանց նշելու նրանց հայկական ծագումը: Լույս կախեցույցների՝  
Մուշի պատմությանը նվիրված ակնարկներում հայերի մասին հիշատակում  
չկա:

Այսպիսով՝ իր բծորայնում մի ամբողջ ժողովրդի բնաջնջման հետ  
ոչնչացվեցին նաև հայ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում ավերած  
քաղաքակրթության բազմաթիվ և բազմատեսակ արժեքները և հուշարձան-  
ները, որոնցից հետո փորձ է արվում ջեյել նաև ցանկացած հիշատակում  
այդ արժեքների իրական տեղերի մասին: Նման գործողությունների կան-  
խամտածված ձևը և չափերը թույլ են տալիս խոսել Թուրքիայում հայկական  
քաղաքակրթության հանդեպ գործադրված մշակութային գեղեցիկ մասին:

### ARMENIAN MUSH. YESTERDAY AND TODAY

Hovhannissyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Oriental Studies, Armenia)

**ԹՈՒՐԿԱԿԱՆ ԺՆԱՌՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՈՑ  
ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՏԱՊԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԼՈՐ  
ՈԱԶՄՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆ**

**Մարտյան Ա. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)**

*Բանալի բառեր՝ ցեղասպանություն, հայ ժողովուրդ, նենգափոխում, միջազգային ստյան, սփյուռք, ռազմավարություն:*

Հայոց ցեղասպանության ընթացքում և դրանից հետո թուրքական կողմը ձեռնամուխ եղավ այդ հանցագործությունը ժխտող կամ նենգափոխող մի շարք վարկածների մշակմանն ու ներկայացմանը, որոնք հետագայում վերածվեցին Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական պետական «հայեցակարգի»:

Միևնույն ժամանակ հայ ժողովուրդը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարում կարողացել է հասնել տարբեր երկրների խորհրդարանների կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման կամ դատապարտման բանաձևերի ընդունմանը: Պայքարի նման ռազմավարության ընտրությունն ունեցել է թե՛ օրյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ պատճառներ: Օրյեկտիվ պատճառների թվում կարելի է նշել այն, որ խորհրդայնացումից հետո Հայաստանը, լինելով ԽՍՀՄ-ի կազմում, ի գործը չէր բարձրացնելու այդ հարցը միջազգային ստյաններում, այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործն իր վրա էր վերցրել Սփյուռքը, որը, չլինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, իր ուժերի ու հնարավորությունների սահմաններում ձգտում էր գտն հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը կոնկրետ երկրների կողմից: Սուբյեկտիվ պատճառներից առաջինը կարելի է նշել այն, որ ընդհանուր առմամբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը եղել է պատասխան թուրքական ժխտողականությանը և ընթացել է կեղծիքին պատասխանելու տրամաբանությամբ:

Լերկայումս սովյալ ռազմավարությունը, որը նաև թելադրված էր թուրքական ժխտողականությամբ, այնու անարդյունավետ և անհետատես և պայքարի նոր ռազմավարությունը պետք է տարվի Հայոց ցեղասպանության

հետևանքների վերացման ու հաղթահարման ուղղությամբ: Սա ներառյում է ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչում ու դատապարտում, այլև՝ հատուցում կատարված հանցագործության համար, ինչը, թերևս, ամենակարևորն է և առանց որի թե՛ ճանաչումը և թե՛ դատապարտումը դառնում են ուղղակի անիմաստ: Այս առումով Հայաստանի ու Սփյուռքի համապատասխան կառույցներն ու մասնագետները պետք է ստեղծեն ռազմավարական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների և Թուրքիայի ներկայացվելիք պահանջների հիմնավորման պատմաիրավական փաթեթը»: Այդ «Պահանջների փաթեթում» հստակորեն պետք է ամրագրվի, թե հայ ժողովուրդն ի՞նչ է հասկանում «Հայոց ցեղասպանության հետևանքներ» ասելով և ի՞նչ պահանջներ է պատրաստվում ներկայացնել թուրքիային: «Պահանջների փաթեթի» հիման վրա պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հայեցակարգը», որում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների վերացմանը:

**THE TURKISH DENIAL AND THE NECESSITY OF NEW STRATEGY OF THE CONDEMNATION AND RETRIBUTION OF THE ARMENIAN GENOCIDE**

**Marukhyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of History, Armenia)**

**ՀԱՅ ՊԱՏՄԱԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՍՊ ԽՆԴՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԼԵՌԱՆԵՐԱԸՆԻ ՊԱՏՄԱՄԵԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱԳՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԳԱՎԱՆՈՒՄ**

**Մերնյան Ա. (22 ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)**

*Բանալի բառեր՝ հայոց պատմության, Հայկական լեռնաշխարհ, հայագիտություն, պատմական խեղաթյուրումներ, Մերնյան Անատոլիա, ցեղասպանություն:*

Հայոց պատմության և հայ մշակույթի ուսումնասիրության բնագավառում հայագիտությունը հասել է վիթխարի հաջողությունների: Այդ ձեռքբերումները վերաբերում են ինչպես դասական հայագիտությանը, այնպես էլ խորհրդային ու հետխորհրդային ժամանակաշրջաններին: Մակայն գանազան պատճառներով առ այսօր բազմաթիվ հիմնահարցեր դեռ լուրջ հետազոտության, ինչպես նաև վերանայման կարիք ունեն, առավել ևս, որ դրանց մի մասը հայոց պատմության բուրբ-արդյրեանական աննախդեպ խեղաթյուրումների պայմաններում ունի գիտաբաղաբական մեծ նշանակություն և շոշափում է ազգային անվտանգության խնդիրներ: Հրատապ հիմնահարցերի շարքում, ըստ պատմական տարբեր շրջափուլերի, առանձնացնենք կարևորագույնները:

20-րդ դարի ընթացքում՝ մասնավորապես դարասկզբին, երիտթուրքերի կողմից իրականացված ցեղասպանություննից ու հայերի հայրենագրումից հետո ստեղծված ոչ հայանպաստ աշխարհաքաղաքական իրավիճակից օգտվելով՝ թուրքական իշխանություններն ու «գիտական» շրջանակներն ամեն ինչ արեցին Հայկական լեռնաշխարհի տեղակալմամբանությունը փոխելու, աղավաղելու և հայկականության հետքերն իսպառ վերացնելու համար: Միևնույն ժամանակ դարի կեսերը տարբեր երկրներում, այդ թվում՝ ԽՍՀՄ-ում, տպագրված քարտեզներում հիշատակված «Հայկական լեռնաշխարհ», «Հայաստան» տեղանուններին փոխարինելու կնպակ «Արևելյան Անատոլիա» որոտահայտությունը, որը ո՛չ գիտական և ո՛չ էլ քաղաքական առումով արել քննություն չի բռնում: Նման տարբերակով աղավաղվեց ամբողջ Հայկական

լեռնաշխարհի տեղանվանաբանությունը, և մոտավորապես նույն տարբերակով վերջին շրջանում արդեն նորանկալն Հայաստանը, որի տարածքը ժամանակին էլ անհասկանալի ձևով մաս էր կազմել դարձյալ գիտականորեն խոցելի համարվող օուտական «Անդրկովկասին», այժմ էլ հայտնվեց այսպես կոչված «Հարավային Կովկասում»: Ծագոք, Հայաստանի իշխանություններն ինչ-ինչ մղումներով, առանց խնդրի մեջ խորանալու, իրենց հերթին քաղաքացիություն տվեցին այդ վտանգավոր մոտեցմանը: Կարծում ենք, որ դրանում մեղքի որոշակի բաժին ունեն նաև գիտական շրջանակները, որոնք ժամանակին չարձագանքեցին խնդրին և նույնպես համբերաշիտվեցին Արևմտոտրից մատուցված նորամտություններին, առավել ևս, որ մեզ սկսեցին հավաստիացնել, որ մեր տարածաշրջանն իրականում ոչ թե Ասիայի մաս է կազմում, այլ գտնվում է քաղաքակիրթ Եվրոպայի սահմաններում: Այսպիսով, նորագույն ժամանակներում սկսված տեղանվանաբանական կեղծարարությունը շարունակվեց:

Հայ պատմագիտության առջև կանգնած կարևորագույն խնդիրների շարքում է մնում ծագումնաբանության հարցը: Այս ոլորտում վերջին տասնամյակներին զգալի առաջընթաց է գրանցվել: Կարծես թե գոնե մեզանում հայերի կկորության խնդիրը փակվել է, թեև դա ժամանակ առ ժամանակ գանազան դրսևորումներ է ունենում: Բաց քանի որ հարցը շարունակում է մնալ օտար կեղծարարների ուշադրության կենտրոնում, իսկ մեզանում էլ, փաստորեն, դեռ պաշտոնական հայեցակարգ չկա, ուսումնասիրություններն այդ ուղղությամբ մեծ թավով պետք է շարունակվեն:

Օպումնաբանության հիմնահարցից անանցնում են նույնատիպ այլ խնդիրներ՝ կապված Հայաստանի պատմական ժողովրդագրության հետ: Ուրախալի է, որ վերջին տասնամյակներին զգալի աշխատանք կատարվեց հատկապես Արևմտյան Հայաստանի նահանգների ժողովրդագրական հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Այդուհանդերձ, մեր հայրենիքի պատմական ժողովրդագրության ամբողջական պատկերը ներկայացնող համապարփակ աշխատություններ դեռ չկան:

Չաջորդ խնդիրը վերաբերում է հայոց պետականության պատմության հիմնահարցին: Ընդ որում, այս հիմնախնդիրն ունի բազմաթիվ ենթաշերտեր՝ սկսած Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման ժամանակաշրջանի, դրա բնակչության, արքայատոհմերի էթնիկ պատկանելության հարցերից մինչև միջնադարի ընթացքում պետական գանազան դրսևորումները, պետականության վերականգնման համար ծովափնյա ազատագրական պայքարն ու նորագույն ժամանակներում (1918-2012 թթ.)

երեք հանրապետությունների փոխանցության և իրավահաջորդության հարցադրումները: Այս հարցը նույնպես ունի գիտաքաղաքական կարևորություն, քանի որ դարձել է թուրք-ադրբեջանական կեղծարարության գլխավոր բիրտասներից մեկը: Հայոց պետականության պատմության ընդհանուր շղթայի մեջ հասուն կշռանա կոյուն ունի Ուրարտու անունով հայտնի թագավորության խնդիրը:

Հայոց պատմության հիմնահարցերի շարքում հրատապ ուսումնասիրության կարիք ունի քրիստոնեության ընդունման գնահատականի հարցը: Դեռ շարունակում են հնչել տեսակետներ, թե քրիստոնեության ընդունումով սկսվեց մեր պետականության թուլացման ժամանակաշրջանը, իսկառ ոչնչացվեց հայ հելլենիստական մշակույթը և այլն: Նույնիսկ փորձ արվեց կասկածի տակ դնելու Հայաստանյայց Առաքելական եկեղեցու դերը հայոց պատմության մեջ:

Բավարարվելով կենսական նշանակություն ունեցող հիմնահարցերից միայն մի քանիսի թվարկումով՝ ընդգծենք, որ, չնայած վերջին տասնամյակների կատարված առեղի աշխատանքին, հայ պատմագիտական դպրոցն ունի լուրջ անելիքներ, որոնց լուծումը պահանջում է հայրենիքի և սփյուռքի մասնագետների ջանքերի գործադրում:

THE URGENT PROBLEMS OF ARMENIAN HISTORIOGRAPHY IN THE  
SPHERE OF HISTORICAL-CULTURAL HERITAGE OF THE ARMENIAN  
HIGHLAND

Melkonyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of History, Armenia)

ԱՐՑԱՆՅԱՆ ԱԶՍԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄ-ԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՈՒ ՀԱՅ  
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՌԻՐՆԵՐԸ

Փիննասյան Է. (ԵՊՀ, Հայաստան)  
edik\_minasyan@hotmail.com

*Բանալի բաներ՝ Արցախ, հայ պատմագիտություն, ազատագրական պայքար, Արցախյան հիմնախնդիր, ռազմավարական հետազոտությունների կենտրոններ:*

Արցախահայության ազատագրական պայքարն իր ուրույն տեղն ունի հայոց նորագույն պատմության մեջ: 1921 թ. հունիսի 5-ին Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի ասյորիների բռնակցվելուց հետո արցախահայությունը շուրջ 7 տասնամյակ անընդհատ բողոքում էր այդ անարդարացի և ասյորիների որոշման դեմ՝ պահանջելով այն միավորել մայր հայրենիքի հետ, սակայն Մոսկվայի և Բարվի իշխանությունները մերժում էին այդ արդարացի պահանջը: Ավելին, Ադրբեջանի իշխանությունները կանխամտածված խոչընդոտում էին Լեռնային Ղարաբաղի ազնիվ-տնտեսական, գիտամշակութային զարգացմանը, արգելակում կապը մայր հայրենիքի հետ և, աստիճանաբար արտամղելով տեղի հայ բնակչությանը, արհեստականորեն ավելացնում էին ադրբեջանցիների քանակը՝ փորձելով փոխել մարզի ժողովրդագրական կազմը: 1980-ական թվականներին ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ արցախահայությունը կամ պետք է զանգվածաբար լքեր իր հողը և արժանանար Նախիջևանի հայության ճակատագրին, կամ պետք է պայքարի ելներ՝ իր բնօրրանը և մարդկային ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար: Արցախահայությունն ընտրեց երկրորդ ուղին՝ պայքարի ճանապարհը: Գորրաշուկան «վերակառուցման» քաղաքականությունն ու թվացյալ ժողովրդավարությունը նպաստեցին արցախահայության բացահայտ պայքարի ծավալմանը, և ադրբեջանական բռնափորձությունից նրա ազատագրումը դարձավ օրակարգի հարց:

Արցախյան ազատամարտի ժամանակաշրջանը հայ պատմագիտության կարևոր խնդիրներից է և ունի արդիական ու քաղաքական կարևոր նշանակություն: Սակայն արցախահայության պայքարի և Ադրբեջանի կողմից նրան պարտադրված պատերազմում տարած փայլուն հաղթանակների շատ հարցեր դեռևս չեն լուծվել: Գրեթե չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը: Ցավոք, մինչև օրս հիմնախնդրի շուրջ եղած գրականությունն ավելի շատ հանրամատչելի է և առավելապես հուշագրական բնույթ ունի:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխարհի քաղաքական կյանքում տասնակն նոր պտղոճներ, բազում խնդիրներ առաջացան: Անհրաժեշտ է նորովի գնահատել այդ ամենը և վերագնահատել շատ տեսակետներ, որոնք հրապարակ են նետվել դեպքերի թարմ հետքերով կամ հորիզվել արդրեչանական գրչակների կողմից:

Ավելի քան 22 տարի է անցել Արցախյան ազատագրական պայքարի նորագույն շրջանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկան հատկապես օտարալեզու ամբողջական ուսումնասիրություններ, որտեղ քննության առնված լինեն Արցախյան նորօրյա ազատամարտի՝ 1988 թվականից սկսած բոլոր փուլերն ու առանձնահատկությունները, հաղթանակն պատերազմի դերն ու նշանակությունը, ռազմական գործողությունները, 1994 թ. զինադադարի հաստատումը, համահայկական զորակցությունը Արցախին, ինչպես նաև միջազգային հանրության ջանքերն արցախյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման ուղղությամբ: Մինչև այսօր չկա նաև ամբողջական ուսումնասիրություն, որը նվիրված լինի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակմանը, պետականության կարգավորման գործընթացին, նրա ներքին ու արտաքին քաղաքականության բազմակողմանի վերլուծությանը:

Արցախյան (1988-2011 թթ.) հիմնախնդրի ուսումնասիրության վերաբերյալ հրապարակի վրա եղած գրականությունը և ուսումնասիրությունները կարելի է բաժանել մի քանի խմբերի.

- ա) Արցախյան շարժման վերաբերյալ ուսումնասիրություններ,
- բ) Ղարաբաղա-ադրբեջանական 1991-1994 թթ. պատերազմի ռազմական գործողությունների վերաբերյալ հետազոտություններ,
- գ) Արցախյան հարցի միջազգայնացման ու միջազգային հարաբերությունների ոլորտում նրա քննադրումների մասին եղած փաստաթղթեր ու ուսումնասիրություններ,

դ) Արցախյան անկախ պետականության (ԼՂՀ) հռչակման, պետականության կայացման, նրա ներքին ու արտաքին քաղաքականության վերլուծության վերաբերյալ ուսումնասիրություններ:

Կատի ունենալով Արցախյան ազատամարտի նորագույն շրջանի (1988-2011 թթ.) պատմության ողջ կարևորությունն ու ազգային-հայրենասիրական, գիտական և քաղաքական նշանակությունը՝ կարծում ենք, որ.

1. Առաջիկայում Արցախի նորագույն շրջանի պատմության ուսումնասիրությունը պետք է իրականացվի համալիր եղանակով՝ ներգրավելով դրա մեջ ոչ միայն ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության ինստիտուտները, այլև ԵՂՀ պատմության, միջազգային հարաբերությունների և արևելագիտության ֆակուլտետները, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարությունը:

2. Ցավոք, անկախ Հայաստանի Հանրապետությունում 20 տարիների ընթացքում չստեղծվեցին ազգային անվտանգության բնագավառն ուսումնասիրող պատշաճ գիտական որակավորում ունեցող վերլուծական կենտրոններ՝ իրենց համապատասխան կադրերով, թեև ի սկզբանե պարզ էր, որ դարաբաղայն հակամարտությունը սերտորեն առնչված է համաշխարհային բազմաբնույթ զարգացումների, որոնք անհրաժեշտ է ժամանակին և արագ վերլուծել: Ուստի խիստ անհրաժեշտ են նման կենտրոնների ստեղծումն ու համապատասխան կադրերով դրանց ապահովումը: Դրանք կարելի է ստեղծել նաև բուհերում՝ կոնկրետ և հրատապ ծագած խնդիրները քննարկելու և վերլուծելու համար:

3. Անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարությունը կամ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ստեղծի ռազմավարական հետազոտությունների նոր կենտրոն, որը կվճակի հեռակարգային գործողությունների ռազմավարական ծրագրեր ոչ միայն ՀՀ անվտանգության ապահովման համար, այլև՝ արցախյան հակամարտության ընթացքն ու կարգավորման հետադիտությունները մասնագիտական համակարգավորված վերլուծության ենթարկելու, կոնկրետ ու պրակտիկ առաջարկներ անելու նպատակով:

4. Ուսումնասիրությունների արդյունավետությունն էապես կարելի է բարձրացնել՝ գիտական համագործակցություն հաստատելով նշված հարցերով՝ գաղափարապես արտասահմանյան գիտնականների և մասնավորապես սփյուռքահայ պատմաբանների, արևելագետների ու միջազգայնագետների հետ:



5. Հարկավոր է ստեղծել համակարգող մի մարմին՝ ընդգրկելով նրա մեջ հիշյալ հարցերով զբաղվող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներին, ինչը հնարավորություն կտա խելամուղեն օգտագործելու հանրապետության գիտական ներուժը:

6. Սոցիոլոգիական հարցումներով ու անձնական դիտարկումներով կարելի է վերլուծել ու քննարկել ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտների գործընթացները և անել համապատասխան առաջարկներ:

THE SITUATION OF THE STUDY OF ARTSAKH'S FIGHT FOR  
FREEDOM HISTORY AND THE MODERN PROBLEMS OF ARMENIAN  
HISTORIOGRAPHY

Minasyan E. (Yerevan State University, Armenia)

ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԺՄԵՆՆԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԴԲԵՋԱՆԱԿԱՆ  
ՊԱՅՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մինիթայան Է. («Գրիգոր Նարեկացի» համալսարան, ԼՂՀ)  
mm\_elina@rambler.ru

*Բանալի բառեր՝ պայմանագիր, պատմագիտություն, փաստարկներ, սկզբնաղբյուրներ, պատմական իրականության կեղծարարություն, հակամարտություն:*

«Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» և «Ադրբեջանական պատմագրություն» բառակապակցությունները ղժվար համադրելի են թվում. Բայց, երբ Ադրբեջանն իր հավակնություններն է ցուցաբերում ոչ միայն քաղաքականապես՝ բնիկ հայկական հողերի նկատմամբ, այլև՝ հայ պատմամշակութային ժառանգության հանդեպ, նպատակային է աշխատում այդ հավակնությունները հիմնավորել «գիտականորեն»՝ նեկզափոխելով պատմական իրականությունը, ապա դա որոշակի մարտահրավեր է հայ պատմաբաններին և միայն քաղաքագետներին ու քաղաքական գործիչներին խնդրո առարկա չէ: Ադրբեջանական պատմագրությունը հատկապես մեծ ջանքեր է թափում կեղծարարությամբ հիմնավորելու «հայերի եկվորության» (առավել ևս՝ արջախահայության եկվորության), «հայերի վերաբնակեցման» դրույթը, ինչն առավելապես շահարկվում է Արևելյան Հայաստանի մի մասի՝ Ռուսաստանյան կայսրության կազմի մեջ մտնելն ամրագրող Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի լուսաբանման ժամանակ: Այստեղ վեր են հանվում ինչպես «խորհրդային եղբայրության» թողով պաշտպանվող ադրբեջանական պատմաբանների, այնպես էլ մերօրյա ադրբեջանական պետական քարոզչական մեքենային ծառայող պատմաբանների՝ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի ու դրանց հետևանքների ոչ գիտական լուսաբանումները:

Այսրեզուլտատայան տարածաշրջանում օրակարգային հանդիսացող դարաբաշյան հակամարտության կարգավորման գործընթացում միջևորդ կողմերը սովորաբար հորդորում են շխորհանալ պատմության մեջ, չդիմել պատմա-

կան փաստարկների, սակայն աղբրեջանական քարոզչական մեքենան իր զարթոզական նկրտումները հիմնավորելու համար լայնորեն կիրառում է պատմության նենգափոխությունը՝ զինադադարի պայմաններում ծայր ասած տեղեկատվական պատերազմում զգալի հաջողություններ արձանագրելով: Ավելին՝ չի բավարարվում միայն Արցախի տարածքի նկատմամբ հավակնություններով, այլև, «վկայակոչելով» Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը՝ որպես միջազգային պայմանագիր-փաստաթղթեր (Երևանի, Ղարաբաղի, Նախիջևանի և մյուս «աղբրեջանական» խանությունների, հայերի «վերաբնակեցման» և այլ «փաստեր»), փորձում է հիմնավորել Հայաստանի Հանրապետության տարածքի «աղբրեջանական լինելը» եւ: Այս պայմաններում արդիական են աղբրեջանական պատմագիտության համակողմանի քննությունը, քննադատությունը, գնահատումը:

Աղբրեջանի պատմագրության կողմից կոնկրետ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի՝ որպես իրավական փաստաթղթերի, դրանց իրավաբանական հետևանքների համակողմանի հետազոտության անդրանիկ փորձն է մեր հետազոտությունը:

Էտատիզմի սկզբունքների հավատարիմ՝ աղբրեջանական պատմաբանների աշխատանքները ենթարկվել են քննական մոտեցման, վերլուծվել են՝ համադրելով փաստարկները սկզբնաղբրերի հետ, կիրառելով պատմահամեմատական վերլուծության սկզբունքները:

THE COVERAGE OF AZERBAIJAN HISTORIOGRAPHY OF GIULISTAN AND TURKMANCHAY AGREEMENTS

Mkhitarian E. (Grigor Narekaci University, Nagorno Karabakh Republic)

ԱՐՏԱՆԻ ՀԱՏ ԻՇԽՈՒԱԿԱՆ ՏՆԵՐԻ ԷԹՆԻԿ ՊԱՏՎԱՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԵՆԳԱՓՈՒՄՄԱՆ ԵՈՒՐՁ

Շահնազարյան Ա. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

*Բանալի բառեր՝ պատմահետազոտություն, Արցախ, Ուտիք, Աղվանք, իշխանական տներ, էթնոս:*

Աղբրեջանական պատմահետազոտությունը՝ ի դեմս Ջ. Յամպուլսկու, Ջ. Բուկիաթովի, Յու. Գելյուշևի, Ռ. Հուսեյնովի, Ֆ. Մամեդովայի, Ռ. Մեխտիևի և այլոց, ի սկզբանե շրջանառության մեջ է դրվել, իսկ մեր օրերում պատմաշինարարության թյուրքական մեթոդներով պատմական իրականության անօրինակ կեղծմամբ համառորեն զարգացնում է միմյանց հետ սերտորեն կապված հակազիտական երկու տեսակետներ: Դրանցից մեկի համաձայն՝ Հայոց Արևելից կամ Աղվանից կողմերը հանդիսացող Ուտիքն ու Արցախը ոչ թե Մեծ Հայքի նահանգներ են, այլ ի բնե Բուն Աղվանքի մաս կազմելով, բնակեցված են եղել աղվաններով: Ըստ երկրորդի՝ ոչ վաղ անցապում կողակայան թաթարներ անվամբ հայտնի, այժմ աղբրեջանցի վերանվանվածները ոչ թե նկվոր թյուրքերի, այլ՝ աղվանների օրինական ժառանգներ են:

Այս պատմաշինարարության արդյունքում արցախյան իշխանատուներին էրնիկ պատկանելությունը նենգափոխվում է, և նրանք հռչակվում են աղվաններ, այսինքն՝ աղբրեջանցիներ: Այս մտավարժանքով փորձ է արվում հիմնավորելու Արցախի նկատմամբ աղբրեջանական նկրտումները: Իրականում բուն Աղվանքը ընդգրկել է ոչ միայն Կուրի ձախափնյակը, այլև այն բնակեցնող գեղերը, նախքան այժմյան աղբրեջանցիների նախնի թյուրքօզուգների՝ XII դ. մեր տարածաշրջանում հայտնվելը, էրնիկ ու դավանական ձուլման ենթարկվելով իբրև էրնիկ հանրություն, գոյություն չուներ:

Հակառակ պատմության աղբրեջանական կեղծարարների կեղծ պնդումների՝ արցախյան իշխանատուները հայկազուն էին: Դա են վկայում ինչպես հայկական վիճակի ու գրավոր, այնպես էլ՝ չեզոք, օտար սկզբնաղբրերնե-

բում պահպանված բազմաթիվ անեքրեյի տեղեկություններ, որոնք աղբյուրական պատմահեկները կամ անտեսում են, կամ էլ խեղաթյուրում:

ON THE AZERBAIJANIAN FALSIFICATION OF THE ETHNIC ORIGIN OF  
ARTSAKH'S ARMENIAN PRINCELY FAMILIES

Shahnazaryan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of History, Armenia)

ՀԱՅ ՊՍՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չոբանյան Պ. (ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
pavelchobanyan@gmail.com

*Քանայի բառեր՝ պատմագիտություն, կեղծարար, թուրք-աղբյուրական, տեղեկատվական դաշտ, Հայաստան, սկզբնաղբյուր:*

Պետական պաշտոնական մակարդակով ուղղորդվող թուրք-աղբյուրական պատմագրության կեղծարարությունները սպառնալի մարտահրավիրներ են Հայաստանին և հայ ժողովրդին: Դրանք անցողիկ և անխրազելիության արդյունք չեն, այլ՝ մշակված ռազմավարություն և պետական նպատակասլաց ու հետևողական քաղաքականություն: Թուրք-աղբյուրական պատմագրության կեղծարարությունները ռազմական հակամարտության դրսևորումներ են տեղեկատվական դաշտում, ընթացող պատերազմի կարևոր բաղադրիչը, ինչի նշանակությունը չի կարելի թերագնահատել:

Հայաստանի պատմության թուրք-աղբյուրական կեղծարարությունները հերքելու խնդիրը, ըստ այդմ, հայոց պետության խնդիրն է: Հայ գիտնականների կողմից կատարված մեկուսի հակադարձումները, միջազգային արձագանք չստանալով, ի գորու չեն կատենելու կեղծարարությունները: Դրանք հաճախացել ու շարունակում են ավելի լայն չափեր ընդունել:

Ինչպես և ռազմաքաղաքական ոլորտում, հարկ է ունենալ դաշնակիցներ և համակիրներ՝ հիմնված գիտական ճշմարտության բացահայտման անհրաժեշտության հենքի վրա: Այդ առումով հայագիտությունն ու հայ արևելագիտությունը, մասնավորապես, մեծ անելիքներ ունեն:

Հայաստանում կատարվող պատմագիտական հետազոտությունները պետք է խստորեն համապատասխանեն միջազգային չափանիշներին ու մեթոդներին, օգտագործելի դառնան միջազգային գիտական մակարդակում:

Գիտական միջազգային համագործակցության միջոցով Հայաստանի պատմության ուսումնասիրությունը կարող է ունենալ որոշակի նվաճումներ, ստանալ այլ կերպարանք և ձևեր բերել միջազգային վարկանիշ:

Հարկ է հրաժարվել գիտական աշխատությունների գնահատման և գիտական նորույթի ներկայացման սովորական դարձած այն ձևից, ինչպիսին է «աշխատությունը նորույթ է հայրենական պատմագրության մեջ» ձևակերպումը, գիտական նորույթը տեղայնացնելու միջոցով այն արժևորելու փորձը:

Հարկ է ընդգծել, որ միջազգային դասը մուտք գործելու համար կարևոր, սակայն, գլխավոր պայմանը չէ շարադրման միայն լեզվական խնդիրը:

Թուրք-ադրբեջանական կեղծարարությունները ներառում-ընդգրկում են Հայաստանի պատմության բոլոր ոլորտներն ու ժամանակաշրջանները՝ հետազույն շրջանից մինչև մեր օրերը, և ըստ այդմ, հայ պատմագիտության խնդիրները նա ավելի քան ընդգրկուն են:

Հայկական սկզբնաղբյուրները թարգմանվում են տարբեր լեզուներով և այլ աղբյուրների հետ համադրամբ օգտագործվում հարակից երկրների ու ժողովուրդների պատմության լուսարաննան համար՝ յուրաքանչյուր դեպքում ստուգելով, վեր հանելով հավաստիության աստիճանը: Նման ուղիով հարկ է ընթանալ նաև Հայաստանի պատմության շարադրման ժամանակ՝ ընդարձակելով ինչպես հայկական, այնպես էլ օտար սկզբնաղբյուրների ընդգրկման ծավալներն ու հարցերի շրջանակները:

Հայագիտությունը ունի խոշոր եվաճումներ, ավանդույթներ, նաև միջազգային գիտական որոշակի վարկանիշ, և հետագա զարգացման ուղղությամբ անկիրքների թվարկումը նպատակ ունի ընդգծելու նրանց նորովի շարունակման անհրաժեշտությունը:

#### THE PRIORITIES OF THE DEVELOPMENT OF ARMENIAN HISTORIOGRAPHY

Chobanyan P. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Oriental Studies, Armenia)

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՈՒՆՂԱՆԱՏԿԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ 1920 ԹՎԱԿԱՐԸ

Պապիկյան Ս. (Հայկական էներգետիկական ակադեմիա, Հայաստան)  
stepanpapikyan@yandex.ru

*Բանալի բառեր՝ հիդրոէլեկտրակայան, գեներատոր, էլեկտրական էներգիա, տուրբին, կվտ/ժ, սակագին:*

Հայաստանում XX դարի սկզբին շահագործվում էին 13 փոքր էլեկտրակայաններ՝ 3165 կվտ գումարային հզորությամբ: Տարեկան արտադրվում էր 5.1 միլիոն կվտ/ժ էլեկտրական էներգիա:

Հայաստանի առաջին հիդրոէլեկտրակայանների կառուցման փորձը վկայում է, որ մեծ ծախսերից խուսափելու համար ձգտել են հիմնականում օգտագործել գոյություն ունեցող ինժեներական կառուցվածքները, որոնք նախատեսված են եղել ոռոգման և ցրաղացների համար: Գետից ջրի աման համար քարեղից պատրաստել են հասարակ պատվարներ (պատենշ), որոնք շատ հաճախ գարնան ամիսներին ջրի վարարումների հետևանքով քանդվում և պարբերաբար վերանորոգվում էին:

Հիդրոէլեկտրակայաններում հիմնականում օգտագործում էին «Ֆրենսիս» տեսակի հորիզոնական կամ ուղղահայաց հիդրոտուրբիններ: Էլեկտրակայաններում չափիչ-ստուգիչ սարքավորումներ գոյություն չուներին:

Այն ժամանակ դեռևս էլեկտրական էներգիայի միասնական սակագին գոյություն չուներ: Ցուրաքանչյուր կայան ձգտել է էլեկտրական էներգիա մատակարարել այնպիսի սակագնով, որպեսզի վնաս չկրի: Միայն Երևանի հիդրոէլեկտրակայանի համար էլեկտրական էներգիայի սակագին հաստատվեց քաղաքային իշխանությունների որոշմամբ, բացառությամբ փողոցների լուսավորության համար մատակարարվող էլեկտրական էներգիայի: Այն վաճառվում էր տարեկան 100 ուղղով՝ յուրաքանչյուր 100 ամպերանոց աղեղային լամպի համար, օգտագործվում էր մթնշաղից մինչև լուսաբաց: Ջերմային էլեկտրակայանների համար 1 կվտ/ժ էլեկտրական էներգիայի արժեքը կազմում էր 50-60 կոպեկ: Արդյունաբերության համար մատակարարվում էր 50-60 կոպեկ:

քարվող էլեկտրական էներգիան վաճառվում էր ամսական 10-15 ռուբլով՝ յուրաքանչյուր կիլովատտ դրվածքային բեռի համար:

Կոմունալ-կենցաղային նպատակներով տրվող էլեկտրական էներգիայի 90 տոկոսն օգտագործվում էր լուսավորության համար: Հայաստանում էլեկտրական էներգիայի տարեկան սպառումը կոմունալ-կենցաղային նպատակի համար չի գերազանցել 500 հազար կվտ/ժ-ը:

Գյուղական վայրերում էլեկտրական էներգիայից չեն օգտվել ո՛չ աշխատակի մեքենայացման, ո՛չ էլ լուսավորության համար: Էլեկտրական էներգիան աշխատելու համար մարդկանց ընտրում էին՝ նկատի ունենալով նրանց լինելը ֆակտագործությանը և հարակից մասնագիտություններին: Հայաստանում չկային ո՛չ բարձրագույն, ո՛չ էլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որպեսզի կադրեր պատրաստեին էլեկտրականներում աշխատելու համար: Այդ տարիներին շահագործման ակտիվացության տեխնիկայի վերաբերյալ գիտելիքները դեռևս գտնվում էին շատ ցածր մակարդակի վրա: Այդ պատճառով էլ հաճախ տեղի էին ունենում վթարներ, ինչի հետևանքով հոսանքահարվում էին աշխատողները, և շարքից դուրս էին գալիս էներգետիկ սարքավորումները:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պղծի արդյունահանումը Հայաստանում նվազեց, որն էլ իր հերթին բերեց էլեկտրական էներգիայի արտադրության կրճատմանը: Հայաստանում 1919 թ. արտադրվել է մինչև 2 միլիոն կվտ/ժ, իսկ 1920 թ.՝ մինչև 1 միլիոն կվտ/ժ էլեկտրական էներգիա:

1920 թ. Հայաստանի էլեկտրակայաններում աշխատող մարդկանց թիվը չի գերազանցել 65-ը: Այդ թվականին յուրաքանչյուր բնակչին բաժին էր ընկնում ընդամենը 3.2 կվտ/ժ էլեկտրական էներգիա:

## THE PECULIARITIES OF DEVELOPMENT OF ENERGETICS IN ARMENIA UNTIL 1920

Papikyan S. (Armenian Academy of Energetics, Armenia)

## 1915 թ. ԱՐԵՎՍՏԱՆԱՅ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ԽՆԴԱԹՅՈՒՆՈՒՄԸ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՊԱՍՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՑ

Ստանկյան Ռ. (22 ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

*Բանալի բաներ՝ Օսմանյան կայսրություն, բռնագաղթ, կոտորածներ, ցեղասպանություն, թուրքական պատմագիտություն, արևմտահայություն:*

1. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարությունն իրականացնում է հայության զանգվածային կոտորածներ և բռնագաղթ՝ ցեղասպանություն: Գտնվելով ղզվարին պայմաններում՝ արևմտահայությունը մի շարք վայրերում կարողանում է կազմակերպել դիմադրություն, որը հնարավորություն է տալիս հայերի մի մասին փրկվել, իսկ մյուսներին՝ պատվավոր մահ ընդունել:

2. Հայտնի է, որ ժամանակակից թուրքական պատմագրության համար կարևորագույն թեմաներից մեկն է հայերի ցեղասպանության և ինքնապաշտպանական մարտերի իրական պատմության խեղաթյուրումը: Իրենց հողկամներում, գյուղերում և իրապարակային ծաղրոսմներում նրանք ջանքեր են քափում, որպեսզի հերքեն 1914-1918 թթ. հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունը: Այդ նպատակի համար ծախսվում են զգալի նյութական միջոցներ: Հրապարակի վրա գտնվող գրականությունը թարգմանվում է հիմնականում անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաև ռուսերեն: Հակահայ բովանդակությամբ գրականությունը ներկայացված է Ադրբեջանի Նախագահ Բիհամ Ալիյի Նախագահական գրադարանում:

3. Իր հերթին հիմնադրի խեղաթյուրումը պաշտոնական մակարդակի է հասցրել Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբը: Նրա կարգելում տեղադրված է հակահայ թեմայով գրականություն, որից նույնպես հնարավոր է առանց որևէ սահմանափակման օգտվել: Գլխավոր շտաբի կարգելում ցուցադրված է նաև այսպես կոչված "Documentation Hall on Armenian Question" («Հայկական հարցի փաստաթղթերի սրահ»):

4. 1915 թ. իրադարձություններին, հայ կամավորական խմբերի և ինքնապաշտպանական մարտերի պատմությանն է անդրադարձել թուրք պրոֆե-

սոր Հիքմեթ Օզգենմիրը: Գրքի նախարանի հեղինակն է բրիգադի գեներալ Մույսա Թանեյրի: Հրատարակությունն իրականացրել է Թուրքիայի Գլխավոր շտաբի Ռազմական պատմության և ռազմավարական հետազոտությունների ուսումնական կենտրոնը:

5. Վերջին տասնամյակում նման հեղինակներից մեկն է ամերիկացի պաշտոնաթող զինվորական, փոխգեղապետ Էդվարդ Էրիկսոնը: Նա զինվորական ծառայությունը սկսել է 1975 թ., որպես հրետանու սպա: Մակայի, դասելով զբաղեցրած մի շարք պաշտոններից, կարելի է ենթադրել, որ նա հանդիսացել է հետախուզության աշխատակից:

Է. Էրիկսոնը հեղինակ է մի շարք աշխատությունների և հոդվածների, որոնք նվիրված են թուրքական բանակին և նրա մղած մարտական գործողություններին: Իր ուսումնասիրություններում ռազմական պատմաբանը զգալի տեղ է հատկացնում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի գեղատպությունը, իհարկե, նիմանակնում հերքելով թուրքերի կողմից իրականացված՝ հայերի զանգվածային տեղահանությունը և կոտորածը:

6. Ամփոփելով կարող ենք փաստել, որ թուրքական պատմագրությունը, աննշան և ոչ էական փոփոխություններով, շարունակում է խեղաթյուրել 1915 թ. իրադարձությունները՝ արևմտահայերի գեղատպությունը և ինքնապաշտպանական մարտերը:

THE 1915 WESTERN ARMENIAN SELF-DEFENCE STRUGGLES'  
FALSIFICATION BY TURKISH HISTORIOGRAPHY

Sahakyan R. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of History, Armenia)

ՀԱՅԵՐԻ ՆԵՐՊՈՒՄ  
ՕՍՏԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ստեփանյան Հ. (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
hasmikstepanyan@yahoo.com

*Բանալի բառեր՝ հայեր, ներդրում, Օսմանյան կայսրություն:*

1. Ջեկուցումը նվիրված է Օսմանյան կայսրության պալատական, դիվանագիտական, վարչական, դատական, զինվորական քննազավաններում, բանակում ու նոր զարգացող բուրժուական հարաբերությունների մաս հանդիսացող բանկային, արդյունաբերական, ապահովագրական համակարգում, բժշկության, քաղաքաշինության, արևեստների, առևտրի, գիտության, մշակույթի տարբեր ոլորտներում՝ ճարտարապետության, կերպարվեստի, լուսանկարչության, թատրոնի, երաժշտության, կիրառական արվեստների, երկրի տնտեսության համար նոր ձևավորվող կարևորագույն ճյուղերում, ինչպես նաև սպորտի, հասարակական կազմակերպությունների ոլորտում արևմտահայության ունեցած մեծագույն ներդրմանը:

Ջեկուցման կույրը վերցված է վերջերս տպագրված մեր նույնանուն ուսումնասիրությունից՝ Վերջին առաջին ազգայն սեպագ նման ծավալով և նման բովանդակությամբ ներկայացնում է Օսմանյան կայսրությունում արևմտահայության կյանքը: Կայսրության ամենատարբեր ոլորտներում ունեցած այն ներդրումները, որոնք դուրս են գալիս գուտ ազգային շրջանակներից և ծառայել են ողջ կայսրության և նրանում ապրող թուրքալեզու ժողովուրդների զարգացմանը, միևն օրս չեն արժանացել համակողմանի ուսումնասիրման:

Պատմության բազմաթիվ ճերմակ էջեր կարտա են նոր ուսումնասիրությունների ու բացահայտումների: Դրանք կկանխեն մեր պատմության խեղաթյուրման ընթացքը, մեր ժողովրդի ունեցած մեծագույն ներդրման ուրացումն ու թուրքացման փաստերը, դրա շարունակական ընթացքի քաղաքականությունը:

2. Արևմտահայության ներդրումն Օսմանյան կայսրության տպագրական, նրատարակչական մասպարեզում:

3. Հայաստան թուրքերեն ինքնուրույն և թարգմանական գրականության, հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների անմիջական ազ-

դեցությունը թուրք նոր գրականության ու նրա լուսավորիչների սերունդի ձևավորման, թուրքերեն գրական լեզվի, թատրոնի, դրամատուրգիայի, լրագրողական ոլորտների ձևավորման ու զարգացման մեջ:

THE INVESTMENT OF ARMENIANS IN THE OTTOMAN EMPIRE  
Stepanyan H. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Oriental Studies, Armenia)

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ  
ՎԱՅՐԵՐԻ ԵՎ ՏԱՀԱՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՈՐԻՄԸ

Վարդույան Գ. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)  
gohar.vardumyan@gmail.com

*Բանալի բառեր՝ հեթանոսություն, հավատալիքներ, պաշտամունք, տաճար, դիցարան, քարտեզ, հոգևոր մշակույթ:*

Հայոց նախաքրիստոնեական հավատքը հազարամյակների պատմություն ունի և ներկայանում է իր տարբերությամբ դրսևորումներով, որոնցից են հին հավատալիքներն ու դիցարանը համապատասխան պաշտամունքային վայրերով ու տաճարներով: Մեր կողմից կազմվել է չորս քարտեզ, որոնք ժամանակագրորեն ընդգրկում են հեթանոսությունն իր զարգացման փուլերով՝ վաղնջական շրջանից սկսած մինչև քրիստոնեության ընդունումը: Դրանք արտացոլում են հին հավատքը՝ հնագույն բնապաշտական պատկերացումներից մինչև դիցարանի տարբեր փուլերի աստվածների պաշտամունքը: Տեղեկությունները քաղված են խեթական, ուրարտական, աստիկ եռնահոռմեական և միջնադարյան հայկական աղբյուրներից, հայ ժողովրդական բանահյուսությունից, ինչպես նաև մեր դաշտային ազգագրական կուլտուրից:

ա) Առաջին քարտեզը, որ կոչվում է «Центры культа дохристианских бо- жеств в исторической Армении», տեղ է գտել 1991 թ. լույս տեսած «Дохристианские культы армян» մենագրության մեջ՝ «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 18-րդ պրակում: Քարտեզը ռուսերեն է, դրանում տեղորոշված են հայոց հին հավատքի տարբեր փուլերի պաշտամունքային կոթողները և հեթանոսական դիցարանի աստված-աստվածուհիների սրբավայրերը, տաճարները, բազիլիկները, մեխանները՝ ըստ դիցարանի զարգացման փուլերի:

բ) Երկրորդ քարտեզը՝ «Հայաստանի հեթանոսական հավատալիքները», առայժմ անտիպ է: Այն արտացոլում է հայոց հնագույն պատկերացումները և դրանց հետ կապված բնապաշտական հավատալիքները՝ ներառելով լեռների ու անձավների, ըույսերի ու կենդանիների պաշտամունքը: Քարտեզում

տեղ են գտել նաև վիշապ-քարակերտները, պաշտամունքային բովանդակությամբ ժայռապատկերները, մարդու և բնության ստեղծած այնպիսի սրբություններն ու սրբատեղիները:

գ) Երրորդ քարտեզը՝ «Հեթանոսական կրոն. դիցարաններ», որը նույնպես առայժմ անտիպ է, դարձյալ ներկայացնում է հայոց հեթանոսական դիցարանը՝ այս անգամ հայերեն, որոշ հավելումներով ու ճշգրտումներով՝ համեմատած ռուսերեն քարտեզի հետ: Քարտեզի բնույթը տարբեր է ռուսերեն համանման քարտեզից: Այս քարտեզը, ինչպես և նախորդները, կարիք ունի թվայնացման և ժամանակակից քարտեզագրման մակարդակին համապատասխանեցման:

դ) Չորրորդ քարտեզը՝ «Principales centros de culto de Armenia», լույս է տեսել 2010 թ., հայ ժողովրդի պատմությունը ներկայացնող իսպաներեն մեկնագրության մեջ՝ հայոց հեթանոսության վերաբերյալ մեր հեղինակած նյութի շրջանակներում: Քարտեզն իսպաներեն է. ընդգրկում է նախորդ քարտեզների հիմնական նյութը, բացի հավատալիքներից: Այն արված է թվայնացման արդի եղանակներով:

Այս քարտեզները հին հայոց պաշտամունքը ներկայացնող միակ փորձն են: Դրանք հիմք են հանդիսանալու հետագա առավել կատարելագործված թվայնացված քարտեզների համար: Եղած հետազոտական նյութը լրացուցիչ զգալի տվյալների հնարավորություններ է ընձևեռում, որոնք ներկայացված քարտեզներում տեղ չեն գտել նյութի առատության և մի քարտեզում այն գեոտեղեյուն անհետախույզության պատճառով: Հայոց հեթանոսության ժամանակակից եզանակներով քարտեզագրման անհրաժեշտ է հոգևոր մշակույթի, դրա պատմության և բաղկացուցիչ տարրերի ապագա ուսումնասիրման, տարածական ու ժամանակային կտրվածքներով այն ամբողջականորեն ցույց տալու համար:

## THE MAPPING OF ANCIENT ARMENIAN PLACES AND TEMPLES OF CULT

Vardumyan G. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of History, Armenia)

## КУЛЬТУРНОЕ НАСЛЕДИЕ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В УКРАИНЕ: АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ ИЗУЧЕНИЯ И СОХРАНЕНИЯ

Гаяук И. (Львовская Национальная Академия искусств, Украина)  
irynagayuk@mail.ru

*Ключевые слова:* армяне, каталогизация, культура, музеи, наследие, церкви.

Армяне, столетиями жившие на украинских землях, оставили здесь значительное культурное наследие, которое на сегодня недостаточно изучено и малоизвестно. Культурное наследие армянской диаспоры в Украине можно разделить на две части – движимое и недвижимое. Недвижимое наследие включает в себя религиозную и светскую архитектуру – церкви, монастыри, часовни, кладбища, источники (колоды, водопроводы, фонтаны), школы и приюты, музеи, жилые здания, и здания, построенные по проектам армянских архитекторов. Движимое имущество – разнообразные предметы культуры армян в Украине, ремесленные изделия, письменные памятники и т. д. Поэтому, вопрос сохранения армянского культурного наследия целесообразно разбить на несколько пунктов: 1. сохранение недвижимого армянского культурного наследия в Украине; 2. сохранение движимого армянского культурного наследия.

Однако сам процесс сохранения культурного наследия имеет три необходимых составляющих: 1. нужно знать, что сохранять. А это подразумевает исследование истории и культуры армян в Украине (а также в регионе бассейна Черного моря и в связях с Арменией, Румынией, Молдовой, Польшей, Венгрией и Россией) совмещенное с поиском, идентификацией (атрибуцией) и фиксацией памятников армянской культуры и введением их в научный обиход; 2. сохранение, консервация и реставрация памятников армянской культуры, требующие определенных условий, квалификации и необходимого финансирования; 3. актуализация армянского культурного наследия, что подразумевает не только изучение и сохранение культурных достижений, но и привлечение к ним внимания широких слоев населения –



армян и не армян, формирование такой установки общественного мнения, которая будет способствовать осознанию необходимости познавать, изучать и сохранять армянское культурное наследие.

В отношении армянской церковной архитектуры в Украине комплексная систематизационная работа частично проделана. В частности, речь идет об альбоме-каталоге Яека Хжончевского «Церкви польских армян» (армянские церкви на территории бывшей Речи Посполиты, которые сегодня, за исключением Замостя, находятся на территории Украины). Церковную же архитектуру армян по всей Украине тоже спорадически изучают, но комплексной каталогизации этих памятников пока нет. Что же касается кладбищ, светской архитектуры и т. д., то изучение этого пласта армянского культурного наследия практически отсутствует. Одна из причин такого положения вещей – то, что изучение недвижимого культурного наследия армян по Украине в целом происходит не скоординированно. Тогда как изучение, систематизация и каталогизация и оцифровка армянских кладбищ, отдельных захоронений приобретают сегодня особую актуальность: проведение такой работы даст ценнейший материал для изучения армянских родов, генеалогии, взаимосвязей армян разных регионов Украины, прослеживание миграционных потоков армян в разные периоды, не говоря уже о получении важного материала для изучения истории местных армянских общин.

В отношении музейных коллекций пробел частично закрыт: проведенная мной научно-исследовательская работа, отображенная в издании «Иллюстрированная энциклопедия армянской культуры в Украине. С каталогизированным перечнем памятников армянской культуры в музеях и заповедниках Украины», выявила и зафиксировала экспонаты армянской культуры, хранящиеся в 44 музеях Украины (в тех городах, где существовали исторически значимые армянские колонии).

Сегодня в Украине также отсутствует целевая каталогизация архивов и академических научных библиотек. И существует еще одно не менее важное направление научно-исследовательской работы – поиск, изучение, систематизация и каталогизация огромного массива материала – документов и предметов армянской культуры – вывезенного за пределы Украины. Многие, особенно церковные предметы, книги и архивные материалы вывезли в Польшу в 1940-х гг., более 200 армянских рукописных книг из Крыма находятся в Митендларане (г. Ереван), 45 древних армянских манускриптов и 54 печатные книги из армянского собора св. Николая в Каменне-Подольском еще в 1891 г. вывезли в Россию и передали в Санкт-Петербургскую Публич-

ную библиотеку, часть армянских рукописей из Крыма и Западной Украины находится в трансильванском городе Герла. Проведение такой работы при современных технических средствах позволит ввести эти материалы в научный обиход и даст возможность их целевого изучения в обход крайне острых вопросов передачи или возвращения памятников культуры на их историческую Родину.

Проблема сохранения армянской церковной архитектуры в Украине имеет два аспекта: 1. недостаток финансирования, в результате чего отсутствуют средства даже на минимальный ремонт и консервацию; 2. при передаче армянских церквей другим конфессиям не оговаривается вопрос сохранения оригинального интерьера церкви при ремонте и запрещения изменять исторической интерьер. Помимо этого, никогда не ставится вопрос об обязательности таблички с исторической справкой о том, что это бывшая армянская церковь.

#### CULTURAL HERITAGE OF THE ARMENIAN DIASPORA IN UKRAINE: ACTUAL PROBLEMS OF STUDYING AND PRESERVATION.

Hayuk I. (The Lvov National Academy of Arts, Ukraine)

## ФАЛЬСИФИКАЦИЯ ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ КУЛЬТУРЫ АРЦАХА В АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Сафарян В. (АрГУ, НКР)  
vardges\_safarian@mail.ru

*Ключевые слова: культурное наследие, Албания, Арцах, хачкар.*

На протяжении всего существования Советского государства, в Азербайджане, на правительственном уровне осуществлялась программа присвоения культурного наследия Арцаха и других районов исторической Армении, оказавшихся в составе этой республики. Эта программная линия особенно усилилась начиная с 1936 г., когда тюрков Азербайджана переименовали в азербайджанцев, и они по сути стали титульной нацией. Именно тогда встал вопрос о необходимости научно обосновать их присутствие на данной территории, «доказать» автохтонность новоиспеченной нации. При этом так называемый Северный (советский) и Южный Азербайджани (Атропатена) рассматривались как единое целое, а в состав Кавказской Албании авторы включали и правобережье Куры (исторические области Вельшой Армении - Утик, Арцах и Пайтакаран).

В исследованиях 1930 - 1950-х гг. вопросы древней культуры Карабаха не ставились, а средневековые христианские памятники пока еще игнорировались. Начиная со второй половины 1950-х гг. азербайджанские историки прилагали все усилия для того, чтобы «доказать», что в раннем средневековье на территории Карабаха не было армян (З. Ямпольский, А. Гулиев, З. Ибрагимов, М. Шарифли, К. Алиев, Н. Раев и др.).

С 1960-х гг. азербайджанские исследователи начали переименовывать армянских политических деятелей, историков и писателей, живших и творивших в Карабахе и, вообще, в правобережье, в албан. Этой участи подверглись Мовсес Каганкатваци, историк Киракос Гандзакетц, поэт Давташ, праведец Мхитар Гош, армянский князь Сахль Смбагян и др. (З. Ямпольский, З. Буниязов и др.).

В 1970-е гг. азербайджанские историки перешли от замалчивания к присвоению армянского исторического наследия (Р. Геюшев, Д. Ахундов, И. Бабаев и др.).

В 1980-х гг. делались попытки объявить памятники армянского средневековья-хачкары, «албанскими хачдашами» или «пшандашами» и доказать, будто по стилистике они существенно отличаются от армянских (Р. Геюшев, Д. Ахундов).

В конце 1980-х гг. некоторые азербайджанские авторы объявили население Восточного Закавказья едва ли не изначально тюркоязычным. При этом они населяли тюрками княжество Хачен (З. Буниязов, Ф. Мамедова, Ю. Юсифов, С. Алиязов и др.).

Насильственное присвоение культурного наследия армян Нагорного Карабаха со стороны Азербайджана можно определить как государственную политику, направленную на отчуждение ее от истинных хозяев, с тем, чтобы культурное наследие одного этноса превратить в стимул «самосохранения», а точнее самоутверждения новоиспеченной нации.

Сегодня перед историками Азербайджана поставлена двуединая задача: «доказать» автохтонность азербайджанцев на территории современной Республики Азербайджан и одновременно очистить эту территорию от армянского наследия. И то, и другое санкционируются непосредственно руководством республики. С этой целью делаются попытки идентифицировать Кавказскую Албанию и Азербайджан (данная тенденция впервые была озвучена в работах конца 1930-х гг. и получила дальнейшее развитие с 1960-х гг.), удвоять историю Албании, заявляя при этом, что в Армении со времен Титрива II не было политической и экономической независимости, и, наоборот, Албания представляла собой сильное государство, возникшее в IV-III вв. до н. э., раскрутить тезис о том, что существовала богатая албанская литература, и что армяне уничтожили, предварительно переведя ее на армянский язык, отрывая население раннесредневекового Арцах-Карабаха от армян, «доказать», что Арцах никогда не принадлежал к центрам армянской культуры, заявляя при этом, что процесс арменизации Карабаха имел место с XII в. (З. Буниязов), и даже с XIX в. (Ф. Мамедова, Д. Ахундов и др.), «доказать» что христианство проникло в Албанию раньше, чем в Армению, и Албанская церковь всегда была независима или боролась за независимость от Армянской церкви.

Арменоведение, десятки лет лишённое возможности проводить исследования в Арцахе, было вынуждено лишь опровергать фальсификации азербай-

байджанских историков. Имея ввиду исключительное значение археологического материала в вопросе определения этнокультурной идентичности, на данном этапе стратегия борьбы с фальсификацией и присвоением культурного наследия Аршаха, заключается в противостоянии азербайджанским историкам посредством активизации археологических исследований на территории НКР и освобожденных землях исторического Аршаха, поднятии уровня археологических исследований и представления результатов исследований на международных конференциях, в монографиях, статьях и выставках.

#### FALSIFICATION OF ARTSAKH'S ANCIENT AND MEDIEVAL CULTURE IN THE HISTORIOGRAPHY OF AZERBAIJAN

Safaryan V. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)

#### ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE LATE MEDIEVAL AND EARLY MODERN AGES: ACCOMPLISHMENTS AND PROSPECTS

Bardakjian K. (University of Michigan, USA)

kbar@umich.edu

*Keywords: Modern Armenian historiography, Armenian ecclesiastical administration, Church of Armenia.*

Modern Armenian historiography has made great strides towards a better history of the Armenian people throughout the ages. There have appeared detailed, regional histories as well as surveys of general nature, where there is a greater emphasis on the ancient period. This is not to say that the middle and modern eras have been neglected, but there is room for improvement.

Broadly speaking, this paper will deal with Armenian ecclesiastical administration, especially in Western Armenia and the western parts of Asia Minor, both before and after the rise of the Ottoman Empire. It will focus on the ecclesiastical administrative network of the Church of Armenia in an attempt to shed some light on the inadequately documented statements and references to the political role played by the Church; its jurisdiction and hierarchies; as well as the ways in which the Church tried to administer, organize and represent its adherents under foreign rule. The paper will emphasize and illustrate certain approaches to the topic at hand, with some general observations on patterns of approach and treatment in modern and contemporary Armenian historiography.

THE BEGINNING OF ARMENIAN MONASTICISM  
AND THE PRIMARY SOURCES OF THE GOLDEN AGE

Terian A. (Ս. Ներսես Ընծայարան, USA)  
terian@stnersess.edu

*Keywords: Cenobitic monasticism, Vank, Armenia.*

This presentation takes issue with those who place the rise of cenobitic or communal monasticism in Armenia at a time after the fifth century, or who dwell on but a certain meaning of the word VANK' in this period (following Ep'rikan: Akinian and Garsolan). After tracing the scholarly debate to its beginning and inviting attention to all the primary sources from the second half of the fifth-century, beginning with certain canons of Shahapivan, the overview clearly shows a transition from diverse forms of asceticism to cenobitic monasticism in Armenia during the period in question. Among other sources considered are the canons attributed to Sahak Part'ew (with a short discussion on their origin and date), little-known homilies by Mandakuni, the last discourse in the *Yachakhpatum*, and the letter of Ghazar P'arpets'i. Corroborating evidence is drawn from the Armenian factor in fifth-century monasticism in the Holy Land and a re-reading of Anastas Vardapet's *Vasn vanoreits'*.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

PHILOLOGY

ՀԱՅ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ  
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Աղաբեկյան Մ. (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Հայաստան)

melada-aghabekeyan@mail.ru

*Բանալի բառեր\* ուրարտերեն, հայերեն, ստուգաբանություն, ցեղակցություն, լեզվական ընդհանրություն:*

Ուրարտերենի և ժամանակակից այս կամ այն լեզվի, ինչպես և հայերենի միջև որոշ գիտնականներ մերձավոր ցեղակցություն են տեսնում: Մեկ այլ խումբ էլ կտրականապես մերժում է այդպիսի կապերի առկայությունը: Այս վեճը, կարծում ենք, գիտականորեն ապացուցված, համոզիչ լուծում դեռ չի ստացել՝ տվյալների սակավության, համապատասխան մասնագետների (լեզվաբան, հնագետ, պատմաբան, սեպագրագետ և այլն) ուժերի համախմբման բացակայության, տեսակետների անհամատեղելիության պատճառներով: Ուստի *ուրարտերեն* եզրույթն օգտագործում ենք լոկ որպես Վանի թագավորության մ.թ.ա. I հազարամյակի սեպագիր արձանագրությունների լեզվի պայմանական անվանում:

Հայերենի և ուրարտերենի լեզվական համապատասխանությունները սովորաբար ուսումնասիրվում են պատմահամեմատական մեթոդով, որը հենվում է համեմատվող լեզուների պատմական հնչյունական օրենքերի վրա: Տվյալ դեպքում, հասկանալի պատճառներով, նկատի են առնվում բացառապես հայերենի նախագրային շրջանի հնչյունական օրենքները: Մակայն դրանց գործառական յուրահատկությունների ոչ ճիշտ ընկալման հետևանքով, որ հատուկ է հիստրկապես ոչ լեզվաբան մասնագետներին, կատարվում են սխալ ստուգաբանություններ, հակասական եզրակացություններ: Յուրաքանչյուր հնչյունական օրենք գործում է որոշակի օրինաչափություններով և որոշակի ժամանակահատվածում: Անփութ մտեցում է ցուցաբերվում հատկապես այդ օրենքների հարաբերական ժամանակագրությանը, երբ միաժամանակյա գործառություն է վերագրվում իրարամերձ հնչյունական անցումների:

Հայերենի և տարածաշրջանի մեծած լեզուների զուգադիպումները, ինչպես հաճախ և նշվել, ոչ միշտ կարող են լինել տվյալ ժողովուրդների անմիջական շփումների արդյունք: Հնարավոր է, որ մի մասը միջնորդավորված, այսինքն՝ այլ լեզուների միջոցով կատարված փոխանցումներ են: Չի բացառվում նաև, որ հայերենի և ուրարտերենի որոշ համապատասխանություններ գալիս են նոստրատիկ լեզվաընդհանրության շրջանից: Իսկ գիտնականները ավելի ու ավելի են հավելում նոստրատիկ լեզուների, ինչպես և հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի տարածքներում տեղակայելուն: Ուստի հայերենի և ուրարտերենի ընդհանրությունների մի մասը, հնարավոր է, ունի ենագույն ծագում, իսկ որոշ համապատասխանություններ էլ գոյացել են մ.թ.ա. I հազարամյակից առաջ:

Ուրարտերենի և ժամանակակից հայերենի բարբառների առնչակցությունների հարցին հաճախ ցուցաբերվել է կանխակալ մոտեցում՝ բացառելով մեզինքն III-II հազարամյակ առաջ հայերենի՝ այս կամ այն չափով բարբառային տրոհվածությունը: Հնարավոր է համարվել միայն հայերենում ուրարտերենի ենթաշերտային, խիստ տեղայնացած՝ հիմնականում Վանա լճի ավազանում, որոշ դրսևորում: Սակայն չենք կարող չնկատել, որ ուրարտերեն տեքստերում ամկա են նաև հայերենի բարբառային յուրահատկությունների հետքեր:

#### ETYMOLOGICAL NOTES ON ARMENO-URARTIAN

Aghabekyan M. (National Academy of Sciences of the Republic of Armenia, H. Acharian Institute of Language, Armenia)

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱՄԵՆԱԿՆԻԹԱՅԻՆ ԵՎ ԱՋԳԱՑԻՆ ԱՐԺԵՔ

Ավագյան Ա. (ԵՊՀ, Հայաստան)  
armphilology@ysu.am

*Բանայի բառեր՝ գրականություն, ազգային ոգի, գեղագիտական իդեալ, ժողովրդական ճակատագիր, գոհադություն, ազատարարություն:*

Իր գոյության ավելի քան տասնվեց դարերի ընթացքում հայ գրականությունը արտացոլել է մեր ժողովրդի ունեցած մտավոր ու ոգեղեն կյանքը, որն իր մեջ ներառում է մեր համազգային բաղձանքները, գաղափարները, ցգացումների ու նվիրումների ամբողջական պատմությունները՝ միշտ պատասխանելով այն հարցերին, թե ովքեր ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում:

Դարեր տևած՝ պետականության բացակայությունը հայ գրականության վրա դրել է գերագույն մի առաքելություն՝ գրել հայ կյանքի գեղարվեստական պատմությունը, Նորենացու խոսքերով ասած՝ «փոքր անուի» պատմությունը, որտեղ հիշատակման արժանի շատ գործեր կան, ասել է թե՛ տալ ընտրովի, հավաստի և պատճառաբանված իրողություններ ու երևույթներ, որոնց հետագայում եկան ավելանալու ասելիքի միտումնավորությունն ու նպատակադրվածությունը:

Ամեն բանից վեր և ամեն բանից առաջ Հայրենիքն ու նրա ճակատագիրը, սա հայ գրականության ամսնձևահատկություններից մեկն է: Մահվան տեփը միշտ էլ կախված է եղել այդ հայրենիքի վրա, սակայն նրա ղեկավարին ճակատագիրը, որ այնքան տարբերվել է պատմության քառուղիներում, որքան էլ գաբումնայի թվա, յուրառեսակ իջթան է դարձել՝ հնչեցնելու համար ապրելու ու հարատևելու պատգամներ, որ կարելի է խոստոված ձևակերպել «միշտ դեպի վեր, դեպի Ազատ, այսինքն՝ Արարատ» բանաձևով: Այն ամենը, ինչը ազնիվ է ու Մարդկային, իր արտացոլանքն է գտել հայ գրականության մեջ, իսկ հայ գրողը գեղարվեստական խոսքի միջոցով մեկ նազամ չէ, որ արժարձել է ազգային խնդիրներ շոշափող կարևոր հարցադրումներ:

Որքան էլ լավատես, հայ գրողը, ի տես արշավող բազում պարսիկների, քյուզանդյացիների, թամերլանների ու Չինգիզ խաների, ստիպված էղավ խաղաղության երգերի փոխարեն հնչեցնել բողոքի ու եզովի խոսքեր, պատկերել «գորշ օրերի տաղտոկությունը» (Եղ. Չարենց):

Նայ գրականությունը քրիստոնյա ժողովուրդի ստեղծած գրականություն է, ինչը նրան հաղորդել է բարու, ազնվիվ, եվրոման, գեղեցիկի հասկանիշներ, այն ունի մանավանդ խաղաղասիրական բնույթ:

Նայկական լեռնաշխարհում ստեղծված պատմամշակութային ժառանգության մեծագույն կորոզներից մեկն էլ մեր էպոսն է, որ կառուցման, արդարության, սեփական հողը պաշտպանելու վեհ գաղափարներ է տարփոխում:

Մկսած XX դարակազմից, էականորեն փոխվում է մեր գրականության բովանդակության մի ստվար մասը: Ազգային աղետը, պարբերաբար կրկնվող ջարդերը իրենց կիսին են թողնում այդ գրականության վրա, որում այս անգամ, Ջոհրապի խոսքերով ասած. «...ստրբերը՝ ստայլ, բառերը դաշոյի պես փայլատակող, մահառես էս արհեստները...» պատկերներն են գերակշիռ դառնում:

Նայ գրականության համար բեկումնային մի շրջան էլ էղավ մեծամասնականների իշխանության տարիները, որ իր հետ մի կողմից բերեց գիտության, կրթության, տնտեսական զարգացումներ, մյուս կողմից, ազգային չլուծված խնդիրների առումով, առթից մերժման ու ժխտման դիրքորոշումներ:

Իր ընդգրկումներով շատ լայն է հայ գրականության աշխարհագրական ոլորտը: Մեծ մի գրականություն էլ ստեղծվել է Նայկական լեռնաշխարհից դուրս՝ գաղութներում՝ Պոլսում, Թիֆլիսում, իսկ 1920-ից հետո՝ Միջուշում: Մրանցից ամեն մեկը, ցուցաբերելով հանդերձ համահայկական խնդիրներ, ունի զուտ տեղական առանձնահատկություններ, որոնց արժեքում մեր խելոյից դուրս է:

Նայ գրականությունը գեղարվեստական վավերաբույժ է և նաև մեր օրերի համար, որ կոչումն ունի լինելու ոչ միայն հայ մարդու ոգեշնչողը, այլև դաստիարակիչը, ինչը միշտ չէ, որ պատկանում է ժամանակակից գրականության մեջ:

Ազգային արժեքների ամեն մի ժխտողական վերաբերմունք դասուպարտելի է և անբնորոշելի ոչ միայն ապրողների, այլև գալիք սերունդներին ազգային նկարագրով ու բարոյականության օժտելու համար:

## LITERATURE AS A HISTORICAL-CULTURAL AND NATIONAL VALUE

Avagyan A. (Yerevan State University, Armenia)

## Ա. ԲԵՆՎԱՋԱՄՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ԴԱՐՄԱՐԱՊԻ»-Ն ԺԱՄԱՆԱԿԻ ՆՈՒՎՈՎՈՒԹՅՈՒՄ (XIX-XXI ԴԴ.)

Բաղդյան Ջ. (ԱրՊՀ, ԼՂՀ)  
atayan2011@rambler.ru

*Բանալի բառեր Խամսայի մեկիրություններ, պետականության հուշ, Արցախ, բարեկամություն, հայրենիք, գաղափարախոսություն:*

1. Նայ գրականության պատմության XIX դարի վերջին ժամանակահատվածը գրաքննադատական մտքի, քաղաքական հակասությունների ու այլնայլ հայացքների, նախասիրությունների, կուսակցական սկզբունքների, զրական ուղղությունների բախման, նոր համոզմունքների հաստատման երանգներ էր նախանշում ու արձանագրում՝ բարդ ու անվերձանելի...

2. Նամատու մեկնումներով բացել ենք հայ պարբերական մամուլի օրգանների հետապնդած ծրագրերի, ունեցած գաղափարայնության, կուսակցական դիրքորոշումների, իրար միջև սրած հանդիման, կատաղի բախումների որոշակի անընթացաբանները, որոնք հաճախ հանգեցնում էին վատ հետևանքների:

3. Մասնավոր, կուսակցի անձանց ու լրագրային օրգանների միջոցով որևէ հեղինակի կամ նրա երկի նկատմամբ կատարվում էր դատ՝ ոչ ցանկալի հետևանքներով:

4. Կատարվեց գրական դատ Ա. Բենվազարյանի «Գաղտնիք Դարբաբաղի»-ի նկատմամբ, ինչի արդյունքում և մերժվեց այդ արժեքավոր պատմությունը:

5. «Գաղտնիք»-ն ունի ժամանակագրություն, ժամանակագրական կարգ:

6. «Գաղտնիք Դարբաբաղի»-ն ներկայացնում է նաև Դարբաբաղի դրամատիկական անցքերի պատմությունը, պարսից շահերի արշավանքները դեպի Դարբաբաղ, սկսած 1795 թ. պատմական իրադարձություններից, Արցախի մեկիրների ներքին ու արտաքին կրիվներից՝ ուղղված բշնամիների դեմ:

7. Պատմության մեջ առկա են Ռուսաստանի և Պարսկաստանի քաղաքական շահերին անչլող Արցախի մեկիրների գործունեության գրևորումներ:

8. Հստ ժամանակագրական՝ ընթերցելի և ուսումնասիրելի ենք մերժման արժանացած «Գաղտնիք Դարբաբաղի»-ին անչլող «Մշակ», «Մեղու» և այլ

պարբերականներում տպագրված հնարավոր բոլոր հոդվածները, կարծիքները, գովաբանական ու պարասովական մեկնությունները, ապա Րաֆֆու «Գաղտնիք Ղարաբաղի» մատենախոսությունը, Լեռնի «ՎԷ պ. թե պատմություն» մեկնությունը և Մ. Բարխուդարյանի «Քննադատության քննադատություն» քննադատությունը:

9. Այս ընթացքում «Գաղտնիքը» վերածելուց հետո՝ կատարելով համապատասխան մեկնություն, արժևորել ենք նրա՝ պատմականությամբ ստեղծված ողևաշարը, քննել այն բազմակողմանի պատմագրաբանական ասպեկտներով, գեահատել հերմենտիկ (սեկնաբանական) և աքսիոլոգիական (արժեքաբանական) մեթոդով, տվել պատմության ժամանակային կարգը՝ կազմված Արցախի պատմության ծավալուն դրսևորումների, ներկայացրել իսկապա մեկնությունների քաղաքական կորստի նկարագիրը, մեկնել կերպարների համակարգը, խոսել լեզվի, բարբառային տարբերի առկայությունից:

10. «Գաղտնիք» ունի յուր՝ գրականության և կատարության փիլիսոփայության մերձեցման, երևույթի մեկնման յուրահատուկ կարգ, որը գեահատված է արցախագիտական մտքի սնեռումներով, պատմական, իրավական, քաղաքական, հոգևոր, գրական նյութի բազմաշերտ (սկզբնաղբյուրային տարբերակով) փաստերով (որոնց հայագիտության մեջ առաջին անգամ ենք անդրադառնում), բանասիրական մտքի ճոխ պատկերներով, ավանդությունների նորահունչ ու հետաքրքրական օրինակներով և դրանց համապատասխան բացատրություններով:

11. Ուսումնասիրությունը կարող է վերաթևոթման ու հարցադրման լուծությունից հետո գիտական գնահատության, ինչին նպաստակաղղվել ու կատարել ենք:

12. «Գաղտնիք Ղարաբաղի» ուսումնասիրությունը արցախագիտական մտքի արժեքավոր էջերից մեկն է: Այն արդիական հեղուկություն ունի:

13. «Գաղտնիք Ղարաբաղի»-ն, ընդունելով որպես XIX դարի արցախագիտական մտքի փաստացի ու արժեքավոր վավերագրերից մեկը, նրան դնելով իրեն վերապահված տեղը, ժողովրդի ստեղծածը վերադարձնում ենք ժողովրդին...

THE "MYSTERY OF KARABAKH" OF A. BEKNAZARYAN IN THE  
CONTEXT OF TIME (XIX-XXI CENTURIES)

Balayan Z. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՄՏԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՆԱԴԻՐՆԵՐԸ

Գալստյան Ա. (2<sup>9</sup>ՄՀ, Հայաստան)  
ash.galstyan@mail.ru

*Բանալի բաներ՝ գեղարվեստական վավերագրություն, հեղինակ-պատմող, կառուցվածք, մեթոդ, գրույց, նկարագրություն:*

Գեղարվեստական վավերագրության տեսակները (հուշագրություն, ուղեգրություն, օրագրություն և այլն) երևան են եկել ամենաինչ ժամանակներից պատմական հիշատակարանների տեսքով:

Ռուսլան և Երևանից գեղարվեստական վավերագրությունը հյուսվել 19-րդ դարից մինչև մեր օրերը, ի՛նչ միջոցներով են իրականացել հուշագրության, ուղեգրության, օրագրության ռճային առանձնահատկությունները, և վերջապես հայ բանասիրական ժառանգության այդ տեսակը այսօր ինչպե՛ս է գործադանում և ի՛նչ հիմնախնդիրներ ունի լուծելու:

Հուշագրությունը, ի տարբերություն գեղարվեստական գրականության, ժամանակակիցների կողմից անցյալի հետաքրքրություններ կայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողության գրառումն է: Հետի հուշագրություն է ծառայել հայ մեծերից:

Ղազարոս Աղայանը, Պերճ Պողոսյանը, Շիրվանզադեն շարունակեցին արևելահայ գեղարվեստական վավերագրության ուղին՝ իրենց հուշագրական երկերում ներկայացնելով նաև ժամանակի ամբողջական պատկերը: Հետագա տարիներին Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Մտեմիա Ջորյանը, Գորգեն Մահարին և ուրիշներ արվեստագետի նուրբ գրով ընդլայնեցին ժանրի սահմանները՝ հանդես գալով իբրև ականատես-վկաներ:

Ուղեգրությունը գրողի ճանվորություն ընթացքում ստացած անմիջական տպավորության գրառումն է, որտեղ հեղինակի նպատակն է ընթերցողին ծանոթացնել, պատմել ուղևորության ընթացքում տեսածն ու լսածը, ներկայացնել հանդիպած մարդկանց կյանքն ու կենցաղը: Սիվա Գալուստյանի ուղեգրությունների քառապատումը պատմում է սկիտոսի ու



սփյուռքահայերի խնդիրների և ձեռքբերումների մասին: Ուղեգրության զարգացման առումով զբաղվչ է Ջորի Բալթայանի «...Ջիմ Կիլիկիա» ուղեգրությունը:

Օրագրության մեջ հեղինակի կյանքի (նաև հոգևոր կյանքի) մանրամասն նկարագրությունն է՝ վավերական պատմություններով: Արևելահայ օրագրության փայլուն նմուշներ են Ավետիք Իսահակյանի «Հիշատակարանը», Լևո Կանամարի «Սոցիալիզմի Սահարա» օրագրությունը, Կարպիս Մուրեյանի «Օրագիր. 1943-2001» երկհատորյակը:

Նշելի է, որ մերօրյա զեղարվեստական վավերագրությունը զարգանում է դիպուկ ասույթներով և բնութագրիչներով: Տարբեր մակարդակներում գրույցների վերաթաղություններն ունեն բանասիրական-աղյուրազիտական արժեք: Շատ հաստիքները աչքի են ընկնում իմացաբանական հիմքերով: Այստեղ շատ ուսանելի բան կա գրողի՝ մարդու ճանաչելու, ուսումնասիրելու մեթոդի մեջ:

Մեր նպատակն է քննել զեղարվեստական վավերագրության տեսակների զարգացման տարբեր մակարդակները, վերհանել արդի հիմնային խնդիրները: Ուսումնասիրության արդյունքները կարող են ամբողջացնել հայերենի ոճական մակարդակի գիտական նկարագրությունը, որով էլ կարևորվում է թեմայի արդիականությունը:

#### CONTEMPORARY PROBLEMS OF DEVELOPMENT IN FICTION DOCUMENTARY

Galstyan A. (Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Armenia)

#### ԲՆԻԿ ԵՎ ՓՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏՈՂՈՖՈՐՄԱՆՏԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դիլբարյան Ն. (ԵՊՀ, Հայաստան)  
n.dilbaryan@gmail.com

*Բնույի բաժեր՝ տեղանվանական համակարգ, արտալեզվական գործոններ, կազմության կաղապար, տեղանվանահիմք, ածանց, ածանցակերպեր:*

Արդի Հայաստանի տեղանվանական համակարգը ձևավորվել է Հայաստանի անկախ Հանրապետության կազմավորման առաջին իսկ պահերից՝ ժառանգություն ստանալով Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տեղանվանական համակարգը, որն ինքնին պատմական անցյալի գաղափարական կենթեք էր կրում, որովհետև տեղանունները լեզվի բառապաշարի այն յուրօրինակ շերտն է, որն առավել ենթալկա է արտալեզվական գործոնների ազդեցության:

Օտար նվաճողները, իշխող գաղափարական կառույցները կարող են ջնջել, սրբազրել տեղանվանական մեծ պատմական շերտեր՝ փոխարենն ամրակայելով իրենց քաղաքական նպատակներին հարմար նշաններ: ՀՀ տարածքի տեղանունների հայկականացումը կամ դրանց հնագույն շերտերի վերականգնումը շարունակում են օրակարգային խնդիր մնալ այս տեսակետից հսկայական աշխատանք է կատարված, բայց օտար, հատկապես թուրքական տեղանունների հայկականացումը հաճախ հանգեցնում է պարզունակ կաղապարների կիրառման, դրանց կրկնության, տեղանունների սկզբնաձևերի մոռացման:

Ուստի հայկական տեղանունների հիմնական կաղապարների տարբերակումը և դասակարգումը, բնիկ և փոխառյալ տեղանվանահիմքերի, ածանցների և ածանցակերպերի լեզվաբանական քննությունն ունեն գիտական, կիրառական լուրջ նշանակություն:

Այս զեկուցման նպատակն է համաժամանակյա, նկարագրական և տարժամանակյա իմաստարանական վերլուծության ենթաբնիկ արդի Հայաստանի տեղանվանահիմքերը և տեղանվանակերպ ածանցներն ու ածանցակերպ մասնիկները՝ դրանց կիրառական և կենսունակության ներուժի բացահայտմամբ: Անվանադրման գործընթացը հարասն է:

#### NATIVE AND BORROWED TOPOFORMANTS (BASE-FORMERS) IN THE TOPONYMY OF MODERN ARMENIA

Dilbaryan N. (Yerevan State University, Armenia)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵԶՎԱԿԻՃԱԿԸ ՆԵՐԿՎԱՆ ԵՎ ՀԵՌՈՒՎԱԿՐԵՐԸ

Ջաքարյան Հ. («Տարֆ» գիտակրթական համալիր, ՀԳՄՀ, Հայաստան)  
hovzakaryan@yahoo.com

*Բանալի բառեր՝ լեզվավիճակ, հայոց լեզու, լեզվաբաղադրականություն, կրթության լեզու, էնկոլոնոսային հայալեզու բովանդակություն:*

Հայ պատմամշակութային ժառանգության առանցքային բաղադրիչը և հիմնական հենասյուղը հայոց լեզուն է, որ ձևավորվել և ներկայիս իր զարգացմանն է հասել նախ և առաջ Հայկական լեռնաշխարհում:

Հայոց լեզվի հարստության երաշխիքը նրա անհափան կիրառության ու զարգացման որոշակի պայմանների ապահովումն է: Այդ պայմանների ամբողջությունը սովորաբար բնութագրվում է որպես լեզվավիճակ, որը ամրագրվում ու պահպանվում է լեզվական օրենսդրությամբ, կառավարվում լեզվաբաղադրականությամբ և կարգավորվում լեզվաշիջուկությամբ:

Հայաստանի (ՀՀ-ի, ԼՂՀ-ի, պատմական Հայաստանի այլ տարածքների) և հայոց սփյուռքի լեզվավիճակի ուսումնասիրությունը, նկարագրությունը, նրա ամբողջական պատկերի ստեղծումը, նրա հետևակարների կանխատեսումը և դիմակայելիք վտանգների վերլուծությունը կարևոր են հայ ժողովրդի և նրա մշակույթի պահպանման ու զարգացման գերակայությունների ճշտման, արդի մարտահրավերներին համապատասխան գիտականորեն հիմնավորված մոտեցումների և գործողությունների միասնական ծրագրի մշակման, ծագավարական ծրագրերի նախապատրաստման առումներով:

Սույն գեկուցման մեջ Հայաստանի ներկայիս լեզվավիճակի ուրվագծման շրջանակներում մասնավորապես քննարկվում են հետևյալ հիմնախնդիրները.

1. Հայաստանի լեզվավիճակի և ժողովրդագրական իրավիճակի փոխկապվածությունը, հատկապես այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունները և համապատասխան լեզվական փոքրամասնությունները մասամբ են միմյանց համընկնում, և կա այդ անհամապատասխանության, մեղմացման անհրաժեշտությունը:

2. Լեզվավիճակի հարաբերակցությունը միջազգային քաղաքական իրավիճակի, լեզվամշակութային համաճորտակային պատերազմի արդի փուլի հետ և հայերենի մրցուսակության բարձրացման ու պետական պաշտպանվածության ուժեղացման անհրաժեշտությունը:

3. Հայաստանում կրթության լեզվի բնորոշյալն իրավական ու փաստացի որվածքը և դրա անդրադարձը լեզվավիճակի վրա, հայալեզու կրթության այլընտրանքների սահմանափակման անհրաժեշտությունը:

4. Տեղնկույթի մշակման ու փոխանակման էնկոլոնոսային միջավայրում և հատկապես համացանցում հայալեզու բովանդակության (առաջին հերթին գրողարանների, ձայնադարանների, պատկերադարանների, հանրագիտարանների, բառարանների, հեռուստուցող համակարգերի, որոնուղ, սրբագրող, թարգմանող, ընթերցող գործիքների) առաջանցիկ զարգացման անհրաժեշտությունը՝ օրենսդրական ու վարչական լծակներով ներգրավելով գիտական, կրթական, մշակութային, տնտեսական և այլ բնույթի կազմակերպություններ ու անհատներ:

5. Արտաքին գովազդում անզլերենի գերակայությունը՝ ապրանքային նշանի պաշտպանվածության պատրվակով, և դրա կանխարգելման անհրաժեշտությունը:

6. Լեզվական օրենսդրության զարգացման, խորացման ու արմատականացման անհրաժեշտությունը՝ ազգային շահերի գերակայության նկատառումով:

## LANGUAGE SITUATION IN ARMENIA: PRESENT STATE AND PERSPECTIVES

Zakaryan H. ("Tatev" Educational Complex, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Armenia)

## ԱՐՏԱՅԻ ԸՆԿՆԱՏԱԳԻՐ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ 20-Դ ԴԱՐԻ ԸՆՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խանյան Ս. (ԱրՊՆ, ԼՂՆ)  
atayan2011@rambler.ru

*Բանալի բաներ՝ Արցախ, Շուշի, Հայաստան, մարտուն, գրականություն, ազատություն:*

1. Հայոց հարուստ մշակույթի արարչագործության ի սկզբանե ակտիվորեն է մասնակցել նաև Մեծ Հայքի 10-րդ նահանգը՝ Արցախ աշխարհն՝ իր անցած ճանապարհի բոլոր շրջափուլերում: Այս առումով բավական է մասնացուցցե անել Շուշին, որ մինչև 1920 թ. իր մտքի քոփչքներով հիացրել է ոչ միայն հայությանը, այլև՝ աշխարհին:

2. Մինչև 1920 թ. ողբերգական զարուեր Շուշիում լույս են տեսել 21 անուն թերթեր, որոնցից 19-ը՝ հայերեն, 2-ը՝ օտերեն: Դրանք են՝ «Ազգագրական հանդես», «Աշակերտ», «Ապաստ», «Արցախ», «Գործ», «Շուշու», «Միաձայն», «Շիճաղ», «Հայկական աշխարհ», «Դարաբաղ», «Դարաբաղի սուրհանդակ», «Միրած», «Միություն», «Նշույն», «Նոր կյանք», «Պայքար», «Մրիկ», «Փայլակ», «Քնար խոստակ» պարբերականները: Ուստերեն լույս են տեսել «Շուշիակի լիստիկ» և «Շուշիակայա ժիզն» թերթերը:

3. Արևոշյալ թերթերի էջերում հանդես են եկել գրողներ Մուրացյանը, Դազարտս Աղայանը, Վրթակես Փափագյանը, Մելիք-Շահնազարյանը (Տմբալի հայան), Գրիգոր Ներսիսյանը և ուրիշներ:

4. 1920 թ. մարտի 22-ին ազերի թուրքերը կրակի մատնեցին քաղաքը, սրի քաշվեցին տասնյակ հազարավոր անմեղ հայեր: Խորհրդային կարգերի հաստատումը եւ ծանր եղավ Արցախի համար: Այն բոլշևիկների, առանձնապես Լենինի և Ստալինի թուրքամետ քաղաքականության հետևանքով և Աբաբուրքի ու Լարիմանովի նենգամիտ պահանջով Արցախը նետվեց Խորհրդային Ադրբեջանի հայակու էրախը: Սկսվեց Արցախի հայաթափման ստոր քաղաքականությունը:

5. 1988-1994 թթ. Արցախյան ազգային ազատագրական պայքարի շնորհիվ հայ մոր գիրկը վերադարձվեց Շուշին, որ արդեն շնչում և արարում է

հայերեն: Շարունակվում է ավանդույթը՝ «Մեկ ժողովուրդ, մեկ գրականություն» սկզբունքով:

6. Արցախի հայախոս ճակատագրի գեղարվեստական պատկերն ստեղծեցին արձակագիրներ Ս. Արբանյանը՝ «Մերուկների հետ», Բ. Ավանդյանը՝ «Միասկանի օրագիրը», Բ. Ուլուբաջյանը՝ «Թարթառ», «Հայրենի հող», «Մարդարապատ» վեպերով, Բ. Ջալալյանը, Բ. Պետրոսյանը՝ բանաստեղծությունների ժողովածուներով:

7. 1988 թվականից սկսած՝ Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին հանդես էկան արձակագիրներ Ս. Հովհաննիսյանը, Կ. Դանիելյանը, Մարտիրոս Որևը, Մ. Հայրը, Ա. Դահրիյանը, Կ. Գաբրիելյանը, Վ. Բաղդյանը, Լ. Սաղամոնյանը, բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգարյանը, Վ. Հակոբյանը, Ս. Խանյանը, Լ. Ավագյանը և ուրիշներ: Կրանք հայ գրականության բազմերանգ քարտեզի վրա եսխազում են իրենց կենսական տարածությունը: Դա արցախյան եսխաստեղծ բնության փյանքների մեջ հաղթանակած արցախցու հայակերտ հոգեբանության պատկերն է:

8. 20-րդ դարի վերջին Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի շնորհիվ անկայն և ազատ ապրելու իրավունքը նվաճեց Արցախ աշխարհը: Միաժամանակ հողովվում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը, որը խորհրդանշում է մեր համահայկական գրականության ապագա զարգացումը, որի մի անբաժան մասն Արցախում ստեղծվող հայ գրականությունն է:

THE FATE OF ARTSAXH IN ARMENIAN LITERATURE OF THE XX CENTURY  
Khanyan S. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՍՏՎԱԾԱՇՆՅԻ ԾՆՆԻՅՑ ԳՐՔՈՒՄ

Խաչատրյան Ա. (ԵՊՀ, Հայաստան)  
a.khachatryan@rambler.ru

*Բանալի բառեր՝ Ծննդոց գիրք, արական և իգական անձնանուններ, կենսականություն, հայկականացում:*

Աշխարհի շատ ժողովուրդների համար Աստվածաշունչը եղել է մտում է մշակութային կյանքի հարակա աղբյուր:

ա) Հայ իրականության մեջ Ծննդոց գրքի անձնանունները մշտապես գործածվել են: Եբրայերենից հայերեն մուտք է գործել անձնանունների մի մեծ խումբ, որոնք առ այսօր գործածական են և մերվել ու ազգայնացվել են հայերի կողմից:

բ) Ծննդոց գրքի անձնանունների գերակշիռ մասը արական անուններ են, որոնք կազմությամբ պարզ և բաղադրյալ են: Ուշագրավ են հատկապես տեղանուններից և անձնանուններից – սցի անանցով կազմված երկբաղադրյալ և միախմբ անձնանուններն ու ցեղանունները, որոնք Ծննդոց Գրքում խիստ հաճախադեպ են:

գ) Ի տարբերություն արականների՝ սակավադեպ կիրառություն ունեն իգական անունները: Սրանք կազմությամբ էինմակետում միախմբ են՝ Եվա, Թամար, Լիա, Ռեբեկա, Սառա, Նոյեմ, Ռաբել...

դ) Կան անուններ, որոնք գրության և իրողական գուգանություններ ունեն՝ Աբրամ–Աբրահամ, Սառա–Սարա, Ենոք–Ենուկ, Աբեմելք–Աբիմելք, Լարանայ–Լարանու, Յովսեփայ–Յովսեփու, Ռաբելայ–Ռաբելի և այլն:

ե) Քաղաքական և մշակութային կյանքում հայերի ըմբռումներն առավել ցայտուն են դառնում իրենց կրած աստվածաշնչյան անունների միջոցով: Ծննդոց գրքում գործածված անուններից սերնդեսերունդ փոխանցվել և կենսական են դարձել Ասրանագ, Եվա, Իսահակ (Իսահակյան), Թամար, Լիա, Ռեբեկա, Յակոբ (Հակոբ), Յովսեփ (Հովսեփ) և այլ անուններ:

OPERATION ANTHROPONYMS IN GENESIS  
Khachatryan A. (Yerevan State University, Armenia)

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌԱԿԱՆՈՍ ՂԱԸ ՊՈՒՂՈՒՑ  
ՍՈՑԻԱԼ-ՔԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԳԻՄԱՆԸ

Հայրապետյան Թ. (ՀՀ ԳԱԱ հեռախոսության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
tamar.hayrapetyan@gmail.com

*Բանալի բառեր՝ երգիծանք, առակախոս, սոցիալ-քաղաքական, ծիծաղաբարձ, առակ:*

ՊՂ Պուղու զվարճապատումների ծագման հարկենիքը Արցախյան պատմազգագրական շրջանն է, մասնավորապես Պատմական Վարանդայի մեկիբությունը, որտեղից առակախոս Պուղու համարվող բանավոր կենցաղավարմամբ տարածվել է տեղական սահմաններից դուրս, հասել Սյունիք, իսկ ավելի ուշ՝ Իջևան ու Արարատյան դաշտ: Պուղին ունի մականուն՝ Պել (խենթ, ծուռ), ինչն էլ վկայում է նրա բանահյուսական բնավորության մասին:

Մակար վարդապետ Քարխուդարյանցի հաղորդմամբ՝ ՊՂ Պուղին եղել է Վարանդայի իշխան Մելիք-Շահնագար Բ-ի զվարճախոս-կատակաբանը: Շահնագար Բ-ի աջակցությամբ՝ վաչկատուն սարքաչի ցեղի գլխավոր Փանան իրեն հայտարարել է Ղարաբաղի խան և թշնամական քաղաքականություն վարել Արցախի ու հարեան գավառների հայության նկատմամբ: Շահնագար Բ-ն Արցախում գերագահություն նվաճելու նպատակով դաշնակցել է Փանահի հետ և թեև կյանքի վերջին տարիներին զոջացել է իր արարքների համար, փորձել հաշտվել հայ մելիքների հետ, սակայն ժողովուրդը չի ներել նրան և մեղքերը թավել փորձող դավաճանին խարազանել է ՊՂ Պուղու երգիծական կերպարի միջոցով շրջանափոխ սրախոսություններով:

ՊՂ Պուղին մելիքների ապարանքում եղել է ավելին, քան՝ սովորական ծաղրածուն: Նա առակախոս-խորհրդատու էր, կրեկի վրա սուր խոսք հորինող, հնարամիտ ու արդարադատ: Զվարճապատումներում ՊՂ Պուղին հաճախ հանդես է գալիս իբրև միջնադարյան դատավորի թատերախաղային արքեիսկոպի՝ «Դատ-բեղադ անողի», «Շատ կտրողի» կերպարով:

Բանասիրական միջազգային դիվաշարերում Պըլ Պուդի-Մելիք-Շահ-հագար զույգի փոխարարելությունը խաղարկվում է տեր և ծառա, տվյալ դեպքում իշխանավոր և ծաղրածու մակարդակով: Երկու կողմերն էլ, չնայած մշտական հակամարտությանը, գտնվում են անբաժան միասնության մեջ, ճիշտ այնպես, ինչպես լարախաղացն ու ծաղրածուն: Բայց եթե ներկայացման մեջ ծաղրածուն աստիճանաբար դառնում է պատրաստակամ, կուհնազանդ ծառա, ոգեորություն խաղում, հիանում իր վարպետով, ապա Պըլ Պուդին ոչ միայն չի բժնում Մելիք-Շահնագարին, այլև իր հնարախտություններով հաճախ սաղոթում է նրան՝ դրդելով հիմար արարքների, որպեսզի, ծիծաղաբարձ ու անբեական իրավիճակներում հայտնվելու վտանգից խուսափելով, նա փորձի կանգնել ճիշտ ուղու վրա: Մի անգամ Մելիքը հարցնում է Պուդուն, թե մարդու տունը ինչու՞ է քանդվում: «Որովհետև բշխամին ներսից է լինում», – պատասխանում է Պուդին (Թ. Հայրապետյան, անձնական գրառում, Արցախ, տետր № 2, 2001 թ.):

Մակար Բարխուդարյանը 1883 թվականին Թիֆլիսում հրատարակած «Պըլ-Պուդի» գրքի առաջաբանում անդրադառնում է հին ժամանակների կայսրերին, թագավորներին, շահերին, խալիֆներին զվարճացնող ծաղրախոսներին, որոնց շնորհիվ պետական այրերը թեթևանում էին դատավճիռների ծանրությունից ու բացասական հույզերից, և ապա զվարճարանությունը արժեքորում է իբրև կյանքի կանոնակարգվածությանը պայմանավորված հուզական լարվածության լիցքաթափման միջոց՝ ընդգծելով հատկապես զվարճախոսության դերը քաղաքական մշակույթի մեջ. «Հարկ չը կայ ասել, թե քաղաքական աշխարհն արդեն ընդունած է զուարճաբանությունը իբրև կյանքի օգտակար միջոցներից մին...» (Պըլ-Պուդի, 1883 թ., 9):

Պըլ Պուդին իր ժամանակի որոշակի սոցիալական, կրոնական, աշխարհաքաղաքական գաղափարների կրողն է և իբրև երգիծական կերպար բացահայտվում է անապատելի իրավիճակներում:

Քաղաքական կարևոր հարցերի քննարկման նպատակով Պարսկաստան ուղարկված ծաղրածու Պըլ Պուդու արտաքին տեսքը, հագուստ-կապուստը վստահություն չի ներշնչում մեր հարևաններին, և էրբ կրանք տարակուսած հարցնում են, թե Ղարաբաղում մի կարգին մարդ չկա՞ր, որ Պարսկաստան ուղարկելին, Պըլ Պուդին սառնասրտորեն պատասխանում է, թե՛ կա՛, խի չի կա: Բայց Ղարաբաղում կարգին մարդուն կարգին մարդկանց մոտ են ուղարկում (Թ. Հայրապետյան, անձնական գրառում, Արցախ, տետր № 1, 1999 թ.):

Պըլ Պուդու զվարճապատումները, փոխանցվելով սերնդեսերունդ, ձևավորել են արցախահայության վարքային համալիրի կարևոր բաղադրիչնե-

րից մեկը՝ ժամանցն ու զվարճանքը՝ նոր լույս փնտելով XVIII դարի կեսերից մինչև XIX-ի սկիզբն ընկած ժամանակահատվածում արցախահայության սոցիալ-քաղաքական հարաբերությունների և մշակութային իրողությունների վրա:

THE SOCIAL AND POLITICAL SATIRE OF JESTER PELE PUGHI  
FROM KHARABAKH

Hayrapetyan T. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Archaeology and Ethnography, Armenia)

**ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌՆԱԳԻՐ ՀԻՇՏԱԿԱՐԱՐԱԸ ԵՎ  
ԼԵՋՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՋԱՐԿԱՑՄԱՆ ՀԵՌՆԱԿԱՐՆԵՐԸ**

**Հարությունյան Խ, (ԵՊՀ Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի  
ինստիտուտ, Հայաստան)  
khachik.har@gmail.com**

*Բանալի բառեր՝ ձեռագիր, հիշատակարան, լեզվական քննություն, գրչու-  
թյան կենտրոններ:*

Ձեռագիր հիշատակարաններում ամփոփված է մեր ժողովրդի դարավոր պատմությունն իր բոլոր առանձնահատկություններով ու մանրամասներով: Այդ իսկ պատճառով հիշատակարանը կարևորվել է բոլոր ժամանակներում՝ իբրև սկզբնաղբյուր ծառայելով պատմագիտության, ազգագրության և այլ գիտությունների համար: Պետք է ասել, սակայն, որ լեզվական քննությունն այս հարցում գրեթե բացակայում է: Հիշատակարանների լեզվական քննությունն են արել Լ. Հովվեմյանը, (ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Եր. 1997 թ.) և Գ. Ջանուկյանը (Բարբառային երևույթներ հայկական հիշատակարաններում, Եր., 1997 թ.): Նրանց ուսումնասիրություններն այս ասպարեզում կողմնորոշիչ նշանակություն ունեն, սակայն հարցի ուսումնասիրությունն այսբանով չի սպառվում: Բազմաթիվ հիշարժան երևույթներ են նկատվում հիշատակարաններում, որոնք ուսումնասիրված չեն, և որով էլ պարմանավորված է նյութի արդիականությունը: Ուսումնասիրությունները մասնագետներին նորանոր տեղեկություններ են հաղորդում դեռևս ամբողջությամբ չուսումնասիրված գրչության կենտրոնների վերաբերյալ: Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգություններից են գրչության կենտրոնները, և այս ասպարեզում լեզվական քննությունը բացակայում է ճիշտ է, ձեռագիր հիշատակարանների ժողովածուների կազմողները (Ա. Մաթևոսյան, Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան) կատարում են որոշ դիտարկումներ, սակայն դրանք ունեն նկարագրական բնույթ, մինչդեռ լեզվական խորքային քննության կարիք կա:

Այս աղբյուրով մի դիտողություն է անում Ալ. Մարգարյանը դեռևս 1993 թվականին ՊԲՀ-ի իր հոդվածում. «Այդ նյութերը (նկատի ունի հիշատակարանը- Ռ. Հ.), ... ինչ-ինչ պատճառներով լայն ու համակողմանի քննության չեն արժանացել... Իսկ դա, ինքնակ, ներքին չի կարելի հասարել, որովհետև հայերեն ձեռագրերի հիշատակարաններն իրենց ներքին ու պարզորոշ հայերենի ոչ միայն այն ժամանակվա իրավիճակը, այլև պատմական գարգացման ընթացքը, նրանում կատարված տեղաշարժերն ու փոփոխություններն են պատկերում» (Ալ. Մարգարյան, Նոյահայտ Բառեր հայերեն ձեռագրերի XIV-XV դդ. հիշատակարաններում, ՊԲՀ, 1993, 1-2, էջ 35): Հիշատակարանն իրոք, լեզվի պատմության համար կարող է լինել սկզբնաղբյուր, որտեղ ըստ դարաշրջանների կարելի է դիտել լեզվական այս կամ այն իրողության փոփոխությունը: Մյուս կողմից՝ հիշատակարանը լեզվի պատմության կարող է հետաքրքրել մի շարք տեսանկյուններից.

- լեզվական ժամանակաշրջանի պարբերացում,
- նկյունաբանություն, բառակազմություն,
- գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար քերականական աղբյուրները: Այսպիսով, ձեռագրերի հիշատակարանները, լինելով մեր մասնագրության ուրույն դրսևորումներ, արժանի են լեզվական համակողմանի քննության, որն առայժմ բավարար մակարդակի վրա չէ, թեև այդ քննության կարիքն արդիական է:

**THE ARMENIAN MANUSCRIPT COLOPHON AND THE DEVELOPMENT  
PERSPECTIVES OF THE LINGUISTIC STUDY**  
Harutyunyan Kh. (Yerevan State University, Institute of Ancient Manuscripts after  
Mesrob Mashtots "Matenadaran", Armenia)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԳՈՒՄ  
ԱՐԱԲԱՏԱՆԻ ՎԻՍՏԱԳԻՐ ԱՐՀԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միքայելյան Տ. (22 ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
mtigran2002@yahoo.com

*Բանալի բառեր՝ արարատառ, հուշարձան, վիճագրություն, մանվեղական:*

Հայտնի է, որ VIII դարից սկսած Հայաստանն անցավ արաբական խալիֆաների իշխանության տակ (VII-IX դդ.) և հայրանա երկրների հետ միասին մտավ Արմինիա կուսակալության մեջ: Արմինիան կառավարվում էր արաբական խալիֆաների փոխանորդների կողմից: IX դարի սկզբում արաբների իշխանությունը Հայաստանում վերացվեց, և վերականգնվեց Հայաստանի անկախությունը:

Հետագայում, XI դարից մինչև XIX դարը Հայաստանը կրկին անցնում է տարբեր մանվեղական պետությունների իշխանության տակ (Շաղդադյաններ, Իլխաններ, Սելջուկյաններ, Գարա-Կոյունլու, Աք-Կոյունլու, իրանական հարստություններ և այլն), չնայած երկրի որոշ հատվածներում հայ իշխանների հաջողվեց պահպանել իրենց իշխանությունը՝ ընդհուպ մինչև XV-XVI դդ. (Օրբելյանները Մյուսիքում, Պոռչյանները Վայոց Ձորում, Վաչուսյանները Արագածոտնում և այլն):

Քաջ հայտնի է, որ Հայաստանի զավթումը մանվեղականների կողմից ուղեկցվում էր տարբեր ժամանակաշրջաններում արաբների, քրդերի, պարսիկների, բազմազան թյուրքալեզու թաչվոր և կիսաթաչվոր ցեղամիությունների ներթափանցմամբ և, համապատասխանաբար, երկրից հայ տեղացի բնակչության դուրսմղմամբ: Այս առումով հատկապես ողբերգական էին Սեֆյան շահ Շահ-Աբբասի տիրակալության տարիները, որոնց ընթացքում օսմանյան սուլթանների ղեմ «այրված հողի» մարտավարության կիրառման արդյունքում 1604 թ. Արևելյան Հայաստանի գրեթե ամբողջ բնակչությունը քշվեց Պարսկաստանի Ապահան նահանգը, և փոխարենը թաշալերվում էր թյուրքալեզու ցեղերի, որպես ռազմական ուժի ամրապնդումը Հայաստանում:

Այս մանվեղական վերաբնակիչները դարերի ընթացքում իրենց ենտքն էին թողնում նաև հուշարձանային (մանրիպ), գերեզմանային, շինարարական և այլ բնույթի վիճագիր արձանագրությունների տեսքով:

Հնագույն արարատառ (դրանք կարող են լինել արաբերեն՝ հիմնական մասը, և մի փոքր մասը՝ պարսկերեն և թուրքերեն) արձանագրությունները, որոնք թվագրվում են VIII դարով, հայտնաբերվում են հայոց եկեղեցիների (օրինակ՝ Ջվարթեցի, Բազավանի եկեղեցու) տարբեր մասերի վրա: Հնագույն արաբերեն և պարսկերեն մի քանի վիճագիր արձանագրություններ կան նաև Գատնիի տաճարի պատերին:

Մի քանի հնագույն արձանագրություններ գտնվել են Դվինից, որը Արմինիայի ձևավորման սկզբնական շրջանում, ինչպես հայտնի է, հանդիսացել է արաբ ռառիկանի նստավայրը (701 թ.) և մեծաթիվ արաբամանվեղական բնակչություն ուներ: Դվինում գտնվել են նաև կուրթական մշակույթի բազմաթիվ իրեր՝ խեցեղեն, ապակի, բյուրեղապակի, ցախեր, կնիքներ և այլն, որոնք պարունակում են արաբերեն արձանագրություններ կամ արաբական գրի նմանակում (խմիսացիա):

Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված թե՛ վաղ, թե՛ ավելի ուշ միջնադարի նշանակալից արարատառ վիճագիր արձանագրություններն ու մանվեղական հուշարձանները, դրանց առնչությունները հայ բնակչության հետ և աղբյուրագիտական նշանակությունը:

ARABIC EPIGRAPHIC INSCRIPTIONS ON THE TERRITORY OF THE  
REPUBLIC OF ARMENIA

Mikayelyan T. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Oriental Studies, Armenia)

## ԱՐՑԱԽԸ ՀՈՎՀԱՆՆԵՄ ԵՒՐԱԾԻ ԱՍԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մուրադյան Ս. (ԵՊՀ, Հայաստան)  
muradyan.samvel45@gmail.com

*Բանալի բարեք' Արցախ, պատմագրություն, գեղարվեստական գրականություն, Հովհաննես Շիրազ, մշակութաբանություն, Նարաբադի ողբ, հերոսամարտ:*

Նորագույն ժամանակների մեր հզորագույն բանաստեղծներից մեկի՝ Հովհ. Շիրազի ստեղծագործություններում Հայոց մեծ եղևնի, բռնազավթված Արևմտյան Հայաստանի արձարծումների հետ միասին կարևոր տեղ ունի նաև Արցախի թեման, որն առանձնակի սրությամբ էր արձարծվում հասկապես խորհրդային իշխանությունների կողմից հայության բնօրրաններից մեկի հանդեպ թույլ տրված ճակատագրական անարդարությունների պատճառով: Դրանց դեմ էր ընդվզում Հովհ. Շիրազ բանաստեղծը և իր հրեղեն խոսքով կանգնում արդարությունը վերականգնելու համար մարտնչողների առաջին շարքերում:

Արցախի խնդրի արձարծելյա, ինչպես հայոց հարցին վերաբերող մյուս բոլոր դեպքերում, բանաստեղծի համար հիմք են եղել դեռևս պատմահայր Մ. Խորենացու ժամանակներից սեզրեավորված, միջնադարի բովով անցած և մինչև Արվիան ու Բաճֆի, Մուրազյան ու Լեո ձգված գիտական ու գրական ավանդները, մյուս կողմից՝ մեր ժողովրդի պատմական հիշողությունն ու դրան հակակշիռ՝ խորհրդային իշխանությունների թողությունամբ Արցախի ու Նախիջևանի նկատմամբ գործված ոտնձգությունները:

Հայության այս հնագույն բնօրրաններից մեկը՝ Հայոց Արևելից կողմը կամ Արցախական աշխարհը, մատնեագրական և գեղարվեստական երկերում ներկայացվել է թե պատմաաշխարհագրական, հնագիտական-ազգագրական ու մշակութաբանական բնութագրումներով, թե որպես Հայաստանի անբաժանելի տարածք, որտեղ կայացել են հայության կենսագործունեությունն ու հարստումը: Այդ տարածքը նաև գեղարվեստական այն միջա-

զայն է, որի համապատկերում կերտվել են նրանով սնված և նրան հավա- տարին վիպական կերպարները:

Հայոց մեծ եղևնից և ողջ Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանի մի մասը Թուրքիային, իսկ Նախիջևանը եղրահոբոբոբ Ադրբեջանին նվիրա- բերելուց հետո հայությանը հասցված ծանրագույն հարվածը ԲԿ(Բ)Կ Կովկասյան 1921 թ. հունիսի 5-ի սաթթիի որոշումն էր, որով «վավերաց- վեցին» Հայաստանից Արցախի անջատումն ու Ադրբեջանին բռնակցումը:

Նախիջևանի պարագայում հետևանքը ողբերգական էր. հայոց պատմա- կան Գողթան գավառը հենց խորհրդային տարիներին այքներես առաջ ադրբեջանականացավ՝ տեղաբնիկ հայերի արտաքսումով ու մշակութային եղեռնով: Լույս ճակատագրին էր արժանանալու և Արցախը, էթն չազատա- գրվեր ադրբեջանական գերությունից:

Պատմական ճշմարտության մասին գիտական խոսքն անթույլատրելի էր հայերին, իսկ ազերի կեղծարարներին թույլատրվում էր ամեն ինչ: Մեռու էր ապակինե գեղարվեստական խոսքին: Մինչև Խորհրդային Միության փլու- զումը, սակայն, ազատատենչ Արցախի հայության ձայնը խլացվում էր ժո- դովորդների եղրադրության և սուտ ինտերնացիոնալիզմի ջարդոններով ու պետական որոշակի պարտադրանքներով: Իսկ արդարության վերականգ- նում պահանջող հատուկնա ընդվզումները լռեցվում էին ադրբեջանաճան քարոզներով և պետական կուսակցական կարգախոսներով ու պատմիճն- ըով: Ստեղծված չափածո գեղարվեստական խոսքն էլ, մանավանդ՝ արցա- խաբնակ բանաստեղծներինը, հայրենի եզերքի բնական գեղեցկությունների գովերգից այն կողմ չէր անցնում: Այդ ընթացքում Հովհ. Շիրազը, խորպպես գիտակցելով իր խոսքի ուժն ու կշիռը, Արցախի բանաստեղծականացումը համարեց գերնպատակ, որովհետև դա էր օրախնդիր քաղաքական հարցը, մեր ժողովրդի ազատաբաղձ ձգտումներն արձարծելու միակ ներգործուն մի- թոցը:

Արցախի գեղարվեստականացումը Շիրազի իրագործում էր տարածաժա- մանակային լայն ընդգրկումներով՝ պատմական անցյալի, ներկայի և գա- լիքի համապատկերում: Եթե «Անի», «Տիգրան Սեմի վիշտը և հավերժու- թյունը», պատմափիլիսոփայական պոեմներում, «Հայոց դանթեսականը» դա- տաստանամատյանում Արցախը դիտարկվում էր պատմության հուղիղույ- թում, ապա «Արջին իղձ», «Նարաբադի ողբը», «Մի արցախաճու» խորա- գրերով բանաստեղծություններում նա շոշափում էր համայն հայությանը հուզող արդյական խնդիրներ: Երկու դեպքում էլ նրա էպիկոնը հայ-թուր- քական հարաբերությունների ճիշտ ընկալումն էր. համազված էր, որ մեր ողբերգությունների ու կորուստների բուն պատճառը ոչ միայն ամենազավթ



ու արյունաբորու թուրքերի իշխելատենչությունն է ու մեծ Թուրանի տեպա-կանը, աղև՝ գերտերությունների թուրքամուտ քաղաքականության հե-տևանքը.

*Թուրքն հայի արեհյ ձևորերը հանում,  
Աստուտ արքունցի մեջ է լվանում,  
Մորում արբիչով ազգերի տված,  
Տնծում լուռությամբ երանց անաստված...*

Հիմնականում Հ. Եիրազի գրավոր ու բանավոր ելույթների շնորհիվ գար-թոսքի սերնդի մեջ ամրակալվեց ու գործընթացավ Արցախի պահանջատիրու-թյան ու երա ազատագրության համար պայքարի համաժողովրդական գի-տակցությունը: Դեռես 1950-ական թթ. գրված «Վերջին իդև» և «Լարաբաղի ողբը» բանաստեղծությունները չգոհվող ու անտև, աննահանջ ու նպատա-կալալաց գինվորների պես կատարեցին իրենց սատարական դերը: Լրատե արթնացրին արդարության ծարավի մեր ժողովրդի քնեցված հիշողությունն ու արժանապատվությունը և նախապատրաստեցին 1980-90-ական թթ. Հե-րոսական սերնդին: Այդ սերունդն էր, որ, շիրազյան պատգամները սրտում ու մտքում, 1988-ին նախ միլիոնանոց բռուկներով արտահայտեց իր պատ-րաստականությունը, ապա գեներ վերցրեց և թշնամու պարտադրած պատե-րազմում տարավ փառանեղ հաղթանակ:

Ձեկուցման մեջ հանգամանորեն դիտարկվում է «Լարաբաղի ողբը» բա-նաստեղծությունը:

ARTSAKH IN THE WORKS OF HOVHANNES SHIRAZ  
Muradyan S. (Yerevan State University, Armenia)

ԲԻԱՅՆԱԿԱՊ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԷԹՈՂԱՄԱՄԵՄԲՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ  
ՊԱՏՄԱՄԵՄԿԱԳՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՂԱՑԱՑԱՑԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յակոբեան Ա. (ՀՀ ԳԱԱ արևելագիտություն ինստիտուտ, Հայաստան)  
jakobalex@yahoo.com

*Բանալի բառեր՝ Բիայնա, Արմինա, Արմենիա, Ուրարտու, Արարատ,  
Էթնա:*

1. Վերջին տասնամակներում հայ էթնոսի (ժողովրդի) կազմաւորմանը մանրակրկիտ անդրադարձած ուսումնասիրողները (Յ. Կարազեօգեան, Մ. Կատուլայեան), յետևելով Թ. Գամկրելիձէի և Վ. Բանուվի յայտնի տեսու-թեան վրայ, այդ գործընթացն ընկալում են որպէս արդիւնք նոր էթնոսների կազմաւորման 3 ուղիներից (Յ. Բրումբե, Յ. Հարտիթիւով, Ն. Չեքոբաբով են) երկրորդի՝ էթնիկական համայնմբան-էթնոկոնսոլիդացիայի, ընդ ո-րում էթնոմիցացիայի տարբերակով (այսպիսով՝ ո՛չ էթնիկական պարզ մասնատման-էթնոսապարացիայի, և ո՛չ շրջակայ էթնոսների տեսական կլանումով էթնոէվոլյուցիայի): Այդ էթնոհամայնմբումը համարում է ըն-թացած Բիայնական տերութեան մեջ, որն իր վերելքի շրջանում միատարու էր ողջ Հայկական լեռնաշխարհը և կոչուում նաեւ Ուրարտու, Արարատ և ն. իսկ Ք.ա. Է-Ջ դդ.՝ արդէն նաեւ Արմինա, Արմենիա: Տուեալ էթնոգործընթացն ընդգրկել է Բիայնէլէի բնակչութիւնը կազմող ինչպէ՛ս և հնդեւրոպայիսու, այն է՝ տեղաբնիկ նախահայախուս, լուվիախուս, իրանախուս և եկուոր թրակա-փոլիգիախուս (մուշկեր), այնպէ՛ս և էլ խուտի-րիախիսախուս, և զուցէ՛ նաեւ այլ (սեմախուս, քարթուկախուս) ցեղերին, որոնք մինչ այդ առանձին ցեղային էթնիկ ինքնագիտակցութիւն ու ինքնատեսանուններ ունէին: Այդպէս առաջացել է ընդհանուր և կայուն ինքնագիտակցութեամբ վերցեղային էթնո՝ ժողովուրդ, որն ընդունել է դեռես ընծարկելի ստուգաբանութեամբ հայ < Հայա՝ ինքնա-նուանումը (էթնոնիմ, էթնոէթնոնիմ) և ծաւարով գերակշիռ՝ նախահայերենով իստող ցեղերի լեզուն, կամ, աւելի ճիշտ, նրա՝ խուտի-րիախիսական բաղաձայ-նական համակարգով հարստացած միջցեղային կոյնէն, որն այդ պահից ար-

ղև կարելի է կոչել հայերեն: Լորակազմ հայերի համար ցնդունելի են եղել այս կամ այն ծագում ունեցող այն այլախոսակցները (Երզնէֆոնիմ), որոնցով նրանք ճանաչուած էին հարևանների մօտ, այն է՝ **արմէներ, Արմինա** են (Յնդերտպական ժողովուրդների՝ իրանցիների, յոյների մօտ), **տամիսներ** (բարբոտլական ցեղերի մօտ) և **ուրարտացիներ, Արարատ**: 2. Երևոսիմամբան ճանաչարիով կազմաւորուած էրնոսի կարեւոր յատկանիշն այն է որ նրանում տարալուծուած նախկին էթնօրադարձիչները կորցնում են լոկ իրենց էրնիկ ինքնագիտակցութիւնը, իսկ նրանց թէ՛ հոգեւոր, թէ՛ նիւթական մշակոյթի տարրերը (բացի լեզուից) փաստօրէն անխաթար թափանցում են նոր էրնոսի ձեւաւորուող մշակոյթ (որս դիմա՛ էրնուկոլիցիայի ուղիով ծաւալային նոր պատկեր տեսցած էրնոսի մէջ կլանուող բազարդիչները միմիայն կենսաբանական լիցք են տալիս նրան):

3. Մովսէս Խորենացու մօտ ներկայացուած՝ Հայկ նահապետի ու նրա սերունդների տարածման ուղիները համադրելով Թ-Ը դդ. բիացիների նուաճումների ուղղութիւնների հետ՝ կարելի է նկատել առաջինի ծագումնաբանական կապը երկրորդի հետ և դրանում ենթադրել հայ էրնոսի կազմաւորման իրական պատկերի ինչ-որ ձեւով արտացոլումը Հայկի և Բելի «առասպելում»: Մուծածիրի, Տուշպայի, Արծաշքուի («Կանայ լճից հիւսիս») և Դայանի-Հարթի կենտրոնների շուրջ արտապնդուած ու Ասորեստանի արշաւանքներին դիմակայած Բիանական պետութիւնը Ք.ա. Թ դ. վերջերից սկսում է իր պարբերական ռազմարշաւներով ընդլայնուել դէպի հիւսիս՝ Երասխի վերնահովիտ (Անաշէ, Երիբրուսիտ), Արարատեան դաշտ, Շիրակ (Երիւխէ), Սեւանի աւազան ու աւելի հիւսիս (Ալիշտու), Գուգարք (Կարթար-Կ, Ջարախա են), Տեյրակիտ-Տայք, բուն Սիւնիք (Օտչուկու), Արցախ (Ուրտեխիսէ, Բերդիս-Բերձոր են), ապա նաև՝ Գարսկահայք ու աւելի հարաւ, Աղձնիք (Ազիսէ, Ուրմէ), Օտիք, Բարձր Հայք ու աւելի արեւմուտք այդպիսով Ը դարում դառնալով շատ հզօր տէրութիւն: Գրեթէ նոյն պատկերով, ըստ Հայկեան պատումի՝ Բելի նախորդի, արեւելեան Կորձայքից (Կարձուսի տուն) Վասպուրականի Հայոց ձորով դէպի Տուրուբերանի Հայք գաւառ տարածուած Հայկի սերունդներն անցնում են Երասխի ձորահովիտ, ծաւալում դէպի Արարատեան դաշտ, Շիրակ (Շարայ), Գուգարք (Գուշար), Գեղարքունիք (Գեղամ), բուն Սիւնիք (Սիւսակ), Արցախ-Ուտիք (Ատան), Օտիք (Տորք) են՝ հիմք դնելով Հայկ նահապետից «սերուած» և իր մէջ Արարատը երկրի աւելի վաղ բնակիչներին «մերազնացած» հայ «ազգին» և Հայաստան – Արմենիա «աշխարհին»: Այս նմանութիւնը թոյլ է տալիս հայերի էրնուցենտիկ առասպելական պատկերացումներում դիտարկել «հայ ազգի» կազմաւորման գործում բիացիների դերի մասին յիշողութիւնների

պահպանումն ու արժեւորումը (համեմատութեան համար՝ մերօրեայ հասարակական պատկերացումներում հայ ժողովրդի կազմաւորման գործընթացում բացարձակապէսում է լոկ վաղեցնախայերէնի կողմերի ունեցած դերը, որի հիմքում էրնուցենտիկ և գլոստոգենտիկ շփոթն է):

4. Լման ձեւով է հայերի հետագայ ծագումնաբանական պատկերացումների մէջ ներթափանցած թում նաև Ք.ա. Դ դ. յոյն հեղինակների կողմից արձանագրուած Ծաստիկ որդի Արմէնոսի առասպելապատումը, որը կարող է համարուել (ըստ Հ. Աւետիսեանի) հայ էրնոսի համախմբման գործընթացի մասնակից մէկ այլ բազարդիչի՝ ուրումաշցիների ցեղի յայտնի տեղաշարժի հետ Բարձր Հայքից դէպի Օտիք և Աղձնիք (Ք.ա. ԺԲ դ.):

#### THE HISTORICAL-CULTURAL CHARACTERISTICS OF ARMENIAN NATION'S ETHNOCONSOLIDATION IN THE STATE OF BIAYNA

Yakobyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)

## ՀԱՅ ՑԵՂԱՆՈՒՆԸ

Պետրոսյան Ա. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Շախատան)  
alpehist@gmail.com

*Բանախ բառեր՝ հայոց ցեղանուններ, նախապատմություն, ազգագրություն, հնդեվրոպաբանություն, հայ-հինարևելյան կապեր*

Հայ ժողովրդի ծագման և ձևավորման հարցերի ուսումնասիրության աստեղծարարական հարցերից է հայ ցեղական ստուգաբանությունը: Արդեն XIX դարում այն հանգեցվել է հնդեվրոպական \*poti- «տեղ, ամուսին» արմատին (Ֆ. Եպիգել, Ռ. Կիպլերա): Իր վերջին աշխատանքներում այս ստուգաբանությունն էր պաշտպանում և Գ. Ջանուկյանը: Այժմ հնարավոր է նոր փաստարկներ ներկայացնել այդ ստուգաբանության օգտին: Այսպես, որոշ բարբառներում հայ բառը հանդես է գալիս որպես մեծահասակ կանանց կողմից անուստան տրվող անվանում՝ «ամուսին, տանտեր, քնտանիքի գլուխ» իմաստով (հմմտ. հատկապես «մեր հայը» ձևը): Այդ բառը, մեծ հավանականությամբ, կարող է ծագեցվել հնդեվրոպական \*poti-ից (> pati- > har'i > հայ ճանապարհով): Հոգևակի սեռական հայոց ձևը ցույց է տալիս, որ արմատին, հավանաբար, հավելվել է հայերենում մեծ տարածում ունեցող հնդեվրոպական \*(y)o- վերջածանցը:

Այս ստուգաբանության օգտին է խոսում հայոց ավանդական նախին Հայկի կերպարի քննությունը: Հայկը մի հսկայական, երեք հարյուր տղամարդ ընդգրկող նահապետական զերդաստանի նահապետն է: Հստ այրմ, նրա անունը նույնպես կարող է հանգել \*poti-ին, դիցանունների բնորոշ նվազական-քերական -իկ ածանցով (Հայ-իկ > Հայկ, հմմտ. Աստղիկ դիցանունը և Հայկի որդու նույնատիպ ածանցով կազմված Արամանեակ անունը): Հասկանալի է, որ Հայկի նահապետ կոչման երկրորդ մասը նույն արմատի իրանական արտացոլումն է. և նրա հակառակորդ Բեյի անունը նույնպես նշանակում է «տեր» (սեմական b'l, որը կիրառվել է նաև որպես անկախ դիցանուն): Հայ ցեղանունը, այսպիսով, համադրելի է հնդիրանական arya (հնդեվրոպական \*aryo-) «տեր» ցեղանվանը՝ որպես հասարակության սոցիալական կառուցվածքի տերմին:

Մյուս կողմից՝ ի հայտ են գալիս նաև հինարևելյան կապեր: Հնդարևակ ընտանիքի գլուխը՝ նահապետը, խուռիերեն կոչվում էր ewri «տեր»: Հնուանիքներն ունեին իրենց ամբողջական հողային ֆունդը՝ ewra, որը գտնվում էր ewri-ի տիրապետության տակ: Առավել թույլ ընտանեկան խմբերն իրենց հպատակությունն էին հայտնում հարևան ուժեղ քնտանիքի ewri-ին: Այսպիսի ընտանիքների խումբը ձևավորում էր նոր միավորում՝ գյուղ, որը կամ որոնց միավորումը, իր եկրթին, կարող էր աճելով վերածվել քաղաքի կամ քաղաք-պետության:

Այս պատկերը միանգամայն համադրելի է հայկական տվյալների հետ: Հայկը հայոց հնագույն ընտանիքի տեր-նահապետն է: Հայկի հետևորդները, ինչպես և նրանց երկիրը, կոչվում են Հայք, ինչը նույնական է խուռիական ewri «տեր, նահապետ» և ewra «նահապետի հողային ժառանգական տիրապետություն» տերմինների հարաբերությանը: Հայկին և նրա ժառանգներին իրենց հպատակությունն են հայտնում տեղական ավելի թույլ համայնքները: Այսպես սկիզբ է դրվում Հայք-Հայաստան երկրին:

Հայ ցեղանվան այս ստուգաբանությունը և բացահայտվող հնդեվրոպական ու հինարևելյան կապերը ցույց են տալիս, որ հարևան հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական ավանդույթներում առկա են եղել սոցիալական ընդհանուր կառուցվածք և զարգացում, ինչը կարող է բացատրվել վաղ և երկարատև շփումներով:

## ETHNONYM HAY

Petrosyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Archaeology and Ethnography, Armenia)

ՄԻԱՄԱԿԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵԱՒ  
ԿԱԶՄԱԿՎՈՐՈՒՄԸ 17-18-Դ ԴԱՐԵՐՈՒՄ

Պողոսյան Ն. (ԵՊՀ, Հայաստան)  
norcor@mail.ru

*Բանալի բաներ՝ աշխարհագր., միասնական, արևմտահայ, արևելահայ, բարբառներ, ուշ միջնադար:*

XVII դարի սկզբներից մինչև դարի կեսերն ընկած ժամանակամիջոցում վաղ աշխարհագրային հայերենը բնութագրվում է երանով, որ «չունի արևելահայերեն-արևմտահայերեն բաժանումը, միավորում է երանց առանձնահատուկ տարրերը» (Ռ. Իշխանյան): Նոր ձևավորվող գրական հայերենը սկզբնական շրջանում համատեղում էր արևմտահայ և արևելահայ բարբառների լեզվական հատկանշները, դրա շնորհիվ հասկանալի էր բոլոր հայերին: Սա հենց համարում էր գրական աշխարհագրի **միասնականության շրջան:**

Հայերենի գրական երկու՝ արևմտահայ և արևելահայ ճյուղերի ձևավորման և զարգացման ընթացքը ճիշտ հասկանալու համար բազմաթիվ առջույթների քննությամբ փորձել ենք ցույց տալ, թե ինչ էր այդ «միասնական հայերենը»:

Միաձուլյալ հսկեց գալու առանձնահատկությամբ XVII-XVIII դդ. Հոնիալուր ամամբ տարբերակվում են հայերենի լեզվական մի քանի կենտրոններ. արևմտյան՝ Կ. Պոլիս կամ Փոքր Ասիա, Դրիմ, Լեհաստան, արևելյան՝ Արարատյան գավառ, Ջուղա, Դարաբաղ: Հնարավոր է, որ նշված վայրերը, որպես լեզվական կենտրոններ, առանձնանում են (վարչական-տնտեսական կենտրոններ լինելուց զատ) այն պատճառով, որ նշված բարբառներով պահպանվել են մատենագրական զգալի թվով երկեր:

Մեզ հետաքրքրող միասնական լեզվամիճակն անվանելու համար գործածվել են տարբեր տերմիններ՝ աշխարհական և քաղաքական (Հովհաննես Հովով), գրական լեզու (lingua litteralis), բարբառներ և քաղաքացիական հայերեն (Յոհան Շյոդեր), աշխարհագրա և ռամկական լեզու (Մխիթար Մե-

բաստացի): Միասնական գրական լեզուն, թերևս, քաղաքացիական հայերենն է այն միևնույն երկրում և նույնիսկ միևնույն նախադասության մեջ միավորում էր գրագր, աշխարհագր և բարբառային տարրերը: Օրինակները ինչու առատ են, բերում ենք տարբեր վայրերում ստեղծված երկերից քաղված մեկ-երկու նմուշ: Արցախ – «Մենք տարակուսեալ ենք, կու դողանք», «Ճաշայ Իրանու երկրումս ինչ որ պարեալ են և ասացեալ», «Էկեղեցական դասիր եկիք դէմ ընդ յառջ, իրախոյս բարձեալ ձայն արձակեցիք ընդ միմեանս»: Ազուլիս – «այս գետս գետմ այ Անարդամ», «Քազաուրի ուզում չէր»: Ջուղա – «Սուրբ Աթոռ պայծառ և անկարօտ յամենայնի կու մնայ», «ըստ հաճոյից Աստուծոյ գործ նուագում է»: Երուսաղեմի Ս. Հակոբ մայրափանքի դիվան – «չեմ կարեք գալ, ի հետ հաճոց գալոց են, թէ տեսնում»: Կարին – «աստիկ ամլ է եղեալ, որ մարդ շուն և կատու կերեալ են» և այլն:

Միասնականությունը վերաբերում է նաև իմաստափոխությանը: Այս շրջանից պահպանված իմաստափոխ բաները դեռևս արևմտահայ կամ արևելահայ տարբերակում չեն ճանաչում: Օրինակ՝ երկագ (նալի խաբիս), խնէ (հարբել), ձգել (թողել, լքել), տուփ (նավակ) և տասնյակ այլ բաներ հավասարապես գործածվում են երկու ճյուղերը ներկայացնող բնագրերում:

Թմանն արդիական է թե՛ գիտական-բանասիրական, թե՛ գործնական նշանակությամբ: Հարցի ուսումնասիրմամբ պարզաբանվում է, որ՝ ա) գրական հայերենի երկու ճյուղերը ծագել են երբեմնի միևնույն հիմքից, բ) մեզ գրական լեզվի ձևավորվելը գոյություն է ունեցել միջբարբառային հարդակցության ընդհանուր լեզու, որ հասկանալի է եղել Կ. Պոլսում, Կարինում, Ջուղայում, Արցախում, Արարատում և այլուր, գ) ուշ միջնադարում կամ վաղ աշխարհագրային շրջանում հայերի (այն շրջաններում գուցե դեռևս չգիտակցված, սակայն միտում է եղել ընդհանուր մի լեզու ունենալու՝ չնայելով քաղաքական, աշխարհագրական և այլ տեսակի խաչընդոտներին):

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև մեր լեզվի երկու ճյուղերին վերաբերող երկու այլ իրողություն՝ ա) 19-րդ դարում արևմտահայերենն ու արևելահայերենը միավորելու շտապված փորձերը ք) Սփյուռքի գաղթօջայներում հայերենի երկու ճյուղերի փոխներքափանցման ընթացքը մեր օրերում:

THE NEW COMMON LITERARY ARMENIAN LANGUAGE IN THE 17-18TH CENTURIES

Poghosyan N. (Yerevan State University, Armenia)

ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻԻ ԵՎ  
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԱՆՈՐ

Մաֆարյան Վ. (ԵՊՀ, Հայաստան)  
shaani@yandex.ru

*Բանալի բառեր՝ մոզակախարդային մշտում, հոգևոր-մշակութային ազդեցություն, ռճակն համադրություն, հրաշապատում, տարզերում, Աբգախ:*

5-րդ դարի հայ պատմագրության ավանդներն ուրույն դրսևորումներ ունեն 7-րդ դարի մի պատմիչի պարագայում, ով հարևան երկրի պատմություն է գրում և այդ ժողովրդի մշակութային արդեցության կրողն է: Մովսես Կողանկատվացու «Պատմություն Աղուանից աշխարհի» գիրքն այդպիսի նմանողության և ստեղծագործական ավանդների զարգացման յուրօրինակ համարություն է: Կառուցվածքի և ընդգրկման մեջ օգտագործելով Մովսես Խորենացու սկզբունքը՝ պատմաառասպելային հենքի վրա դեպքերն սկսել ազգի ծնունդից և հասցնել իր պարզ ժամանակը, Ազվանքի պատմիչը կարևորում է նաև գոյասման հոգևոր-մշակութային հիմունքը, դա տեսնում հայոց հետ կապու հարաբերությունների մեջ, երբորում դավանանքային միանույլ ուժը, որ անում է կրոնախոհական ծավալուն զեղումներով՝ դասազով Եղիշեի հետևորդը: Կախրևորում է նկարագրությունների պատճառահետևանքային մանրամասները, պատմաավանդական նյութը գուզահետում բնապատկերին և Կազար Փարզեցու՝ Արարատյան դաշտի նկարագրության հետևորդությամբ է ներկայացնում Ազվանքի բնությունը: Բացարձակացման տարվող հերոսներին (Ուռնայր, Կաչե, Կաչագան, Ջիվանշիր) ուսումնասիրության առարկա է դարձնում և կերպավորում Փավստոս Բուզանդի վիպականացման արվեստի նմանողությամբ, իսկ հայոց առաջին պատմիչի գիրքը անվանում է «Ազարանգեղոսի Բաղձալի Պատմություն»:

Ազվանքը պատմական ճակատագրով դատապարտված էր կամ նյութիսի ավարտու ճեղքերի և հարավի պարսկական, հետո արաբական մշտմաներին (մինչև որ հասնեք արևելքի թուրք-թաթարական օրհասը) և եույնքան վտանգավոր՝ մոզակախարդային ազդեցություններին, կամ արևմուտքի՝ հայոց և մասամբ հունաց հոգևոր-մշակութային լույսի ներակայությանը: Այս սահմանագիծը ընդգծվում է և՛ պատմաաղաբարական, և՛ մշակութային, և՛

կենցաղային մակարդակներում՝ մի կողմից անընդհատ բերելով մրին պատկերների մոզավանքը (Ջերու խաբանի արշավանքները, Ազվանքի Վիրո կաթոլիկոսի կերպարի հակադրությունը խազարների Ծաթ տիրակալին և սրա նյութը կալության մարմնեղեն աղտոտությունների խտացումը և այլ պատկերներ), մյուս կողմից՝ և՛ քրիստոնեության տարածման, և՛ Մաշտոցյան գրքի ու Ավարայրի լուսնեղեն ընդհանրության հիմքի վրա հայոց բաղաբարկրական շատավիդումները Ազվանքում, որ պատմիչը շեշտում է, օրինակ, այսպիսի ձևակերպումով: Կաչագան Բարեպաշտի ներքողի մեջ գրում է. «Գովաստեք ավելի պակաս եղած չեմ համարում արևմուտքի վրա իշխող Կոստանդին կայսեր գովասանքից, կամ՝ ոչ էլ Տրդատ Արչակունուց, որ փրկեց Մեծ Հայքը և մեզ՝ արևելաներիս»:

Հայ պատմիչների հետ գուզահետ քննությունները հաստատում են ոչ միայն ընդհանրություններն ու հայոց գերակայության փաստի պատմական իմաստը, այլև՝ հարևան երկրների հարաբերության բաղաբարկան գնահատակները, ինչը տեսնում ենք, օրինակ, հայերի դեմ վտանգավոր քայլերի դիմած Ուռնայր արքայի դրական քննազումներ, Ջիվանշիրի նկատմամբ հայ նախարարների մեջ ծնունդ առած «խիստ նախանձի» և այլ դրվագներում: Ազվանքի պատմությունը դիտելով հարևանների հետ հարաբերության մեջ՝ կան արժևորում է հայոց ու վրաց հետ բաղաբարկան-մշակութային տեղությունները, հայերից շատ ավելի բռնկուն ջալով քննադատում նաև «անծիպալ Կյուրուս» վրաց կաթողիկոսի ջանքերով կրանց էկեղեցու անջատվածը հայոց ուխտից, որ շեշտի, թե «աղվանները չեխացան ուղղափառությունը և հայերի հետ միաբանվելուց», և այլ հարաբերությունների մեջ կարևորում «անտիկ-Աբգալի դեբը: Իր ուսումնասիրության դպրոցի նման Կահակատվացին ևս պատմական փաստը հաճախ հաղորդում է ոչ միայն վիպական մանրամասներով, այլև զգացմունքային հասցեցվածությամբ, դրանից բխող՝ խոսքի պատմիչավորությամբ և հոմանիշային կուտակում-պետպետության և այլ հնարաններով:

Ազդեցությունների, մշակութային ենթակայության այս հարաբերություններում հեղինակային ինքնատիպության արտահայտություն է այն, որ հայ մատենագիրների հետևորդությամբ պահպանելով տարեգրական, վիպական և կերպարգորման ու պատկերավորման շատ որակներ՝ Մովսես Կողանկատվացին չի ընդունում մերժելի հարևաններից էկեղ մոզային, աղանդավանական հարվածը, դրանց ծիսական վերապրուկներն ու աղվանների մեջ թողած նստվածքը, միաժամանակ բնակաձորեն իր ոճի մեջ ներառում է արևելյան գույուց-առասպելային պատմվածակներ: Կենցաղային իրեղենության հատկանշվով այդպիսի իրաշային տարրերը համարվում են քրիս-

տոնեական հրաշապատումին, և դա առկա է օրինակ, Գրիգորիա կաթողիկոսի նշխարքների .դրոնման, դրանց տեղը ճշտելու և Կապազան Բարեպաշտի կողմից Ամարասում վերահուղարկավորվելու ողջ դրվագում:

MOVSES KAXANKATVATCI AND TRADITIONS  
OF ARMENIAN HISTORIOGRAPHY

Safaryan V. (YSU, Armenia)

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,  
ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ARCHAEOLOGY,  
ETHNOGRAPHY

## ԴԱՏԱԴԵՄԻ ԱՐՈՑԻ ՊԵՂՈՒՄԵՐԸ

Ալեքսանյան Տ. (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ, Հայաստան)  
tigranalexanyan@yandex.ru

*Բանալի բառեր՝ ամրոց, հուշարձան, ճարտարապետություն, պատմություն, հնագիտություն, մշակույթ:*

Դաշտաղեմի միջնադարյան ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի Դաշտաղեմ գյուղում (Նախկինում Ներքին Թալին), Թալին քաղաքից 5 կմ հարավ: Ամրոցն իշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ, սակայն, ի տարբերություն միջնադարյան բերդ-ամրոցների, գուրկ է բնական որևէ անառիկությունից: Ամրոցի պաշտպանական համակարգը նրա բարձր պարսպապատերն են:

Դաշտաղեմի ամրոցում տարբեր ժամանակներում և տարբեր հատվածներում կատարվել են հնագիտական և վերականգնողական աշխատանքներ: Այսպես, ՀԽՍՀ հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից կատարվող վերականգնման աշխատանքների ծրագրով 1989-1990 թթ. ամրոցի տարածքում կատարվել են պեղումներ, որոնց արդյունքում բացվել են պարիսպների հյուսիսային հատվածը, միջնաբերդի և հյուսիսային պարսպի միջև եղած տարածքը: 2005-2006 թթ. պատմամշակութային հուշարձանների պահպանության և զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում կատարվել են Դաշտաղեմի ամրոցի ամրակայման և վերականգնման աշխատանքներ միջնաբերդի տարածքում: Հիշյալ ծրագրի շրջանակներում Իտալիայի հայկական մշակույթի ուսումնասիրության և վերականգնման կենտրոնի մասնակցությամբ պեղվել են Ջաբարյանների պարսպի գլխավոր, կամարակապ մուտքի ներսի հատվածը և աշտարակները:

Պետական ծրագրով 2011 թ. հոկտեմբերի 25-ին վերակազմակերպված Դաշտաղեմի միջնադարյան ամրոցի պեղումները Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից: Աշխատանքները կենտրոնացվեցին ամրոցի արևմտյան և հարավարևմտյան հատվածներում՝ միջնա-

բերդի և պարսպապատի միջև: Պեղման ենթակա ամբողջ տարածքը նախապես բաժանվեց 5x5 մ չափերի քառակուսիների, որոնցից յուրաքանչյուրը համարակալվեց թվով և լատինական այբուբենի տառերով:

Միջնաբերդի արևմտյան պատի և սուլպաատ հրապարակի միջև ընկած տարածքում պեղումների միջոցին բացվել են միջնաբերդի հիմքերը, որոնք ամբողջությամբ դրված են տուֆե ժայռի վրա: Այս ամբողջ հատվածը լցված էր շինարարական և տնտեսական աղբով: D-4 քառակուսում բացվել են թոնրի մնացորդներ. պահպանված մասի բարձրությունը 55 սմ է, պատերի հաստությունը՝ 7 սմ, տրամագիծը՝ 90 սմ: Թոնիրը տեղադրված էր ծայրի մեջ նախապես փորված շրջանակի փոստում: Թոնրի հարավային մասում պահպանվել էր նաև թոնրի քարաշար ակը:

Պեղումներ կատարվեցին նաև պարսպի հարավարևմտյան անկյունում՝ B-2-3 քառակուսիներում: Այս հատվածում պարսպի շարվածքի ներքին ճակատը գրեթե չէր երևում: Կատարված աշխատանքների արդյունքում պարզ ուրվագծվեց պարսպապատի շարվածքը, որի որոշ թարթեր, սակայն, չէին պահպանվել: Միաժամանակ բացվում էր տուֆե սալահատակը:

Արևմտյան պարսպապատին կից կատարված աշխատանքների արդյունքում բացվեցին երկու հնձանների հորեր:

Գտնված հնագիտական նյութերը կարևոր տվյալներ են հաղորդում ամբողջ կենցաղի և մշակույթի վերաբերյալ:

#### THE EXCAVATION OF DASHTADEM FORTRESS

Aleksanyan T. (Ministry of Culture of the Republic of Armenia, "Research Center of Historical and Cultural Heritage" Non-Commercial State Organization, Armenia)

#### ԱՐԱՄՈՒՍ ԱՄՐՈՑԻ ԵՆԲՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Հ. (ԵՊՀ, Հայաստան)  
hykaverisyan@yahoo.com

*Բանալի բառեր՝ Արամու, Ուրարտու, ամրոց, միջնաբերդ, հուշարձան, շերտագրություն:*

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամու գյուղը և շրջակայքի այլի են ընկնում հնագիտական ու պատմաճարտարապետական հուշարձաններով: Մենաբանակ համալիրները վերաբերում են քարի դարից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Դրանց մեջ առանձնանում է հատկապես Արամու գյուղի տարածքի սկայական ամրոց-քնակավայրը, որի պեղումները սկսվել են դեռևս 1980-ական թվականներին, երեսնի պետական համալսարանի հնագիտական արշավախմբի ջանքերով: Սպիտակի երկրաշարժի և ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով հուշարձանի տարածքում կատարվող պեղումները ժամանակավորապես դադարեցին:

Կանոնավոր պեղումները շարունակվեցին 2004 թվականից ամրոցի արևելյան ծայրամասի հյուսիսային հատվածում: Մինչև 1 դարավանդը առանձնացվեց պեղման հրապարակ՝ շուրջ 250 քմ մակերեսով:

Շարունակելով պեղումները՝ արշավախումբը նպատակ ուներ ճշտելու ամրոցի կառուցապատման փուլերը, հստակեցնելու ժամանակագրական ինդիկները, շերտագրական իրողությունները և այլն: Այս պրոյեկտների պարզամասնական համար պեղավայրն ընդարձակվեց հիմնականում միջնաբերդի հյուսիսարևելյան ուղղությամբ: Պեղման աշխատանքների ընթացքում ուսումնասիրվող տարածքը ընդարձակվեց: Մարզվեցին միջնաբերդի արևելյան մուտքին կից կառուցված հյուսիսային աշտարակը, առաջին պարսպապատը:

Համարյա ամբողջովին պեղվեցին միջնաբերդի չորս շինությունները: Որոշակի հստակություն արձանագրվեց պարսպապատերի հետազոտման ժամանակ: Հատկապես կարևոր է դարձանալի վրա կատարված, բացվածքում հայտնաբերված պարսպի մնացորդը: Ամենայն հավանականությամբ այս պարսպապատը վերաբերում է մինչուրարտական ժամանակաշրջանին



և բերողովում է որպես կիկլոպյան ամրոցի մնացորդ՝ բնակեցված բյուրեղի դարից:

Նշված պարիսպից դեպի հարավ դարավանդի վրա բացվել է հաջորդ պարսպագիծը: Վերջինս վերաբերում է Վանի թագավորության ժամանակաշրջանին և միջնաբերդի արևելյան հատվածում միանում է հզոր աշտարակի մնացորդներին:

Այս պարսպապատը, իր կառուցողական առանձնահատկությամբ, կրկնում է Վանի թագավորության նմանօրինակ շինությունները: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ միջնաբերդի օղակող վերջին պարսպագիծը, անկասկած, հետադարձական ժամանակաշրջանի համակարգ է, որը գոյատևել է նաև վաղ միջնադարում: Բացի ամրաշինական դիպրոն կառույցներից միջնաբերդում պեղվեցին նաև տարբեր շինություններ:

Այսպիսով, Արամուսի ամրոցն ունի ժամանակագրական երեք հիմնական փուլ՝ միջուրարտական, ուրարտական, հետուրարտական: Այս փուլերը ներկայացված են համապատասխան շերտագրական և շինարարական հարիզներով:

THE LAYER GRAPH OF ARAMUS CASTLE  
Avetisyan H. (Yerevan State University, Armenia)

## ՆՈՐԱՀԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌՈՒՅՑ ԹԵՂՈՒՏՈՒՄ

Բարսեղյան Ա. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
babajanyanastghik@yahoo.com

*Բանալի բառեր՝ մշակույթ, հնագիտություն, ճարտարապետություն, տապանաբար, խաչքար, արձանագրություն:*

2010 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբի կողմից (արշավախումբի ղեկավար՝ պ. գ. ք. Ա. Գ. Հոբոսյան) Թեղուտի հանրավայրի հետ կնքած պայմանագրով՝ «Թեղուտի հանրավայրի իրացման գոտում հայտնված պատմամշակութային հուշարձանների հնագիտական ուսումնասիրություն և պեղումներ» իրականացնելու ծրագրի շրջանակներում, պեղումներ կատարվեցին «Ղարաթթուկի հողեր» կոչված հնավայրում, որի հյուսիսարևմտյան մասում է գտնվում միջնադարյան գերեզմանոց՝ ավերված եկեղեցու հետքերով: Հնավայրը գտնվում է Լոռու մարզի Շող գյուղից 2 կմ հարավ՝ Շող գետի և նրա ձախակողմյան վտակ Խառասանցի ջրի խառնման վայրից հարավարևմուտք գտնվող բարձրադիր իրվանդանի վրա: Ղարաթթուկը որպես տեղանուն նշում է Մակար եպիսկոպոս Բարխուդյանը՝ տեղակայելով պատմական Արցախ նահանգի Ջավն գավառում (ներկայիս Ղազախ): Նա նշում է, որ «Այեղցու դաշ, Ղարաթթուկի, Թեղուտ և Չորագեղ կոչուած տեղերում եւս կան աներակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարաններ»:

Կառույցը, գտնվելով իրվանդանի ամենաբարձր մասում, գերակա դիրք է զբաղում շրջապատի նկատմամբ: Լրա շուրջ, մոտ 2 հա տարածությամբ սփռված են տարբեր ձևի տապանաքարեր և խաչքարերի խարիսխներ:

Պեղման ավարտին պարզ դարձավ, որ շինության հատակագծային հորինվածքը բավական շեղումներ ուներ, որը, մեր կարծիքով, բազմաթիվ ու անփույթ վերանորոգությունների արդյունք է: Այն հատակագծում մոտավորապես քառակուսի է՝ արևելյան մասում և՛ ներքուտ, և՛ արտաքուտս բնդգծված ուղղանկյուն խորանով: Հյուսիսից խորանին կից եր կիսավեր խորանով ավանդատունը: Ավագ խորանի բեմի առջև դրված եր մի տապանաքար,

որն ուներ վրացերեն արձանագրություն: Այն մեկ ուրիշ տալարարի հետ միասին կազմում էր բեմառեչքը:

Մեկ այլ վրացերեն արձանագրված տապանաքար էլ բացվեց խորանի և ավանդատան պատերի արտաքին անկյուն կազմող հատվածում: Այս երկու արձանագրությունների դեռ վերծանված չեն, հասնակել են համապատասխան մասնագետների:

Հետաքրքրական այն է, որ մատուռը չունի մուտք. ենթադրելի մուտքերը կարող են լինել միայն հարավային կամ հյուսիսային կողմերում: Օրինաչափ համարվող արևմտյան կողմում դրան բացվածք չի եղել. փաստը բացառվում է, քանի որ արևմտյան պատից մտն 0.4-0.5 մ սկսվում է լանջի գառիքափը:

Պեղումների արդյունքում հայտնաբերվել են ամբողջական և բեկորային խաչարարք: Դրանցից երկուսը թվագրված են ՋԳԲ (1513 թ.) և ՌԾԳ (1604 թ.): Վերջինիս վրա պատկերված են երկու ամբողջային ֆիգուրներ՝ երկար զգեստներով: Մտացած խաչարարքը բեկորային են, մտն երկու տասնյակից ավելի, որոնց մեջ հանդիպում են և՛ 12-13-րդ դդ., և՛ 15-16-րդ դդ. բեկորներ:

Պեղումների ընթացքում գտնվեցին նաև հասարակ և ջնարակած խեցեղենի նմուշներ, որոնք ուն շատ բեկորային են, բայց ըստ կատարվածքի և ոճի 15-16-րդ դդ. են թվագրվում:

Հարավարևելյան անկյունը մաքրելիս հայտնաբերվեց երկաթե իրերի հավաքածու, որի մեջ կային ձուռ, եզան պայտեր, քերիչներ, փակեակ և այլ իրեր:

Թվագրություն ունեցող խաչարարքը (1513 թ. և 1604 թ.), հայտնաբերված խեցեղեն նմուշները, բանդակային և խաչարարային բեկորները, տապանաքարերն իրենց տիպով, խորան հիշեցնող հասավածը՝ ուղղանկյուն, կատույցի հորինվածքից արտաքուստ ընդգծված, վրացերեն արձանագրությամբ տապանաքարերը, թույլ են տալիս մատուռը թվագրել 15-17 դդ.: Ճնայած այն հանգամանքին, որ նրա հորինվածքը ենթարկվել է բազում փոփոխությունների: Բոլոր փաստերը վկայում են, որ գործ ունեց գերեզմանապան մատուռի հետ:

Այսպիսով, 2010 թ. «Արարթոթուկի հողեր» հնավայրում պեղումների արդյունքում բացվեց մի կատույց, միջնադարյան մի նորահայտ մատուռ, որը, ճնայած համառոտ ձևերին, որշակի ներքուստ կարող է ունենալ հարյոց մշակույթի ու հատկապես ՀՀ հյուսիսարևելյան տարածքների ոչ դասական տիպի հողվոր ճարտարապետության դեռևս շատ անպատասխան հարցերի ճշման համար:

A NEW FOUND SPIRITUAL BUILDING IN TEGHUT  
Babajanyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

## ՀԱԶՐԵՆ ՓԻՐԻՒ ՌԻՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՈՒՓՈՐ ԴՈՒՍ ՍԵՂԱԳԻՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՌԻՐՁ

Քաղաքյան Մ. («Երևուս» էլեմունձակութային գիտական  
ինտագրությունների կենտրոն, Հայաստան)  
miq.badalyan@gmail.com

*Քանայի բարձր՝ Ուրարտու, Հազինն Փիրի, ժայտափոր դուներ, Տուշպա, Իշպուհին, Խաղի, սեպագիր:*

Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վանա լճի արևելյան ավազանում կերտված ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայտափոր դուների (Հազինն Փիրի, Մշտուակերտ, ՄՆերի Դուս) ուսումնասիրությունները: Վերջիններս կերտվել են Իշպուհինի, սպա Իշպուհինի և Մեռուա արքաների համատեղ գահակալության շրջանում (մոտ. Ք. ա. IX դարի վերջին քառորդ) և հանդիսացել են ուրարտական պետության կարևորագույն ծիսապաշտամունքային բացօթյա համալիրները:

Ուրարտական սեպագիր արձանագրությամբ ամենավաղ ժայտափոր դուսը Հազինն Փիրին է: Վանական սեպագիր արձանագրությամբ միախորշ այս դուսը կերտվել է Իշպուհինի արքայի հրամանով. ունի 2.8 մ բարձրություն, 4.6 մ լայնություն և գտնվում է Վանի թագավորության Տուշպա (ներկայիս Վան) մայրաքաղաքից 12 կմ հարավ: Ցավոք, այս հուշարձանը մեծապես վնասված է: Բանն այն է, որ ժամանակին գանձառդերը գաղիկոսով անցքեր են արել դրան վրա՝ կարծելով, թե «դրան» հետևում գանձեր են պահված, իսկ 1945 թ. հետո՝ իրենց համար թվացավ «դուսը» պայթեցնելու և իբր դրան ետևում գանձեր գտնելու նպատակով բարբարոսաբար նաև պայթուցիչ տեղադրել այդ անցքերից մեկի մեջ, որից էլ առաջացած պայթյունի հետևանքով այս հուշարձանը մեծապես վնասվել է: Հազինն Փիրիի դրան վրայի վնասված արձանագրությունում Իշպուհինի արքան տեղեկացնում է մրգատու պարտեզ ու խաղողատ տնկելու և դրանք «տիրջը» (ուրարտ.՝ *ewri*) նվիրաբերելու մասին:

Շուրհանրապես, ուրարտական սեպագիր արձանագրություններում «տիրք» բարձր գրեթե միշտ վերաբրվել է Վանի թագավորության գերագույն աստված Խաղիին և ընդամենը մեկ դեպքում, այն էլ՝ իր գահափոխագիր համարժե-

քով՝ (ՔՆ) տարերքի աստված Թեյշեբային: Այս արձանագրությունում «տեք» մակդիրն առանց Խալդի աստծո հիշատակվելու փաստը տարակարծությունների տեղիք է տվել: Նույրին անդրադարձած գիտնականների մի մասը կարծում է, որ Հազինե Փիրիի ժայռափոր դռան արձանագրության մեջ հիշատակվող տեքն ամենայն հավանականությամբ Խալդին է (Շ. Գրեկյան): Կա կարծիք նաև, որ այս ժամանակահատվածում Բշպուլիին դեռևս չէր ընտրվել իր աստծուն (Մ. Մալվիկի): Թեքնս, գերակշռող է այն տեսակետը, որ այստեղ նկատի է առնված ոչ թե Խալդին, այլ տարերքի աստված Թեյշեբան (Ա. Դիլիջյու, Օ. Բելլի, Մ. Մալվիկի, Ա. Բաթմազ և ուրիշներ), քանի որ Թեյշեբայի խուրձական զուգահեռ Թեշուբին ևս վերագրվել է ուրարտերեն *տեքի* խոտիչների համարժեք *ewri* մակդիրը:

Մեր կարծիքով՝ ավելի ուշ հայտնաբերված հնագիտական սկզբնաղբյուրները և հատկապես Վերին Անձավ ամրոցից հայտնաբերված, հինգ օղերից բաղկացած նվիրատվական շրթայի ասուրերեն արձանագրությունը, որտեղ իր տիտղոսաշարում Բշպուլիին արքան իրեն անվանում է Խալդի աստծո «ստվերը», իսկ Խալդիին՝ իր «տերը», կարող են վկայել այն մասին, որ դեռևս Հազինե Փիրիի ժայռափոր դռան կերտման ժամանակ Խալդին արդեն հանդիսանում էր Բշպուլիին արքայի և ուրարտական տերության գլխավոր աստված: Հայտնի է, որ, նախքան ուրարտական տերությունում տեղական սեպագիր համակարգի կիրառումը, ուրարտացիները գրում էին նոր ասուրերենով և նորաստրական սեպագրի ճով: Չեստևար, ամենայն հավանականությամբ, բրոնզե օղակներից բաղկացած շրթան պետք է ավելի վաղ թվագրվի Հազինե Փիրիում ուրարտական սեպագրով թողնված արձանագրությունը:

Այս տեսակետը կարծես թե հիմնավորվում է ևս մի քանի փաստարկներով: Նախ՝ Բշպուլիկի կտատվարման ժամանակաշրջանին պատկանող մեզ հայտնի ոչ մի արձանագրությունում հիշատակություն չկա Թեյշեբայի մասին, և հենց նույն արձանագրություններում արդեն գոյություն ուներ Խալդիին որպես տեր ընկալելու՝ բանաձևը:

Այսպիսով, վերը նշված փաստարկները զարգացնում և ավելի հավանական են դարձնում այն տեսակետը, որ Հազինե Փիրիի ժայռափոր արձանագրության մեջ հիշատակված տեքը, ամենայն հավանականությամբ, ոչ այլ որ է, քան ուրարտական պետության իսկանավոր աստված Խալդին: Իհարկե, մենք չենք բացառում նաև վերը հիշատակված մյուս տարբերակները:

Ուսումնասիրության մեջ Հազինե Փիրիի ժայռափոր դռան օրինակով քննարկվում են նաև որոշ հարցեր, որոնք վերաբերում են ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայռափոր դռների ժառանգության ու նրանց ընկալմանը:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻՑ ԵՆՆ ՈՒ ԴԵՐՆ ՀԱՅՈՑ ՄԵԱԿՈՒԹԱՑՒԼ ԺԱՄԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բազեյան Կ. (Հովի. Շարամբեյանի անվ. ժողովրդական ստեղծագործության կենտրոն, Հայաստան)  
bazeyan60@yandex.ru

*Բանալի բառեր՝ էթնիկ մշակույթ, ժողովրդական արվեստ, մշակութային ժառանգություն, զարգանախչ, պար, կրթաշուկային:*

Հայ ժողովրդի մշակութային ժառանգության մեջ իր որոշակի տեղն ունի ժողովրդական ստեղծագործությունը, որը հոգևոր մշակույթում արտահայտվել է բանահյուսության, երաժշտության, պարերի մեջ, կյաութականում՝ կիրառական-գեղազարդան արվեստի բազմազան տեսակներում՝ զարմանահրաշ գարդանախչերով ու գարգահորինվածքներով: Ժողովրդական արվեստը կրում է էթնիկ բնավորության խտացված ձևերը, ուստի ուսումնասիրողներն այն համարում են էթնիկական ինքնագիտակցության ձևերից մեկը: Հագարամյակների ընթացքում, անցնելով զարգացման բարձր ուղի, ազդվելով այլ էթնիկ մշակույթներից, միաժամանակ փոխադարձաբար ներազդելով դրանց վրա, այն հասել է մեզ՝ հիմնականում պահպանելով ազգային ինքնատիպ նկարագիրը:

Ձեկուցման մեջ փորձ է արվելու ներկայացնելու ժողովրդական արվեստի տեղի ազգային մշակույթի համակարգում՝ արժույթն ու նրա դերն ու գործառույթները:

## THE PLACE AND ROLE OF FOLK ART IN ARMENIAN CULTURAL HERITAGE

Bazeyan K. (Folk Art Center after H. Sharambeyan, Armenia)

## ON THE CUNEIFORM INSCRIPTION OF THE URARTIAN ROCK-CUT DOOR OF HAZINEH PIRI

Badalyan M. ("Ethnos" Scientific Centre of Ethno-Cultural Researches, Armenia)

**ԱՐՏԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՆԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹՄԱԳԱՐԱՆ՝  
ՈՐԳԵՍ ԱՐՏԱՄԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՄԱՄԵՐԱԿՈՒԹԱՅՈՒ  
ԺԱՌԱԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆ  
ՆՐԱ ԱՌԱՋՆԱՄՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԽՆԻՐՆԵՐԸ**

**Բալայան Մ.** (Արցախի պետական պատմաերկրագիտական  
թանգարան, ԼՂՀ)  
melanyabalayan@mail.ru

*Բանալի բառեր՝ թանգարան, Արցախ, ֆոնդապահոցներ, մշակույթ, արժեքներ, քարոզչություն:*

Վերջին տասնամյակներում Լեռնային Ղարաբաղում ազգային պետականության վերակենդանումը, սոցիալ-քաղաքական վերափոխումներն արմատապես փոխել են թանգարանային գործունեության պայմանները: Դա պայմանավորված է մի կողմից, ազգային արժեքների ուսումնասիրման և ցուցադրության [այն հետաքվորությունների ընձեռնամար, մյուս կողմից՝ արցախյան հիմնախնդրի միջազգայնացմամբ, ինչը մեծ հետաքրքրություն է առաջացրել միջազգային հանրության և մանավանդ սփյուռքահայության շրջանում: Արդյունքում թանգարանի այցելուների նշանակալի վերելք է արձանագրվել: Ներկա ժամանակներում Արցախն են ժամանում մեծ թվով զբոսաշրջիկներ՝ մշակութային բարձր պահանջներով, քաղաքական միանգամայն տարաբնույթ գաղափարներով և մոտեցումներով, մեր ազգային պատմության անտեսյալ կամ էլ կցկուտը տեղեկություններով, իսկ երբեմն էլ՝ բռնադավի հալ պատկերացումներով: Եվ այս ամենը, բնականաբար, եոր խնդիրներ է առաջադրում ԼՂ-ում առկա թանգարանային համակարգին և, մասնավորաբար, Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանին, որովհետև հիմնականում այստեղ են տեղեկություններով և պահպանվում արցախահայության բազմադարյան հոգևոր և նյութական մշակույթի գանձերը, որոնց հիման վրա էլ ներկայացվում է մեր ազգային պատմությունը:

Ներկայումս թանգարանի ֆոնդապահոցներում առկա են 46060 պատմամշակութային արժեքներ, որոնցում ներառված են քարի դարից մինչև 20-րդ դարի ընդգրկող տարաբնույթ նյութեր, այդ թվում՝ հայկական դրամներ, կահ-կախիքներ, բրնձեղ, արծաթե զարդեր, զորքեր, կարպետներ, եկեղեցական մասուկներ (սրբապատկերներ, ավետարաններ, հին տպագիր գրքեր, կա-

րնոր պատմական նշանակության լուսանկարներ, քարտեզներ և այլն): Հարկ է միաժամանակ մատնանշել, որ հատկապես պատմամշակութային արժեքների համալրման գործընթացը զնալով ավելի պատշաճ բնույթ է ստանում՝ կապված ԼՂՀ տարածքում իրականացվող հնագիտական ուսումնասիրությունների հետ:

Փաստացիորեն թանգարանում առկա պատմամշակութային ժառանգությունն այսօր էլ իր կարևորագույն նպաստն է բերում մեր պատմության և մշակույթի քարոզչության գործընթացին: Սակայն մի շարք հիմնախնդիրներ պարզապես նաև լուրջ աղբյուր են հանդիսանում դրանց առավել տպավորիչ և պատշաճ մատուցման տեսանկյունից:

Շոխիստրոզ գլխավոր ևս հրատարակ խնդիրը տիպային շեղի բացակայության հիմնահարցն է: Հանդիսանալով Արցախում հոգևոր ևս նյութական մշակույթի հուշարձանների գլխավոր պահուստարանը՝ թանգարանի շեղը պետք է համապատասխանի նրա իսկ պահանջներից բխող գործառնությունին և ճարտարապետական կերպարին: Շեղային հիմնախնդրով էլ պայմանավորված են ժամանակակից սարքավորումներով և ձևավորումներով ցուցադրության, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանությանը հարթի ֆոնդապահոցների ստեղծման հրատարությունն ևս կարևորությունը:

Թանգարանային՝ համակարգն այսօր պահանջում է ներդրումներ թե՛ պետության և թե՛ հովանավորների կողմից: Սակայն դա մեր ժամանակներում պետք է կատարվի այն հստակ գիտակցմամբ, որ նշված ներդրումները կատարվում են միանգամայն շահութաբեր համակարգում՝ հաշվի առնելով այն պարզ ճշմարտությունը, որ թանգարանի ինքնին արժեք է նյութական ևս հոգևոր առումներով՝ ի գորտ վերածվելու տեսնակալն, հասարակական, իսկ հատկապես մեր պարագայում՝ նաև քաղաքական հիմնախնդիրներ կարգավորող հզոր ներուժի:

Ջարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ժամանակի պահանջներին համահունչ կատարվող թանգարանը կարող է ոչ միայն իր գործունեությունն ընդլայնել վաստակած սեփական միջոցների հաշվին, այլև նպաստել երկրի տնտեսության զարգացմանը, սոցիալական խնդիրների լուծմանը, իսկ Արցախի պարագայում, մեր ազգային պատմությունն և մշակույթը պատշաճորեն ևս հիմնավոր ներկայացնելու շնորհիվ՝ նաև ազգային և քաղաքական հարցերի լուծմանը:

**ARTSAKH STATE HISTORICAL-GEOLOGICAL MUSEUM AS A GUARD  
OF THE HISTORICAL-CULTURAL HERITAGE OF ARTSAKH'S ARMENIANS:  
THE PECULIARITIES AND THE PROBLEMS OF THE MUSEUM**

Balayan M. (Artsakh State Historical-Geological Museum,  
Nagorno Karabakh Republic)

## ՄԻԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ.

(Աշուր և Խաղի աստվածների պաշտամունքից մինչև Քրիստոս)  
**Գրեկյան Ե.** (ՀՄՊՀ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)  
ervandr@yahoo.com

*Բանալի բառեր՝ պաշտամունք, Աշուր, Խաղի, Դիոնիսոս, Քրիստոս, միաստվածություն:*

Մարդի իր սկզբնական պատկերացումներով, ըստ էության, եղել է միապաշտ: Այդ նախասկիզբ էությունը, որը հանդես էր գալիս անխմիզվի կամ տոտեմիզմի ինչ-որ մի կերպարով, հանդիսանում էր մի շարք ասպեկտների կրող՝ նախապես մարմնավորելով պտղաբերության պաշտամունքն ու այստեղից բխող բուսականության, արևի, բնության տարերքի հատկանիշները, թերևս նաև՝ մեռելու և վերածնվելու գաղափարը, իսկ պատմական որոշակի ժամանակաշրջանից հետո տվյալաբար դասնում էր արդեն ռազմիկ) աստված:

Ասորեստանյան պետության և ասորեստանցիների գլխավոր աստվածը, աստված-արքան Աշուրն էր: Աշուրը լեռ էր, լեռ-աստված, նրա տունը (տաճարը) կոչվում էր «մեծ լեռ»: Իրեն ձուլված հիմներգերից մեկում նա բնորոշվում է որպես «լեռները բերող/լեռների պատճեն», աստվածների կերտող և Իշթարի արարիչ: Աշուրը երկսեռ աստվածություն էր՝ Աշուր-Իշթար անունով: Կարծում են, որ նա սկզբնապես եղել է իզական աստվածություն և անգամ նորասորեստանյան դարաշրջանում շարունակում էր ընկալվել որպես պտղաբերող ծառ: Աշուրը չունի կին, չունի քուսանիք, Իշթար/Լիլիթի հետ նրա ամուսնական կապը ծագում էր հետագայում Աշուրի՝ որպես «ասորեստանյան էնլիլ» ընկալումից, իսկ էնլիլի կինն էր Լիլիթը: Աշուր աստծու պաշտամունքի մեջ տեսանելի են պտղաբերության ու մեռնող-հարություն աստղ աստվածության գործառույթներ, նրա պաշտամունքը միանշանակ կապվում էր բուսականության և մասնավորապես Կենաց ծառի հետ, Աշուրը նաև Արև էր, միաժամանակ՝ ռազմիկ) աստված և փաստորեն կարող էր ինքնուրույն ներկայացնել ողջ դիցարանը: Աշուրին դիմում էին որպես «իմ աստված», «տեր» և, ընդհանրապես, մե(ո)՝ «աստ-

ված» ասելով հասկանում էին պարզապես Աշուրին: Նա չէր մարմնավորում բնության և աստվածային կոնկրետ ուժ, ինչպես մյուս աստվածությունները, նա կարծես ոչինչ չունի և միաժամանակ ուներ ամեն ինչ: Աշուրը միանշանակ առանձնանում էր իր կերպարով և Միջագետքում չունի իր գուգաններ:

Ուրարտական տերությունը, ի տարբերություն առաջավորասիական այլ երկրների, աչքի էր ընկնում գերագույն՝ Խաղի աստծու պաշտամունքի բացարձակացմամբ, պաշտամունք, որը Գրիգոր Լափանցյանի կողմից բնորոշվեց որպես «խաղաղամոլություն»: Նա, ինչպես Աշուրը, ըստ էրևույթին սկզբնապես իզական աստվածություն էր՝ պտղաբերության ընդգծված հատկանիշներով: Խաղիի կին՝ Կարաբանին կարող էր պարզապես լինել նրա իզական կողմի կողողը: Նա միաժամանակ արևային աստվածություն էր կամ պարզապես Արև, որի պաշտամունքում մեծ դեր ուներ նաև կրակը: Խաղիին, ինչպես Աշուրը և Դիոնիսոսը, կարծես թե մեռնող-հարություն աստղ աստվածություն էր, թերևս նաև՝ Անդրաշխարհի տիրակալ և «Անդրաշխարհի Արև» (Արևը, տվյալաբար, ուներ իր ընդգտեսյա կրկնակը՝ անդրաշխարհի արևը), նրա պաշտամունքը կապվում էր ժայռերի հետ: Մինևույն ժամանակ Խաղին ռազմիկ) աստվածություն էր: Խաղիի պաշտամունքի բացարձակացման վկայությունն էր այն, որ պաշտամունքային բոլոր արարողությունները կատարվել են Խաղիի «ուսիս» տաճարում, «խաղյան դարձանակներին» կամ իբր սյրավայր «խաղյան կրողների» առջև: Ընդ որում, «տաճար» հասկացությունը կարող էր պատկերացվել որպես «Խաղիի տաճար»: Այսպիսով, ի դեմս Խաղիի պաշտամունքի, Ուրարտում գործ ունեցող փաստացի միաստվածության հետ:

Խաղիին հետագայում նույնացվեց Միհրի հետ, որը պահպանեց նրա մի շարք հատկանիշներ: Հնագույն միաստվածության այս նախասիայի գոյությունը, հավանաբար, էական էղավ Հայաստանի քրիստոնեական դարձի և նոր պաշտամունքի ձևավորման ժամանակ:

## IN THE ROOTS OF MONOTHEISM

(From the Worship of the Gods Aššur and Haldi to Christ)

**Grekyan Y.** (Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)

## ՄԱՐԿԱՆՈՎԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊԵՂՈՒՄԵՆԸ

**Գեորգյան Ա., Բոբոյան Ա.** (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան)

Բանալի բառեր՝ Մարգահովիտ, պեղումներ, հուշարձան, վաղ բրոնզ - երկաթի դարաշրջան, հյուսիսկան մշակույթ, աղորիք:

**Տեղագրությունը.** Մարգահովիտ բնակավայրը գտնվում է Լոռու մարզի Մարգահովիտ (նախկինում՝ Համազյիման) գյուղում, Կանաձորից 17 կմ հեռավորության վրա, Կանաձոր-Դիլիջան մայրուղու միջևամասում: Հուշարձանը տեղադրված է գյուղի արևմտյան կողմում՝ Մարի Սուփ կոչվող բնական և դարավանդակ կառուցվածք ունեցող բլրի վրա, Աղստև գետի ակունքի մոտակայքում: Բլուրն քնդիանուր ամամբ զբաղվում է 7.8 հա տարածք, որից 1.2 հա զբաղեցնում է զազաթի ամրացված հատվածը: Հյուսիսում, հարավում և արևելքում այն եզերվում է անտառը, արևմուտքում՝ դաշտը: Աշխարհագրական կոորդինատներն են  $2 40^{\circ} 44' 19.2''$ ,  $Ա 44^{\circ} 40' 36.0''$ , բարձրությունը ծովի մակերևույթից 1820 մ է: Բնակավայրը վեր է խոյանում Մարգահովտի դաշտավայրի արևելյան գաղիվայր եզրերին (դաշտի մակարդակից բարձր է մոտ 15 մ): Լրտա հարթ վերնամասը բոլոր կողմերում եզրված է միջին և մեծ չափի մշակված քարերով, որոնք լավ տեսանելի են հատկապես հյուսիսային ու արևմտյան հատվածներում և հանդիսանում են պաշտպանական համակարգի մնացուկներ:

**Պեղումները.** 2011 թ. հունիսի ամսին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը առաջին պեղումներն իրականացրեց Մարգահովիտ բնակավայրում: Ընդհանուր ամամբ չորս հատվածներում զբվեցին հետախուզական խրամատներ, որոնցից երկուսը բլրի կենտրոնարևելյան (Ա, Բ), մեկը՝ հարավարևելյան (Գ), իսկ չորրորդը՝ հարավարևմտյան (Դ) հատվածում՝  $4 \times 4$  մ (Ա, Բ, Գ) և  $8 \times 8$  մ (Դ) մակերեսով: Ընդհանուր ամամբ պեղվեց 132 քմ մակերես: Ընդ որում, հիմնական աշխատանքները կենտրոնացան Ա և Գ պեղավայրերում (որտեղ բացահայտված են հիմնական մշակութային շերտերը) և ավելի քիչ՝ Բ (որտեղ պեղվեցին միայն ճիմաշերտը և մշակութային շերտի սկզբնամասը) ու Դ (որն ամբողջությամբ քարածածկ էր և գտնվում էր պարսպապատի վրա) պեղավայրերում:

**Շերտագրությունը.** Մշակութային շերտերի հաստությունը Մարգահովտում հասնում է մոտ 1.8 մ: Պեղումների արդյունքում այսօր կարելի է խոսել Մարգահովտում առկա եռափուլ բնակավայրի առկայության մասին, ընդ որում, դրանցից առաջին երկուսը (վաղ բրոնզ, ուշ բրոնզ/վաղ երկաթ) փաստագրված են շերտագործին, իսկ երրորդը տեսանելի է մակերեսին (միջնադար, նոր շրջան):

I փուլ՝ վաղ բրոնզ, բնակավայրի հիմնական փուլն է, որին են վերաբերում շերտագրական իրավիճակների և գտածոների 90 տոկոսից ավելին: Բոլոր չորս պեղավայրերից հայտնի խեցեղեն նյութի 99 տոկոսը կուրարաքայան է:

II փուլ՝ վաղ երկաթ, ներկայացված է միայն Ա պեղավայրում, որի երկայնական պատի հասանկներին հայտնաբերվեցին երկու ամբողջական երկաթեղարյան առօթեր, որոնք հինք են հանդիսանում այդ պատը թվաքելու համար: Բացի այդ, ուշ բրոնզ/վաղերկաթեղարյան կարող է լինել ամբողջ պարիսպներից մեկը:

III փուլը վերաբերում է միջնադարին և նոր շրջանին: Թեև ոչ մի միջնադարյան գտածո ի հայտ չի եկել Մարգահովտի պեղումների ժամանակ, սակայն բլրի կենտրոնական հատվածի ուղղակնյուն շինությունը և հյուսիսարևելյան հատվածի խաչքարերը, ամենայն հավանականությամբ, վկայում են զարգացած միջնադարի (III ա), իսկ մասնաղական գերեզմանները ուշ միջնադարի և նոր շրջանի (III բ) հետքերի առկայության մասին:

**Ճարտարապետությունը.** Մարգահովտի բնակավայրում գործ ունենք հիմնականում երկու ճարտարապետական լուծումների հետ, որոնք ունեն նաև ժամանակագրական նշանակություն.

1. Վաղ երկաթին բնորոշ քարե ճարտարապետություն՝ արձանագրված միայն Ա պեղավայրում: Ընդ որում, պեղված երկայնական պատն առնչվում է բավական հոծ ածխաշերտին, որն արհեստագործական գործունեության հետևանք է:

2. Վաղ բրոնզին բնորոշ կավե ճարտարապետություն՝ արձանագրված պեղավայր Գ: Մասնավորապես առկա երկու հատակներից վերինին՝ I ա-ն, քարաշարերով սահմանազատված ոսկրազործական արհեստանոց է, որի հարևանին ռո սիս վիճակում հայտնաբերվել են ոսկրե ասորկանոց, գործիքներ, հումք: Իսկ I բ-ն նույնպես արհեստագործությանն առնչվող գործարանի պիտի ունենար, որի համաստեքստում հանդես է գալիս անկանոն կլորավուն թրծակալե մի շինություն (գուցե վառարան):

**Գտածոները.** Հիմնական գտածոները վերաբերում են կուրարաքայան մշակույթի զարգացած փուլին և ներկայացված են բնորոշ սև-փայլեցված,

գարդամուտիվներով հարուստ ու շատ դեպքերում յուրահատուկ խեցեղենով Հանդիպում են նաև այդ խեցեղենի համար տարօրինակ գույներ (սպիտակադեղնավուն), բայց նույնատիպ ձևեր ու գարդամուտիվներ: Հատուկ ուշադրության են արժանի երկու գունազարդումով արված բեկորները (շուրթից իջնող կարմիր ներկով արված գծեր): Որոշակի թիվ են կազմում ոսկրե (գլանաձև մշակված առարկաներ) և քարե (աղորիքներ, մանգաղի ներդիրներ, կացիններ) առարկաները: Հիշարժան են ցլի կավե արձանիկը և քարե կոտրված կացիքը: Հաճախ է հանդես գալիս տարբեր ծագման վանակալո՛ղ՝ որպես հուճք, պատրաստուճք և ավարտուն հատրվա (նետալաքներ), սակայն առկա են նաև կաջարե առարկաներ (հատկապես մանգաղի ներդիրներ): Այլ գտածոների թվում գործ ունենք միայն փոքր քանակությամբ ուշ բրոնզ/վաղ երկաթեդարյան խեցեղենի հեռ:

**Նշանակությունը և հետախնայները.** Մարգահովտի բնակավայրը կարևորում է մի քանի տեսակետներից: Նախ՝ այն Մարգահովտի դաշտի կենտրոնական բնակավայրն է, որի շրջակայքում են գտնվում այլ ավիի փոքր արբանյակ հուշարձաններ: Այսպիսի տեղադրված է Վանաձորն ու Դիլիջանը միացնող և մշտապես կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի հանգուցակետում: Բացի այդ, հուշարձանը գտնվում է մետաղանիւթերի անմիջական միջավայրում և, ամենայն հավանակալությամբ, հանդիսացել է մետաղանիւթերը վերահսկող և համապատասխան արտադրություն ունեցող մի բնակավայր: Հետագա աշխատանքները Մարգահովտի բնակավայրում էական լույս կպոհեն բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի և արհեստագործությանը վերաբերող տարբեր հարցերի վրա:

#### THE EXCAVATIONS OF MARGAHOVIT RESIDENCE

Georgyan A., Bobokhyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՅՕԹՅԱ ԹԱԳԱՐԱՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԽՆԴԻ ԾՈՒՂ

**Փետրյան Լ.** («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»

ՊՈԱԿ, Հայաստան)

glp61@mail.ru

*Բանալի բառեր՝ թանգարան, ազգագրություն, ցուցադրություն, արգելոց, հավաքածու, ցուցահանդես:*

Ազգագրական հավաքածուների ցուցադրման ժամանակակից խնդիրները կապված են այնպիսի ցուցադրությունների իրականացման հետ, որոնց հիմքում ընկած են ինչպես սեփական ժողովրդի հարուստ ազգագրական ծառանգության համակողմանի, գիտական ու արդիական ճճվ ներկայացումը, այնպես էլ այլ ժողովուրդների, ազգային փոքրամասնությունների մշակույթների հանդեպ հանգրվածագրականության, ընկալման և արժևորման կարողությունների ձևավորումը:

Ազգագրական բնույթի ցուցադրությունները հիմնականում կարող են լինել երկու տիպի՝ փակ (ներշնչեային) և բացօթյա:

Առաջին՝ փակ տիպին են պատկանում Հայաստանի պատմության, ժողովրդական ստեղծագործությունների, մի շարք երկրագիտական թանգարանների, ինչպես նաև Հայաստանի ազգագրության և Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանների ցուցադրությունները: Բացառությամբ վերջին երկուսի, վերոնշյալ մյուս թանգարաններում ազգագրական հավաքածուներն ընդհանուր ցուցադրության մասն են կազմում: Հայաստանի ազգագրության թանգարանի սրահներում ներկայացված են պատմական Հայաստանի տարբեր գավառների կենցաղն ու մշակույթը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Այս ամենով հանդերձ, մյուս թանգարանների համեմատ բարձր շնչբալին ու նարածքային պայմաններ ունեցող՝ Հայաստանի ազգագրության թանգարանի ներսում հնարավոր չէ ազգագրության անչվող նյութական մշակույթի առավել ծավալային հուշարձանների (նացատուն, մարագ, հնձան,

գյուղական բնակարանների տեսակներ, գյուղական միջավայր, բարոյաբանի բնակարան և այլն) ներկայացումը: Դա հնարավոր է իրականացնել բացօթյա ցուցադրության կազմակերպման ղեկավար:

Այս առումով, դեռևս 1981 թ. Հայաստանի ազգագրության թանգարանում մշակվել էր հասուկ ծրագիր, ըստ որի՝ թանգարանի շենքից արևմուտք, 27 հա տարածքի վրա առաջարկվում էր ստեղծել բացօթյա թանգարանային ցուցադրություն, որում հավուր պատշաճի ներկայացված կլինեին Հայաստանի տարբեր ազգագրական շրջանների ավանդական բնակարանային կառույցների տեսակները, ժողովրդական ճարտարապետության տարբեր նմուշները, ագարակ – ատանձատների օրինակները, տնտեսական կառույցները և այլն: Նախատեսվում էր առաջին փուլում ներկայացնել 5 պատմաազգագրական շրջանների (Այրարատ, Շիրակ, Լոռի, Մյուսիք, Ջավախք) համալիրներ: Օրագիրը հանգամանքների բերումով մնաց անկատար:

Ներկայումս, մեզ մոտ և արտասահմանում դարձյալ աճել է հետաքրքրությունը հայ ավանդական ճարտարապետության, կենցաղի և մշակույթի հանդեպ: Այս փուլում դա կարող է նաև զբոսաշրջության նշանակալի խթան հանդիսանալ: Հայաստանի մշակութային ժառանգության տարածման և հանրահռչակման գործում, մեր կարծիքով, կարևոր կլինի XX դարի 80-ական թվականներինց նախատեսված և չիրականացված ազգագրության բացօթյա թանգարանի վերստեղծման ծրագիրը՝ նոր իրողություններին, արդի պահանջներին և թանգարանագիտության ժամանակակից հիմնախնդիրներին համապատասխան:

Ուղորդ առարկա ծրագրի արդիական վերստեղծման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ կլինեն.

1. Հայաստանի տարբեր շրջաններում ազգագրության բացօթյա թանգարանի ստեղծման համար համապատասխան և համակողմանի մոնիթորինգի անցկացում,

2. համակարգված մոտեցում տեղափոխվելիք և նոր տարածքում հավաքվելիք ազգագրական անշարժ հուշարձանների նկատմամբ,

3. Մտկոհումի «Սկանսեն», Ռիգայի «Բրիվդարաս», Տալլինի «Ռոկ ալ մարե» և Կինի ազգագրական թանգարանների առաջավոր փորձի կիրառում:

Ստեղծվելիք նոր թանգարանի գործունեության հիմնական նպատակները պետք է լինեն՝

- հայ ժողովրդի նյութական և ոչ նյութական ժառանգության ուսումնասիրումը, ֆունդային-հավաքչական գործունեության իրականացումը,

- ցուցահանդեսային գործունեության ծավալումը Հայաստանում և արտերկրում,

- Հայաստանի պատմամշակութային, ազգագրական և բնապատմական ժառանգության ոլորտին նվիրված թեմատիկ էքսկուրսիաների, դասախոսությունների, կրթական ծրագրերի իրականացումը,

- մասսայական միջոցառումների (օրացուցային տոներ, ազգագրական իեսեր, ազգագրական բնույթի թատերականացված ներկայացումներ, ազգային երգեր, պարեր, խաղեր) պարբերական անցկացումը և ուսուցումը,

- Հայաստանի ազգագրական ժառանգության հանրահռչակումը:

Այսպիսով, ստեղծվելիք թանգարանը կդառնա ոչ միայն բացօթյա թանգարանային ցուցադրություն, այլև լայն հնարավորություններով օժտված գիտամշակութային կենտրոն:

#### ISSUES OF ESTABLISHMENT OF ETHNOGRAPHIC OPEN AIR MUSEUM IN ARMENIA

Gevorgyan L. (Ministry of Culture of the Republic of Armenia, "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations" Non-Commercial State Organization, Armenia)



## ԴԱՄԲԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ «ՎԱՅՑԱԿԱՆ»

(Ույծի դամբարանների միջգիտակարգային ուսումնասիրությունից)

**Ջարդարյան Մ.** (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)  
**Մկրտչյան Ռ.** (ԵՊՀ, Հայաստան)

**Հակոբյան Մ.** (Սոցիալական գիտությունների ինստիտուտ, ՈՂ)  
mhzardar@gmail.com

*Բանայի բաժնի՝ Սյունիքի վաղերվանդյան շրջան, դամբարան, կենսահնագիտություն:*

Սյունիքի պատմական Օդոնկ գավառում գործարկված հայ-ամերիկյան «Որոտան» հնագիտական ծրագրի շրջանակներում, Ույծի բազմաշերտ բնակավայրի տարածքում 2006-2007 թթ. պեղվեցին մի շարք դամբարաններ, որոնց միջգիտակարգային ուսումնասիրության արդյունքները միանգամայն կարևոր են ինչպես բուն հուշարձանի, այնպես էլ տվյալ տարածաշրջանի պատմության և բնակչության կենսաբուսագրի լուսաբանման տեսանկյուններից:

Պեղված դամբարաններից մի քանիսը հայտնաբերվեցին Ույծի մեծածավալ վաղերվաբեդարյան բնակավայրի (Ք. ա. XIII-XI դդ.) ստորին թաղամասի կառույցներից մեկում (AT-1): Դատելով հնագիտական իրավիճակից դրանք տեղակայվել են այստեղ սկզբնական բնակավայրի ավերումից հետո և ժամանակագրորեն հարթերվում են մի քանի հաղորդաբանակ սեջ տույն տարածքում վերահաստատված նոր՝ վաղերվանդյան բնակավայրին:

Շատ սակավաթիվ հնագիտական գտածոների և կառուցման մանրամասների՝ Ույծի այս դամբարանները պատկանում են Ք. ա. VI-V դարերին բնորոշ «քրեորասիկ» դամբարանների թվին: Տեղական բազալտից ինստրով շարված, 1,3-1,5 մ բացվածքով այս կառույցները ունեն մինչև 2 մ խորություն և դեպի հատակը լայնացող խուց: Տեղակայված լինելով էիմնածայրի վրա՝ դրանք գուրկ են տվյալ տիպին բնորոշ սալահատակից: Խցերը ծածկվել են խոշոր սակերով, ինչի համար օգտագործվել են ավերված վաղերվաբեդարյան բնակարանի ալիսահատակի քարերը:

Ներկայացվող ուսումնասիրության համար ընտրվել է հիշյալ դամբարաններից մեկը (Ձ 2), որն աչքի է ընկնում ինչպես կառույցի տիպականության, այնպես էլ հնամարդարանական նյութերի պահպանվածությամբ և

քաղման ձևի մանրամասններով: Միակ ներեցվալ տեղակայվել է վերջինիս խցում նստած դիրքով, հենված խցի պատին, ծավառ ուրբերով: Դիագրոման ավարտին, խուցը հողով չի լցվել, ինչի արդյունքում կմայերը (բացառությամբ ուրիշ ոսկրների) հետագայում կորցրել է իր սկզբնական անատոմիական պատկերը: Թաղման ծիսակատարությունն ամփոփվել է ծածկի վերին սալի վրա կտատարված այծի և խոզի ամբողջական մարմինների զոհաբերությամբ:

Հնամարդարանական տվյալները բնորոշում են ներեցվալին որպես դիվիդուան, նեղ, ցածր ու նրբակազմ դիմային կմայերով և մոտ 165 սմ հասակով, 35-45-ամյա տղամարդու:

Նույն նյութի քննությունը կենսահնագիտական մեթոդների կիրառմամբ՝ հնարավորություն է ընձեռնում վերականգնելու տվյալ անհատի որոշ «կենսագրական» տվյալները: Այսպես, տեսանելի են վերջինիս ատամների կարիեսը և վերին ու ստորին ծնոտների աբսցեսները: Ողնաշարի գոկային մասում խաբարված է ողերի դասավորվածությունը, իսկ ողերի մարմնի վրա սկների են ոսկրային կոշտուկները: Վերջին խեղումները, ամենայն հավանականությամբ, արդյունք են կյանքի ընթացքում կրած նրկարատու ֆիզիկական ծանրաբեռնվածության: Թերևս, նույնի մասին են վկայում ներեցվալի ձեռքի ֆոսֆատների վրա առկա ցցուն ոսկրային էլեմենտները:

Դամբարանում հայտնաբերված հնագիտական նյութերի ծայրաստիճան սակավության պարագայում անհնար է որևէ լրացուցիչ պատկերացում կազմել այս անձնավորության կենսաբացի մասին: Այդուհանդերձ, ելնելով դամբարանկառույցի չափերից և որակից, ինչպես նաև հետաքրքրամային գոհաբերության համեմատական «ճոխությունից», կարելի է ենթադրել, որ նա չի պատկանել Ույծի վաղերվանդյան բնակչության ստորին (տարեկան-ծառայական) խավին:

Բերված արդյունքները նշանավորում են Ույծ հնավայրի նպատակային ուսումնասիրության նոր փուլը, որը կխորացվի հաջորդիվ:

### THE MAUSOLEUM AS A BIOGRAPHIC "CERTIFICATE"

(Multi-Disciplinary Investigation of Mausoleums of Uti, Syunik)

**Zardaryan M.** (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia),

**Mkrtychyan R.** (Yerevan State University, Armenia),

**Hakobyan A.** (Institute of Social Sciences, Russia)

## ԴԻԶԱԿԻ ՄԵԼԻԻԲ ԵԳԱՆԻ ԱՊԱՐԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՍՏԱՀԱՊԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ. (22 ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
safdav@yahoo.com

*Բանայի բառեր՝ Արցախ, Տոզ ավան, Մելիք Եզան, պեղումներ, գրաս-  
չրջություն:*

Խամսայի մելիքությունների վարչատնտեսական ինքնավար իշխանության կենտրոնը Տոզ ավանն էր, որտեղ պահպանվել է տվյալ դարաշրջանի հայ իրականության խոշոր քաղաքական գործիչ Մելիք Եզանի ապարանքը: Ապարանքն իր շինություններով և ինքը՝ Մելիք Եզանը, որպես տղայիների դեկավար, մշտապես ուսումնասիրության թեմա է եղել: Այսօր չլուծված շատ երևախնդիրներ լրացվում են 2009-2011 թվականների հնագիտական պեղումներով: Վերջիններս իրականացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աղբյուր գրասչրջության վարչության նախաձեռնությամբ և պատվերով: Լպատակը Արցախի XVII-XVIII դդ. վերաբերող մելիքական տների հետ կապված ճարտարապետական, հնագիտական, ազգագրական և քաղաքական խնդիրների լուսաբանումն է:

Մելիքների ապարանքները, իրենց տեղադրությամբ և շինարարական հնարանքներով, ներկայացել են իբրև պաշտպանական, ռազմական հենակետ, իբրև փոքր ամրաց: Մելիք Եզանի ընդունարանը (1736 թ.) նմանատիպ կառույց է: Հայաստանի շատ շրջաններում, ինչպես նաև Տոզ գյուղում, բնակարանային հիմնական տիպը եղել է գլխատունը՝ շրջապատված գոմ, թոնրատուն, սփեռա-  
նոց և այլ բաժանուններով: Ընդունարանից ոչ հեռու, հողակույտերի միջոց հայտնաբերվել է այդպիսի մի քառանկյուն դահլիճ՝ գլխատուն: Այն ունի մուտք, կրաքարե սալերից մշակված խարիսխներ, օջախ և հարավարևմտյան պատի կենտրոնում պահպանված բուխարու հետքեր: Լույս դարաշրջանում և հետագայում տեղի է ունենում բնակելի տների ձևափոխություն, որը հստակ երևում է ապարանքից հարավ բացված աշխարհիկ համակառույցում: Այն քաղաձածկ տանիքով ուղղանկյուն սրահ է, որն իր վրա է կրել տարբեր ժա-

մանակների շինարարական նոր լուծումների հետքեր: Բնակարանում առաջնային տեղ է հատկացված կամարան պատկով պահարանախորշերին, լուխարուն և հատակագծային նոր լուծումներով տեղադրված դուռ-պատուհաններին: Նման կառույցների առկայությունը թելադրված է եղել սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխություններով: Մեծ ընտանիքները տրոհվել են և կենցաղավարման նոր փուլերում տեղափոխվել բնակության նոր միջավայր: Մելիք Եզանի պալատական համալիրի սրբատաշ քարերով շարված կամարակապ շքամուտքը (1731 թ.) տանում է բակի խորքում տեղադրված ուղղանկյուն հատակագծով բնակելի մեծ հյուրասենյակ, որն ունի քանդակազարդ բուխարի, փոքր պատուհաններ, երկայնական պատի մեջ փորված կամարան և լայն խորշեր՝ բակահայաց պատուհաններ և այլ մանրամասեր: Տեստեսական հարկաբաժնի առկայությունն են հաստատում հյուրասենյակից առանձնացած ուղղանկյուն հատակագծով թաղակիր սենյակները՝ ճարտարապետական մանրամասերով, թոնիրներով, կարասներով: Մելիք Եզանի պալատական համալիրի պահպանված փոքր մասը վերակառուցումների հետևանքով կորցրել է իր նախնական տեսքը, սակայն շինության պատերին պահպանված (Եզանի որդի Բարուն Արամ՝ 1737 թ. և Արամ բեկ Մելիք Եզան՝ 1904 թ.) արձանագրությունները հաստատում են, որ շուրջ 200 տարի ապարանք պատկանել է մելիքական տոհմի ներկայացուցիչներին, որոնք հերոսաբար շարունակել են պայքարել հայրենիքի ազատության համար:

Մելիք Եզանի ապարանքը ճարտարապետական ինքնուրույն և բազմաշերտ նախընթաց է՝ XVI-XVIII դդ. հնագիտական նյութերով, որոնք համադրվում են Հուլյանոսի, նաև Մելիքան Պարսկաստանի, Օսմանյան Թուրքիայի, Միջին Ասիայի համաժամանակյա նյութերի հետ:

Ապարանքի վերականգնումը և նրա վերածումը գրասչրջիկության կենտրոնի կարևոր քայլ է, որով հասարակությանը վերջապես ներկայացվելու են XVIII դարի հայ ազատագրական շարժման հերոսական էջերը:

### MELIQ YEGAN'S PALACE IN DIZAK AS A HISTORICAL-ARCHAEOLOGICAL MONUMENT

Zhamkotchyan A., Babayan F. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

## ԱՐՏԱՇԱՏ՝ ՔԱՂԱՔԱՄԱՍՆՔ ՀԱՅՈՑ

Խաչատրյան Փ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և զոգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
khachzhores@mail.ru

*Բանալի բառեր՝ Մեծ Հայք, Արտաշատ, Արտաշեն Ա, տաճար, Երազա-  
մույն, ճարտարապետություն:*

Արտաշեն Առաջինի կողմից Ք. ա. 189 թվականին կյանքի կոչվեց Հայոց անկախ պետականությունը: Երազ գլխավորությամբ Մեծ Հայքն այնքան հզոր քաղաքով ու ընդարձակվեց, որ դարձավ տարածաշրջանի հզոր տերություններից մեկը: Արտաշեն Առաջինի կարևորագույն գործերից մեկը միավորված Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի հիմնադրումն էր: Այն գտնվում էր Երասխ և Մեծամոր գետերի միախառնման տեղում ստեղծված թերակղզու տասներկու բլուրների վրա, միջազգային առևտրական բանուկ ճանապարհների խաչակրուկում: Տեղի ընտրությունը կատարված էր անթրիքի թե՛ ռազմավարական, և թե՛ տնտեսական առումով:

Բարենպաստ պայմանների շնորհիվ Արտաշատը դարձավ ոչ միայն Հայաստանի վարչաքաղաքական, կրոնական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոնատեղի, այլև՝ անտիկ աշխարհի մեծ ու վիրիտարի համբավ ունեցող քաղաքներից մեկը: Այստեղ կառուցվեց Հայոց գլխավոր աստվածներից՝ Անահիտի տաճարը, Խոր Վիրապի տեղան, որը Հայաստան աշխարհի և Արտաշատի հովանավորն էր: Բազարահից տեղափոխվում են Անահիտի արձանը և բոլոր հայրենական կոտորեքը: Արեգ-Միիր-Ազոլուն-Շերմես-Տիրի տաճարը կառուցվեց քաղաքից դուրս, ճանապարհին՝ «Երազամոյն» կոչված վայրում: Արեգ-Միիրը՝ Արտաշեսյան, այնուհետև Արշակունիների հովանավոր աստվածն էր:

Արաքսի ափին, պեղումներով բացվել են Ազոլուն-Տիրի տաճարի հիմնապատկանային պատերը, արևելյան՝ երկ. 22 մ, հարավային՝ 31.5 մ, հյուսիսային՝ 2.80 մ, պահպանվել է արևմտյան աստիճանավոր հիմնապատի (ստիլոբատի) մի հատվածը միայն: Որքերը կառուցապատված են և սառնարի գանգվածեղ վնեերով: Տաճարի հրապարակը 1500 քմ է: Ունի տաճարի կրաքարի տաշվելիքից բաղկացած լավ տոփանված մակերես: Արբազան հրապարակ են բարձրացել կրաքարից պատրաստված լայն աս-

տիճաններով (4.80 մ): Ունեցել է 23 աստիճան, այսինքն՝ հրապարակի բարձրությունը կազմել է 6 մ: Տաճարի հարավարևելյան հատվածում բացվել է գանձատունը (10x12 մ): Տաճարի արևելյան կողմի տարածքի հողի լիցքի և միջուկային պատերի միջից հայտնաբերված կրաքարե հոնիակաև խոպակների ու դրանց մասերը, կանխյուրներով գանները (սյուները), ամբողջական և բեկորային վիճակում հայտնաբերված վնեերը, աստիկյան խաթախը, արխիտրավի, ֆրիզի քանդակազարդ վնեերը, թիվի աստամավոր բեկորները ակներևաբար վկայում են, որ տաճարն ունեցել է հոնիակաև օդերի սյունախաչ:

Արտաշատի նորահայտ տաճարի ավերակները հավաստում են, որ առկա է գեղեցիկ կառուցված սպիտակավուն երկրորդ շրջել տաճարը, որը հայ հնագիտության XXI դարսակրի ամենախոշոր գյուտերից է: 1970 թվականից ծայր առած պեղումներն ի հայտ բերեցին հարուստ ու բազմաբնույթ կոթեր, դրոշք բացահայտեցին քաղաքի բազմակողմանի զարգացած մշակութային ընկալը: Արտաշատն իր դամբարանադաշտերով (3) գեղեցրել է շուրջ 400 հեկտար տարածք: Կառուցվել է նախապես մտածված ընդհանուր հասակագծով: Քաղաքի պարիսպների երկարությունը 10.000 մ-ից ավելի է: Արտաշատն ունեցել է կանոնավոր փողոցների ցանց, զարգացած կոմունալ տնտեսություն, մասնավոր և հասարակական բաղնիքներ:

Արտաշատը հանդիսացել է արևեստագործական խոշոր կենտրոն: Գտնվել են ամենատարբեր արհեստանոցներ, գործիքներ, արհեստագործական արտադրանք: Ամենազանգվածայինը խեցեղենն է և ապակին:

Շելլեմիստական շրջանում արագորեն աճում են անտրոպական գործարքերի ծավալները: Արտաշատն ունեցել է մաքսատուն, դրամահատարան: Հայտնաբերվել են հայկական և հարևան 10 երկրների արծաթե, ոսկե և պղնձե դրամներ: Արտաշատի և Հայաստանի միջազգային կապերի ուսումնասիրության համար գիտական բացառիկ արժեք ունեն կալվե կերպողումների արխիվները (մ.թ.ա. 180 թ. – մ.թ. 59 թ.): Կենթդրոշմների թիվը 8000-ից ավելի է:

Արտաշատում գտնվել են բարձրարվեստ մի շարք ստեղծագործություններ: Ուշագրավ են Աֆրդդիանի մարմարե արձանը (մ.թ.ա. II դ. վերջ), տղամարդու բնական չափերից մեծ բրոնզե քանդակի մասերը, կանացի արձանի գլուխը, կանացի ոսկե արձանիկը, հունական և հայկական աստվածների կալվե քանդակները և այլն:

Արտաշատը 670 տարի (Ք. ա. 189/8-484 թթ.) անընդմեջ հանդիսացել է Հայաստանի գլխավոր մայրաքաղաքը, քաղաքական ու տնտեսական հզորության մարմնավորումը:

ARTASHAT – THE CAPITAL OF MAJOR ARMENIA  
Khachatryan Zh. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Archaeology and Ethnography, Armenia)

**ԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐՎԵՍԻ  
ՀՈՄՏԵԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ**

**Գանեգրան Ա.** (ՀՀ ԳԱՄ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
Հայաստան)

*Բանալի բառեր\* անտիկ դարաշրջան, ճարտարապետություն, բաղնիք,  
հիպոկատոստ, Գաննի, Արտաշատ:*

Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված անտիկ հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունները զգալի նյութ տեղեկիք քաղաքների և բնակատեղիների կոմունալ շինարարության մեջ յուրօրինակ լոգարանային տեսետարյան գոյության և նրա շինարարության վերաբերյալ:

Հայաստանի տարածքում առայժմ հայտնաբերված են մ.թ. 2-3 դդ. թվագրվող բաղնիքներ Վաղարշապատում (Էջմիածին), հին Արտաշատ մայրաքաղաքում (երեք բաղնիք) և Գաննի ամրոցում: Այդ բաղնիքները հիմնականում երկու տիպի են. առաջինը, այսպես կոչված «փոքր հռոմեական բաղնիք» և (Գաննիի, Արտաշատի երկուսը), իսկ երկրորդը մեծ հասարակական բաղնիքն է (Արտաշատ, Վաղարշապատ):

Բաղնիքների կառուցման համար տեղաբնի բնորոշության ժամանակ հաշվի են առնվել ռելիեֆի առանձնահատկությունները և ջրամատակարարման ու ջրահեռացման հնարավորությունները:

Բաղնիքների շենքերի կողմնորոշումը երկրի կողմերի նկատմամբ իրականացվում էր այնպես, որ լողանյութակները ունենային արևելյան կամ հարավային (հարավարևելյան) կողմնորոշում և ցրված չլինեին բնական (արևի) ջերմությունից: Այս հանգամանքին մեծ նշանակություն են տվել հին Հռոմում, ինչի մասին վկայում է Վիտրուվիոսը: Վերը թվարկված բաղնիքներում պահպանվել են հռոմեական բաղնիքներին բնորոշ հասակագծային սկզբունքային հորինվածքները, ինչպես նաև ծաղկաուսարածական լուծումները:

Կիրառված շինարարական արվեստը նույնպես բնորոշ է հռոմեական բաղնիքների կառուցվածքներին:

Շենքի հիմքերն իրականացված են կիսառանկ ոչ խոշոր տեղական քարի շարվածքով՝ կրաշաղախի լիցքով:

Չին Արտաշատի հասարակական բաղնիքի լավ պահպանված պատերի վերին մասերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու դրանց իրականացման շինարարական տեխնիկայի մասին: Պատերը շարված են մեծ ավիտակ կրաքարի և տուֆի խորանարդաձև կտրուներից՝ թրծված աղյուսի համադրությամբ՝ պահպանելով հորիզոնական շարքերը: Իրեն կապակցող կյուբ օգտագործված կրաքտուրը կիրառված է հատու շերտերով: Այսպես անցնում է հռոմեական շինարվեստին:

Գաննիի բաղնիքը, ըստ կառուցման ժամանակաշրջանի, ավելի ուշ է (III դ.): Երա պատերն ամրոցողվին իրականացված են ճեղքված որձաքարի շարվածքով, իրեն կապակցող միջոց օգտագործված է կրաշաղախը: Մեկնակների և կորագիծ խորշերի անկյունները, ինչպես և հանդերձարարանի դռների բացվածքների երկվեթեր շարված են մարմար տաշված տուֆաքարերով: Շարվածքի մեջ հանդիպում է նաև թրծված աղյուս:

Բաղնիքները բեռնցմկել են հիպոկատոստային համակարգով:

Լոգանեկակների ստորին հատակը պատրաստված է կրաքտուրից: Երա վրա նշահարված 26-36 սմ միմյանցից հեռու գտնվող, ուղղանկյուն ցանց կազմող առանցքների վրա կրաշաղախի օգնությամբ տեղադրվում էին տարբեր ձևերի թրծված աղյուսներով շարված կամ տաշված քարից սյուներ՝ 0.8-1.0 մ բարձրությամբ: Սյուների վրա կենտրոնից կենտրոն դրվում էին անդառնկուն թրծված աղյուսի (6-8 սմ հաստությամբ) խոշոր սպեր, ապա դրանք ծածկվում էին 12 սմ հաստությամբ անջրաթափանց կրաշաղախի շերտով, որի մեջ խառնված էին աղյուսի կամ կոմիդոնի բեկորներ: Այսպիսով, երկրորդ հատակի ընդհանուր հաստությունը կազմում էր 18-20 սմ: Ամբողջ շինության հատակի տակ առաջին և նրա վրա կառուցված երկրորդ հատակների միջև ստեղծվում էր բացվածքներով կապակցված միասնական տարածություն:

Սյուների աղյուսները, ինչպես և առավել մեծ չափով նրանց վրա շարված աղյուսի սպերը, բնդունելով ստորհասակա տարածության մեջ կարսալայանց կուտակվող կրակի և ձյնի ջերմությունը, երկար ժամանակ կարող էին պահպանել այն և հավասարաչափ հաղորդել լոգանեկակներին: Տարացվում էին նաև պատերը, հնարավոր է նաև՝ առաստաղները: Պատերի ներքին կողմից ստեղծվում էին գոտաթափ տարանցիկ շերտ՝ քառանկյունի թրծված աղյուսներով: Վերջիններս այդ նպատակի համար չորս անկյուններում ունեին կոնաձև էլուստներ: Այս միջոցով տաք օդը նկուղից բարձրանալով սարքցւում էր պատերի:

Ներադրրկական կառուցվածքով են իրականացված սենյակների ստորին հարկաբաժինները միմյանց հետ կապող բացվածքները: Այդպիսի բացվածք-

ներից ամբողջականորեն պահպանվել են միայն Արտաշատի հասարակական բաղնիքում: Բացվածքները իրականացված են մեծ խնամքով, շարված են թրծված մեծ աղյուսներից, որոնք ունեն 70-75 սմ բարձրություն և 70 սմ լայնություն: Վերին մասերի կամարը շարված է աղյուսներից հովհարածն դասավորությամբ՝ կրաշաղախով: Այդ նույն սկզբունքով շարված էին խորշերի և դռների բացվածքների վերին մասերը: Հաշվի առնելով Հայաստանի և հռոմեական բաղնիքների կառուցողական ընդհանրությունները՝ կարելի է ենթադրել, որ Հայաստանի բաղնիքները ևս կարող էին ունենալ թաղակապ կամ գմբեթավոր ծածկեր:

Հայաստանի բաղնիքների շինության պատերը արտաքուստ և ներքուստ ավաղվում էին կրաշաղախով և ներկվում: Բաղնիքների պատերը ներքուստ ձևավորված էին գեղեցիկ որմնախորշերով, որտեղ, ամենայն հավանականությամբ, տեղադրվում էին արձանիկներ, գուցե լուսավորության միջոցներ: Հատակները ծածկված էին հարուստ խճանկարներով, որոնք ունեին բազմազան գարդանախշեր, թեմատիկ պատկերներ և արձանագրություններ:

#### THE ROMAN ROOTS OF THE ARCHITECTURE AND CONSTRUCTION OF BATH-HOUSES OF ANCIENT ARMENIA

Kanecyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

#### ԱՐՄԱՎԻՐԸ ԴԱՐԵՐԻ ՔԱՌՈՒՂՆԵՐՈՒՄ

Վարպետայն Ի. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և թանգարտության ինստիտուտ, Հայաստան)

*Բանալի բառեր՝ հնագիտություն, Ուրարտու, արեմենյան, հելլենիզմ*

Արմավիրը գտնվում է Հայկական լեռնաշխարհի ամենաընդարձակ ու բարեբեր Արարատյան դաշտի կենտրոնական մասում, որը եզերված է Արաքս, Ախուրյան, Մեծամոր և Քասախ գետերի ջրային գոտիներով: Այդ դաշտով էին անցնում Փոքր Կովկասի լեռնացքերով դեպի Մեծ Կովկաս, Կուրի ու Ռիոնի հարթավայրեր, Գեղամա լեռներով՝ Սևանի ավազան ու Արցախ, Բարձր Հայք, Միջագետք ու Իրանի սարահարթ տանող ճանապարհները: Այս պայմանները և հարթավայրի կենտրոնում կտրուկ վեր ձգվող դիրքով և ղեկարարմանուչի լանջերով բլուրը մարդկանց ուշադրություն են գրավել հնագույն ժամանակներից:

1. Բլրի ստորոտների, լանջերի, պահպանված քարայրների պեղումների արդյունքում ձեռք բերված նյութերի, բլրի հիմնաժայռի վրա պահպանված հարթակների, աստիճանավոր տաշվածքների, տարբերույթ փորվածքների, խորհրդանշանների, արևելյան լանջին բացած ժայռավոր տաճարային համալիրի համակողմանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ տարածքը բնակեցվել է վաղ բրոնզի դարաշրջանից, բլուրը եղել է «սրբազան» սակարալ:

2. Բլրի և շրջապատից հայտնաբերված սեպագիր արձանագրությունների և պեղումների միջոցով հայտնաբերված նյութերի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ մ.թ.ա. X դարում Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված Վանի թագավորության արքաները ևս, գնահատելով Արարատյան դաշտի աշխարհագրական, ռազմավարական և տնտեսական նպաստավոր պայմանները, այն ընդգրկել են պետության կազմի մեջ և դրա կենտրոնում, ձգվող բլրաշարի վրա կառուցել Արգիշտիխիսիկի եզրը քաղաքը՝ դարձնելով այն Ագա երկրի կառավարման կենտրոն: Բլրաշարը եզերող ամենաբարձր բլուրների վրա կառուցվել են միջնաբերդեր, դրանց միջև՝ ներքին ու արտաքին թաղարային թաղամասեր, դրանց շուրջ՝ կազմակերպվել է ռոպվող երկրագործական տնտեսական գոտի:

Արևելյան միջնաբերդի ողջ տարածքը կառուցապատվել է պալատական, տաճարային, տնտեսական ու բնակելի շինություններով, որոնց մեջ գերակշռում են պաշտամունքայինները՝ Մուսի, Բարգիդիքիդուհի, Շիրիհանի Ադունուսիին և այլն: Բլրի արևմտյան, կարևոր իջվածք ունեցող հիմնամասի արտաքին երեսի մշակմամբ ստեղծվել են «Ջալդիի դարպասները»՝ ԿԱ - և Ներսեսելով նաև բլրի արևելյան լանջի, ուշ բրոզ-վաղ երկաթի դարաշրջանի պաշտամունքային համալիրը՝ Հին Արևելյան և Խեթական ջաղասրների նմանությամբ, կազմավորվել է առանձին «սրբազան» - սակրալ քաղաք:

3. Ավանդական սրբազան վայրի նշանակությունը Արմավիրը պահպանել է նաև հետադարձարևական-արևելյան ժամանակաշրջանում՝ դասնալով Արևի, Լուսնի և արքայական նախնիների պաշտամունքի կենտրոն, ինչպես վկայում է հայկական պատմական ավանդույթը: Ուրարտական պարիսպները, սլավոնական ու տաճարային շինությունները պահպանվել և հարմարեցվել են տիրող պահանջներին: Այս դարաշրջանի հոգևոր և կուլտական մշակույթի վայրուռ նմուշները վկայում են այդ մասին:

4. Արևելյան կայսրության անկումից հետո Հայաստանի կառավարիչ (սատրապ) Երվանդը երկիրը հայտարարեց անկախ, վերահաստատեց Երվանդյան հարստությունը և Արմավիրը հռչակեց մայրաքաղաք: Քաղաքը մայրաքաղաքի վերածելու միջոցին որոշակի վերակառուցումներ կատարվեցին թե՛ պաշտպանական համակարգում, թե՛ պաշտամունքային ու տնտեսական շինություններում: Բլրի կուսիսպարնետյան հատվածում բարձրացվեց կիսակլոր, պաշտպանական աշտարակ, հիմքից վերակառուցվեց բլրի գագաթին գործող Արևի ու Լուսնի տաճարի շքաբակի բարձրախարակի հենապատը, միջնաբերդի ճայր արևելքում բարձրացող պալատական շինությունը, կուսիսպանի լանջի սրբարանը և այլ կառույցներ հարմարեցվեցին ժամանակի պահանջներին: Վերակառուցումները հիմնականում կատարվում էին ժամանակի առաջատար շինարարական նոր տեխնիկայի կիրառմամբ, երբ շարվածքի բարձրի հորիզոնական ամրացումն իրականացվում էր «ծիծեռնակապուլ» զաներով:

Օգտագործելով մատենագրական տվյալները՝ Արմավիրում սրբազան Մոսյաց պուրակում գործող գուշակարանի, «Նաղարշակի կառուցած» արքայակի և լուսնի անդրիներով մեկանի, հետագայում արևմուտքից Արտաշեսի բերված և կրկին այդ տաճարում կանգնեցրած Ապոլոնի ու Արտեմիսի արձանների վերաբերյալ, համադրելով դրանք ուսումնասիրություններով ձեռք բերված փաստացի նյութերի և պուրակի հունարեն արձանագրությունների ընձեռած վկայությունների հետ, կարելի է պնդել, որ Երվանդյան մայրաքաղաքը ունեցել է շեշտված կրոնական բնույթ, կազմավորվել է գործող տաճարի շուրջ՝ սերտորեն կապված դրա տարածքի և տնտեսության հետ, շրջապատված փոքր արքայակ բնակավայրերով:

5. Մ.թ.ա. III դ. վերջին, մայրաքաղաքի՝ Երվանդաշատ տեղափոխվելուց հետո, Արմավիրը շատ երկար ժամանակ մնաց երկրի խոշոր քաղաքներից մեկն ու հոգևոր կենտրոնը, և, ամենայն հավանակալությամբ, մինչև Արտաշատ մայրաքաղաքի կառուցման ավարտը, այստեղ էր նաև արքունիքը:

Արմավիրը մինչև մ.թ. V դարը մնաց որպես պաշտամունքի վայր, արքունի ամրոց և զորքերի ձմեռանոց և վերջնականապես ավերվեց՝ «Կարդանաց պատերազմի ժամանակ»:

Կյանքը բլրումը՝ շարքային բնակավայրերի տեսքով, վերականգնվեց միայն զարգացած միջնադարում, Բագրատունյաց հարստության օրոք:

XIII դարում, մոնղոլների հարձակումների արդյունքում այս շեն բնակավայրը կործանվել է: Միայն XIX դարի երկրորդ կեսին Բլրի գագաթին կառուցվեց ոչ մեծ չափերի եկեղեցի, որը ավերվել է XX դարի սկզբներին: Մակայի հոգևոր կյանքը չի մարել, այն շարունակվել է բլրի հարավային լանջի քարայրերից մեկում՝ Ծաղկավանքում, որտեղ մինչ այժմ կատարվում է Մր Մարիամ Աստվածածնի պաշտամունքը:

Արմավիրում իրականացվող պարբերական պեղումներն ու ուսումնասիրությունները վկայում են, որ Արմավիրը Հայկական լեռնաշխարհի այն հազվագյուտ հուշարձաններից է, որտեղ ակնառու երևում է հայ հոգևոր ու կուլտական մշակույթի՝ դարերի ընթացքում ձևավորման ու զարգացման անցած ուղին:

## ARMAVIR IN THE CROSSROADS OF CENTURIES

Karapetyan I. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

## ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳԻՆՆԵՐԸ

Հակոբյան Հ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և պալեոգրության  
ինստիտուտ, Հայաստան)  
hphakobyan@mail.ru

*Բանալի բառեր՝ անտիկ Հայաստան, բազին, տաճար, սրբատեղի, կառույց, գործառույթ:*

Հին Հայաստանի հոգևոր ժառանգության առավել ուշագրավ բնագավառներից մեկը հին հայերի պաշտամունքն է և նրան առնչվող հաստատությունների համալիրը: Վաղ միջնադարյան հայ գրավոր աղբյուրները սրանց մասին թողել են սուղ, սակայն կարևոր տեղեկություններ: Այս տվյալների մի մասն ակնարկում է յուրահատուկ սրբազան կառույցների՝ բազինների մասին (Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի): Համատեքստից ելնելով՝ ենթադրվում է, որ բազինները կազմել են տաճարների մի մասը կամ էլ եղել են ինքնուրույն կառույցներ՝ տեղայնացված առանձին սրբատեղիներում:

Մինչև այժմ հայագիտության մեջ չկա որևէ կայուն կարծիք բազինների արտաքին կառուցվածքի և դրանց որոշակի գործառույթի վերաբերյալ: Շղ որում՝ այս երկուսը, կրկին դատելով գրավոր աղբյուրների համատեքստից, սերտորեն առնչվել են իրար: Հայագիտության մեջ մինևույն ժամանակ գոյություն ունի ակադեմիական գիտության կողմից հավասարապես ընդունելի առնվազն հինգ բնորոշում բազինների համար: Սա արդեն մատնանշում է որ բնորոշումները ընդամենը գիտական վարկածներ են՝ չամրապնդված նոր վաստերով, իսկ վերջիններիս անհրաժեշտությունը մեծ է՝ լուսարևակելու համար ոչ միայն հայ հին պետականության գաղափարական կողմն ընդհանրապես, այլև հայերի հեթանոսական կրոնը և ծեսը մասնավորապես: Առանձին մի խնդիր է, թե արդյո՞ք հայոց տաճարները և սրանց հարող կառույցները մինչև քրիստոնեության նախաշնորհ մնացել են խիստ ավանդական տեսքով և նման են եղել հինարևելյան հարևանների ստեղծագործություններին, թե՛ ավելի հելլենականացված տեսք են ունեցել:

Այս հարցերի միակ լիարժեք պատասխանը գրավոր աղբյուրների տվյալների բաղդատումն է հարևան ժողովուրդների պաշտամունքային կառույց-

ների և, որ առավել էական է, Հայաստանի հնագիտական նյութի հետ: Մինչև վերջերս նման հնագիտական տվյալներ ի հայտ չեն եկել, ինչը հայագետներին թողել է տարակուսանքի մեջ, թե հինգ հնարավոր տարբերակներից ո՞րն է ավելի մոտ իրականությանը, բազինները արդյո՞ք մեհյաններ են, արձաններ, զոհարաններ, սրբաբաններ, թե՛ շինությունների համալիր: Ակատենք, որ այս բնորոշումների մի մասը իրար չի հակասում, այլ կարող է լրացնել, իսկ դրանցից վերջինն առաջարկում է բավական ընդարձակ ու անորոշ ձևակերպում:

Ջեղրի լուծման սեկվորը երևում է ՀՀ հյուսիս-արևմուտքում պեղվող Հողմինի խոշոր տաճարական համալիրի տարածքում, որտեղ վերջին երկու հնագիտական սեզոններին բացվում են յուրօրինակ մոնումենտալ կառույցներ՝ ներառված մի բացօթյա համալիրի մեջ: Հենց սրանք էլ անհրաժեշտ է զիտել որպես վաղուց որևէված բազինները, որոնց իորինվածքն այնքան մշակված և զուսպ է, որ հնարավորություն է ստեղծում ուղեկցող նյութի հետ միասին որոշակի դատողություններ անելու այստեղ ժամանակին իրականացվող ծեսերի մասին:

### BAGIN SHRINES OF THE ANCIENT ARMENIA

**Hakobyan H.** (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

## ՆՈՐԱԲԱՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Հակոբյան Ն. (ՀՀ ԳԱԱ հեռագրության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
archaeology.sci.am

*Բանայի բառեր՝ հուշարձան, պեղումներ, մշակութային շերտ, մշակու-  
թային ժառանգություն:*

1. 2010 թ. հուլիս-օգոստոս ամիսներին (որոշ ընդհատումներով) մեր կողմից իրականացվել են պեղումներ Մայր Աթոռ Սբ Էջմիածին վանքի տա-րածքում՝ կապված հին Վեհարանի վերակառուցման շինարարական աշ-խատանքների հետ:

2. Հին Վեհարանը կառուցվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Դավաթ Ջահկեցու կողմից՝ 1738-1751 թթ. «Շուրօք Արարչին չքնաղ յօրինմամբ՝ կա-ռուցեալ բազմաձայն արդեամբ Պատրիարքարանս ու, Մեծին Դավաթա Սրբազան վեհին Ջեռումբ 1190 (1741/42)»: Արձանագրված է սեղանատան պատին: Ս. Էջմիածին Մայր Տաճարը և մյուս շինություններն, ըստ զբալոր աղբյուրների, կառուցվել են պատմական Վաղարշապատ քաղաքի միջնա-բերդի տարածքում, որտեղ տեղակայված են եղել քաղաքորական պալատն ու Ամանիտ-Արտոնիսի տաճարը, բաղնիքը և հասարակական այլ շինու-թյուններ:

3. Պեղումների միջոցին բացվեցին արտադրական կառույցներ (թրծանե վառարաններ), աշտարական շինության հիմնապատերի մնացորդներ և ճարտարապետական հորինվածքով բացառիկ, գետնափոր տուֆակերտ մի կառույց՝ Որև տեղեկություն նորաբաց հուշարձանի վերաբերյալ չունենք ի բացառյալ Ս. Մարդարյանի հաղորդման. «Լազարապատ հյուրանոցի մոտ բացվել են ներքնատուն (թրծված ալյուսե, կրաշաղախով պատերի հետքեր), իսկ նկեղեցու տպարանի մոտ՝ բաղնիքի շենք»:

4. Նախնական դիտարկումները թույլ են տալիս արձանագրել, որ նորա-բաց հուշարձանը (ավերակված խոտազույն) ներկայանում է մշակութային երեք տարբեր շրջաններ ընդգրկող ժամանակահատվածով կամ շերտերով:

Մշակութային առաջին շերտն, անշուշտ, վերաբերում է ալյուսաթուփ աշ-տարական շինությանը՝ կառուցված, ամենայն հավանականությամբ, Մով-սես Տաթևացու (լուսարար, ապա և կաթողիկոս՝ 1629-1632 թթ.) կողմից: Եր-

ևույթունն ունի բոլորշի հասակագիծ՝ կառուցված վառ կարմիր, լավ թրծված աղյուսներով: Պեղումները պարզեցին, որ աշտարակն ունի (ըստ պահպանված վիճակի) եռաշերտ հասակ՝ պատած գաջե սվաղով: Լույն կերպ են և պատերը (երկու երեսից):

Երկրորդ մշակութային շերտը ներկայանում է հեղց վառարաններով՝ թվով երեք: Պահպանված է դրանցից մեկի կրակարանը՝ օղանուղ խող-վակով և սկևափուով: Այն շրջանում է՝ բերորշ ժամանակի նմանօրինակ կառույցների հորինվածքին (Օրան-Կապա, Կափաղակ, Միսեղաուր և այ-լուր): Երկրորդ վառարանը (նույն հորինվածքով) պահպանված է կիսով չափ, լցված հոծ մոխրաշերտով, ավերակված շինաշխատանքների միջոցին: Վառարանների շուրջը պահպանված է աղյուսապատ հասակի մի փոքր հատված, որտեղ կանգուն էին, սովորաբար, խցեգործ վարպետները:

Առավել ուշագրավը՝ մշակութային երրորդ շերտը ներկայացնող գետնա-փոր շինությունն է, որը մինչ այսօր եզակի է մեզ հայտնի վաղ միջնադարյան նմանատիպ հուշարձանների շարքում: Հուշարձանն արտադաս ուղղակ-կուն հորինվածքով է, խուլ պատերով, ներքուստ շրջանակ, փակ պատուհան-ներով, տուֆե սալածածկ տանիքով՝ խարսխված հեռապահ կառուցումնե-րից: Հատակը հողապատ է, նկատելի են թափված ալեբաստրե սվաղի մնացորդներ: Դեպի դուրս, ուղղությունը՝ Մայր Տաճարի արևմտյան մուտք, պահպանված են թվով հինգ տուֆակերտ աստիճաններ: Երևությունը կա-ռուցողական կերպով և շինանյութով (հողե լիցք, հղկված, տրամատված տուֆե երկզույն քարեր), նախնական դիտարկումներով, կարելի է վերա-գրել IV-V դարերին:

Գտածոներ՝ հասարակ և ցնարակապատ խցեղեն (նկարեն և փորագրի), վառարանների շրջապատից՝ IX-XIII դդ. խցեգործությանը բնորոշ տարրերով:

Իրանական նախնազանգե սպասքի առարկաներ, գալթաթեթ, քաթեր, կերպազարդված լալվարդով ինջեղենի այս տեսակների թվագրվում է XVI-XVIII դդ. և համարվում է Մեֆյան Իրանի խցեգործական արևեստանոցերի արտադրեր:

Մետաղե առարկաներ՝ արևեն արխե, նիկելապատ մոմակալներ (XIX-XX դդ.), բրոնզե ցանցկեն սկավախական կարմիրիչ և այլ մանր աննշան իրեր: Բաց-առիչ է պղնձե սփռեն իր նվիրատվական արձանագրությամբ.

ՁԵՏԷ ԱՐԴԱՄԻ, ՍԲ ԷԶՄԻԱՍՆ Ա ՇԵՈՍՄԲ ՂԱՏՈՎ ԿԱՐՄԱՊԵՏԻՆ:

### A NEWFOUND ARCHAEOLOGICAL MONUMENT AT THE SURROUNDINGS OF THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Hakobyan N. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of  
Archaeology and Ethnography, Armenia)



## ՎԱՂ ՄԻՋՆԱԴՐՅԱՆ ԵՒՆԱՐԱՐԱԿԱՆ ԽՆՑԵՂԵՆԻ ՄԻ ՏԵՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Միրիջանյան Դ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
dianamirijanyan@rambler.ru

*Բանայի բաներ՝ կղմինդր, ճարտարապետություն, մշակույթ, հնագիտություն:*

V-VII դդ. եկեղեցիների և մատուռների կառուցման և նորոգման աշխատանքների լայն ծավալները գարկ սովեցին կղմինդրի արտադրությանը: Այն վաղ միջնադարյան խնցեգործական արտադրանքի մեջ առանձին խումբ է կազմում:

Կղմինդրի ուսումնասիրությունը կարևոր աղբյուր է արտադրության, առևտրի կազմակերպման ու վերահսկման, խնցեգործական արհեստանոցների գործունեության, դրանցում պատրաստվող բազմաբնույթ արտադրանքի, աշխատուժի վերաբերյալ: Կարևոր նյութ է նաև հուշարձանների թվագրության համար:

Հայաստանում կղմինդրը հայտնի է դեռևս հելլենիստական շրջանից, որի օգտագործումը հանդիսանում է շինարարական բարձր տեխնիկայի և քաղաքային մշակույթի վկայություն: Մեզ հայտնի ամենահին կղմինդրները հայտնաբերվել են Արտաշատի պեղումներից: Դրանց զանգվածային բնույթը և պատրաստման որակը վկայում են, որ կղմինդրի արտադրությունն անտիկ շրջանում գտնվել է զարգացման բարձր մակարդակի վրա: Հավանական է, որ կղմինդրի արտադրությունը Հայաստան և հարևան երկրներ անցել է Փոքր Ասիայից: Այդ մասին կարող է վկայել նաև անվանումը՝ «կղմինդր», որը փոխանված է հունարեն «կերամիա» բառից: Միջնադարում նա ավանդաբար շարունակվում է հելլենիստական տափակ (սոլեն) և կիսակլոր (կալիպտեր) կղմինդրների օգտագործումը: Կղմինդրածածկ տանիքի կառուցվածքը հասկանալու առումով կարևոր նյութ է տալիս VII դ. ի վեր, գրեթե անփոփոխ պահպանված Աշտարակի Կարմրավոր եկեղեցու գմբեթը:

Դեռևս անտիկ շրջանում կղմինդրի արտադրությունը գտնվել է բարձր խավի վերահսկողության ներքո: Վաղ միջնադարում այն կենտրոնացած էր

մեծ բնակավայրերում գտնվող արհեստանոցներում: Հայաստանում կղմինդր արտադրվել է Դվինում, Վաղարշապատում, Արցրում, ինչը վկայում են հայտնաբերված խոտանները և որոշ առանձնահատկություններ (զեր, պատկերներ):

Վաղ միջնադարում տափակ կղմինդրը ենթարկվում է որոշակի փոփոխությունների և էականորեն տարբերվում անտիկ շրջանի սոլեններից: Փոփոխությունների ենթարկվում են նաև կիսակլոր կղմինդրները:

Այսպեսով, Հայաստանում կղմինդրածածկ տանիքը հելլենիստական մշակույթի արգասիք էր, որը քաղաքական ու հոգևոր նոր պայմաններում սկսեց կիրառվել մեծամասամբ եկեղեցիների ծածկերի համար: Հայաստանում քրիստոնեական կառույցները պահպանեցին քրիստոնյա ողջ աշխարհին բնորոշ կղմինդրածածկ տանիքը մինչև X դ., որից հետո այն փոխարինվեց ավելի դիմացկուն քարե սալերով: Կղմինդրածածկ տանիքները հայտնվում են նաև ուշ միջնադարում, հատկապես Արցախի ճարտարապետությունում, իսկ Այունիքում հիմնականում օգտագործվել են օժանդակ շինությունների ծածկերի համար: Հասարակական և տնտեսական շինությունները շարունակում էին կառուցել ավանդական հարթ տանիքներով կամ գլխաձև տանիքներով:

### ABOUT A TYPE OF THE EARLY MEDIEVAL CONSTRUCTIONAL CERAMIC

Mirijanyan D. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute  
of Archaeology and Ethnography, Armenia)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՏՄԱՄԵՄԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԵՐԸ**

Մկրտչյան Ռ. (ԵՊՀ, Հայաստան)  
ruzanant@yahoo.com

*Բանալի բաներ՝ հեամարդարանություն, կենսահագիտություն, կենսափաստ:*

Հայաստանի հեամարդարանության ծնունդը կարելի է հաշվել 1929 թվականից, երբ Վ. Բուխակը լույս բնայեց Ե. Լալայանի Մեսնի ավագանի պեղումներից հավաքագրած երկաթեղարյան գանգաբանական հավաքածուն դասակարգեց այն երկարազանգ մարդաբանական տիպերի համակարգում՝ ամրակայելով հայերի էկվորության և էթնոսի հյուսիսային ծագումնաբանության կողմնակիցների տեսությունները:

Շուրջ կեսդարյա ընդմիջումից հետո Հայաստանի հեամարդարանության լուրջ առաջընթաց արձանագրեց Վ. Ալեքսեևը կովկասյան ազգերի ծագումնաբանության նվիրված իր աշխատության մեջ՝ երկկայացնելով Հայաստանի գանգաբանական հավաքածուների համահավաքը և համապատասխան մարդաբանական բնութագրերի զարգացումները հնագիտական շրջափոխի շարունակականության համատեքստում: Հեղինակը կրկին փաստագրեց բրոնզ-երկաթեղարյան բնակչության գլխի երկարակերպությունը, առանձնացնելով երկու՝ նրբակզամ և զանգվածեղ տարբերակներ: Ըստ իր չափազանց նյութերի դիմային կմախքի ընդհանրական երկարակերպությունը, քթի խիստ պրոֆիլավորվածությունը համարեց տարածաշրջանում տեփոփոխ՝ սկսած Ֆեոկիոսյան ժամանակաշրջանից, և հայերի մարդաբանական դիմանկարի ձևաբանական առաջատարը, ըստ այդմ՝ ապացույցներ մատուցելով հայերի տեղաբնիկության կողմնակիցներին:

Այս տվյալները երկար ժամանակ օգտագործվում էին Վավկասի մարդաբանությամբ զբաղվող հեղինակների կողմից, որպես համեմատականներ, մեկնաբանվում էին էթնոժամանագաբանական վերակազմություններում, ե. քանի որ գանգաբանական հավաքածուների զգալի մասը զուրկ էր ստույգ

պատմաբանական անձնագրավորումից, մարդաբանական տվյալներից, ակնկալվող էթնիկական բնույթի տեղեկատվությունը նայեցնա կանգնածաբարցել էր:

Հայաստանում նրատարակված և նորահայտ հեամարդարանական հավաքածուների թվազման, քարտեզագրման և մշակութային բնորոշումների անհրաժեշտությունը գիտաճյուղի զարգացման պարագայում դարձավ առաջնային անհրաժեշտություն: Հնագետներ Պ. Ավետիսյանը, Ա. Փիլիպոսյանը Վ. Բուխակի և Վ. Ալեքսեևի հրատարակած որոշ մարդաբանական նյութերի համար գտան ստույգ թվագրություններ՝ համապատասխան քանդաբանային հնագիտական հավաքածուների ուսումնասիրության շնորհիվ: Ռեչպես նաև Հ. Մյունյանի, Ռ. Բաղայանի, Լ. Պետրոսյանի հետ մեկտեղ երկկայացրին նորահայտ հեամարդարանական հավաքածուներ (Թալին, Արքիին Գետաշեն, Հոռոմ, Վերին Նավեր, Լճաշեն և այլն)՝ մարդաբանական պատմաբանական տեղեկատվությամբ: Այս աշխատանքների շնորհիվ ձևավորվեց Հայաստանի հեամարդարանական նյութերի մի նոր համահավաք, որը պարբերաբար հրատարակվեց ստղերին հեղինակի կողմից կովկասյան և ներսիական տարածաշրջանների բրոնզ-երկաթեղարյան հեամարդարանական հավաքածուների համեմատական վերլուծականներում: Արդյունքում Հայկական լեռնաշխարհի հարավային տարածքներում՝ կոնկրետ Վանի ավազանում, վաղ բրոնզի ժամանակահատվածում տեղայնացվեց նրբակզամ գանգաբանական տիպերը, իսկ հյուսիսային տարածքներում, հատկապես Մեսնի ավազանում՝ երկարակերպ և զանգվածեղ տարբերակները՝ որպես եվրոպոյի ուսայի ձևաբանորեն ծայրահեղ և հնագույն դասորումներ: Երկարաղմնությամբ, առավելագույնս պրոֆիլավորված և երկար քթի չափերով, Հայաստանի բրոնզ-երկաթեղարյան բնակչությունը վերը նշված համեմատական դաշտում հռչակվեց օեկորոպոկի: Այսպիսով, Հայաստանի հեամարդարանությունը, ավելի քան ութսուներեք կենսագրության օրոք, ներկայացավ քարտեզագրված, ձևաբանորեն տիպաբանված բրոնզ-երկաթեղարյան հնագիտական ժամանակահատվածի պատմաբանական համատեքստում՝ ցուցաբերելով էթնոժամանագաբանական հիմնախարցերի լուսարանման համեմատ կարողություններ:

Ներկայումս հեամարդարանական հավաքածուները հավաքագրվում և ուսումնասիրվում են նոր զարգացող կենսահագիտության մեթոդներով և մեթոդաբանությամբ: Այս գիտաճյուղը տարբերվում է նախորդից, որ վերականգնում է ոչ թե նեոհանրության էթնիկական պատմությունը, այլ՝ կենսակերպը, աշխատում է ոչ միայն կմախքի չափագրական, այլև հիմնականում սեռատարիքային և հեամախտաբանական հատկանիշներով, մեկնաբանվում

է ինչպէս պատմամշակութային, այնպէս էլ հնաեկոլոգիական տեղեկատվության դաշտում: Կենսահնագիտության ոլորտում, վերը եջված հնամարդաբանական հավաքածուների անհատական սեռատարիքային տվյալների հիման վրա, իրագործվել է Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան բնակչության ժողովրդագրական պատկերի վերակազմությունը: Փաստվել են արական սեռի կյանքի երկար տևողությունը իզականի նկատմամբ՝ հեռաներսությունում ի հաշիվ տարեց տղամարդկանց մեծ թվի, կանանց մահացության մեծ ցուցանիշներն ակտիվ սերնդագործության տարիքում, Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակչության երկարակեցությունը եվրասիական տարածաշրջանի համաժամանակյա համարժեք նյութերի համեմատական դաշտում:

Հնամարդաբանությունը և կենսահնագիտությունն արդյունավետ կարող են զարգանալ և ծառայել Հայաստանի պատմագիտությանը, եթէ կենսափաստը նույնպէս դիտարկվի որպէս պատմական տեղեկատվություն պարունակող արժեքավոր սկզբնաղբյուր և հարլեանական թանկարաններում հավաքագրվի՝ որպէս ազգային գենոֆոնդի տվյալների բանկ:

**PALEOANTHROPOLOGY OF ARMENIA IN HISTORICAL-CULTURAL  
CONTEXT AND PROSPECTS OF ITS DEVELOPMENT**

**Mikrtchyan R.** (Yerevan State University, Armenia)

**ԼՃԱՇԵՆԻ ԴԱՄԲԱՆԱԳԱՇԸ  
(Մ.թ.Ա. XXIV-XIX Դ.)**

**Պետրոսյան Լ.** (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)

*Բանալի բառեր՝ հնագիտություն, թեղը-վանաձորյան, միջին բրոնզ, դամբարան, գունազարդ, մշակույթ:*

Հայաստանի և Հարավային Կովկասի բրոնզեդարյան ժամանակաշրջանի լավագույն հուշարձաններից է Գեղարքունիքի մարզի Լճաշենի դամբարանադաշտը:

Դամբարանադաշտում ուսումնասիրված նյութերի շարքում առավել տակավ է Կաղ բրոնզեդարյան դարաշրջանի և հաջորդ՝ միջին բրոնզի ժամանակաշրջանի միջակայքում գտնվող հուշարձանների քանակը: Կաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանին հաջորդող նյութեր է պարունակում մեր կողմից պեղված թիվ 55 դամբարանը:

Դամբարան 55, շրջափակված է հասվածաբար պահպանված, հյուսիսարևմուտքից հարավարևելք առանցքով 7,50 մ, հյուսիսարևելքից հարավարևմուտք՝ 6,50 մ տրամագիծ ունեցող միջին մեծության որմասարերով կառուցված անկանոն կրմնէլեխով միջակայքի կենտրոնական հատվածում մանր քարերից և ավազից բաղկացած փոքր թմբի հեռացնելուց հետո ակնհայտ դարձավ, որ դամբարանխուցը ծածկասալերով փակված չի եղել: 1,50 մ խորության հորիզոնի վրա ուրվագծվեցին 4,00 x 3,70 մ չափեր ունեցող հիմնահողային դամբանախցի պատերը: Այդ հորիզոնի վրա դամբարանի հյուսիսարևմտյան պատի դիմաց դրված էին ցուլերի երեք գանգեր: Հիմնահողային 3,50 մ խորության հորիզոնի վրա փաստագրվեց ճառագայիտան դաստիարակված տարաչափ հինգ սալերի և քարերի համադրմամբ վարդյակաձև կառուցված ծածկը, որի տակ բացված էին մասկան դամբանախուց ուներ օվալաձև հասակագիծ՝ արևելք-արևմուտք առանցքով 3,30 մ երկարությամբ, հյուսիս-հարավ՝ 3,00 մ լայնությամբ: Դամբանախցի մակերեսը սահմանազատված էր ուղղահայաց ու հորիզոնական դրված տարաչափ քարերի երկու շարքով կառուցված 1,00 մ բարձրությամբ պատով: Հանդուցայի

կմայսը դրված էր դամբանախցի կենտրոնական հատվածում. գլխով՝ արևմուտք. ձախ կողքի փյա՝ ձեռքերը և ոտքերը կնկված: Գանգի հետևի մասում գտնվեց ունյա թիթեղից ծապավենածն հերակալ-գարդ, դիմացից՝ սկավառավածն ոսկե գարդ: Դամբանախցի հարավային պատի դիմաց գտնվեցին տարբեր մեծության փայտի մնացորդներ: Այստեղ դրված էին մեկ սև փայլեցված շքեղ կարաս և աղոթիքների բեկորներ, որձաքարից գուրգի պարոսատուկ, թերթաքարից գեղեցիկ թերիչ, իսկ հյուսիսային պատի դիմաց դրված էր սրվակաձև փոքրիկ խեցանոթ: Գտնվեցին նաև ոչխարի ստորին ձուտ և ձիու վերջույթների չորս հասավանդեր:

Թե՛ դամբանախցի կառուցվածքը և թե՛ սակավաթիվ, սակայն բարձրարժեք նյութերը պատկանում են վաղ կուրգանային մշակույթին: Տվյալ դամբարանը ոչ միայն կառուցվածքով, այլև թաղման ձևով իր ուրույն տեղն ունի Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի մշակույթի ուսումնասիրության ոլորտում:

Ավելին են ԹՎ մշակութային փուլի նյութեր պարունակող համալիրները (ընդամենը վեց դամբարան՝ 2. Մնացակեսյանի կողմից պեղված թիվ 14, 42, 44, 120 (վերին թաղում), 123 դամբանաբլուրները):

Հայտնի են միայն թիվ 123 դամբարանի տվյալները: Ինքնատիպ է Լճաշենի թիվ 123 դամբարանը: Շրջանաձև է եղել, չի ունեցել քարե պատեր: Խորությունը 3,00 մ, տրամագիծը 2,50 մ է: Ըստ Հ. Մնացակեսյանի՝ նեղեցյալը եղել է դիամասնառված, գլուխն անջատված է եղել իրանից, ոտքերն ու թևերը նույնպես կտրված՝ յուրաքանչյուրը երկու մասի բաժանված: Իրանը դրել են ներքև, ոտք մասի բաժանած, ոտքերն ու թևերը՝ կողք կողքի: Մեծ խնամքով շարժել են իրար փյա, գլուխը դրել շուրթից վերև: Այս դամբարանում գտնվել է նաև մեկ եզան ամբողջական կմախք, որի փյա դրված է եղել արտակարգ մեծության վանակատից նետասլաք: Դամբանախցում հայտնաբերվել է նաև մեկ բրոնզե դաշույնի կեսը, հյուսիսարևելյան կողմում դրված են եղել ոչխարի և այծի մեկական ամբողջական կմախք, բացի այդ, այստեղ գտնվել են 9 կավանոթներ:

Լշենը, որ թիվ 14, 42 և 44 դամբանաբլուրներն աչքի չեն զարնում նյութերի բազմազանությամբ: Գերակշիռ մաս են կազմում ձեռքով պատրաստված, դարչնագույն կամ բաց վարդագույն մակերեսով, անզարդ ու կտրելու եղանակով արված զիգզգներով, հորիզոնական գոտիների միջակայքը կարճ զնկներով, ալիքներով և երբեմն էլ կնետով լցված զարդանոթիվներով մեծ ու փոքր կնուճները: Ըստ հարդարման եղանակների և ձևերի նույնական են Լճաշեն ամրոցի համաժամանակյա շերտերից հայտնաբերված նյութերը: Այդ նյութերն ամբողջությամբ համապատասխանում են Հարավային Կով-

կասում մինչ այժմ հայտնի շերտագրական հասակ պատկեր ներկայացնող ընակատույնի՝ Ուզբուլիկ Թեփեի ստորին շերտի նմուշներին, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս զարդերն ավելի բազմազան են:

Տվյալ դամբարանային նյութերը պատկանում են Ք.ա. XXII-XIX դարերին և լրացնում են Լճաշենի դամբանադաշտի տվյալ փուլի մինչ այդ առկա բացը:

#### THE NECROPOLIS OF LCHASHEN (XXIV-XIX CENTURIES B.C.)

Petrosyan L. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ԱՐՑԱՆԻ  
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Պետրոսյան Հ. (ԵՂՀ, Հայաստան)  
hpetrosy@gmail.com

*Բանալի բառեր՝ Արցախ, Տիգրանակերտ, Տիգրան Մեծ, մշակութային ժառանգություն, հայ-ադրբեջանական հակամարտություն, պեղումներ:*

Ձեկուցման մեջ Արցախի Տիգրանակերտի հայտնաբերման, հետազոտության և հանրահռչակման գործընթացի ընտելությամբ ներկայացվում են պատմական ժառանգության դերակատարման խնդիրները հայ-ադրբեջանական հակամարտության մեջ:

1. Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը հայ մշակութային ժառանգության հայտնաբերման, հետազոտության, հանրահռչակման և այն ներկա մշակութային գործընթացի մաս դարձնելու վերջին տարիների ամենահաջող ձեռնարկներից է: Դրան նպաստում են ծավալուն պեղումները, հուշարձանի լրացուցիչ մաքրումներն ու լանդշաֆտային տեսքի պահպանումը, հանրահռչակմանն ուղղված ամբողջական քաղաքականությունը՝ հրատարակություններ, համացանցային կայքի ստեղծում, պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսներ և, ի վերջո, Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ստեղծում հենց հուշարձանի տարածքում: Արդյունքում Տիգրանակերտն այսօր ամենաշատ այցելվող, համացանցում լայնորեն ու մանրամասնորեն ներկայացված, հանրությանն առավել թաքցածն էր հուշարձանն է Արցախում: Միայն վերջին տարում Տիգրանակերտի մասին երեք փաստաթուղթերազրական ֆիլմեր են ստեղծվել, ընթացքի մեջ են ևս երկուսը: Կարելի է հավաստել, որ Տիգրանակերտն Արցախում օր օրի թափ առնող մշակութային քաղաքականության հիմքերից մեկն է:

2. Այս ընթացքի հետևախորքի վրա խիստ ուշագրավ է ադրբեջանական զիտակն և հասարակական վերաբերմունքի ընտելությունը: Այն կարելի է բնութագրել որպես անլրջությունից դեպի զգաստացում, փաստերի ան-

տեսումից մինչև դրանց ընդունման ու մեկնաբանության գործընթաց, որի ընտելությունն օգնում է հասկանալ նաև սեփական ձեռնարկումների հաջողության և անհաջողության պատճառները:

3. Այնուհաստ հաջողությունների հետ մեկտեղ Տիգրանակերտի հանրահռչակման գործընթացը երևան բերեց հայաստանյան զիտակն հանրային խայտաբղետության, զիտակն հետազոտություններում սիրողականության և սնապարծության, մշակութային ժառանգության հանդեպ տարվող քաղաքականության, զիտության և մշակույթի կասախարհման հետ կապված բազմաթիվ խնդիրներ, որոնց ընտելությունը նույնպես զեկուցման հիմնական թեմաներից է:

THE CULTURAL HERITAGE IN THE CONTEXT OF ANTAGONISM:  
ARTSAKHI'S TIGRANAKERT

Petrosyan H. (Yerevan State University, Armenia)

**ԹԱԳԱՐԱՍՑԻ ՑՈՒՑԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ  
ՊԱՏՄԱՄԵՎԿՈՒԹԱՑԻՆ ՄԻԱՌԱՎՈՒԹՅԱՆ  
ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՄԻՋՎԱՍՑԻ,  
ՀՀ ԹԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Պողոսյան Դ.** (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արժեքից-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)  
poghosyand@yahoo.com

*Բանալի բաներ՝ թանգարան, ցուցադրություն, մշակութային տեսք, թանգարանային հաղորդակցություն, ցուցանմուշ, տեղեկատվություն*

ՀՀ թանգարաններն առօրյա գործունեության ընթացքում կիրառում են սոցիալ-մշակութային գործունեության տարբեր եղանակներ՝ իրենց կրթամշակութային, գիտատեղեկատվական, ժամանցի կազմակերպման ներուժն օգտագործելու ի նպաստ հայկական պատմամշակութային և բնական ժառանգության մի սովորածավալ հատվածի պահպանության, արժևորման ու արդիանկանացման: Այս առումով թանգարանային ցուցադրությունն իբր պատմական զարգացման տարբեր փուլերում այսօր էլ հանդիսանում է թանգարանի ավանդական հաղորդակցության միջոցը: Վերջինս հիմք է թանգարանի կրթահաղորդակցական հասարակական գործառույթի իրականացման համար:

Հիմնվելով ՀՀ թանգարաններում կատարված դիտարկումների վրա քննարկվում է այն դիրքորոշումը, որ թանգարանային ցուցադրությունը մշակութային տեսք է, առանց որի անհնար է արդի թանգարանի գոյությունը՝ որպես սոցիալ-մշակութային համակարգ: Ինչպես թանգարանային գործունեության ողջ ընթացքում, այնպես էլ ցուցադրության հիմքում ընկած թանգարանային առարկան ձևեր է բերում գիտելիքի, զգացմունքների, արժեքների փոխանցման գործառույթ: Ուստի այդ՝ թանգարանային առարկաները հանդես են գալիս որպես նշաններ և խորհրդանշաններ, ցուցադրությունը՝ առարկայական-տարածական հաղորդագրություն, որը ծառայում է տարբեր մշակութային դիրքերից հանդես եկող սուբյեկտների հաղոր-

դակցությանը և ունի հասարակական-կրթական առաքելություն: Վերջինս այն հիմքն է, որով ընդհանրապես թանգարանը վերածվում է կրթահաղորդակցական միջավայրի, այսինքն՝ մի իմաստավորված տարածության, որի նպատակն է ձևավորել որոշակի աշխարհայացք, փոխանցել արժեհամակարգեր՝ հաշվի առնելով թանգարանային տարաշերտ լսարանի ընկալման տարբեր հնարավորությունները:

ՀՀ թանգարաններում ակտիվորեն կիրառելի ցուցադրական գործունեության համատեքստում, արդի թանգարանային հաղորդակցության տեսության հիման վրա փորձ է արվում մեկնաբանելու այն հիմնական սկզբունքները, մեթոդները, աշխատանքային փուլերը, ինչպես նաև ընկալման եղանակները, որոնք հատուկ են ժառանգության մեկնաբանման սույն թանգարանային միջավայրին:

**MUSEUM EXPOSITION AS AN ENVIRONMENT FOR INTERPRETATION OF HISTORICAL-CULTURAL HERITAGE IN THE CONTEXT OF MUSEUMS' ACTIVITIES OF THE REPUBLIC OF ARMENIA**  
**Poghosyan D.** (Ministry of Culture of the Republic of Armenia, "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations" Non-Commercial State Organization, Armenia)

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՆՈՋ ՊԱՏԿԵՐՈՎ  
(ԱՐՎԱՐԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ  
ԼՏՈՒԹԵՐՆԻ ՀՄՄԱՄԲ)**

**Պողոսյան Ս.** (22 ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
Մարդաբանության հետազոտության հուշահամալիր,  
Հայոց ազգագրության թանգարան, Հայաստան)  
sv\_ethnomuseum@yahoo.com

*Բանալի բառեր՝ արդիականություն, ազգաբանություն, կնոջ և տղամարդու գոյժառույթներ, անձնանուն, հուշարձան, Մայր Հայաստան, ընկալում, կերպար:*

Հաճախ Հայաստան երկիրը ներկայացվել է կնոջ կերպարով: Այդ մասին եղած սեփական և այլ էթնիկ պատկերացումները բնութագրվել են մեր կողմից առանձին հոդվածով: Այս արբետիպային ընկալումները դրսևորվել են նաև խորհրդային և հետխորհրդային ժամանակներում: 20-րդ դարասկզբից ուշադրության արժանի են մեր երկրի՝ Հայաստանի անվամբ աղջիկների անվանակոչումները: Երբման աղջիկներին անվանել են «Հայաստան»՝ հարենասիրական ոգուց, ազգային զգացումներից էլ նշելով: Բացի այդ, այստեղ նկատելի է իրենց մայրերին, տատիկներին մեծաբեղու, հարգելու, վերջիններին կերպարը, երանց վարդաբարձի հաստակ գծերն ու շնորհքը, ընդունակություններն անվան միջոցով կրոնիկ հաղորդելու կամ երանց հիշատակը վառ պահելու նպատակով դուռտրերին տատերի, մեծ մայրիկների անվամբ կոչելու ցանկությունը՝ նմանով նմանը ձեռք բերելու միտմամբ: 1920-30-ական թթ. Խորհրդային Հայաստանում աղջիկներին կոչել են այս անվամբ՝ ի հիշատակ իրենց մայրերի: Ըստ Հրաչյա Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի», Հայաստանը իրական անուն է: Արմենիա անունը ն իրական անուն է, որը հանդիպում է իտալացոց մեջ (Հ. Աճառյան, նշված բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 289): Հավանաբար, այստեղից են Արմինե, Արմենուհի խիստ տարածված հայկական իրական անունները:

Հայոց մեջ ամենամեծ արժեքները կապված են մայր բառի հետ. մայր Հայաստան, մայր լեզու, մայր հայրենիք, մայր հող, մայր եկեղեցի և այլն:

Մոր կերպարն իր դրսևորումներն է գտել ճարտարապետական հուշարձաններում, դեկորատիվ-կիրառական արվեստի շատ ճյուղերում՝ խեցեգործություն, գորելենագործություն, ասեղնագործություն և այլն:

Ուշագրավ է, որ Նիկոլ Օհանը «Կամուրիի հիշատակարանում» կնոջ պատկերով է տեսնում Մարդաբանության հաղթանակը. «դեպի երկինք էր բարձրանում հրեշտականման մի կանացի դեմք, զգաբար հայացքը դեպի Մասիս ուղղած՝ քսց արած իր լայն թևերը խնամում էր իր խնկ գավակներին, ուժ ու կրթով մտնում երանց մեջ: Դա Մարդաբանության հաղթանակն սխմվոյն էր ...»:

Ըստ Ռ. Բարայեցու՝ Մարդաբանության հուշահամալիրի Հուշապատի վրա պատկերված «...սարի կնոջ մանուկը և խաղողի ողվույզներով զարդարված կինը հայ ժողովրդի վերածնունդն են խորհրդանշում»: Իսկ Հուշապատի մյուս երեսին, որպես առաջնորդող պատկեր, ներկայացված է թևատարած կին՝ ալիքների մեջ խելզվող «Մայր Հայաստանը», որ յուր որդիներին փրկության, օգնության է կանչում:

1967 թվականին Երևանի Հաղթանակի գրասպասում տեղադրված «Մայր Հայաստան» հուշարձանը փոխարինեց Ի. Ստալինի՝ 5 սարի առաջ տեղադրված արձանին: Դա Երևանի ամենաբարձր արձանն է (22 մ բարձրությամբ, պատվանդանով՝ 52 մ): Դրա համար որպես նախատիպ, բնորոշիկի ծառայել է երևանաբնակ Փեկյա Մուրադյանը: Քանգակը ներկայացնում է հայ կնոջ, մոր հավաքական կերպարը՝ սուրը ձեռքին, և խորհրդանշում է ազատ հայրենիքի փառքն ու հզորությունը: Այն մարմնավորում է ուժեղ, զորեղ կնոջ, այն է՝ «ողամարդ-կնոջ» հավաքական տիպ՝ հայ ռազմական օգու, զինվորին մարտի դաշտ ուղարկող, ոգևորող հայ մոր, կնոջ, քրոջ կերպարներով:

Առաջը Պատրիկի՝ II աշխարհամարտից հետո արված նկարաշարում խորհրդային Հայաստանը նս ներկայացվել է կնոջ պատկերով, առանձնապես հետաքրքրական են փոքրիկ Հայաստանը՝ կնոջ կերպարով պատկերները նախատիպային ընկալումներով մակագրությունները:

Հատկանշական է, որ էթն կանանց անվանել է անվանում են Հայաստան, ապա նորմալում է տղամարդկանց Արցախ անունը: Հավանաբար, դա կապված է հաղթանակած երկիր լինելու, ուժեղի, հզորի, վերջին հաշվով՝ տղամարդկային սկզբի, ռազմի դաշտում հաղթանակած տղամարդու կերպարի հետ:

**ARMENIA IN A WOMAN'S SHAPE**

**(ON THE BASIS OF ONOMASTICAL AND FIGURATIVE MATERIALS)**

**Poghosyan S.** (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Memorial Complex of Sardarapat Battle, National Museum of Armenian Ethnography, Armenia)

**ՀՀ ՊԱՏՄԱՄԵԿԳՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՐԳԵԼՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՑՑՆԵՐԸ**

**Պողոսյան Վ.** (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)  
hushardzan@yahoo.com

*Բանալի բաներ՝ արգելոց-թանգարան, պատմամշակութային ժառանգություն, ռազմավարություն, պատմական միջավայր:*

Գաղիքն չէ, որ պատմական հիշողության փոխանցման և վերակենդանացման աղբյուրը մեզ հասած մշակութային ժառանգությունն է, որի արդյունավետ պահպանման և մեկնարանման դեպքում են արժեքավոր մեր ներկան և ապագան: Այս առումով պատմամշակութային արգելոց-թանգարանները և արգելոցները դիտարկվում են որպես մշակութային անշարժ և շարժական, կուրթական և ոչ կուրթական ժառանգության համալիր պահպանման և կառավարման արդյունավետ մշակութային կազմակերպություններ:

Ձևկուցման մեջ քննության առարկա են ՀՀ տարածքում գործող արգելոց-թանգարանների և պատմամշակութային արգելոցների գործնական ոլորտի զարգացման հետևակարները: Մասնավորապես առանձնացվում են հետևյալ իրողությունները.

- Հնախորհրդային իրականության մեջ արգելոց-թանգարանների և արգելոցների բանակը կրճատվեց, և դրանց մի մասը միայն շարունակեց գործել անշարժ հուշարձանների, դրանց հարակից միջավայրի պահպանման և կրթամշակութային, գյուղական նպատակներով օգտագործվող պետական կամ համայնքային ոչ անտրային կազմակերպությունների կարգավիճակով:

- Թեև գործող արգելոց-թանգարաններն ու արգելոցները համարվում են սխիված կրթամշակութային, գրոսաշրջային հաստատություններ, և որոշները նույնիսկ այցելությունների մակարդակով գերազանցում են մյուս տիպի թանգարաններին, այնուամենայնիվ, դրանց հսկայական բովանդակային և սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը մնում է չօգտագործված:

- Արգելոց-թանգարանները և արգելոցները, որպես յուրօրինակ մշակութային կազմակերպություններ, իրավաօրենսդրական դաշտում և համապատասխան գիտական հետազոտություններում համակողմանի ուսումնասիրված և մեկնարանված չեն:

- Արդի արգելոց-թանգարանները և արգելոցները, որպես մշակութային ժառանգության պահպանման և կառավարման եղանակներ, կիրառելի չեն երկրի բոլոր մարզերի կտրվածքով, իսկ գործողներն էլ չեն ապահովում երկրի ողջ մշակութային բազմազանությունը:

Վերոնշյալ իրողությունները հիմք են տալիս ձևակերպելու հետևյալ ռազմավարական զարգացման ուղղությունները.

1. Արդի սոցիալ-մշակութային իրողություններին համընթաց արգելոց-թանգարանների և արգելոցների գործունեության վերախմաստավորում՝ որպես ժառանգության համակողմանի արժեքորման և սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր ռեսուրս: Նմանատիպ մոտեցման ձևավորումը նախատեսվում է կիրառել նեխելով «Մշակութային լանդշաֆտ» հայեցակարգային սկզբունքներին:

2. Մարզերում արգելոց-թանգարանների և արգելոցների նշանակության ու գործունեության արժեքորման և համայնքային զարգացման ծրագրերում դրանց ներուժի օգտագործման մեխանիզմների ներդրում:

3. Փոխկապակցված և բազմաբնույթ արգելոց-թանգարանների և արգելոցների ցանցի ստեղծում և գործող համակարգի զարգացում:

4. Հարկային, ներդրումային, արտադրույեցտային էկամտի տարաբնույթ աղբյուրների ձեռքբերման նոր մեխանիզմների կիրառում:

5. Ապատակային ծրագրերի և հետազոտությունների հիման վրա արգելոց-թանգարանների հոգևոր և կուրթական զարգացման ողջ ներուժի բացահայտում և կիրառում:

**THE CONCEPTUAL SETTINGS FOR DEVELOPMENT SYSTEM OF THE  
HISTORICAL-CULTURAL MUSEUM-RESERVES AND RESERVATIONS IN  
THE REPUBLIC OF ARMENIA**

**Poghosyan V.** (Ministry of Culture of the Republic of Armenia, "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations"  
Non-Commercial State Organization, Armenia)



## «ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՂՎՈՒՑԹՅՈՒՆ

Մարգարյան Գ. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
gagsar@mail.ru

*Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, հուշարձան, պատմություն, պահպանություն, օրենսդրական ակտ, վերականգնում:*

Մարդու կողմից ստեղծված պատմության և մշակույթի արժեքների «հուշարձան» ընդհանրացնող անվանումը նորօրյա երևույթ է Պատմական սկզբնաղբյուրներում դրանք հիշված են իրենց բուն գործարձանական նշանակությունը բնութագրող անվանումներով՝ ամրոց, բերդ, եկեղեցի, վանք, մատուռ, գավիթ կամ ժամատուն, տապանաքար, գերեզմանոց, ձիթհան, ջրաղաց և այլն: Միջնադարի հայ իրականության մեջ օգտագործվի են եղել նաև առավել ընդհանրացնող անվանումներ, որոնցից հաճախադեպ է «արձան» բառը: Այն կիրառվել է իմաստականում փոքր չափերի քարակոթողների կապակցությամբ: Բառարաններում «արձանը» մեկնաբանված է որպես «կոթող, կանգուն քար, քարե սյուն, մահարձան, գերեզմանին կանգնեցված քար, սահմանիչ քար կամ սահմանաքար, նաև մարդու եռաչափ քանդակ, քարե կամ փայտե կոտր»: և այլն:

«Հուշարձան» հասկացության միջնադարյան համանիշ կարելի է դիտել «անրակ» բառը՝ զուգորդված վերը հիշված հոգնոր և աշխարհիկ շինությունների հետ: Մատենադարանական վկայություններում այս բառերը հաճախ օգտագործվել է ավերված, քանդված կառույցը կամ բնակավայրը վերաշինելու, վերականգնելու կապակցությամբ:

XIX դարում շրջանառության մեջ է դրվում «հնութիւնը» հասկացությունը, որը գոյատևում է մինչև XX դարի 20-ական թվականները, չնայած Ռուսաստանյան կայսրությունում, որին սերտորեն կապված էր հայ իրականությունը, արդեն XIX դարի վերջին ստանամայակներում կիրառվում էր «հուշարձան» բառը (напоминки):

XX դարի 20-ական թվականներից սկսում են օգտագործել «հուշարձան» հասկացությունը, սակայն «հնություն» բառի համակցությամբ՝ հնության հուշարձան: Այդ շրջանում մասնագիտական գրականության մեջ հնությունները կամ հուշարձանները սկսում են տարբերակել ըստ բնույթ-բնագավառների՝ պատմական, հնագիտական, ճարտարապետական, արվեստի, բույսերի: Ըստ այդմ էլ բառապաշարում ներառվեցին «պատմական հուշարձան», «հնագիտական հուշարձան», «ճարտարապետական հուշարձան» հասկացությունները:

Մեղրո առարկա բնագավառում «հնություն» բառերը օգտագործվեց մինչև 1930-ական թվականների սկիզբը, որից հետո առավել գործածելի դարձավ «պատմական հուշարձան» հասկացությունը:

Պատմության և մշակույթի հուշարձան» հասկացությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերում սկսեց կիրառվել XX դարի 70-ական թվականներից (Հայկական ՍՍՀ «Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին» (1977 թ.)). «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (1998 թ.) ՀՀ օրենքները:

Ի տարբերություն պատմության և մշակույթի հուշարձան» հասկացության հայաստանյան օրենսդրական սահմանման, այս բնագավառի միջազգային իրավական փաստաթղթերում և բազմաթիվ երկրների ազգային օրենսդրություններում օգտագործվում է «մշակութային ժառանգություն» նախադասությունը, Ֆրանսիայում՝ patrimonial, Անգլիայում՝ heritage:

Որպես իրավաբանական բնորոշում, այս արտահայտությունն առաջին անգամ օգտագործվել է 1972 թ. Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի կազմակերպության ՅՈՒՆԵՍԿՕ-ի 17-րդ նստաշրջանում (Փարիզ) ընդունված «Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիայում, որտեղ բնութագրված են «հուշարձան», «համալիր», «տեսարժան վայր» հասկացությունները:

«Պատմության և մշակույթի հուշարձան» հասկացության ճիշտ մեկնաբանման տեսանկյունից կարևորվում է դրա և «մշակութային արժեքի» բովանդակային և իրավական հարաբերակցության խնդրի պարզաբանումը:

Մինչև 1969 թ., ներառյալ հուշարձանների պահպանության մասին օրենքը, շրջանառություն մեջ էր «մշակույթի հուշարձան» բառը, իսկ 1977 թ. օրենքում այն առավել ընդգրկուն և որոշակի դարձնելու նպատակով լրացվեց՝ «պատմության և մշակույթի հուշարձան» և «մշակութային արժեք» հասկացությունների տարաբաժանմամբ: Այնուհայտ է, որ չ ոչ ոքը մշակութային արժեքները կարող են բնորոշվել որպես հուշարձան, քանի որ «հուշարձանը»

ոչ թե և ոչ այնքան մշակութային արժեք ունեցող իրի կամ կառույցի հումանիշ անվանումն է, այլ՝ իրավական կարգավիճակ, որը ենթադրում է պահպանության (իր բոլոր բաղադրիչներով) որոշակի վերաբերմունք և կանոնակարգ:

THE CONCEPT OF "SITE" AND THE QUESTION  
OF PRESERVATION IN HISTORICAL CONTEXT

Sargsyan G. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Archaeology and Ethnography, Armenia)

ԴԻԱԿԻԶՄԱՆ ԾԵՍԱԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
Մ.Թ.Ա. II-I ՀԱՅԱՐԱՄԵՅԱՎՆԵՐՈՒՄ

Տիրազյան Ն. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Հայաստան)  
astghul@hotmail.com

*Բանալի բառեր՝ թաղման ծես, միջին բրոնզ, Ուրարտու, հնագիտություն:*

Պիակիզման ծեսը ՀՀ տարածքում ի հայտ է գալիս միջին բրոնզի դարաշրջանից (Վանաձոր, Քարաշամբ, Լոռի բերդ, Արուճ և այլն), թեոդո-վանաձորյան մշակույթի թաղումներում: Դրանք բոլորն աչքի են ընկնում բարդ կառուցվածքով, շքեղ, հարուստ ու բազմազան գույքով և հաճախ անվանվում են «իշխանական» կամ «արքայական» թաղումներ: Քարաշամբի դամբարանադաշտից հայտնի է միայն մեկ դիակիզմանով թաղում, որը, ի տարբերություն նախորդների, պատկանում է կարմիրբերդյան մշակույթին և թվագրվում է մ.թ.ա. XVIII դ.: Այն մյուսներից նշանակալիորեն տարբեր է. դիակիզված հանգուցյալի մնացորդները տեղադրված են անյունասափորի մեջ, և թաղումն էլ աչքի չի ընկնում նախորդների ճոխությամբ:

ՀՀ տարածքում դիակիզմանով թաղումները կրկին ի հայտ են գալիս ուրարտական դարաշրջանում (մ.թ.ա. VIII-VII դդ.), միայն Արարատյան դաշտի տարածքից: Ի տարբերություն միջին բրոնզեդարյան թաղումների, նարատության բավական տարբեր են. մի մասը աչքի է ընկնում շատ հարուստ, մյուսները՝ միջին և աղքատ թաղման գույքով: Դրանք բոլորը թաղումներ են անյունասափորների մեջ, տարբեր տեղադրությամբ՝ ժայռի ձեռքերում, հողում, դամբարանում: Թանգարանային ֆոնդերում կան մի շարք չիրատարակված և, ցավոք, առանց ուղեկցող գույքի անյունասափորներ՝ գտնված Կարմիր բլուրից (մ.թ.ա. VII դ.):

Միջին բրոնզի դարում դիակիզման ի հայտ գալը մասնագետների կողմից բացատրվում է վաղ բրոնզի դարից հետո տեղի ունեցած էթնիկական և սոցիալական փոփոխություններով: Իսկ ուրարտական դարաշրջանում այն,

մեր կարծիքով, բնորոշ է եղել դրսից եկած էթնիկական մի փոքր խմբի, որն Արարատյան դաշտ է բերվել ուքարտական արքաների՝ բնակչության վերաբնակեցման քաղաքականության արդյունքում:

#### CREMATION RITUAL IN ARMENIA DURING II-I MILLENNIUMS B.C.

Tiratsyan N. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Archaeology and Ethnography, Armenia)

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒՍԵՆԱՐԸ ՀԻՆ ՄԵՐԶԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄԱՄԵՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈՌՈՒՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՈՐՏՈՒՄ (Մ.թ.ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿ)

Փիլիպոսյան Ա. («Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»  
ՊՈԱԿ, Հայաստան)  
piliposyan@yahoo.com

*Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհի, մշակույթ, հնագիտություն,  
ցեղ, բրոնզ, երկաթ:*

Միջին բրոնզի շրջավուրի III փուլում (մ.թ.ա. XIX/XVIII-XVI դդ.) ողջ Հին Մերձավոր Արևելքում նկատվող ռազմանահապետական հասարակությունների համախմբման և դրանց հիման վրա գորեղ ստրկատիրական պետությունների (Վաղ Ռեթական, Հին Ասուրական, Վաղ Միտաննիական և Եգիպտոսի Միջին թագավորություններ) կազմավորման գործընթացներին զուգահեռ, Հայկական լեռնաշխարհում նմանատիպ երևույթների, ենթադրվող էթնիկական տեղաշարժերի նոր ալիքի, ինչպես նաև Էկոլոգիական բնույթի փոփոխությունների (ցուրտ և խիստ եղանակի աստիճանական փոխարինումը մեղմ և տեղումներով առատ կլիմայով) շնորհիվ, դեռևս ուշկուրաքաքայան և նեոկուրաքաքայան իրողությունների (մ.թ.ա. III հազ. II կես) արդյունքում հետզհետև լրված բազմաթիվ բնակատեղիներ վերստին վերաբնակեցվում են նստակյաց կենսակերպ ունեցող և երկրագործության ու անասնապահության զուգորդված տնտեսվարմամբ զբաղվող՝ սևան-արցախյան, կարմիրբերդյան և վան-ուրմիական հնագիտական մշակույթների (և/կամ մշակութային խմբերի) կրողները հանդիսացող հասարակությունների կողմից: Ըստ դրում, վերջիններին բուս զործունեության շրջանում (մ.թ.ա. XVIII-XVI դդ.), կրանց նախորդած բեղեն-բերքաբերության և թուղթ-փանածորյան մշակույթների կիսաքոչվոր անասնապահ ցեղերը, դատելով մի շարք հնագիտական հուշարձանների ընձեռած փաստերից, ամբողջապես չեն լքել այս տարածքները կամ ուժացվել: Դրանց մի մասը, աստիճանաբար հարմարվելով նոր իրավայնամաններին, թերևս, ոչ մեծ խմբերով հաստատվել է նստակյաց կենսա-

կերպ ունեցող՝ այդ նոր մշակույթները կրողների վերաբնակեցրած կենսատարածքներում՝ պահպանելով սեփական մշակութային ասանձահատկությունների տարբերը: Մա է, թերևս, պատճառը, որ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XVII-XVI դդ. հնագիտական հուշարձաններում, ըստ որում, ն՝ քանկավայրերում (Լճաշեն, Մեծամոր, Ուզգրիկ-թեփե, Այգևան և այլն), ն՝ դամբարանադաշտերում (Հառիժ, Քեթի, Լճաշեն, Ցամաքաբերդ, Վերին Լազեր, Լեքրին Գետաշեն, Լորաբազ, Ապարան և այլն) այս ժամանակահատվածին վերաբերող հնամշակութային իրողությունները երբեմն ներկայանում են ուշերդեն-բրոնզաբերդյան, ուշթոնեդ-վանաձորյան, սևան-արցախյան, կարմիր-բերդյան և վան-ուրմիական մշակույթների (ն/կամ մշակութային խմբերին) հատուկ արտեֆակտերի կամ դրանց վերապորտկային տարբերակների համատեղ դրսևորմամբ: Մա թույլ է սալիչ էեքաղըր, որ մ.թ.ա. II հազ. II քառորդից Հայկական լեռնաշխարհում սկսվել են տեղի քազմաթիվ ու քազմակազուծաձև (նստակյազ, կիսաքոչվոր, քոչվոր) ցեղերի կենսակերպերի փազ առ փազ մերձեցման, վերջիններիս բնորոշ սոցիալ-տնտեսական ասանձահատկությունների աստիճանական համահարթեցման, ինչպես նաև տարբեր էթնիկական խմբերի հեռուցեոս միախառնման և վերջիններիս բնորոշ մշակույթների (ն/կամ մշակութային խմբերի) առավել խոր, կայուն ու հեռանկարային դրսևորումների սերտաձման երևույթները: Իրավիճակ, որն, իր տեղայնական հիմնավոր դրդապատճառներով հանդերձ, ինտեգրված էր համաժամանակյա հիմնադրարևելյան ընդհանուր պատամաշակութային գործընթացներին: Մրաքը, արդյունքում, հանգեցրին մ.թ.ա. XV-XVI դդ. սահմանաբաժանից նշմարվող և մ.թ.ա. XV-XIV դդ. Հայկական լեռնաշխարհի համար արդևն համընդհանուր դարձած «Լճաշեն-մեծամորյան» կամ «Էթիուսյան» պայմանական անվանումը կրող՝ մշակույթի վերջնական ձևավորմանը:

Հայկական լեռնաշխարհի և Հին Մերձավոր Արևելքի մյուս շրջանների միջև առկա կապերի ու փոխազդեցությունների առավել ցայտուն պատկերը ներկայացնում են մ.թ.ա. XV-IX դդ. (ուշ բրոնզի – վաղ երկաթի շրջափուլեր) հնագիտական և գրավոր սկզբնաղբյուրները: Այդ փուլում, տարածաշրջանում դրսևորված ռազմաքաղաքական նոր իրողությունների (Լոր Խեթական թագավորություն, Եգիպտոսի Լոր թագավորություն, Միտաննի, Կասսիտական Բաբելոն, Միջին և Լոր Ասուրական թագավորություններ) գուզահեո (թերևս, նաև դրանց անմիջական ազդեցության տակ), Հայկական լեռնաշխարհում նս նկատվում են վաղ պետական կազմավորումների և ցեղային համադաշնությունների (Ալզի, Թեզարամա, Հայասա, Լաիրի, Կաղմուլի, Արմե-Շուրքիա, Ուրուստրի, գուցեն՝ Էթիուսի) ձևավորումներ: Ըստ

որում, արդևն մ.թ.ա. XV-XIII դդ. դրանց մի մասը ներգրավված էր հիմնադրարևելյան ռազմաքաղաքական (խեթա-եգիպտական հակամարտություն), առևտրատնտեսական (անագի, ոսկու, արծաթի, լազուրիտի, դիորիտի, ծովախեցքների տարանցիկ միջազգային առևտուր) և սոցիալ-մշակութային գործընթացների ոլորտը և, դասելով տեղում հայտնաբերված որոշ արտեֆակտերի, (եգիպտական, միտաննիական և կասսիտական կնիքներ, գորտակերպ կախիկներ, սպառազինության նմուշներ), ինչպես նաև համաժամանակյա գրավոր սկզբնաղբյուրների տեքստերից, հակվել էր Եգիպտոս-Միտաննի-Կասսիտական Բաբելոն եռադաշնի կողմը և պայքար էր մղում Լոր Խեթական թագավորության ու նրա դաշնակիցների դեմ: Ամեն դեպքում, ըստ հնագիտական տվյալների, Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազ. միջնամասում ձևավորված և արդևն ընդհանուր սոցիալ-մշակութային իրողությունների կրողներ հանդիսացող վաղպետական կազմավորումները, իրենց զարգացման շարունակությունը (նկատելի վերելքներով ու վայրէջքներով հանդերձ) պահպանեցին մինչև մ.թ.ա. IX դ. վերջը, այսինքն՝ մինչև այն ժամանակահատվածը, երբ Հայկական լեռնաշխարհի ամբողջապես ներգավակցե Վանի թագավորության (Ուրարտուի) կազմում:

#### THE ARMENIAN HIGHLAND IN THE SPHERE OF THE ANCIENT NEAR EASTERN HISTORICAL-CULTURAL INTERCONNECTIONS (II MILL. B.C.)

**Pilibosyan A.** (Ministry of Culture of the Republic of Armenia, "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations" Non-Commercial State Organization, Armenia)

## ОТКРЫТИЕ ДРЕВНЕЙШИХ РАННЕПАЛЕОЛИТИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ НА СЕВЕРЕ АРМЯНСКОГО НАГОРЬЯ (АРМЕНИЯ)

Любин В., Беляева Е. (Институт истории материальной культуры РАН, РФ)  
biface@mail.ru

*Ключевые слова:* памятник, палеолит, Армянское нагорье, раннеашельские изделия.

Северо-восточная часть Армянского нагорья охватывает юг Кавказского перешейка и включает территории Армении и южной Грузии. Именно в этой вулканической области находится подавляющее большинство известных на Кавказе памятников раннего палеолита, концентрирующихся преимущественно на территории Армении. До недавних пор ранний палеолит этой области был представлен лишь поверхностными местонахождениями с ручными рубилами позднеашельского типа (не древнее 500-400 тыс. л. н.). В конце прошлого века, открытая в южной Грузии одованская стоянка Дманиси (около 1,8 млн. л. н.) впервые засвидетельствовала намного более раннее заселение севера Армянского нагорья.

Новые исследования раннего палеолита данной области были начаты в 2003 г. совместной Армано-Российской экспедицией, руководимой С. А. Алаликом. На севере Армении (Лорийское плато) были обнаружены более 20 разновозрастных ашельских памятников, расположенных, главным образом, в предгорьях вулканического Джавахетского хребта. Среди них преобладают поверхностные местонахождения (Благодарное, Даштадем, Норамут и др.), на которых собрано свыше тысячи ашельских изделий из местного гналодашита, включая около 360 ручных рубил. Основная часть коллекций представлена левалуазскими продуктами расщепления и плоскими рубилами-бифасами сердцевидных или овальных очертаний, которые часто изготовлены из крупных отщепов и включают предметы в разных стадиях обработки. Подобные изделия были обнаружены также в виде стратифицированного комплекса на памятнике Даштадем 3. Этот характерный позднеашельский

материал находит аналогию в коллекциях обсидиановых изделий, собранных на ряде памятников Центральной Армении (Джрабер, Сатани-Дар и др.). Помимо позднеашельских находок, на лорийских местонахождениях были собраны также единичные изделия с более архаичными технико-морфологическими чертами, что предполагало наличие здесь более ранних индустрий.

Данное предположение подтвердилось в ходе дальнейших исследований, когда удалось обнаружить три стратифицированных памятника (Мурадово, Карахач и Куртан), впервые доставившие среднеашельские и раннеашельские индустрии. Это открытие стало серьезным прорывом в исследованиях раннего палеолита не только данного района, но и всего Армянского нагорья, а также сопредельных областей Евразии. Наибольший интерес представляет Карахач, где раннеашельские изделия (чопперы, пики, грубые бифасы и др.), сделанные из иных разновидностей дашита, а также андезита и эливинового долерита, обнаружены в слое вулканического пепла и в нижележащих пролювиальных отложениях. Датировки пепла уран-свинцовым методом лежат в диапазоне 1,7-1,9 млн. л. н., что должно соответствовать и возрасту каменных изделий. Сходная с изделиями из Карахача раннеашельская индустрия обнаружена также в нижних уровнях близлежащего памятника Мурадово. В самых верхах Мурадово представлен упомянутый позднеашельский материал, а в средней части толщи – среднеашельская индустрия. Ранне- и среднеашельские комплексы выявлены также на памятнике Куртан, расположенном в юго-восточной части Лорийского плато. По совокупности данных (абсолютные датировки подстилающих пеплов, палеомагнитные данные, возрастной диапазон найденных ранее зубов носорога) можно предполагать, что возраст культурных отложений Куртана должен составлять около 1 млн. л.

Открытые в северной Армении памятники содержат следы древнейших миграций ранних людей за пределы Африки. Раннеашельские материалы Карахача по возрасту близки древнейшим раннеашельским индустриям Восточной Африки (около 1,5-1,8 млн. л.н.) и даже превосходят последние. Это предполагает, что раннеашельские индустрии распространились вплоть до Кавказа почти одновременно с их появлением в Африке, хотя не исключен и сценарий независимого развития ашеля на этой территории. Карахачские находки также сопоставимы по возрасту с одованской индустрией Дманиси (около 1,8 млн. л.н.) и с недавно открытыми на Северном Кавказе (Тамань, Дагестан) индустриями, которые определены как одован и по фаунистическим и иным данным отнесены к диапазону 2,0-1,2 млн. л.н. Это допускает,

что в раннем плейстоцене на Кавказе могли сосуществовать как олованские, так и раннеашельские индустрии. Результаты исследований Армяно-Российской экспедиции на севере Армянского нагорья проливают новый свет на древнейшую предисторию дашго региона, а также заставляют пересмотреть прежние представления о более позднем распространении носителей ашельских индустрий в Евразии.

#### THE DISCOVERY OF ANCIENT EARLY PALEOLITHIC MONUMENTS IN THE NORTH OF THE ARMENIAN HIGHLAND (ARMENIA)

Iyubin V., Belyaeva Y. (The Institute for the History of Material Culture of the Russian Academy of Sciences, Russia)

#### ЕРВАНДАШАТ И ЕГО ОКРЕСТНОСТИ, КАК ИСТОРИКО-ПРИРОДНЫЙ ЗАПОВЕДНИК

Тер-Мартirosов Ф. (Институт археологии и этнографии НАН РА, ЕГУ, Армения)  
felixter1@yandex.ru

*Ключевые слова: Ервандашат, памятники культуры Армении, древняя крепость, архитектурные комплексы, историко-природный заповедник.*

Ервандашат являлся одним из древних центров политической власти Армении, упоминаемым М. Хоренаци. Здесь около «Մանկա Ծննդոց - Леса Рождения», с 2005 г. археологическими раскопками раскрывается охотничий дворец, часть парадиза царя Ерванда. Здание построено в ахеменидской традиции с расположением в центральной части большой залы, окруженной более узкими комнатами. Дворец имел в центральной части здания второй этаж, сооруженный из дерева и сырцового кирпича. Перекрытие боковых помещений первого этажа было плоское или с небольшим скатом. Перекрытие второго этажа было двускатное с использованием черепиц. Интерес представляет сочетание в одном строении традиций востока и запада в планировке и конструкции здания. На втором этапе жизни памятника он был превращен царем Аргашесом в крепость. В крепости открыта большая карасная зала размерами 24 м x 12 м с 36 карасами. Открыты также последующие перестройки крепости в период преемников царя Аргашеса и в период доминирования парфян в Армении. Вероятно, в I в. до н.э. жизнь здесь замирает. Обнаруженный материал позволяет говорить о широких контактах от Пергама на западе до Ирана на востоке и позволяет утверждать, что в западных регионах Армении сохранились урартские культурные традиции. Исследования в Ервандашате позволяют также утверждать, что в IV - начале II вв. до н.э. в Великой Армении сохранились древневосточный характер и облик административных центров.

На территориях, расположенных рядом селений Ервандашат и Багаран имеется большое количество памятников культуры Армении различных эпох, среди которых есть малоизвестные шедевры древней культуры Армении. Очень интересна церковь св. Шушаник, напротив исторического селе-

ния Багаран, входившая в средние века в состав христианских храмов Багарана. По своей архитектуре церковь является уникальной среди памятников архитектуры на территории республики Армения. Неподдалеку расположена древняя крепость, в которой прослеживаются развалины оборонительных стен, церкви и караван-сарая. Интересно для обозрения церковь у с. Арагац. Большой интерес представляют такие памятники, как укрепленное поселение Шахариут и у местечка Каракала начало водного канала, сооруженного еще урартами. Особо отмечу уникальную живописность местного ландшафта.

Кроме памятников, на армянской стороне на противоположном берегу р. Ахурян расположены архитектурные комплексы древнеармянской культуры, которые доступны обзору даже невооруженным глазом. Особый интерес представляет рассмотрение Мренского собора (Մրենի մայր տաճար), сооруженного в 639 г., и комплекса строений древнего Багарана. Прямо напротив дворца царя Ерванда, возвышается на скале средневековый замок. Все эти памятники находятся на противоположном берегу р. Ахурян и доступны для обозрения.

Длительный период закрытости региона для посещения погранзоны СССР обусловил сравнительно хорошую сохранность древних памятников. Наиболее целесообразным представляется создание охраняемого законом историко-природного заповедника. Сегодня также сохранились большие трудности для посещения памятников в погранзоне. Но напомним, что огромный армянский исторический памятник - город Ани, также находится в погранзоне. При этом сто ежедневно посещают сотни туристов, принося ощутимый доход казне Турции. Если Армения желает стать страной привлекательной для туристов, то она должна включить в число посещаемых памятников и памятники, находящиеся в погранзоне, которые представляют большой интерес для иностранных туристов, особенно для армян диаспоры. Важность организации туризма в данном регионе неоспорима. Несмотря на живописную местность и плодородные земли, уровень жизни населения сел ниже, чем в других частях Араратской долины. Оторванность сел от городов служит причиной начинающегося оттока молодежи в Ереван. Развитие этого процесса приведет к опустошению пограничной зоны Армении в этом месте, что опасно для будущего страны.

#### ERVANDASHAT AND ITS ENVIRONS, AS A HISTORICAL-NATURAL RESERVE

Ter-Martirosov F. (Yerevan State University, National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)

ԱՐԿԵՍ,  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ART,  
ARCHITECTURE

## ՀԱՅ ՔԱՆՆԱԿԱԳՈՐԾՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աղասյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)  
instart@sci.am

*Բանալի բառեր՝ արևմտահայ կերպարվեստ, Օսմանյան կայսրություն, քանդակագործություն, հուշարձան, դիմաքանդակ, դեկորատիվ քանդակ:*

Նոր շրջանի արևմտահայ կերպարվեստը, ի տարբերություն արևելահայ կերպարվեստի, բավարար չափով ուսումնասիրված չէ. թեև վերջերս Ստամբուլում թուրքերեն և անգլերեն լույս տեսած՝ Գարո Թյուրքմանի՝ 1600-1923 թթ. Օսմանյան կայսրության մեջ ծնված հայ վարպետներին ներկայացնող երկ-հատոր պատկերագրի շնորհիվ հետաքվոր դարձավ բնույթայնեւ մեր գիտելիքները ավելի շրջանի, մասնավորապես XIX դարի արևմտահայ կերպարվեստի մասին:

Արևելահայ երկ կերպարվեստի համեմատությամբ, արևմտահայ կերպարվեստում այդ ժամանակ տեղի ունեցած բարեփոխումներն ընթացել են ավելի դանդաղ, չեն կրել հույնքան խոր, արմատական բնույթ: Միայն այսպես կոչված «թանգիմաթի» քաղաքական և տեստական ճգնաժամ ապրող Օսմանյան Թուրքիային եվրոպական երկրների պարտադրած բարենորոգման շրջանում, երբ որոշակի աշխուժանում է արևմտահայ բնակչության ոչ միայն հասարակական, այլև մշակութային կյանքը, աստիճանաբար գիտակցվում է կերպարվեստի՝ նկարչության ու քանդակագործության ինչպես լուսավորական, այնպես էլ գեղագիտական նշանակությունը:

Արևմտահայ քանդակագործության հիմնադիրներից էր Շրվանդ Ոսկանը (1855-1914), որը նաև թուրք առաջին արձանագործներ Իսսան Օզտոյի, Իսա Բեհգասի, Մահի Թումրուկի և այլոց ուսուցիչն էր: Կ. Պոլսում, ապա Վենետիկում նախնական կրթություն ստանալուց հետո նա հիվեղ տարի սովորել է Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում, կատարելագործվել Փարիզում: 1881-ին վերադառնալով Կ. Պոլիս՝ նշանակվել է Հնագիտության թանգարանի փորձագետ, իսկ 1883-ից ի վեր վարել է Օսմանյան Գեղարվեստից վարժարանի



ներքին տեսչի ու փոխտնօրենի պաշտոնները: Թեպետ մանկավարժական աշխատանքը կրակից շատ ժամանակ է խլել, այնուհանդերձ, Ե. Ոսկանը գեղարվեստական մեծ ծառանգություն է թողել: Նրա լավագույն աշխատանքներից են եղելը՝ Տիգրան Ոսկանի, ֆրանսիացի հասարակական գործիչ, լրագրող Պիեռ Քիյատի, կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանի, Կ. Պոլսի Հնագիտության թանգարանի և Գեղարվեստից վարժարանի տնօրեն Օսման Համդի բեյի դիմաքանդակներն ու կիսանդրիները, ինչպես նաև «Ջեյրեկի պարո» և «Ջեյրեկի կիևը» կավե փորքաչափ արձանները:

Նույն տարիներին է հանդես եկել արևմտահայ քանդակագործ, ծնունդով մշեցի Հայկ Բաղիկյանը (1876-1950): 1891-ին նա մեկնել է ԱՄՆ, որտեղ է անցել է նրա ստեղծագործական ճեղմավոր կյանքը: Հ. Բաղիկյանի առավել եշանակալից աշխատանքը Սան Ֆրանցիսկոյի հրապարակներից մեկում տեղադրված Աբրահամ Լիբերտի հուշարձանն է (1926), որը բարձր է գնահատվել քննադատների կողմից:

Հիմնականում ԱՄՆ-ում է աշխատել նաև Ջոյունիայում ծնված Հակոբ Փափագյանը (1878-1957): Վենետիկի և Հռոմի Գեղարվեստի ակադեմիաներում կրթվելուց հետո նա վերադարձել է հայրենիք, որտեղ բազմաթիվ դիմաքանդակներ և թեմատիկ քանդակներ է կերտել: 1922-ին հայերի հերթական ջարդերից մի կերպ փրկված արվեստագետը Ջոյունիայում է թողել իր ստեղծագործություններից շատերն ու հասել Լոու Յորք: Հետագայում նա այստեղ արվեստանոց է բացել և բավական լայն ճանաչում գտել:

Արևմտահայ այլ քանդակագործների վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են: Ջոյունիայում ծնված, Խոսալիայում և Փարիզի գեղարվեստական ուսումնարանում սովորած Հակոբ Արապյանի (1867-1910-ից հետո) մասին գիտենք, որ 1893-ին կամ 1894-ին նա հրավիրվել է Թիֆլիս՝ տեղի Խոջիվանքի գերեզմանատանը Րաֆֆու մահարձանը կանգնեցնելու համար: Մակայն ինչ-ինչ պատճառներով շուտով հրաժարվել է պատվերից և հետ վերադարձել:

Մեծ հույսեր են կապել Հակոբ Փափագյանի աշակերտ՝ Ջոյունիայում ծնված, 1914-ին օսմանյան բանակ զորակոչված և Իրաքի անապատներում զոհված երիտասարդ արձանագործ Ջարեն Բեյուքյանի (1890-1917) հետ: Հայաստանի ազգային պատկերասրահում է պահվում նրա պորտրետային աշխատանքներից մեկը՝ նկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմաքանդակը:

Վերոհիշյալ քանդակագործներից բացի՝ հայտնի են նաև Տիրոսի Կիվմիշյանի, Ավետիս Անպարաճյանի, Արմենակ Գոլանճյանի, Հակոբ Պեղրճյանի, Հրատ Բեկեթի (Բեկեթյան, 1876-1927-ից հետո), Գևորգ Գափամաճյանի (1880-1906) և այլոց անունները: Ինչ վերաբերում է Խարբերդում ծնված Նշան

Յուրին (Թուրունճյան, 1888-1967) կամ Կ.Պոլսի Գեղարվեստից վարժարանում ուսանած Արա Սարգսյանին (1902-1969), ապա երանց արվեստը ձևափոխել ու հասունացել է ավելի ուշ, մի դեպքում՝ ֆրանսիական և ամերիկյան, իսկ մյուս դեպքում՝ սովետահայ իրականության պայմաններում:

ARMENIAN SCULPTORS IN THE OTTOMAN EMPIRE  
Aghasyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Arts, Armenia)

## ՀԱՅ ՀՆԱՏԻՊԻ ԳՐՔԻ ՄԱՆՐԱՎԱՐՄԱՆ ՄԻ ԵՏԱԿԻ ՕՐԻՆԱԿ

Այվազյան Ա. (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)  
argamaivazian@aol.com

*Բանալի բառեր՝ ծաղկող, մատենագիտություն, գրչագիր, տերունական, լուսատու տառեր, գրքագիտություն:*

Գիտածոդոլի ուշադրությանը ներկայացվող Ավետարանը տպագրվել է Վենետիկում 1680 թ., որը, բնականաբար, մատենագրված է ինչպես 1880-1967 թթ. տարբեր հեղինակների (Գ. Զարբախանյան, Ա. Ղազիկյան, Թեոդիկ, Ա. Երիցյան, Ա. Գալաճյան) կողմից հայ հետախույզ գրքերի կազմած ցանկերում, այնպես էլ ընդգրկուն կարգով նկարագրված է Երեսնամ 1988 թ. լույս տեսած 1512-1800 թթ. հրատարակված գրքերի ամենամտրոջական մատենագիտությունում: Ըստ վերջինիս տեղեկատվության՝ այս հրատարակությունից առայժմ հայտնի է 21 օրինակ, որից 15-ը Հայաստանում է, 6-ը՝ այլուր (Թրիլիսի՝ 2, Բելյուսթ՝ 1, Երուսաղեմ՝ 1, Վենետիկ՝ 1, Իրան՝ 1):

Ձեկնագման մեջ ներկայացվող այս օրինակի եզակիությունը հայոց ձեռագիր մատյանների նման ծաղկող-մանրանկարչի կողմից նրա մանրանկարված լինելու փաստն է: Այս հանգամանքն ակնհայտ ապացույց է այն իրողության, որ, հայ հետախույզ գրքի տպարանական էղանակով տպագրելու գործընթացի առկայության պայմաններում, հայոց ձեռագիր մատյաններ ստեղծելու-գրչագրելու գործը տարի առ տարի սկսել է զիջել տպագիր գրքին Այնտամենայնիվ, հայկական մանրանկարչական գրչարվեստի սկզբունքները մինչև XVIII դ. վերջերը, առանձին ղեպերում՝ մինչև XIX դ. 20-ական թվականները, ուղեկցելով գրասպուխոսանը, տեղ են գտել նաև տպագրված գրքերի էջերում ու նրանց ձևավորման արվեստում:

1680 թ. Ավետարանի այս տպագիր օրինակը գրեթե գրչագիր մատյանների բնորոշ սկզբունքներով ու եղանակով մանրանկարված է Այվազե, այս

օրինակում մինչ գրքի անվանաթերթը լրացուցիչ տեղադրվել է 12 շիամաբակված թերթ՝ 24 էջ, որոնցից 22 էջերի մակերեսների ծավալի 80-90 տոկոսի չափով կատարված են տերունական 12 (Ավետում, Օնուոյ, Ռոնովա, Մկրտություն, Ավիրաբերում, Քրիստոսի մուտքը Երուսաղեմ և այլն) և 10 ուրիշ մանրանկարներ: Վերջիններս 3 տեղից թեկնարկով միացված են գրքին (պրակամամուկներին): Գրքի 550 (532+18 շիամաբակված տպագիր էջերից, մանրանկարիչ ծաղկողը 6-րդ էջից սկսած մանրանկարել է 280-ից ավելի էջեր, 91 լուսատու տառերից գունավորել է 53-ը, 12 վերջնագրերից՝ 2-ը:

Գրքի լուսանցքներում ծաղկողը մանրանկարել է 550-ից ավելի զարդեր (էջերում 1-2 հատ), որոնցից ավելի քան 250-ը բուսազարդեր են, 45-ը՝ մարդկային, մնացածը՝ այլ պատկերներ ու զարդարումներ:

Ցավոք, անվանաթերթից հետո կատարված ծաղկազարդումների մի մասը (մոտ 230-ը) խոնավությունից, թղթի սնկային հիվանդությունից, տարբեր՝ մինչև անտեսանելի աստիճանի գունաթափվել են:

1680 թ. տպագիր Ավետարանը 1770-ական թվականներին Ջաբարիա ծաղկողի՝ Բավական հմտավարժորեն և գունաշարի հիմնական գույներով ու նրանց նրբերանգներով, ուրախ տրամադրությամբ կատարած մանրանկարների և ծաղկազարդումների շնորհիվ նախ և առաջ ձեռագիր գրքի տպավորություն ունի, և ինքնին հետաքրքրական փաստ է հայ հետախույզ գրչագիտության պատմության մեջ:

Ձեկնուցմանը զուգահեռ ցուցադրվում են Ավետարանի մանրանկարված էջերի լուսապատկերները, ներկայացվում են անվա հիշատակարանները:

### A UNIQUE EXAMPLE OF MINIATURE – PAINTING OF OLD ARMENIAN BOOK

Ayvazyan A. (Ministry of Culture of the Republic of Armenia, "Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations" Non-Commercial State Organization, Armenia)

## ՀԱՅ ԵՐԱՄԻՇՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԹՈՒՐԿԱԿԱՆ ԵՐԱՄՇՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ասատրյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)  
instart@sci.am

*Բանալի բառեր՝ թուրքական երաժշտություն, թուրքական առաջին օպերան, հայ երաժշտներ, հայկական նոր ձայնագրություն, երաժշտական առաջին պարբերաբեր, թուրքական դաշնամուրային երաժշտություն:*

Ոչ միայն հայ հոգևոր երաժշտության գիտատ, այլև թուրքական, արաբական և հունական երաժշտությանը կատարելապես տիրապետող **Համբարձում Լիսնեճյանի** (1768-1839) ստեղծած Հայկական նոր ձայնագրությունը (1815) լայնորեն կիրառել են թուրք երաժիշտները:

Արիստակես Հովհաննիսյանն ու **Գաբրիէլ Երանյանը** Կ.Պոլսում հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն և հունարեն հրատարակել են **«Քնար արևելյան»** (1857-1858) երաժշտական ամսաթերթը՝ եվրոպական նոտագրությամբ տպագրելով դաշնամուրի, ջութակի և այլ նվագարանների համար գրված ստեղծագործությունների նոտաները՝ նպատակ ունենալով քաղաքակիրթ աշխարհին ներկայացնել կրանց դեռևս անձանթ արևելյան երաժշտությունը: Մա ուներ պատմական կարևոր ուշադրություն, փաստորեն, Թուրքիայում առաջին անգամ հրատարակված երաժշտական պարբերաբերն էր, որը դրեց եվրոպական նոտագրության տարածման սկիզբը Թուրքիայում:

**Տիգրան Չովխաճյանը** (1837-1898) արևելյան երաժիշտներից առաջինն էր, ով, ստանալով մասնագիտական երաժշտական կրթություն և կատարելապես տիրապետելով եվրոպական կոմպոզիտորական տեխնիկային, փորձեց գտնել Արևելքի և Արևմուտքի երաժշտական մշակույթների մերձեցման ուղիները, արևելյան երաժշտության սեփականությունը դարձրեց օպերային, սիմֆոնիկ ու կամերային-գործիքային երաժշտության բարդ ժանրերը: Ըստ անտիկ ավանդության՝ Հուներոսի ծննդավայրը համարվելու պատվի համար վիճել են Հին Հունաստանի յոթ քաղաքներ: Եթե վեճ լիներ Տ. Չովխաճյանի համար, ապա պիտի վիճելի ոչ թե միևնույն երկրի քաղաքները, այլ՝ երկու տարբեր, հարևան պետություններ՝ Հայաստանի և Թուրքիան: Բայց վեճ չի հարուցում Տ. Չովխաճյանը՝ խորհրդանիշն այն բացառիկ երևույթի, երբ միևնույն անձը երկու ժողովուրդների պատմության ու կյանքի մեջ է մտնում

մրամամանակ թե՛ իբրև երաժշտական թատրոնի հիմնադիր, թե՛ իբրև եվրոպական կամերային-գործիքային ու սիմֆոնիկ երաժշտության մի շարք կարևոր ժանրերի սկզբնավորող: Դեռևս կյանքի օրոք Չովխաճյանը դարձավ համարներեյան երևույթ: Եւ ոչ միայն թուրքական, այլև առաստաղակ մերձավորարևելյան երաժշտական թատրոնի հիմնադիրն է, ում գործունեությունը մեծ նշանակություն ունեցավ թուրքական երաժշտության հետագա զարգացման համար: Տ. Չովխաճյանը թուրքական օպերետի հիմնադիրն է. «Լերլեքիջի Հոր-հոր աղան» համարվում է թուրքական առաջին օպերետը, որի հաջողությունից ոգևորված՝ Անիզ Միդհասն ու Դետրի բերը գրում և կրկն օպերետները՝ «Ջեյրեկլեյի», «Կարդագույն աղբյուր», «Ճեկվի», «Ջիպա» և այլն: Ի տարբերություն «Լերլեքիջիի», որը նախատեսված էր եվրոպական սիմֆոնիկ նվագախմբի կատարման համար, թուրք երաժիշտների գործերը գրված էին արևելյան նվագախմբի համար (ուր, լավութա, ջութակ, դափ, թմբուկ և նանտորիանիկ նվագարաններ): Տ. Չովխաճյանն է թուրքական դաշնամուրային անդրոնիկ օպս-նրի հեղինակը կրա «Fantaisies orientales sur des motifs turc» (N 1, N 2) դրեցին թուրքական պրոֆեսիոնալ գործիքային՝ դաշնամուրային երաժշտության հիմքերը:

Թուրքիայում մշտական օպերետային թատրոն ստեղծվեց Անկարայում (1928), իսկ մշտական օպերային թատրոնները՝ ավելի ուշ. Անկարայի կոնսերվատորիայի օպերային ստուդիայի հիման վրա 1949-ին հիմնադրվեց Անկարայի պետական օպերային թատրոնը, իսկ 1960-ին՝ Ստամբուլի քաղաքային օպերան (հետագայում Ստամբուլի օպերայի և բալետի պետական թատրոն): Մինչդեռ 1870-ականներին Տ. Չովխաճյանի և Տիգրան Գալեճյանի ղեկավարությամբ Կ. Պոլսում ստեղծվեց Օսմանյան օպերային թատերախումբը՝ ողջ Մերձավոր Արևելքում անորանիկ երաժշտական թատերախումբը, որի ավանդույթները հետագայում շարունակեց Մերույե Պենկյանը: Իսկ **Արշակ Պենկյանը** 1908-ին Կ. Պոլսում հիմնադրեց Օսմանյան երաժշտական թատրոնը՝ 40 հոգուց բաղկացած օպերետային խումբը:

Թուրքիայի Հանրապետության պետական հիմնը՝ Անկարայի քաղաքին է, որի տեքստը 1922-ին գրել է Մեհմետ Ակիֆ Էրսույը, իսկ երաժշտությունը՝ Օսման Ջեբի Ռնգերը՝ 1924-ին: Հիմնի գործիքավորումը կատարել է փիլոսոֆապ կոմպոզիտորների նախապետ **Էզգար Մանասը**: Զարմանալիորեն հիմնի երաժշտական կտավում ակնհայտ են տիպիկ չովխաճյանական դարձվածքներ:

## CONTRIBUTION OF ARMENIAN MUSICIANS TO THE DEVELOPMENT OF TURKISH MUSIC

Asatryan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts, Armenia)

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՒՆԵՄԱՐՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՆԱԽԱՏԻՄԵՐԻ ԶՈՒԳԱՆԵՆՈՒՄԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ՎԵՐԼՈՒՄԻՑՈՒՅԸ**

**Գրիգորյան Ա.** (Ճարտարապետության ազգային  
թանգարան-ինստիտուտ, Հայաստան)  
armarchmuseum@gmail.com

*Բանալի բաներ՝ Հայկական լեռնաշխարհի, ճարտարապետական նախա-  
տիպ, սրահ, Լեման-Հաուսոս, Մեզարոն, Մուժձիթ:*

Հայկական լեռնաշխարհի ճարտարապետական հորինվածքների նախա-  
տիպերի և դրանց զուգահեռների համեմատական վերլուծությունը ինքնին  
կարևոր է պարզաբանելու համար բնակելի և պաշտամունքային կառույց-  
ների նախատիպերի ծագման, զարգացման և տարածման պատմությունը,  
առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Հայկական լեռնաշխարհի վերաբերող պատմահնագիտական, գիտահե-  
տազոտական հարցատու կուրթերը թույլ են տալիս հետևել, որ բնակելի և  
պաշտամունքային կառույցների հորինվածքային նախատիպերը, բնական և  
ձեռակերտ պարզ հորինվածքներին շարունակաբար զարգանալով, տարած-  
վել են նաև հարևան երկրներ՝ պահպանելով նախնական շատ ձևատեսք  
տարրեր և օրինաչափություններ, զարգացել են որ միջավայրում՝ ենթա-  
պահանջով: Այսպես, բնական ապաստարանից մինչև ձեռակերտ միա-  
բջիջ, ապա բազամբյջ և համալիր-բնակելի տները տեսակներից առաջացել  
են փոդոցների և նրբանցների շուրջ համախմբված բնակելի թաղամասեր,  
վերջիններիս «կրկնությունը»՝ բնակելի միջավայրի ավելի ընդարձակ միա-  
կուրներ՝ գյուղ, ավան, քաղաք-համալիրներ: Մակայն այս համընդհանուր  
մտնեցմանը զուգընթաց առաջացել են բլուր (արհեստական) բնակավայրեր՝  
կազմված «շենգավիթյան» (Ք. ա. 5-3-րդ հազարամյակներ) կլոր հատակա-  
գծով բնակարաններով: Բնակելի կլոր և ապա քառանկյուն հատակագծով  
բնակելի տներն ունեցել են մեկ ընդհանրություն. դրանց հատակագծային  
կենտրոնում տեղադրված են եղել օջախ-կրակատեղիները, և առաստաղում  
ունեցել են երդիկներ: Այս տիպերն Արարատյան թագավորության շրջանում

վերանշինվել են կանոնավոր ուղղանկյուն և քառակուսի հատակագծով բնակելի  
տան տիպերի՝ պահպանելով արդեն նկարագրված ընդհանրությունները:  
Ավելին, առաջացել են մեկ, երկու, չորս սյունանի հորինվածքներ՝ մուտքի  
մասում ունենալով սրահ-շվար-երեսարաններ: Այս տիպերը, առաջնալավով  
Հայկական լեռնաշխարհում, տարածվել են նաև հարևան երկրներում:  
Լեման-Հաուսոսի կարծիքով, templum in antis (անտավոր-երեսարանով տիպը –  
Ա.Ն.) իր մյուս Բաղկացուցիչ տարրերով փոքրասիական ծագում ունի և ոչ թե  
հույներից է անցել, այլ, ընդհակառակը, փոքրասիացիներից է անցել հույնե-  
րին: Լեման-Հաուսոսը համոզված է, որ այս տիպի նախատիպերը կառուցել  
են հայերը և արմենները: Հետաքրքրական է, որ Մեզարոն (μεζαρων) – «Նժ  
տուն» – գլխատուն – երդիկով տան տիպը Հունիսոսը կոչում է նաև μελαροս –  
«սև տուն», մի տուն, որ ցույց է տալիս նրա որմերի սևացած լինել օջախի  
ծխից (ինչպես դարադամում, գլխատունում, դարբասում, երդոսնի սալախում  
և այլն – Ա.Ն.): Այստեղ էլ Մեզարոնի առջևի մասն էր կազմում պրոդոմոսը  
(προδομος) – «նախատունը», հայկական տարբերակում՝ սրահ-շվար – երես-  
բայը: Նույն տերմինը, սովորաբար ներկայումս հոմանիսական (հատիկական)  
բնակարանում, որտեղ atrium նշանակում է «սև սենյակ»: Տիպաբանական  
նմանություններն, ինչ խոսք, ակնհայտ են, իսկ նախատիպերի ելակետը՝  
կրահելի:

Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակարանն իր էական գծերով մեզ  
տեսում է ոչ միայն դեպի բրոնզեդարյան և ապա նեոլիթյան մշակույթները,  
այլ՝ դեպի այն քաղաքնալիները, այնուրև ն սուրբերը, որոնց մեջ մի ժամանակ  
բնակում էր պալեոլիթի մարդը: Նման իրավիճակ է նկատվում նաև պաշ-  
տամունքային կառույցների նախատիպերում: Անկնայտ է «բլուր-տաճար»  
հորինվածքների և միջազուտյան զիկկուրատների նմանությունը: Պատա-  
հական չէր, որ հայ վարպետ-շինարարներ էին հրավիրվում Միջագետք՝  
տաճարներ կառուցելու համար: Արատուացի վարպետները Հունիսոսում  
կատուցել են Ուրուկի հույակավոր էաննայի տաճարը (որի անունով երբեմն  
կոչվել է Ուրուկ քաղաքը): Տաճարաշինական նախատիպերի անդձումն ու  
տարածումը շարունակվել են նաև հետագայում: Մուժձիթի տաճարն իր  
պուննաշար ճակոտնով, սնկասպած, հունահռոմեական տաճարի նախա-  
տիպ է:

**THE COMPARATIVE ANALYZE OF THE PARALLELS OF THE  
ARMENIAN HIGHLAND'S ARCHITECTURAL PROTOTY  
Grigoryan A.** (National Museum-Institute of Architecture, Armenia)

## «ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ» ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՐՇԱՊԱՏՏՈՒ ՓՈՐՄԱԳԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ

Գրիգորյան Գ. (ԵՂԶ, Հայաստան)  
grigoryan1989@gmail.com

*Բանալի բառեր՝ հետախոյ գիրք, Հարություն՝ Վաղարշապատցի, Ռաչելու-  
թյուն, փորագիր պատկեր:*

Միմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով 1771 թ. էջմիածնում հինմված տպարանը համարձակ ու առաջադեմ բայլ էր պատմական տվյալ ժամանակաշրջանի համար: Հնուստիպ գրքի սահմանը համարելով 1800 թվականը՝ նկատում ենք, որ հայոց հողի վրա ստեղծված հետախոյ գրքերի թիվը 13 է, որոնց փորագիր պատկերներն էլ և առանձին զարդամտոլիվների (ճակատագրադրեր, վերջագրադրեր, լուսանցագրադրեր, զարդագրեր, զարդաշրջանակներ և այլն) հեղինակը Հարություն Վաղարշապատցին է: Այդ մասին տեղեկանում ենք Նշյալ գրքերի հիշատակարաններից, որտեղ փորագրող-նկարչին հանդիպում ենք նաև հետևյալ անուններով՝ «Ցարութին էջմիածնցի (էջմիածնցի)», «վարդապետ Ցարութին», «վարպետ Ցարութին»:

Տաղանդավոր այդ վարպետի արվեստին մինչ այժմ հավուր պատշաճի անդադարձ չի եղել, մինչդեռ վերջինիս ավանդել հայ գրատպության, հետախոյ գրքի, մասնավորաբար էջմիածնական հրատարակությունների գեղարվեստական հարդարման մեջ բավական մեծ է: Սույն գեկուցման մեջ ներկայացնում ենք միայն «Ռաչելություն» տեսարանի պատկերագրությունը՝ միաժամանակ կարևորելով հետազոտման համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը, որը կարող է նոր խոսք լինել հայ հետախոյ գրքի գեղարվեստական հարդարման ուսումնասիրության հարցում:

Հարություն Վաղարշապատցի փորագրող-նկարչից ունենք «Ռաչելություն» տեսարանը ներկայացնող չորս պատկերներ՝ վեց հնատիպ գրքերում: Առաջինը հանդիպում ենք Տոնացույցում (1774-1775 թթ.), երկրորդ փորագիր պատկերը տեսնում ենք երեք տարբեր գրքերում՝ Ժամագրքում (1785 թ.), Սաղմոսարանում (1787 թ.) և Շարակեղցում (1789 թ.), երրորդը՝ կրկին Սաղմոսարանում, չորրորդը՝ Խորհրդատուերում (1788 թ.): Հատկանշական

է որ Հարությունի չորս պատկերներում (ոչ միայն «Ռաչելություն» տեսարանում) առկա է ակնհայտ նմանություն մինչ այդ տպագրված հայկական գրքերի պատկերների, որոնք կրում են եվրոպական արվեստի ուժեղ ազդեցությունը. կարելի է ենթադրել, որ վերջինս կրթություն է ստացել Եվրոպայում կամ էջմիածնում տեսել է մինչ այդ Եվրոպայում տպագրված հայկական գրքերի պատկերները և ազդվել որանց պատկերագրությունից, ինչև առավել հավանական են համարում: Որպես օրինակ առանձնացնենք Լիվոռնոյում 1670 թ. տպված «Վարդապետություն քրիստոնեական» գրքի «Ռաչելություն» պատկերը, որն էլ կասկած չկա, որ Հարությունը տեսել է այդ պատկերը և արտանկարել այն վերջ հիշատակված երեք գրքերում, միայն թե էջմիածնական հրատարակությունն աչքի է ընկնում իր նրբությամբ, գծերի հստակությամբ:

Չորս պատկերներն էլ պատկերագրական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Ռաչելած Քրիստոսից բացի, չորս փորագիր պատկերներում կարելի է գտնել «Ռաչելություն» տեսարանին վերաբերող բազմաթիվ մանրամասներ՝ Մարիամի, Հովհաննեսի, ողբացող կանանց, երկու ավագակների, Քրիստոսի կողը նիզակով խոցող ձիավոր զինվորի (Լոնգինես), հրեշտակի պատկերները, ինչպես նաև Գողգոթան և դրա հիմքում՝ Ազամի գանգը, խաչի վրայի տախտակը՝ «ՅԼԹԶ» կամ «NRI» մակագրությամբ, փշե պսակը, երկնային լուսատուները, թաք, որի մեջ թափվում է խոցված կողից թափվող արյունը (Հաղորդության խորհրդանիշ): Այնտեղ, որտեղ առկա է Ազամի գանգը, թաքը պատկերված չէ: Բոլոր պատկերներում արտաշայտված են նաև խաչելության ժամանակ տեղի ունեցած բնության փոփոխությունները:

Վաղարշապատցու «Ռաչելություն» մեջ չենք տեսնում Հին և Նոր Կտակարանները խորհրդանշող սիմբոլներ և Եկեղեցու (Էկլեսիա) պատկերները, Ազամի գանգի հետ պատկերվող օձը (երբեմն խնձորով), շարչարանից գեներն ու իրերը, Երուսաղեմի տաճարը, ինչպես նաև զինվորներից երկրորդի՝ ՍունՖատոսի պատկերը, բացակայում են նաև հոծ բազմության (հրեաների և հռոմեացիների) տեսարանը և մի շարք այլ մանրամասներ:

THE ICONOGRAPHY OF “CRUCIFIXION” IN THE WOODCUTS OF  
HARUTYUN VAGHARSHAPATCI  
Grigoryan G. (Yerevan State University, Armenia)

**ԴԷՊՒ ԽԱՎԱԳՐԵԱԼ ԵՐԱՎՅՐՈՑԻ ՔՆԱՎԱՆ  
ԽՎԱԳՐՈՒԹԻՒՆ. ՏՆՏԵՄԱՆԻ ՏԵՍԱԿԱՆԻ  
ԼՐՈՒՄԸ ԵՒ ՅԱՐԱԿՅՑ ԹՆՃՈՒՎՆԵՐ**

**Իւթիճեան Հ.** (Չեխիա, Մեծ Բրիտանիա, Կիպրոս)  
hutihjan@yahoo.com

*Բանալի բառեր՝ Ծարակեց, Տնտեսան, իրազգիտութիւն, քննական, բաղդատական երաժշտագիտութիւն*

Երկկայ ուսումնասիրութեամբ կ'առաջադրենք նոր հետազոտական ուղղութիւններ՝ ներշնչուած Եղիա Տնտեսանի ժառանգութենէն, համարելով իր յետմահու հրատարակուած Ծարակեցը իր երաժշտագիտական գրութեանց հետ: Այս ստաղծի վերլուծմամբ էս մեղեդիական տարրերակներու խազարեալ Ծարակեցներու հետ բաղդատմամբ՝ կը փորձենք զէջ մասամբ պարզաբանել Տնտեսանի եւ իր սերունդի պոլսեցի եկեղեցական երաժշտաց գործելակերպը, երբ ԺԹ դարուն, ձայնագրութեան նպատակաբանացին վերակառուցել եւ նոյնիսկ վերստեղծել որոշ շարականաց կորուստեալ, մոռացեալ եղանակները՝ իրենց խազերու սահմանափակ հասկացողութեան (եւ ոչ թէ յիշողաբար պահպանուած մեղեդիներու կարծեցեալ սուկ վերարտադրութեան) հիման վրայ: Շատ այնմ, հայ խազագիտութեան մեջ յառաջիմելու անհրաժեշտ (սակայն այսուհանդերձ անբաւարար) նախապայման մը կը թուի մեզի (ի հեճնուկ սովետահայ երաժշտագիտութեան պարզամտօրէն չկաշկանդովի որնէ մէկ ձայնագրեալ աւանդութեան սահմաններով, այլ՝ բաղդատել ըստ կարելոյն առաւելագոյն թիւով մեղեդիական տարրերակներ, ի հարկին նաեւ օգտագործելով դարաց աստեղական յանկարծաբանական մտային ճկունութիւնը, ի խնդիր օգտագործելի համակցութեանց թուի ստուարացման: Անհրաժեշտ է նաեւ մէկէ աւելի վստահելի խազագրեալ աղբերց գուգահեռ օգտագործումը: Արդ, կեդրոնանալով անոնց քննական խմբագրութեան կնճոտ թնճուկին վրայ, դարձեալ իբր սկզբնակէտ կ'անենք Տնտեսանի որդեգրած սկզբունքները, ներկայացնելով թէ՛ անոնց անխուսափելիօրէն խոցելի կէտերը, եւ թէ՛ անուրանալի բարեմասնութիւնները, քննելով շարականաց տարրեր տանց եղանակաց իրար հաշ-

տեցման հարցը նոյն մեղեդիական ընտանիքի պատկանող այլ միատրագ կետ համեմատմանց հարցը, եւ հասարակ ազատարման ու իսկական տարրերակմանց միջեւ զանազանման խնդրականութիւնը:

Հակառակ իրազերու մեր երկկայ չարաչարօրէն սահմանափակեալ հասկացողութենէն առթեալ դժուարութեանց ըստ մեր կարծեաց, հնարաւոր է զեր որոշ գգուշաւոր երգակացութեանց յանգի, որոնք կրնան ապագայ խազգիտական աշխատանաց նպաստ մը բերել: Կ'օգտագործենք աննայնութեան լայն աղբիւրներէ շարուած մեղեդիական նմոյշներ (Տնտեսանի, Թաշճեանի, Աբգարի, Չերչեանի (Բ.), Կոմիտասի, Տայեանի, Ազնուորեսանի, Bianchini-ի ու Petermann-ի ձայնագրութիւններէն), իսկ խազագրեալ աղբիւրներէ՛ ցարդ նկատի առնուած են կիլիկեան ու արեւելեան Հայաստանի ձեռագրաց կողքին՝ Ռսկանի, Կիւրեղեանի, Խանճեանի, Եղիմայ («Շարական Ձեռաց») այլազան հրատարակութիւնները: Լուսարձակի տակ կը դնենք նաեւ որոշ յարակից խնդիրներ, օր.՝ յարաբերութիւններ չափաւոր ու ծանրագոյն մեղեդիական տարրերակաց միջեւ (իսկ որոշ պարագաներու՝ ճիշդ այսպիսի յարաբերութեան ակնբաղն պակասը), ինչպէս նաեւ քարոզ եղանակաց ու որոշ Ծարակեցի ձայնեղանակաց միջեւ, Տնտեսանի Ծարակեցի պակասներու ամբողջացման (գործական կարևորութիւն ունեցող) հարցը, եւլն:

**TOWARDS A CRITICAL EDITION OF THE ARMENIAN NEUMATICALLY-NOTATED HYMNAL: THE FULFILMENT OF TANTESEAN'S VISION AND ASSOCIATED CONUNDRUMS**

**Uttdjian H.** (Czech Republic, Great Britain, Cyprus)

## ՎԱՔԱՍԱՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՂԲԵԶԱՆԱՎԱՆ «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ»

Կիրակոսյան Լ. (ԵՊՀ, Հայաստան)  
kirakosyanlyuba@gmail.com

*Քանայի բառեր՝ պատմաճարտարապետական ժառանգություն, հուշարձան, հաստակագծային և ծավալատարածական հորինվածք, վերակառուցում, թիվ, գմբջաբար:*

Արցախյան շարժումից առաջ հայազիտությունը զրկված էր Արցախում մշակութային հետազոտություններ կատարելու հնարավորությունից: Այսօր ազատագրված տարածքներում լիակատար հիմքեր կան Արցախի հին և միջնադարյան մշակույթի ուսումնասիրության և պահպանության համար: Վերջին տարիներին այստեղ կատարված հետազոտությունների արդյունքում ոչ միայն համայրվել է հայկական պատմաճարտարապետական ժառանգությունը, այլև շատ համալիրներ ներկայանում են նոր մեկնաբանությամբ: Այս շարքում է Վանքասարի վարդիստոնեական եկեղեցին:

Վանքասարի եկեղեցին առաջին անգամ ներկայացրել է Ջ. Յամպոլսկին և, սուրբ տալով հայկական հուշարձանների ազվանական համարելու աղբյուր-հանրական գիտնականների մտայնությանը, հուշարձանը համարել է «ազվանական»: Հուշարձանի մյուս հետազոտողները (Մ. Հարաթյան, Վ. Գրիգորյան, Շ. Սվրաչյան, Ս. Կարապետյան, Հ. Մյոնոնյան – Հ. Սանայան), ներքելով այս տեսակետը, այնուամենայնիվ, հպանցիկ են անդրադարձել եկեղեցուն: Այսօր հնարավոր է դարձել հուշարձանի տեղագնություններ և մանրամասն չափագրություններ կատարել և ներկայացնել Վանքասարի եկեղեցու հաստակագծային և ծավալատարածական հորինվածքի ամբողջական պատկերը և հասկանալ աղբյուրեանական «վերակառուցման» էությունը:

Եկեղեցին ունի խաչաձև հաստակագծային հորինվածք և պատկանում է վաղմիջնադարյան փոքր խաչաձև կենտրոնագմբէթ եկեղեցիների եռախորան տիպին: Հորինվածքի հիմքը կազմող գմբջատակ քառակուսի անփոփոխ է արևմուտքից ուղղանկյուն, իսկ մյուս կողմերից՝ կիսաշրջանակ խաչաքանդով, որոնք արտաքինից ուղղանկյուն են: Մուտքերը բացված են երեք կողմերի (արևելյանից բացի) խաչաքանդում, որտեղ զետեղված են նաև մեկական լուսամուտներ: Եկեղեցու՝ Ջ. Յամպոլսկու ուսումնասիրության

ժամանակ դեռևս պահպանված՝ վարպետների նշանագրերը համընկնում են Միսիսիայի VII դ. Մբ Հովհաննես եկեղեցու նշանագրերին:

Վանքասարի եկեղեցին 1980-ականներին «աղբյուրեանական ձևով վերակառուցման» ժամանակ լուրջ կորուստներ է կրել: Առաջին հերթին խաչքարվել են հուշարձանի բնական միջավայրը և լանդշաֆտը: Ամբողջովին բարձրացվել է և սալապատվել եկեղեցու շքակալայրը: Արդյունքում այն այժմ կանգնած է «ամայի» մի հարթակի վրա, որն ամբողջովին ծածկել է ժամանակին եկեղեցու շուրջ սփռված վաղմիջնադարյան շինարարական մնացորդները: Այլափոխվել են նաև կոնստրուկտիվ հանգույցների (բացվածքներ, թիվեր, տրոպիսներ, գմբջաբարներ, ծածկեր) իրականացման էականները: Գտնույցի արտաքին տեսքն ու համապիստեղական համակարգը նույնպես տուժել են «ստորգումբից»: Վանքասարի եկեղեցու ռճական և շինարարական առանձնահատկությունների առջևիղ վաղմիջնադարյան բոլոր հուշարձանները կառուցված են այլ կերպ: Այսպիսի ձևով վերակառուցումը ոչ թե չինացություն, այլ դիտավորություն է հետապնդել: Միտումավոր ոչկազմվել է նաև արևմտյան մուտքի բարավորի խաչաքանդակը: Եկեղեցին այսօր կանգնած է որպես վերակառուցման անվան տակ իրականացված մշակութային յուրօրինակ վանդակիզմի դրսևորում:

Վանքասարի եկեղեցին ստուժել էր նաև արցախյան պատերազմից: Արևմտյան ճակատում՝ բարավորից վերև, արևը բավական մեծ խոռոչ էր բացել, որը սպառնում էր պատի կայունությանը: 2011 թ. աշնանը ԼՂՀ զորահաջրություն վարչաթուղթը մարման, ամրակայման և բարեկարգման աշխատանքներ է իրականացրել այստեղ: Մասնակի ամրակայման աշխատանքներն ավարտվել են 2012 թ. հունվարին, և եկեղեցու գմբջիկն տեղադրվել է խաչը:

Փաստական կոճանների, համեմատական (Քարաշամբի, Այլարի, Թալիսի Մբ Աստվածածին եռախորան եկեղեցիներ) նյութերի, տարածաշրջանի վաղմիջնադարյան հարուստ մշակութային շերտի և ճարտարապետական համալիրների համադրության արդյունքում հնարավոր է վերականգնել Վանքասարի եկեղեցու նախնական տեսքն ու միջավայրը և բացահայտել ազվանական-աղբյուրեանական կապի և ընդհանրության «տեսության» և հայ ժողովրդի արցախյան հատվածի ստեղծած նյութական մշակույթի հուշարձանների ազվանական համարելու վարկածի ողջ սնանկությունը և հետազոտությունների միջոցով հակահարված տալ աղբյուրեանական հարձակումների:

THE ARCHITECTURE OF VANQASAR CHURCH AND  
AZERBAIJANIAN "RECONSTRUCTION"  
Kirakosyan L. (Yerevan State University, Armenia)

**ԱՐՑԱՅԻ ՄԻՋԱՐԱՐՑԱԼ  
ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎԱԿՈՒՄԵՐՈՒ**

**Հասարայան Մ. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)**  
muradhasratyan@rambler.ru

*Բանալի բաներ՝ ճարտարապետական դպրոց, Լեռնային Ղարաբաղ,  
վանքային համալիր, Գանձասար, պատկերաբանդակ:*

Արցախի տարածքը հարուստ է տարբեր դարաշրջանների պաշտամունքային, աշխարհիկ, մեմորիալ ճարտարապետության բազմառաջնորդ հուշարձաններով: Ընդ որում, դրանց մի մասն է մեզ հասել, շատերն ավերվել են Արցախ ներխուժած թշնամական հորդանների, ինչպես նաև XX դարում՝ աղբյուրանակյա իշխանությունների կողմից:

Արցախի ճարտարապետությունը վաղ միջնադարից սկսած զարգացել է այն ընդհանուր օրինաչափությունների հիման վրա, որոնք բնորոշ են եղել ողջ հայկական շինարարական արվեստին: Արցախի առաջին եկեղեցին IV դ. սկզբում Ամարասուն հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը: Արցախի վաղմիջնադարյան արժեքավոր հուշարձանները են Գրիգոր Լուսավորչի թոսան՝ Գրիգորիսի դամբարանն Ամարասուն (489 թ.), Տիգրանակերտի V դ. միանավ բազիլիկը, Վանքասարի VII դ. խաչածառ զմբիթավոր եկեղեցին և Մոխրենիսի VI դ. «Օխտոթի վանքը», որը հայ ճարտարապետության եվաճում «հռիվսիմեատիպ» հուշարձանների եպիտոսիպն է:

Արցախում շինարարական կյանքը մեծապես տուժեց VIII–XIII դդ.՝ արաբների, սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների ասպատակություններից: Երկրամասում ճարտարապետությունը մեծ վերելք ապրեց XIII դ., երբ այստեղ հզորացավ Նաչնևի հայկական իշխանությունը: Այդ ժամանակաշրջանում ստեղծվեցին ճարտարապետության և արվեստի այնպիսի ստեղծագործություններ, որոնք մտան հայ ժողովրդի գեղարվեստական ժառանգության ոսկե ֆունդը: Չնայելով հայկական ճարտարապետության Արցախի ստեղծագործական դպրոցը, որի լավագույն հուշարձանները կենտրոնացված են վանքային համալիրներում՝ Գանձասարում, Դաղվանքում,

Նաթրավանքում, Գաղի, Եղիշե առաքյալ, Բոյ Էղջի վանքերում և ուրիշներում:

Արցախի միջնադարյան շինարարական արվեստի զույլագործոցն է Գանձասարի վանքը, որի Սբ Նովիաննես Մկրտիչ տաճարի (1216-1238 թթ.) զմբեթն իր զարդարանդակների և պատկերաքանդակների բանակով ու ինքնատիպությամբ բացառիկ է հայ արվեստում: Վանքի զավիթը նույնպես իր ճարտարապետությամբ և հարդարանքով առանձնանում է հայկական նույնատիպ հուշարձանների շարքում: Անվանի արվեստարան Ա Յակոբ-սոնը Գանձասարի վանքը բնորոշել է որպես «XIII դ. հայկական ճարտարապետության հանրագիտարան»:

Դաղվանքը հիմնվել է I դ., Թաղեսու առաքյալի աշակերտ սուրբ Դաղիի գերեզմանի վրա: Այսօր կանգուն իռչող համալիրը բաղկացած է երկու հուշարձանախմբերից՝ պաշտամունքային ու աշխարհիկ: Հիմնականում XIII դ. կառուցված շենքերի տիպաբանական բազմազանությամբ, որմնակարներով ու կոտորակական քանդակներով աչքի ընկնող Դաղվանքը հայկական ճարտարապետության լավագույն համալիրներից է:

Կենտրոնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական ու մշակութային կենտրոն Նաթրավանքը, որն ավերել էին 1144 թ. սելջուկ-թուրքերը, 1204 թ. ետրովի կառուցեց Հաղբասոյի վանահայր Նովիաննես Նաչնևեցին՝ հիմնելով այստեղ մատենադարան ու թանգարան:

Արցախի ճարտարապետական դպրոցը ստեղծագործական կապերի քանադասում համար կարևորն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի «Բոյ Էղջի» վանքը, որի եկեղեցիներից մեկը և հուշակոթողը կառուցել է ճարտարապետ Նաչնևիկ Անեցին:

Արցախում և Մյունիքում XIII դ. ստեղծվեցին մեմորիալ հուշարձանի նոր տիպ՝ «որմնակալ խաչարարը», և նոր համալիր՝ «մեկիքական սալաբանք»: Արցախի ճարտարապետության առանձնահատկություններից է XIII դ. վանքերում միանավ բազիլիկների ու եկեղեցիներում ուղղանկյուն ձևի Ավագ խորանի գանգվածային կիրառումը:

Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցն իր բազմաբնույթ հուշարձանների ինքնատիպ ու բարձրարվեստ հորինվածքներով մեծապես հարստացրեց հայ մշակույթի գանձարանը:

ACHIEVEMENTS OF THE MEDIEVAL ARCHITECTURE OF ARTSAXH  
**Hasratyan M.** (National Academy of Sciences of the Republic of Armenia,  
Institute of Arts, Armenia)



**ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ ԴՆՐՆ ՈՒ  
ՆԵՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱՆԻ ՊԱՏՄԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԺԱՌԱՂՎՈՒԹՅԱՆ ՄԵԸ**

Դուլյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)  
artakbg@yandex.ru

*Բանալի բաներ՝ մշակութային ժառանգություն, հուշարձան, մելիքու-  
թյուն, ճարտարապետություն, պալատ, ամրոց:*

Հայաստանի արևելյան երկրամաս Արցախի պատմամշակութային ժառանգության մեջ իրենց լայն ժամանակագրական ու աշխարհագրական ընդգրկումով, գործառնական ու իսպաբանական բազմազանությամբ և պահպանվածությամբ առանձնակի տեղ ունեն ճարտարապետական հուշարձանները: Երկրամասով, հայոց պետականության գրեթե անընդմեջ անկախ ու կիսանկախ գոյության շնորհիվ, սկսած վաղ միջնադարից, տևողովն են ինչպես քրիստոնեական պաշտամունքի բազմառակից կոթողներ՝ մատուռներ, էկեղեցիներ, վանական համալիրներ և խաչարարք, այնպես էլ՝ աշխարհիկ ճարտարապետության մեծաթիվ հուշարձաններ՝ ամրոցներ, պալատներ, կամուրջներ, աղբյուրներ, բնակելի տներ, արտադրական կառույցներ: Առանձնահատուկ պատմաաշխարհագրական նախադրյալների պատճառով Արցախի ճարտարապետական ժառանգությունը հարուստ է հատկապես ամրոցաշինության և պալատաշինության հուշարձաններով, որոնց շարքում կարևոր տեղ ունեն երկրամասի միջնադարյան իշխանական տոհմիկ տների ամփոփական ժառանգորդ մելիքների կառուցած ամրոցակերպ պալատները՝ ապարանքները: Մելիքական նստոց-կենտրոններում՝ բերդերում և ամրացված ավաններում, ապարանքները կառուցվել են Հայաստանի համար ծանրագույն պատմական դարաշրջանում՝ XV-XVIII դարերում: Մելիքական ապարանքների ավերակներ են պահպանվել Ականաբերդում, Քաչաթաղում, Տոզում, Գյուլիստանում, Հռոնկավանում, Ջրաբերդում, Մոխրաթաղում, Քաղաքատեղում, Գյուլաթաղում, Ավետարանցում, Շուշիում, Թուխնակալում: Ապարանքներն ունեցել են պատմական աղբյուրներում

վկայված շինարարական արձանագրություններ, որոնց մի մասը պահպանվել է Պատմական վկայություններ կան մեզ չհասած այլ ապարանքների մասին: Մելիքական ապարանքներ են կառուցվել նաև Մյունխենում: Արցախի մելիքական ապարանքները դարաշրջանի բերդերի և վանք-ամրոցների կողքին մեծ դեր են խաղացել երկրամասի պաշտպանության գործում ինչպես պարսկաթուրքական պատերազմների շրջանում, այնպես էլ՝ հարևան խառքությունների տոնձգությունների դեմ մարտերում: Հատկապես մեծ է մելիքական ապարանքների դերը XVII-XVIII դարերի հայ ազգային-ազատագրական պայքարի գործում. ապարանքներն այդ պայքարի օջախներ էին՝ յուրօրինակ ամրացված «սղոխներ»: Այս մասին բազմաթիվ են վկայությունները դարաշրջանի հայ-ոստական հարաբերությունների փաստաթղթերում:

Մելիքական ապարանքների ճարտարապետական հորինվածքներում միանյութված են հայ հնագույն և Արցախ-Խաչենի իշխանական պալատաշինության, երկրամասի ամրոցաշինության և ժողովրդական բնակելի տան ճարտարապետության դարավոր ավանդույթները: Որպես ամրոցողվիլ քարակերտ զլխատան համալիրներ՝ մելիքական ապարանքները միաժամանակ ունեն խիստ յուրահատուկ ճարտարապետական նկարագիր, բնական միջավայրին հմտորեն ներդաշնակված հորինվածքներ, զուսպ և ազդու նարդարանք: Մելիքական ապարանքներն Արցախի ճարտարապետական ժառանգության խիստ առանձնահատուկ և նրա սնցյալ պատմական իրողություններն առարկայորեն պատկերավորող կարևորագույն վկայագրեր են՝ արժանի ճանաչողության, հոգածության և անխաթար պահպանության ու վերականգնման:

**THE ROLE AND IMPORTANCE OF MELIKS' PALACES IN THE  
HISTORICAL-CULTURAL HERITAGE OF ARTSAKH**

Ghulyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts, Armenia)

## Գ. ԳՅՈՒՂՆԻԵՎ՝ ԱՅՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՄԵՄԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՂՎՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆ

**Մելիք-Սարգսյան Ա.** (ՀՀ մշակույթի նախարարության  
«Պատմամշակութային արժեքոչ-թանկարանների և պատմական միջավայրի  
պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)

*Բանալի բառեր՝ Գ. Գյուրջին, եզոթերիկ քրիստոնեություն, փիլիսոփայու-  
թյուն, միտոսիզմ, կրոնագաղափարախոսություն:*

*«Հանճարները հարկերից չունեն, ունեն ծնեղավայր»*

XX դարի մեծ ստաճող Գեորգի Գյուրջինի «եզոթերիկ քրիստոնեություն» ուսմունքը և նրա բազմաթիվ աշխատությունները հսկայական ազդեցություն են ունեցել Արևմուտքի հոգևոր մշակույթի վրա:

Փաստ է, որ միտոսիզմի մեծագույն դեմքի, զիտական ու թաքնագիտա-կան գիտելիքների, հոգևոր մեծ ներդրում տեր և համաշխարհային կրոնագաղափարախոսությունների՝ բուդդայականության, գրադաշտության, քրիստոնեության և սուֆիզմի ներդաշնակող Գեորգի Գյուրջինի անունն ավելի շատ հայտնի է եղել մնացյալ ամբողջ աշխարհում, քան՝ Հայաստանում:

Գյուրջինը ծնվել է մեծացել է Ալեքսանդրապոլում (Գյումրի): Արևիվային փաստաթղթերի ուսումնասիրությունների արդյունքում Գյումրիի հայտնի «Հունական թաղում» («Հունաց մահլա» կամ «Ռոմի Յապո», «Греческая слобода») հայտնաբերվել են Գյուրջինների տան կիսանկուղային առաջին հարկը և բակը:

Գյուրջինի հոգևոր աշխարհընկալումն ու հնագույն գիտելիքների փնտրուտը, ինչպես նաև «կորուսյալ և մոռացված արդյունքների ուսումնասիրությունը» սկսվել են պատմական Շիրակ աշխարհից՝ Ալեքսանդրապոլից և հասել մինչև հայոց միջնադարյան մայրաքաղաք Անի, որտեղ հնագիտական պեղումների շնորհիվ Գյուրջինի կողմից հայտնաբերվել են Բաբելոնյան իմաստունների «Մարմունցան եղբայրություն» միաբանության իրն ձեռագրերը: Դա սկզբն էր այն ճանապարհի, որը Գյուրջինին տանելու էր Արևելքի հնավայրերից մինչև Տիբեթի մեծաստանները:

Դեռ 1899 թ. Գյուրջինն Ալեքսանդրապոլում ստեղծեց «ՀՃարտություն արևուտներ» միությունը: Դրանով, փաստորեն, XX դարի սկզբներին, պատմական Շիրակ աշխարհում սկիզբ դրվեց «քրիստոնեական եզոթերիզմ» համամարդկային ուսմունքի ձևավորման: Ալեքսպոլցի Գեորգի Գյուրջինն էր, որ Արևելքի հին իմաստափոխությունը բացեց Արևմուտքի առջև և 1922 թ. Փարիզում հիմնեց «Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտ» հաստատությունը:

Սակայն պետք է նշել շատ կարևոր մի հանգամանք, որ նրա ուսմունքի արմատները գալիս են Շիրակ աշխարհից: Գյուրջինի աշխարհաճանաչման ակունքներն առաջին հերթին բխում են նրա հոր՝ աշու Աղաշի խոտախիլի-տախայական մտքերից, ինչպես նաև հարուստ կենսափորձից, որը նա ձեռք է բերել իր շրջապատի՝ հատկապես Ալեքսանդրապոլում բնակվող մարդկանց և մշակութային ավանդություններով հարուստ իրողությունների հետ շփումների ընթացքում:

Եվ պատահական չէ, որ Գյուրջինի մի շարք աշխատություններում և հատկապես «Հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ» գրքում, աշխարհին ներկայացվում են հետաքրքրական նյութեր հայկական պատմամշակութային ժառանգության այնպիսի հուշարձանների մասին, ինչպիսիք են «Հագար ու մի եկեղեցիների» վեհաշուք Անի մայրաքաղաքը, Էջմիածինը, Ստեփանը, Կարսը, Ալեքսանդրապոլը և այլն: Գյուրջինն իր գաղափարները մեղ է ներկայացրել երեք ձևով՝ գրավոր շարադրանքով, երաժշտությամբ և պարային շարժումներով: Գյուրջինի աշխատություններից են «Ամբողջն ու Ամեն ինչը» շարքից «Բենեդեկտուսի պատմություններն իր թռանքը», «Հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ», «Կյանքը ռեալ է, երբ ես կամ», «Քանքեր գալիք բարիքի»: Գյուրջինի առաջին ուսումնասիրող Ռայթիոլ Փերին վկայել է, որ Գյուրջինը, ապրելով և ստեղծագործելով աշխարհի տարբեր երկրներում, իր աշխատությունները հիմնականում գրել, ինչպես նաև թելադրել է հայերեն, և իր հետևորդ հայազգի տիկին Էլիզաբեթ Գալուսյանը թարգմանել է ռուսերեն և անգլերեն: Դրա ապացույցն է ԱՄՆ-ում նրատարակված «Բենեդեկտուսի պատմություններն իր թռանքը» գրքի նրատարակիչների կողմից արված վկայությունը, որ Գյուրջինի գրքի բերօրինակը զրկված է ռուսերեն և հայերեն՝ "Original written in Russian and Armenian" (Beelzebub's Tales to his Grandson, E.P. Dutton & CO., New York, 1973):

Հարկ է նշել, որ Գյուրջինն ունեցել է բազում հետևորդներ թե՛ Արևմտյան Եվրոպայում, թե՛ Ռուսաստանում և թե՛ Ամերիկայում: Գեորգի Գյուրջինի մասին ստեղծվել է անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն հարուստ գրականություն (նեղինակներ՝ Ջեյմս Մոր, Ռաֆայել Լեֆարտ, Մարգրեթ Անդերսոն,

Ջոն Բենեթը, Միշել Վալցերգ, Լուի Պոլկե, Ուոլթեր Դրիսթոլ, Ուեբ Ուիլսոն) Անգլիացի հայտնի կինոբեմադրիչ Փիթեր Բրուքը Գյուրջիևի մասին գեղարվեստական ֆիլմ է նկարահանել նրա՝ «Հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ» ինքնակենսագրական գրքի հիման վրա:

Հիշու է, Գյուրջիևի անունը մինչ օրս է կապվում է բազմաթիվ առեղծվածների հետ, սակայն այսօր արդեն աշխարհի տարբեր երկրներում մեծ հետաքրքրություն կա ոչ միայն այդ հռչակավոր մտածողի, այլև՝ Հայաստանի և նրա ծննդավայր Ալեքսպոլ-Գյումրիի հանդեպ:

**G. GYURJIEV – AMBASSADOR OF ARMENIAN  
HISTORICAL-CULTURAL HERITAGE**

**Meliq-Sargsyan A.** (Ministry of Culture of the Republic of Armenia, “Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations”  
Non-Commercial State Organization, Armenia)

**ՌՈՍԼՒԹԱՆ ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ՎԵՐԱԳԻՎՈՂ  
ՆԿԱՐԱԶԱՐԻ ՆՈՐԱՆԱՅՑ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ**

**Չուգասյան Լ. (ԵՊՀ, Հայաստան)**  
levonch@yahoo.com

*Բանալի բառեր՝ Դրագարկ, Թորոս Ռոսլին, ձեռագիր, մանրանկար, Ֆիգլիլիամ:*

Տարիներ առաջ, 13-րդ դարի կիլիկյան նշանավոր նկարիչ Թորոս Փիլիսոփայի գեղարվեստական ժառանգությանը եվրոպա մեր հազվածի պատրաստման կապակցությամբ քննության առանք նրա ձևավորած 1295 թ. Ավեսարանը (Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, թիվ 6290), որը ստեղծվել է Դրագարկում: Այս մատյանի գրիչներն են Թորոս Փիլիսոփան և Յոհանը: Դրագարկի Ավետարանում ուշադրություն է զրափում ձեռագրի սկզբի էջերից մեկին ստեղծված նկարագրող թերթը, որի վրա ներկայացված մանրանկարի զենությունը թույլ է տալիս մտածել, որ անձանոթ պատկերը որևէ առնչություն չունի ողջ մատյանի մնացած ձևավորումների հետ: Անկասկած, այն ամբողջությամբ չպահպանված ինչ-որ ձեռագրի մի պատասխիկ է: Ռդրոս առարկա մանրանկարում սպիտակ փառապսակի խորքի վրա ցուցադրված է շագանակագույն խաչափայտը, ըստ որում՝ վերջինիս կենտրոնում, հորիզոնական և ուղղահայաց տախտակների միացման կետից թիչ ցած, նկարված է թափուր սուրբ գանդ: Չախից և աջից ձեռքերը լայն տարածած և փառապսակն ամուր բռնած՝ հանդես են գալիս մեկական հրեշտակներ: Խաչափայտից ներքև՝ պատկերի ստորին հատվածում, սիմետրիկ ձևով կիսապտղած դիրքով ցուցադրված են տղամարդու և կնոջ երկու կերպարաններ: Այս նորահայտ պատասխիկը թվում է թե պատմահակատրոն չի հայտնվել իրեն ապաստան տված ձեռագրի մեջ: Այս մատյանի մեջ հիշված Թորոս քանանան պետք է որ լինի նույն ինքը՝ կիլիկյան մեծ վարպետ Թորոս Ռոսլինը: Նրա վնասված և մեզ չհասած ձեռագրից պահպանված խնդրո առարկա թերթը, հավանաբար, կորստից փրկելու նպատակով Դրագարկի Ավետարանի մեջ է փանցրել նրա աշակերտներից որևէ մեկը՝ զուցե անձանպետ Թորոս Փիլիսոփան կամ Յոհանը:

Մեր կարծիքով, Թորոս Ռոսլինի արվեստանոցին է առնչվում եւս մի պատահիկ՝ նկարագարող թեքք, որը հիշատակվել է գանազան գիտնականների աշխատություններում՝ առանց մեծ վարպետի միջավայրին վերագրվելու:

Մեզ հետաքրքրող նկարագարող թեքքը մաս է կազմում մի ժողովածուի, որը պահվում է Քեմբրիջի (Անգլիա) Ֆիցվիլիամ թանգարանի Մարքրիլս ֆունդում (ձև. 201): Այս ձևագիրը բաղկացած է տարբեր պատահիկ թեքքերից, որոնցից երեքը գարգարված են հայկական ընտիր մանրանկարներով և կտրված են Ավետարանը բովանդակող գրչափոր հաստրներից, ըստ որում՝ այդ պատահիկներից երկուսը ցուցադրում են ավետարանիչ Ղուկասին, իսկ մյուսը՝ Մատթեոսին: Վերջիններս մյմյանց հետ որոշակի ընդհանրություններ ունեն և կտրված են մինևույն ձևագրից: Մեզ հետաքրքրող երրորդ պատկերը մեծ չափով տարբերվում է այդ երկու ստեղծագործություններից: Խնդրո առարկա մանրանկարում Ղուկաս ավետարանիչը ցուցադրված է ձախից, նստած դիրքով: Ղուկասի դիմանկարի անտվոր պատկերագրությունը պայմանավորված է մանրանկարում ընդգրկված Թեոֆիլիոսի կերպարանքով, որը ցուցադրված է աջից: Մի շարք առանձնահատկություններով Ֆիցվիլիամ թանգարանի մանրանկարն արդեքվում է միայն Ռոսլինի մասյանների ձևավորումներին: Մեզ թվում է, որ Թեոֆիլիոսի և ավետարանիչի կերպարները երկու տարբեր նկարիչների գործեր են: Այդ երկու հեղինակներն էլ աշխատել են Ռոսլինի արվեստանոցում: Այս մանրանկարները թույլ են տալիս հուսալ, որ մի օր կգտնվեն Թորոս Ռոսլինի արվեստանոցին առնչվող նաև այլ մատուցներ, և այդպիսով կբացահայտվեն մեծ վարպետի զեարվեստական ժառանգության անհայտ մնացած էջերը:

NEWLY-DISCOVERED ILLUSTRATED MANUSCRIPT FRAGMENTS  
ATTRIBUTED TO TOROS ROSLIN'S WORKSHOP  
Chookaszian L. (Yerevan State University, Armenia)

ԵՐԱԺԵՏԱՌՈՒՔԱՅԻՆ ՏԵՔՍ, ԿԵՆՍԸԹԱՑ,  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՇՍ ԸԸ ԳԱՄ ԱՐՎԵՍԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՉԱՅՆԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՆԱՎԱՔԱՄՈՒԻ)

Պիկիչյան Հ. (ԸԸ ԳԱՄ արվեստի ինստիտուտ, ԵՊՃ, Հայաստան)  
hripsime-pikichian@rambler.ru

*Բանալի բառեր՝ մշակութային ժառանգություն, ավանդական երաժշտություն, ձայնադարան, պատմամշակութային տեքստ:*

Ժողովրդական մշակույթը մի համապարփակ տեքստ է, որ պատմում է արարող ժողովրդի բնական ու մշակութային միջավայրի և ակցած ճանապարհի մասին: Իսկ յեթ դա եան պարփակված չէ արարչության հույժ դարձած նյութի շրջանակներում, ապա անսահման հեարավորություններ է ստանում արտացոլելու երա աշխարհայացքը, ապագայի տեսլականն ու այն իրականացնելուն միտված գործընթացները՝ ժամանակի ու տարածության ողջ հոլովությունում: Ի շարք մշակութային ժառանգության այլ ճյուղերի, հիշյալ առարկություն կրողն է եան բանավոր ավանդույթի հայ երաժշտական մշակույթը, որի շուրջ 15.000 ձայնագրյալ նմուշ (1927-2012 թթ.) պահվում է ԸԸ ԳԱՄ արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ձայնադարանում: Այս հարուստ հավաքածուն իրավամբ կարելի է հայ ժողովրդի կյանքի երաժշտական վավերագրերի յուրօրինակ գանձարան համարել: Հայաստանի մարզերում և եախիկն ԽՍՀՄ-ի հայաշատ բնակավայրերում գիտաբազմների ընթացքում ձայնագրյալ նյութերի այս հավաքածուի շերտիվ կարելի է հստակ պատկերացում կազմել ավանդական երաժշտական մշակույթի գարգացման ողջ ընթացքի մասին՝ ընդգրկելով պատմական Հայաստանի գրեթե բոլոր գավառները, Հայաստանի և Արցախի Հանրապետությունները:

Թևմայի ընտրությունը պատահական չէ, քանզի մշակույթի յուրացման ակտիվ քաղաքականության համատեքստում մեր հարևանները չեն անտեսել եան հայոց երաժշտական ժառանգությունը: Ներկայացվող զեկուցումը միտված չէ անդրադարձնելու առանձին ժանրերի կամ ստեղծագործությունների բնիկ ծագման կամ պատկանելության խնդրին, այլ փորձ է իբրև հավաքական ամբողջություն ներկայացնելու և գիտականորեն արժեոլելու, նշված

ձայնագրյալ հավաքածուն՝ որպես *մեկ հեղինակի՝* հայ մարդու կենսընթացի պատմամշակութային տեսքառ:

Իրեն ամբողջական համակարգ՝ թեմատիկ առումով հավաքածուն պտտագրում է հնագույն շրջաններից զայսօր հայոց կենսաապահովման միջոցները, արհեստները, նախաքրիստոնեական և քրիստոնեական հավատալիքներն ու կրոնը, հոգևոր և աշխարհիկ տոները, ծեսերը, արարողությունները, հանրային և ընտանեկան կյանքը, առասպելական ու պատմական նայելիներին, հերոսներին, ճակատագրական անցքերը: Երաժշտագիտական առումով դա երգային ու նվագարանային բոլոր ժանրերի, ավանդական նվագարանների տեսակաճու, մեղեդիների և բանաստեղծական կառույցների, կատարման ոճերի, հանպատրաստից ստեղծվող և կանոնացված ժանրերի, երաժշտական քարտեզների երաժշտախոսքային բնօրինակ-քարտեզ է, որ համեմատելի է պատմական Հայաստանի աշխարհագրական ու մշակութային քարտեզի հետ: Ըստ կատարողների՝ ներառում է բնակչության գերթե Բոլոր տարիքային խմբերը՝ գերակշիռ տեղ հասակացնելով միջին և ավագ սերունդին, հասարակ գյուղացուց մինչև ժողովրդապրոֆեսիոնալ կատարողներ, որոնք բանասիրական ավանդույթի կրողն ու ստեղծողն է:

Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ աշխարհագրական տարածքը, մարդը, մշակութային միջավայրը, պատմական կենսընթացը՝ իրեն ամբողջական համակարգ, փոխակերպվել են մի օրգանական երաժշտախոսքային կառույցի՝ հիպերտեքստի, որից արհեստակառույցն պոկված երգ կամ նվագը, անգամ առանձին ժանրը համակողմանի բնության պարագային անհնար է դիտարկել որպես օրգանապես այլ մշակութային տեսքառի բաղկացուցիչ:

Հայս՝ այս ժառանգությունը գրավոր և հնչյունային տարբերակներով պահպանելով հանդերձ՝ գերակա նշանակություն ունեն թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում նոտագիր ու ձայնագրյալ եղանակներով հանրահռչակելը, մասնագիտացված խմբերին ու ժողովրդական կատարողներին հասանելի դարձնելը: Ճանապարհ, որով այն կվերահաստատվի որպես արդի կենսընթացի երաժշտախոսքային բաղկացուցիչ և կշարունակվի՝ փոխակերպվելով նաև նոր ժանրերի ու ոճերի:

MUSICAL-VERBAL TEXT, EVERYDAY LIFE AND HISTORY  
(ACCORDING TO THE PHONETIC COLLECTION  
OF THE INSTITUTE OF ARTS OF NAS RA)

Pikichian H. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts, Yerevan State University, Armenia)

ԿԱՏԱՐՅԱԼ ԱՆՁԸ ՀԱԿՈՒՐ ԳՅՈՒՐՁՅԱՐԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Վարդանյան Ս. (ԵՊՀ, Հայաստան)  
state08@rambler.ru

*Բանայի բաներ՝ XX դարի կերպարվեստ, Քրիստոս, ազգային ընկալում:*

Հիսուս Քրիստոսին յուրաքանչյուր մշակույթ, ամեն ազգ ու անհատ պատկերել է յուրովի: Այդ պատկերներն արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի բարոյաիդեալական և նկարագիրը, ինչպես նաև գեղագիտական ընկալումների համակարգում գոյություն ունեցող ձևի ու բովանդակության հատկությունները: Քրիստոսի կերպարը, կրելով մշակութային ավանդույթն ու հանդիսանալով իդեալական անձի, անհատի մարմնավորում, իր բոլոր բացարձակ էություններով (սուբստանցիաներով)՝ իմաստությամբ, կամքով և սիրով, կարող է դառնալ մեր օրերում ապրող հայ մարդու՝ կատարյալին հասնելու խորհրդանշան: Հիսուսի կերպարի ընկալման և արտահայտման միջոցով հնարավոր է բացահայտել մեր ազգային էության, մտանքակերպի առարկե կողմերը, նաև այլ մշակույթների ազդեցություններն ու նկարիչների անհատական մոտեցումները:

Նակոր Գյուրջյանի (1881-1948) «Քրիստոսի գլուխը» քանդակը (մոտ 1914 թ., 97x43x51,5, կաքաք, ՀԱԴ) որպես նոր մոտեցում կերպարին, քանդակային արվեստի արտանվոր, նախադեպ չունեցող ստեղծագործություն է: Ընչի՞նչում ձեռնարկ քանդակագործը, ապրելով և ուսումնելով Փարիզում, յուրացրել էր ժամանակի գեղարվեստական բոլոր դպրոցները և առաջադեմ միտումները, հասցրել էր այնչեղ նաև Ռոդենի արվեստանոցը: Թե՛ հայկական, թե՛ կաթոլիկ եկեղեցուց կտրված այս քանդակը ստեղծված էր առանձին կերպար արտահայտելու, ժամանակակից քանդակագործության մեջ դիմապատկերի առավել ուժեղ, արտահայտիչ կերպար ներկայացնելու միտումով: Գյուրջյանը Քրիստոսի քանդակում համարձակորեն դիմել է հատուկ մարդկային տիպի և անսովոր ներքին ապրումի հաղորդմանը: Դրա հետ մեկտեղ նեպաղում էնք, որ հեղինակը օգտագործել է իր ընկերներից մեկի՝ Օնիկի Ղարիբյանի դիմագծերը: Իր ժամանակի շունչն զգացած քանդակագործը կերպավորել է երկարատև խոշտանկումների ենթարկված մարդու, անհատ-

տի, «մերժված հոգու», իր դարի «թանձրացած հուսահատության և հոռեւտության տրամադրությունները»: Միաժամանակ նա երկվայացրել է կերպարվեստի առաջ դրված նոր խնդիրներ, բանդակագործության միջավայրում այդքան արդիական մոնումենտալզմի և դեկորատիվիզմի ակնհայտ ներգործությունը:

THE ABSOLUTE PERSONALITY IN HAKOB GYURJIAN'S ART  
Vardanyan S. (Yerevan State University, Armenia)

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐԻ ԴԵՐՆ ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ  
ՃԱՐՏԱՐԱԳԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՍԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տեր-Միհայան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)  
anoush\_arch@hotmail.com

*Բանալի բաներ՝ ճարտարապետություն, քաղաք, կերպար, շենք, հորինվածք, միջավայր:*

Ինչպես հայտնի է, ճարտարապետության զարգացումը մշտապես կապված է երկրի տնտեսական վիճակի հետ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին տնտեսության բուռն աճով պայմանավորված՝ Բարվում արագ տեմպերով զարգանում է քաղաքաշինությունը, իսկ դրա հետ կապված՝ նաև ծավալային ճարտարապետությունը՝ բնակելի, հասարակական և արդյունաբերական շենքերի կառուցումը: Քաղաքի բնակչությունը նույնպես կտրուկ աճում է, և գոյություն ունեցող հայ համայնքը համալրվում է Արցախից, Մյունխից, ինչպես նաև Պարսկաստանից և այլ վայրերից գաղթած հայերով: Հետզհետե համայնքի ներկայացուցիչներն ամրապնդվում են իրենց դիրքերում, ինտեգրվում բազմազգ հասարակությանը և շատ ակտիվ մասնակցում քաղաքային կյանքի, արդյունաբերության և մշակույթի զարգացման գործին:

Այդ ժամանակաշրջանում բազմաթիվ հայ տաղանդավոր երիտասարդներ մեկնում էին Ռուսաստանի ամենահայտնի մասնագիտական հաստատություններում ուսում ստանալու: Գիտելիքներով գինված վերադասնալով՝ նրանք իրենց կարողություններն ու զաղափարները ներդնում էին տարբեր ասպարեզներում, այդ թվում՝ մեծ չափով, Բարվի կառուցապատման գործում:

Հայտնի է, որ յուրաքանչյուր քաղաքի ընկալման ամենակարևոր գործոններից մեկն է նրա զեղարվեստական կերպարը, որը ստեղծվում է ճարտարապետական բաղադրիչներով: Այսպիսով, Բաքվի՝ եվրոպական քաղաք հիշեցնող գուժերով կերպարը, ի շարք այլազգի ճարտարապետների, կերտվել է նաև հայ ճարտարապետների մի ողջ աստղաբույլի շնորհիվ: Կրանց թվում են հայտնի ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանը (Տեր-Միքելովը), Լ. Բանը, Վ. Սարգիսովը, Հ. Քաջազունին (որի անունը գրված է Հայաստա-

նի պատմության մեջ ոչ միայն որպես ճարտարապետ, այլև՝ որպես Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ), Ֆ. Աղայանը, Մ. Տեր-Գրիգորյանը, Ա. Կանդիկյանը և ուրիշներ:

Ռուսաստանում (հիմնականում Սանկտ-Պետերբուրգում) ուսումնասիրելով դարաշրջանի նոր ոճերը՝ հայ ճարտարապետները կարողացան դրանք կիրառել երրորդի, յուրահատուկ կերպով՝ ստեղծելով Բաքվի ճարտարապետական այն հմայիչ կերպարը, որն այսօր համարվում է դասական: Լրանցից մեկը հայտնի ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյանն է, որի ստեղծագործական ձեռագիրը հստակորեն երևում է Բաքվի շատ նշանավոր շենքերում: Գ. Տեր-Միքելյանի նախագծերով են կառուցված Բաքվի քաղաքային վարչության հիմնական շենքի ճակատային մասը, հասարակական ակումբի շենքը (այժմ՝ Աղրեցանի ազգային ֆիլիհարմոնիան), Ճեղատունը (1899 թ.), Թիֆլիսի անտրական բանկի Բաքվի բաժանմունքի շենքը (1902-1903 թթ.), Առևտրի ուսումնարանը (1905-1910 թթ.):

Բաքվի կառուցապատման գործում մեծ է ճարտարապետներ Ն. Բանի և Վ. Մարգիսովի ներդրումը: Հիշատակության է արժանի, որ 1911-1918 թթ. Բանը եղել է Բաքվի գլխավոր ճարտարապետը: Երա նախագծերով Բաքվում կառուցվել են Մախլովների թատրոնի հանրահայտ շենքը (այժմ՝ Բաքվի օպերայի և Բալետի պետական թատրոն), հիվանդանոցային ավանը (19 լավարթ՝ 24 մասնաշենքով), մի շարք դպրոցներ, գիմնազիա, բնակելի տներ, երկաթուղու Մարտիչի կայարանը, Մեմաշլոյի անվան վիրաբուժական հիվանդանոցը, ինչպես նաև հայերի բնակելի Արմենիքեղ թաղամասը, որը երա անուկով էլ կոչվել է «Բանի»: Վ. Մարգիսովի նախագծերով եպիթագործների բանավանում կառուցվել են բազմաթիվ բնակելի շենքեր: Այս մեծանուն ճարտարապետների աշխատանքը շարունակեցին կրտսեր սերնդի ներկայացուցիչները, որոնց թվում մեծ է ճարտարապետ Մարտին Թովմասյանի և մյուսների ներդրումը:

Այսօր այս բոլոր շենքերը (կամ երանց մեծամասնությունը) շարունակում են գաղղարել Բաքու քաղաքը՝ պահպանելով երբեմնի բազմազգ քաղաքի յուրահատուկ փայլը և հոգևոր այն իմաստն ու շունչը, որտեղ, այլոց թվում, երան հաղորդել են հայ ճարտարապետների մի քանի սերունդներ:

## THE ROLE OF ARMENIAN ARCHITECTS IN THE FORMATION OF ARCHITECTURAL IMAGE OF CITY BAKU

Ter-Minasyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts, Armenia)

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՄՍԱՃԱՐՏԱՐԱԳԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՑՒՆ ԵՆՈՒՉԱՓ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՁ. ՆԵՐՔԻՆ ՎԱՐԱԳԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Քերթմանչյան Դ. ( ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան )  
dkertmen@yahoo.com

*Բանալի բաներ՝ գմբեթ, վեղար, վանք, վերականգնություն, թմբուկ, սյուն*

**Թեմայի արդիականությունը.** ներկայում հայկական ճարտարապետության գիտահետազոտության ամենախրատապ հարցերից է հին և նոր հուշարձանների եռաչափ գրադարանի կազմումը: Ընդ որում, այստեղ խոսքը բնավ չի վերաբերում հուշարձանների վերականգնմանը կամ հնագիտական վերականգնությանը, այլ հայկական ճարտարապետության հուշարձանների հորինվածքային բնագրի վերարտադրմանը: Հարցի կապակցությամբ կարևորվում են հետևյալ երկու հանգամանքները:

1. Արդի հայկական ճարտարապետության էջերում կան բազմաթիվ կարևոր ստեղծագործություններ, որոնք կյանքի ուղեգիր չեն ստացել, և դրանց համակարգչային եռաչափ վերականգնությունն ու հավելումն ուսումնասիրություններում, որպես մտավոր ժառանգություն, մեծ կարևորություն ունեն պատկերելու ժամանակի ճարտարապետության զարգացման իմաստաբեցիքը:

2. Լուսկերան կարևոր են հայկական պատմական ճարտարապետության ուսումնասիրական իրավիճակի վերանայումն ու ներկայացումը՝ ըստ ընդգրկված շենքերի և անասրվների հորինվածքային մոդելների: Փաստորեն, գոյություն ունեցող հուշարձանները, անցելով բազմաթիվ ավերումների և եղողումների միջով, նյութական անցողիկ պայմանների հետևանքով վերականգնվել են ոչ թե ըստ մասնագիտական պահանջների, այլ ըստ ընկերական հնարավորությունների՝ չհաշված դեռևս, որ դրանք հատկապես Արևմտյան Հայաստանի ներկա իրականությունում լքված են, և դրանց ճարտարապետական արժանիքներն ավերակ վիճակում խոսուն չեն:

**Նորայրը.** այսու, առաջին անգամ լինելով, առաջարկվում է հայկական ճարտարապետության գոյություն ունեցող պատմության և տեսության վերարտադրումը համակարգչային եռաչափ վերակազմությունների համադրությամբ, որն ավելի արտահայտի ու ըմբռնելի կդարձնի հայկական ճարտարապետության պատմական նվաճումներն ու զարգացման արդի կիմա-հարցերը: Ձեկուցման մեջ Վասպուրականի Ներքին Կարագավանքի օրինակով արձարձվում է եռաչափ վերակազմության ապվելուներից մեկը: Փաստորեն, Կարագավանքը հայտնի է հատակագծային տվյալներով և մի քանի լուսանկարներով: Արդարև, 1648 թ. հայտնի երկրաչափից հետո վանքն ըստ արձանկույն չի վերականգնվել: Դարպաս- զանգակատուն, գավթի, Սբ Աստվածածնի տանիքներն ուղղակի պատվել են հողաշեն և հարթ, մի հանգամանք, որ հարազատ չէր կարող լինել վանքի ծավալատարածական քննարկային լուծումների, որի պատճառով համալիրի ճարտարապետությունն իր իրական հորինվածքային արժանիքներից հեռացել է Տվյալ իրավիճակը տիպական է Արևմտյան Հայաստանի համարյա ողջ ժառանգության համար, որն այժմյան ավերակներով լրացնում է ակնարկվող ուսումնասիրությունների էջերը:

**Գիտամեթոդական կարևորությունը.** համակարգչային եռաչափ վերակազմության մեթոդը գիտական նոր և անիրաժեշտ մոտեցում է, որն անիրաժեշտ է հետևողաբար ներմուծել հայկական ճարտարապետության գոյություն ունեցող ուսումնասիրություններում, մանավանդ որ դա տեխնիկայի (մաստերինգ) առումով հայկական ճարտարապետական ժառանգության ձևերի վերարտադրման կապակցությամբ մասնագիտական կատարելագործման ճանապարհ պետք է անցնի, որը կկատարվի տվյալ ծրագրի սահմաններում:

**ABOUT 3-DIMENSIONAL RECONSTRUCTION OF ARMENIAN HISTORICAL COMPLEXES: THE RECONSTRUCTION OF NERKIN VARAGAVANK**

**Kertmenjian D.** (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts, Armenia)

**НАЦИОНАЛЬНОЕ САМОВЫРАЖЕНИЕ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ XX – НАЧАЛА XXI ВВ. ИДЕОЛОГИЯ И СТИЛЬ**

**Бальян К.** (Международная академия архитектуры, РФ)  
karenbalyan@hotmail.com

*Ключевые слова:* национальная архитектура, Таманя, Ереван, тоталитаризм, модернизм.

За немногим более чем столетний период Армения прошла через четыре исторических цикла:

1. Начало XX в. – 1917 – губерния в составе Российской империи.
2. 28.05.1918 – 29.11.1920 – независимая Республика Армения (первая республика).
3. 29.11.1920 – 23.09.1991 – Армянская Советская Социалистическая Республика в составе СССР (вторая республика).
4. 23.09.1991 – по настоящее время – независимая Республика Армения (третья республика).

За весь этот период архитектурный процесс делится примерно на равные отрезки (этапы развития) продолжительностью в 15-20 лет.

1 этап – его истоки в XIX столетии, продолжался до начала Первой мировой войны. Отсутствие возможностей национального самовыражения. Стилевой провинциализм, вариации классицизма и эклектики, приспособленные к региональным климатическим особенностям, использование местных строительных материалов.

2 этап – 1919–1936 гг. (годы работы в Армении академика А. Таманяна). Формирование современной армянской архитектуры. Создание национального языка армянской архитектуры на основе классицизма. Градостроительство является формой выражения национальной идеи. В границах этапа (1927-1936) развивается армянский конструктивизм (современный стиль трансформируется в национальный вариант – одна из первых попыток в мировой архитектуре). Обе попытки создания национальной архитектуры про-





культурного наследия армянского народа» как основа учебного процесса сертификационного цикла по подготовке оценщиков-экспертов экономической оценки культурного наследия в России.

7. XXXIX Международная научно-практическая конференция «Татуированные чтения», организованная кафедрой учета, анализа и аудита экономического факультета МГУ имени М. В. Ломоносова и Ассоциацией бухгалтеров и аудиторов «Содружество», доклад на конференции «Об экономической оценке объектов культурного наследия Армении: проблемы и решения». Предложение конференции – провести третью Международную конференцию по культурному наследью в Армении в целях выработки четких механизмов защиты культурных ценностей и воздействия на международное сообщество.

8. Первое издание в зарубежной литературе об истории и современных проблемах Джавахка в книге «Грузинский синдром» («Das Georgien-Syndrom»), изданной в Германии немецким издательством Mauver Verlag.

Подробное описание истории и проблем Джавахка в зарубежной литературе: вопросы ассимиляции армян, факты присвоения армянского культурного наследия. Представление европейским читателям обширной информации о том, что Джавахк исторически является частью Армении (историческая область Гутарк), и армяне жителя Джавахка не пришельцы, а автохтоны.

Презентация книги на книжной ярмарке в Лейпциге. Смена грузинского посла в Германии. Покорение «Грузинского синдрома в Европе»: презентация в Москве, Швейцарии, Испании.

9. Объекты культурного наследия армянского народа в Южной Осетии. Современное состояние этих объектов.

10. Экономическая оценка ущерба и утрат объектов культурного наследия армянского народа от культурного геноцида. Адаптированные методики по определению стоимости ущерба, нанесенного объектам наследия, комплексной оценки и экологической экспертизы объектов культурного наследия.

11. Подготовка армянских оценщиков (экспертов), в т. ч. специалистов оценщиков-экспертов культурного наследия для экономической оценки последствий Геноцида армян и прав требования.

#### ECONOMIC ASSESSMENT OF HISTORICAL-CULTURAL HERITAGE OF THE ARMENIAN HIGHLAND

Gasparyan M. (Center of Professional Retraining of Appraisers of the Moscow Financial and Industrial University "Sinergiya", Russia)

#### ЕРЕВАН: GENIUS LOCI И СОХРАНЕНИЕ ГРАДОСТРОИТЕЛЬНОГО НАСЛЕДИЯ

Иванов А. (Российский институт культурологии, Россия)  
andreyivanovarch@mail.ru

*Ключевые слова:* дух места, наследие, среда, локусы, сохранение.

Понятие *genius loci* («духа места») активно используется в разных сферах культуры с 1970-х – 1980-х годов. В архитектуре оно связано с критикой средовых результатов рационалистических принципов «современного движения», становлением постмодернизма и архитектурной феноменологии, вызванным, среди прочих факторов, осознанием насущной потребности человека в атмосфере локальности, принадлежности определенному месту. Поддержание и/или формирование такой атмосферы требует от создателя места особой профессиональной чуткости, терпения, укорененности в сохраняемой или создаваемой среде. Именно этих качеств недостает большинству субъектов современного архитектурно-градостроительного процесса. В результате мы живем во все более и более «безместном» мире, что не может не восприниматься как серьезная гуманитарная проблема.

Утрата внимания к духовным аспектам среды, к специфике особых локусов, из которых состоит мир, объяснима с культурно-исторических позиций, но неприемлема с точки зрения должной полноты человеческого существования. Ереван не является исключением: город «древнее Рима» ускоренными темпами теряет связность своих исторических слоев, органичность старгородской среды. **Актуальность** доклада определяется остротой момента: если не изменить подходы к сохранению наследия, продолжение процессов деструкции приведет к утрате последних подлинных зданий XIX – начала XX вв., уничтожению исторически ценных анклавов вернакулярной застройки, окончательному распаду зыбкой, ментально и физически неустойчивой конструкции «градостроительное наследие Еревана».

**Научно-методическая значимость** доклада заключается в рассмотрении той роли, какую феномен *genius loci* может играть в осознании многообразия, сложности градостроительного наследия и в формировании подходов к его сохранению.

Представляется, что *genius loci* Еревана не только отражает специфические ценности местной городской культуры («столичность», амбициозность,

предприимчивость, индивидуализм с одной стороны, «горизонтальные» ценности уюта, «семейности», «шрдкапата» – с другой), но и является важным компонентом наследия, «склеивающим» его материальные слои. Он связан как со знаковыми ансамблями и монументами, яркими городскими героями (А. Таманян), так и с неприметными в архитектурном отношении, но символически важными местами (кафе «Поплавок» и «Козырек», хранящие традиции 1960-х), с «малыми» и «рядовыми» («черные дома», галерейные дворы), с верхаулярным (Конд, Норагюх, Сари Тах). Для сохранения старого Еревана нужно принять, признать наследием и беречь все его компоненты. В таком комплексном, «включающем» подходе к наследию Еревана заключается **новизна** данного доклада.

Приводится описание некоторых узловых точек («мест силы»), репрезентирующих, по мнению автора, квинтэссенцию духа Еревана. Они не всегда видны, не обязательно связаны с героями-«тениями» города, могут находиться в разных временных и культурных пластах, но – непостижимым образом – сохраняют свою устойчивость, аутентичность, наполненность актуальными для многих горожан смыслами и интимными переживаниями. Именно они скрепляют городское прошлое, настоящее и будущее. Особое внимание уделяется новому Северному проспекту и историческому Конду. Анализируются подходы к созданию Северного проспекта, показана их опасность в случае приложения к локусам с еще сохранившимся духом места.

Проблема *genius loci* Еревана шире границ этого города. Его социо-градостроительная ситуация типична для многих постсоветских столиц и крупных постимперских городов, некогда многонациональных, ныне все больше моноэтнических и рураризирующихся. Всплеск «национальной» идеологии, усиление класса чиновников, слабость механизмов градорегулирования, отъезд «коренных горожан», наплыв селян побеждают в них городское, ведут к средовой деструкции, перманентным утратам наследия. Поддержание локусов городского духа противостоит этим процессам, помогает сопротивлению энтропии и сохранению городской идентичности.

Как сказано в «Квебекской декларации о сохранении духа места» (2008), «лучший инструмент для поддержания духа места живым – это коммуникация». «Точки силы» могут стать катализаторами городского диалога – как виртуальной переклички мест и их гениев, так и практической дискуссии горожан, экспертов и власти, от исхода которой, возможно, будет зависеть судьба ереванского градостроительного наследия.

#### YEREVAN: GENIUS LOCI AND CONSERVATION OF URBAN HERITAGE

Ivanov A. (Russian Institute for Cultural Research, Russia)

#### ОРНАМЕНТ В СИСТЕМЕ ИЛЛЮМИНИРОВАНИЯ АРМЯНСКИХ РУКОПИСНЫХ ЕВАНГЕЛИЙ

Манукян С. (Ереванский Государственный Университет, Институт искусств НАН РА, Армения)  
seyranushmanukyan@yahoo.com

*Ключевые слова:* Евангелие, орнамент, система иллюминирования, манускрипт, маргиналия.

Евангелия составляют абсолютное большинство среди иллюминированных армянских кодексов. Их система художественного оформления возмещала и на другие виды рукописных книг. Исключительно богатый орнаментальный декор является «лимфой» художественного организма армянской книги, определяя его целостность и единство. Именно в этом новом контексте рассматривается орнамент, присутствующий в каждом из компонентов данной системы, сформировавшейся с VI по XII вв.

1. **Иллюстрированные таблицы канонов согласия** четырех Евангелий и объясняющего их **Послания** Есевяна Карпиану. Они заключают в себе единство четырех Евангелий и их прообразовательную связь с Ветхим Заветом, являясь своеобразным ключом к Евангелию. Предполагается, что определенное художественное оформление они получили уже при жизни Есевяна Кесарийского. Приобретая значение символического Входа в священное пространство Евангелия, каноны облекаются в архитектурную форму триумфальной арки. С формой арки, со словом «арка» связывается армянское слово «**хоран**», которым называются художественно оформленные Послание Есевяна и таблицы канонов. Композиция хоранов строится из орнаментов и символов, покрывающих лопаты арок и поля. Их частью становятся и другие включаемые изображения. Они отличаются редким разнообразием и играют одну из главных ролей в иллюминации книги. Все богатство мира, известное средневековому художнику, постепенно находит в них свое отражение – редкие птицы, звери и деревья, маски, фигуры актеров и ино, ангелы и пророки, сцены охоты, «индийская сцена» и портреты Есевяна и Карпиана. И все это – среди орнамента. Для открывающего Евангелие хоран характеризует весь строй декоративного убранства книги.

2. **Заглавные или титульные листы** каждого из четырех Евангелий от Матфея, Марка, Луки, Иоанна. Их композиция близка к византийской, однако отличается декоративной маргиналей, увенчанной крестом, на правом поле. Она отмечает начало первого чтения из данного Евангелия.

3. **Портреты евангелистов** предваряли как авторский портрет текст каждого Евангелия и часто составляли с титулом единый композиционный разворот. Евангелисты представлялись в орнаментальных рамках, декор которых перекликался с общим декоративным убранством рукописи. Из орнамента могли быть выложены также элементы композиции портретов.

4. **Рубрики – художественно оформленные начала** подразделений евангельского текста на чтения, которые позволяли использовать армянское Четвероевангелие и как Книгу евангельских чтений. Именно для них были разработаны особые формы орнаментальных инициалов и буквиз, перекликающиеся с декоративными шрифтами, используемыми и на титульных листах.

5. **Декоративные** (орнаментальные, предметные и сюжетные) **маргиналии** – наиболее своеобразный компонент, отличающий армянские Евангелия от греческих и латинских. Они визуально отмечали начала вышеуказанных чтений-рубрик. Маргиналии появляются с конца X в. и становятся неотъемлемой частью армянских рукописей как единица художественной системы, варьируясь в других компонентах.

6. **Сюжетные иллюстрации** в виде красочных лицевых миниатюр различного расположения по отношению к иллюстрируемому тексту. Миниатюры были: а) в полный лист; б) текстовые; в) маргинальные; г) смешанные виды миниатюр, сочетающие маргинальный и текстовый типы. Орнамент включался в них как для фона и обрамлений, так и как элемент композиции.

#### ORNAMENT IN THE ILLUMINATION SYSTEM OF ARMENIAN MANUSCRIPT GOSPELS

Manukyan S. (Yerevan State University, National Academy of Sciences of the  
Republic of Armenia, Institute of Arts, Armenia)

#### ИЗОБРАЖЕНИЯ САСАНИДСКИХ «ЦАРСТВЕННЫХ» ЛЕНТ В РАННЕХРИСТИАНСКОЙ СКУЛЬПТУРЕ АРМЕНИИ.

Микаэлян Л. (ЕГУ, Армения)  
mikailil@mail.ru

*Ключевые слова: равноконечные кресты, композиция, сасанидские ленты.*

